Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Slavenka Drakulić

FRIDA ILI O BOLI

Prijevod s engleskog na armenski -
Khoren Gasparyan

Slavenka Drakulić

FRIDA'S BED

Translation from English into Armenian -
Khoren Gasparyan

FRIDA'S BED Copyright © 2007 by Slavenka Drakulic
Published by agreement with Copenhagen Literary Agency ApS,
Copenhagen.

Vogi-Nairi, Stepanakert

Սլավենկա ԴՐԱԿՈՒԼԻՉ

ՖՐԻԴԱ ԿԱՄ՝ ՑԱՎԻ ՄԱՍԻՆ

Անգլերենից թարգմանեց
Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Ստեփանակերտ 2022

ՀՏԴ 821.163.42-31 Դրակուլիչ
ԳՄԴ 84(4Խոր)-44
Դ 853

«Գեղarm» հանդեսի մատենաշար

Սլավենկա ԴՐԱԿՈՒԼԻՉ
Դ 853 **Ֆրիդա կամ՝ցավի մասին/Սլավենկա Դրակուլիչ**
Թարգմ. անգլերենից՝ Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆ:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2022, 144 էջ:

Խորվաթացի ժամանակակից հայտնի գրող Սլավենկա Դրակուլիչի սույն վեպը չափազանց հուզիչ ու հետաքրքիր պատմություն է սիրո ու դավաճանության, տոկունության ու հուսալքության, այլասերվածության ու վեհության, արվեստի ու հրապուրանքի մասին: Դրակուլիչը գեղարվեստափաստագրական հյուսվածքում միավորում է մեքսիկացի նկարչուհի Ֆրիդա Կալոյի կյանքը մեկ միասնական թեմայի՝ ցավի մեջ: Հեղինակը երազկոտ հուշերում պատմում է նրա մասին, ով դժբախտ պատահարից հետո կարծրացած իր ոգով գրավում է նշանավոր որմնանկարիչ Դիեգո Ռիվերայի ուշադրությունը եւ սիրահարվում նրան: Ֆրիդայի կյանքն ասես վերածվում է մի խելահեղ ու դաժան ստեղծագործության:

Գրքում հեղինակը վարպետորեն դրսեւորում է գրողական իր վառ տաղանդը:

Republika Hrvatska Ministarstvo kulture i medija
Republic of Croatia Ministry of Culture and Media

The publication of this book is supported by a grant from the Ministry of Culture and Media of the Republic of Croatia.

Գրքի հրատարակությանը դրամաշնորհով աջակցել է Խորվաթիայի Հանրապետության մշակույթի եւ ԶԼՄ-ների նախարարությունը:

ISBN 978-9939-1-1477-4

ՀՏԴ 821.163.42-31 Դրակուլիչ
ԳՄԴ 84(4Խոր)-44

© Slavenka Drakulić
© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2022

Ֆիզիկական ցավը ոչ միայն պարզապես ընդդիմանում է լեզվին, այլեւ ակտիվորեն քայքայում է այն՝ մարդ արարածին անհապաղ վերադարձնելով մի վիճակի, լեզվին նախորդող՝ հնչյունների եւ ճիչերի վիճակի, որոնք նա արձակում է նախքան լեզուն սովորելը:

Էլեն ՍՔԱՐՐԻ. «Մարմինը ցավի մեջ»

Իմ նկարչությունն իր մեջ ցավի ուղերձ է պարունակում:
Ֆրիդա ԿԱԼՈ

Հուլիսյան այդ վաղ առավոտ Ֆրիդան արթնացավ անկողնում՝ ծնողների տանը: Թույլ մի լույս արդեն սենյակ էր թափանցում: Անհանգիստ գիշեր էր անցկացրել: Ձիգ գործելով՝ շրջվեց, հենվեց բարձերին եւ շոշափեց դեմքը՝ կարծես համոզվելու համար, որ այն դեռեւս տեղում է: Որոշ ժամանակ անշարժ պառկած նայում էր ձեռքերին՝ ծածկոցի վրա, հետո մատները սահեցրեց մազերի միջով,- իր դեմքը, իր մազերը, իր ձեռքերը. դրանք բոլորը ժամանակին մեկ ամբողջի մասեր էին: Փորձեց ելնել անկողնուց, բայց հետո տեղի տվեց: Ուժ չէր մնացել: Ստահոգ էր եւ անհանգիստ:

Անցյալ տարի, երբ ոտքս անդամահատեցին, դա իմ... ի՞նչ... երեսուներկուերորդ վիրահատությո՞ւնն էր:- Ֆրիդան փորձեց ճշգրիտ հիշել՝ շոշափելով մեջքի, փորի, ոտքի վրայի սպիները:- Չեմ կարող դրանք բոլորը հիշել: Հետաքրքիր է՝ աբորտներն է՞լ են համարվում վիրահատություն: Եթե նույնիսկ մոռանամ նրանք, որ տեսանելի սպիներ չեն թողնում, մեկ է՝ չեմ կարող բոլորը հաշվել: Այս հաշվարկն անիմաստ է,- մտածեց:

Նայեց սավանի տակ՝ դատարկ այն տեղին, որտեղ առաջ հիվանդ ոտքն էր: Տարօրինակ էր, թե ինչպես էր դեռ զգում ոտքի այն կեսը, որ սղոցված էր: Դա նույն ոտքն էր, նույն աջ ոտքի կեսը, որտեղ առաջին անգամ հայտնվեց դիվային ցավը:

Վեց տարեկան էր: Մի առավոտ արթնացավ տենդի մեջ: Սկզբում ծնողները չանհանգստացան: Տենդ, ջերմություն, մրսածություն, կոկորդի ցավ, լուծ, փսխում, փորի ցավեր... ինչպես բոլոր երեխաները, նրանց չորս փոքրիկ աղջիկներն էլ երբեմն հիվանդանում էին: Պատճառ չունեին կասկածելու, որ այս անգամ այլ բան է:

Իսկ հետո եկավ ցավը: Սկզբում ոտքի մեջ,- ասես ինչ-որ բան ատամներն իր ոտքն էր խրել: Վիթխարի մի գազան, գուցե շուն: Ծնոտներն ամուր սեղմել եւ ատամներով պատռոտում էր մկանները: Ինքը ճչաց. դա այն ամենն էր, ինչ կարող էր անել,- ճչալ: Չէր կարող նկարագրել մարմնի մի մասի պատառ-պատառ լինելու զգացումը: Հիշեց հոր հուսահատությունը, նրա դեմքը, երբ թեքվեց դեպի իր մահճակալը, եւ նրա խոսքերը. -Ի՞նչ է դա, ասա՛ ինձ, ի՞նչ է:- Մինչ ինքը գալարվում էր ցավից՝ ամբողջովին քրտինքի մեջ կորած, Դոն Գիյերմոն՝ իր լավ, բա-

րի հայրը, սպասում էր, թե ինչ կասի: Բացատրության էր սպասում: Այդ սարսափի՝ բառային իմաստալից մի ձեւակերպում, որպեսզի կարողանա հասկանալ, թե ինչ է կատարվում իր երեխայի հետ: Հակառակ դեպքում՝ ինչպե՞ս կարող էր օգնել նրան: Որովհետեւ իր անզուսպ ճիչերը բավական չէին: Ցավը պետք է պարզ, հոդաբաշխ ձեւով արտահայտվի, հաղորդվի: Մի տեսակ երկխոսության կարիք է զգացվում: Բառերի կարիք: Բայց երեխայի շուրթերից միայն գոռոց եւ ցավի սուր ճիչեր էին հնչում:

Դեռ կարող էր տեսնել իր ոտքը (իր խեղճ փոքրիկ ոտքը,- կասեր, եթե այդքան սրտաճմլիկ չհնչեր), որ ջղածիգ շարժվում ու ցնցվում էր մահճակալի վրա: Որ ասես գրավվել եւ առանձնացվել էր մարմնի մնացած մասից: Կարող էր տեսնել, թե ինչպես է մայրը սրբիչը թրջում տաք ջրի մեջ, ճենապակե սպիտակ ջրամանը պահած սպասուհու մուգ ձեռքերը, ամանի եզրը բռնած նրա կծկված մատները: Ուշադրությունը կենտրոնացրեց ջրում փայլկտացող կայծերի վրա՝ մի բանի, որ կարողանար միտքը շեղել ոտքից, իր անձից: Լքել մարմինը. ահա թե ինչ էր ուզում: Կամ՝ որ մեկը կտրեր իր ոտքը, քանի որ այն արդեն իրենը չէր: Բայց ոտքը շարունակում էր մահճակալից դուրս ցատկել, ասես խելագարված լիներ: Խուճապահար գոռաց: Մայրը տաք սրբիչով փաթաթեց իր խեղճ փոքրիկ ոտքը (այո՛, այդպես էր ի վերջո) եւ շարունակ ասում էր (ինքը հիմա էլ լսում էր նրան). -*Ծը՛շշ, շը՛շշ, կանցնի, կանցնի:*

Հիշում եմ մորս խոսքերը, քանի որ տարիներ շարունակ նա ստիպված էր նորից ու նորից ասել դրանք: Եվ համոզված էր ասում, քանի որ մեզնից ոչ ոք այն ժամանակ չէր կարող դա իմանալ, այն ժամանակ, երբ այդ՝ դեռ անհայտ, անանուն դժոխային գազանը պատառոտում էր մարմինս, եւ մայրս, ճակատիս քրտինքը սրբելով, շշնջում էր. -*Կանցնի:*

Եվ իրոք, ժամանակ առ ժամանակ ցավը փոքր-ինչ մեղմանում էր, գազանը հոգնում էր: Երեխան տրվում էր ցավի բացակայության երանությանը, որպեսզի ընդամենը մեկ րոպե անց Է՛լ ավելի բարձր ճչար: Գազանն ատամները խրել էր նրա ոտքի մեջ եւ բաց չէր թողնում: Ասես որոշել էր ոտքը պոկել եւ խժռել:

Ծնողներն ի վերջո բժշիկ կանչեցին: Ախտորոշումը՝պոլիոմիելիտ: Բուժումը՝ հանգիստ եւ անկողին: Հետեւանքը՝մի ոտքն ավելի բարակ է եւ կարճ, քան մյուսը:

Նա ինն ամիս գամված էր անկողնուն. ամբողջ մի հավիտենություն՝ այդպիսի աշխույժ երեխայի համար: Քանի որ չէր կարող դուրս գալ սենյակից, մի փոքրիկ երեւակայական ընկերուհի ստեղծեց, որն օգնում էր իրեն՝ տեղափոխվելու մեկ այլ աշխարհ:

Նրա փոքրիկ ընկերուհին անուն չուներ: Ֆրիդան փչում էր մահճակալի մոտի պատուհանի վրա, ապա արագ, արագ՝ մատով դուռ էր նկարում գոլորշապատ ապակուն: Միայն թե դուռը շատ, շատ փոքր ու անտեսանելի էր: Փոքրիկ աղջիկը նույնպես անտեսանելի էր, անտեսանելի էր բոլորի համար, բացի իրենից:

Հենց որ ինքն այդ դռնով ներս էր խցկվում այն մյուս աշխարհը, այնտեղ գտնում էր իրեն սպասող փոքրիկ ընկերուհուն: Նա միշտ ուրախ ու ծիծաղկոտ էր, բռնում էր Ֆրիդայի ձեռքից եւ տանում հեռու: Միայն երկուսն էին բնակվում այդ մյուս աշխարհում: Ֆրիդան այլեւս չէր հիշում իր փոքրիկ ընկերուհու ձայնը կամ դեմքը. պարզապես գիտեր, որ իրենք պարում էին մի մեծ, դատարկ պարասրահում, որն ասես սառույցից պատրաստված լիներ: Փոքրիկ աղջիկը պարում էր, իսկ ինքը հետեւում էր նրան եւ զրուցում հետը: Խոսում էր, խոսում ու պարում: Սահում էր հատակին՝ հեշտությամբ պտտվելով եւ շարժվելով: Հաշմված ոտքն իրեն չէր անհանգստացնում: Նրանք երկուսը կատարյալ զույգ էին: Եվ երբ անկողին էր վերադառնում, դրանից հետո երկար ժամանակ անբացատրելիորեն երջանիկ էր զգում:

«Սահվան դիմակով աղջիկ» *նկարում, որ երբեւէ ստեղծած՝ նրա ամենափոքրիկ նկարներից մեկն է, այն, ինչ կարող եք տեսնել հորիզոնին, սառցե ծյունածածկ լեռների գագաթներն են: Ատամնաբաց ժպտացող մահվան դիմակով՝ միայնակ մի աղջիկ կանգնած է կարծր, մուգ գետնին: Այնքան էլ հասկանալի չէ՝ դա պարզապես դիմա՞կ է, թե՞ միգուցե աղջկա գանգն է: Աղջկա ոտքի մոտ ընկած է կենդանու մեկ այլ, էլ ավելի սարսափելի դիմակ՝ ատամները բաց, լեզուն դուրս գցած, բերանը դեռ կարմիր՝ աղջկա ոտքի արյունից: Փոքրիկ աղջիկը կարող էր կրած լինել այդ դիմակը, բայց հիմա չէր կրում: Թեեւ իրականում դա էական չէ, քանի որ երկու դիմակները պարզապես ներկայացնում են մահվան տարբեր ձեւեր:*

Մահը նրա շուրջը պտտվում էր դեռ մանկությունից: Ստվեր, որ միշտ կողքին էր: Ուրվականային ճերմակ մի գանգ՝ գորշ նրբերանգներով. մոխրագույնը՝ վախի գույնը, մշտապես առկա է իր կյանքում եւ իր մի մասնիկն է:

Նա կանգնած է այնտեղ մենակ՝ զայրացած երկնքի եւ սպառնագին ամպերի քուլաների շրջապտույտի տակ: Դեռ երեխա՝ նա դեռ պետք է աճի, փոխվի իր դեմքով: Երբ մեծանա, կունենա Ֆրիդայի դեմքը:

Նորից ու նորից Ֆրիդան կնկարի իր դեմքը սպիտակ գանգի վրա. ապացույց, որ ինքը դեռ ողջ է:

Երբ ինն ամիս անց ելավ անկողնուց, աջ ոտքը չոր ու թոշնած էր եւ հրացանի շամփուրի պես ուղղածիգ: Այուս երեխաները չէին կարող դա չնկատել: Դպրոցում ծաղրում էին նրան՝ անվանելով Ցից-ոտք: Գիշերը երազում տեսնում էր նրանց, որ գարշելի մռութներով կեղտոտ կոյոտների նման գիշատչաբար պտտվում էին իր շուրջը՝ ոտքը սպառնալից հոտոտելով: Ինքը նրանց ետ էր մղում: Քշում էր նրանց, բայց չէր լալիս: Դպրոցն սկզբում տանջարան էր նրա համար: Հետագայում դարձավ ինքնապաշտպանությամբ զբաղվելու վայր:

Իմանալով, թե որքան դաժան կարող են լինել երեխաները, մայրը լրացուցիչ գուլպաներ հագցրեց Ֆրիդայի աջ ոտքին, որպեսզի բարակությունը չերեւա: Բայց ոչ ոք դրանից չխաբվեց: Միայն նոր, հատուկ պատվիրված կոշիկներն էին, որ հավասարակշռություն էին հաղորդում Ֆրիդայի քայլերին, բայց ո՛չ բնավորությանը, որն արդեն անհնազանդության նշաններ էր ցույց տալիս: Կոշիկներն ստիպում էին, որ նա իրեն կարեւոր զգա. դեռ ընդամենը երեխա էր, բայց նրան արդեն թույլատրվում էր կոշիկները կրել իսկական երիտասարդ տիկնոջ պես: Նա դեռ պահում էր դրանք իր սենյակում՝ սիրելի տիկնիկի, Մաեստրոյի նվիրած՝ ացտեկների արծանիկների եւ ստվարաթղթե կմախքի մոտ: Կոշիկները պատրաստված էին հորթի նուրբ կաշվից, ոտնամատների հատվածն ավելի մուգ երանգ ուներ: Հիշում էր, թե որքան ժամանակ էր սպասուհուց պահանջվում դրանց քուղերը կապելու համար, եւ ինքն ինչպես էր համբերատար սպասում, որ ավարտի: Կոշիկները նրան վերադարձրին այն օրերը, երբ հայրն իրեն զբոսնելու էր տանում գյուղում: Մինչ հայրն

իր ջրաներկ նկարներն էր անում, Ֆրիդան հավաքում էր գեղեցիկ քարեր, նայում թիթեռներին, թռչուններին ու միջատներին:

Հիշում եմ, թե ինչպես առաջին անգամ խանդ զգացի: Ոչ թե այն մյուս, առողջ երեխաների, այլ բոլոր այդ թեւավոր արարածների հանդեպ: Մի անգամ, երբ թիթեռ իջավ ուսիս՝ թափահարելով իր նուրբ թեւերը, ես հանկարծ փղձկալով արտասվեցի: Չգիտեի ինչ ասեմ հայրիկիս: Չգիտեի, որ դա խանդի զգացում էր: Ինչու՞ ես թեւեր չունեմ,- հարցրի նրան: Նա չծիծաղեց:

Միգուցե դա նշան էր գալիք վատ ժամանակների,- մտածեց Ֆրիդան՝ այդ առավոտ շրջվելով անկողնում:

Պոլիոմիելիտից ապաքինվելուց հետո Ֆրիդան, թեեւ դեռ երեխա, արագ հասկացավ, որ հիվանդությունն իր հետքն է թողել: Դա հաղթահարելու երկու ճանապարհ կար. կարող էր հանձնվել, իր կաղությունն ընդունել որպես ամոթալի մի բան եւ թաքնվել տան մութ ընդերքում - կամ հակադրվել դրան: Վաղ տարիքից նա ստիպված էր ընդունել, որ ինքը տարբեր է: Բայց դեռ պետք է սովորեր ամենակարեւորը՝ ինչպես իր թերությունը վերածել առավելության: Դա տարիներ կպահանջեր:

Երբ մյուս երեխաները ծաղրում էին իրեն, արձագանքում էր զայրույթով եւ արհամարհալից հակադրվելով, բայց ո՛չ երբեք ինքնախղճահարությամբ: Թեեւ երիտասարդ՝ հրաժարվում էր ընդունել պարտությունը, որ մայրիկի բալիկ աղջիկների համար էր, ինչպիսիք էին Քիթին եւ նրա ընկերուհիները: Միշտ արհամարհել էր արցունքները կամ թուլության որեւէ նշան: Քանի որ ամեն դեպքում տարբերվում էր մյուսներից, ուրեմն կարող էր նաեւ լինել ավելի լավը, ավելի արագ, ավելի ուժեղ: Ծուտով սովորեց հեծանիվ քշել: Նա ծառ էր բարձրանում եւ լողում ավելի արագ, քան մյուս փոքրիկ աղջիկները, ովքեր պարան եւ ցատկախաղ էին խաղում՝ հոգ տանելով, որ չկեղտոտեն իրենց գեղեցիկ զգեստները: Նա լավն էր նույնիսկ Քիթիից, որը կաղ չէր, բայց նաեւ քաջ ու համարձակ չէր: Եվ քանի որ տարբերվում էր,կարող էր խիզախ եւ համարձակ լինել այնտեղ, որտեղ այլ փոքրիկ աղջիկներ չէին կարող: Կարող էր, օրինակ, ըմբշամարտ կամ բռնցքամարտ սովորել: Մայրը նրան թաքուն խղճում էր եւ ցավ ապրում, բայց հայրը լիովին աջակցում էր՝ ասելով, որ ինքը մյուսներից ավելի լավն է, որովհետեւ ավելի քաջ է, որ խիզախությունն ու խելքը կաղ չլինելուց ավելի կարեւոր են, եւ որ ինքը երկուսն էլ ունի:

Մոտակա զբոսայգում հեծանիվ քշելիս՝ նրան թվում էր, թե թռչում է: Եթե միայն թռչել կարողանար, - մտածում էր,- ապա ոտքերի կարիք չէր ունենա:

Ես չէի կարող խուսափել ուրիշների խղճահարությունից կամ դաժանությունից: Խղճահարությունը հոտ ուներ, ես միշտ ճանաչում էի այն, քանի որ դրա հետ մեծացել էի: Որովհետեւ հետեւել էր ինձ ամբողջ կյանքում: Երբեմն մտածում էի, որ շնչահեղձ կլինեմ օդում ներծծված՝ քրտինքի ծանոթ գարշահոտից:

Ծեր մի մորաքույր, իր տատիկի ընկերուհիներից, երբեմն այցի էր գալիս: Նա կարճ ու կլոր էր, ինչպես հացի բոքոնը: Բադի պես շորորալով մոտենում էր բազմոցին եւ հառաչանքով ընկղմվում բարձերի մեջ, ասես այդ մի քանի քայլից ուժասպառ էր եղել, իսկ գուցե եւ այդպես էր: Ապա հանում էր բատիստե գեղեցիկ թաշկինակը եւ սրբում վիզն ու կոկորդը: Նա Ֆրիդային քաղցրավենիք էր բերում, նրանցից, որ մետաքսաթղթի մեջ են փաթաթված, որպեսզի մատներիդ չկպչեն: Փոխարենը Ֆրիդան թույլ էր տալիս, որ պառավը գրկի իրեն ու իր մազերը շոյի այն ձեռքով, որ զբաղված չէր շարժումներ անելով ու քրտինքը սրբելով, եւ պառավն ասում էր. -Խեղճ, խեղճ փոքրիկ:- Հետո, գրեթե արտասվելով, էլ ավելի բարձր էր հառաչում: Նրա վրայից յուրահատուկ թթվաքաղցր հոտ էր գալիս՝ քրտինքի, վանիլային շաքարի եւ սպասուհու մատուցած անանուխի թեյի մի խառնուրդ, ու նաեւ ինչ-որ անորոշ, անսովոր եւ ուժեղ բանի հոտ, որ ծխախոտի էր նման, բայց տարբերվում էր ծխամորճի ծխախոտից, որը Ֆրիդայի հայրը երբեմն ծխում էր: Երբ ավարտում էր կեսօրվա իր թեյախմությունը, արծաթե փոքրիկ մի տուփ էր հանում. նա դրան քթախոտի տուփ էր ասում: Մորաքույրը մուգ փոշու մի պտղունց դնում էր մատի կեռ ծայրին, տանում դեպի քիթն ու աղմուկով ներս քաշում: Նա ներշնչում էր քթախոտը: Դոն Գիլյերմոն, մեծոսկր ու բարձրահասակ, կանգնում էր պատուհանի մոտ եւ հետեւում, թե պառավն ինչպես է կատարում այդ ծեսը, որը փոքրիկ Ֆրիդան այնքան գրավիչ էր համարում: Հայրը հավանություն չէր տալիս, որ երեխան ձեւացնում է, թե իրեն դուր է գալիս, երբ պառավը շոյում է իր գլուխը,- հենց միայն նրա համար, որպեսզի կարողանա քաղցրավենիք ստանալ, ոչ էլ նրան հաճո էր ամեն անգամ այցելելիս Ֆրիդայի հանդեպ պառավի ցուցաբերած խղճահարությունը: Մի անգամ, երեխայի ներկայությամբ

զայրույթը զսպելով, չկարողացավ չասել. -Նրան անընդհատ «խեղճ փոքրիկ» մի՛ ասա, Տանտե:- Պառավն ապշած նրան նայեց, ասես աղջկա հայրը խելքը թոցրել էր: -Բայց տես, թե ինչպես է կաղում, խեղճ փոքրիկ,- ասաց տխուր: -Այն է, ինչ կա,- ասաց հայրը եւ դուրս եկավ սենյակից զայրացած. աղջիկը դա զգաց նրա քայլերից: Ֆրիդան վերցրեց քաղցրավենիքը եւ կաղալով դուրս ելավ հոր ետեւից:

Պարտեզի բաց դռների միջով ներթափանցող իրիկնամուտի տաք օդում, քթախոտի բուրմունքի մեջ, որ խառնվել էր նարդոսի, հասմիկի եւ դեղին գետնատարած վարդերի բույրին, նա ճանաչեց խղճահարության հոտը: Ծեր կնոջ հեռանալուց հետո հայրը նրան ասաց, որ ամենակարեւոր բանն իր համար այն է, որ իր մասին չմտածի որպես խեղճ փոքրիկ արարածի: Իր մտքով երբեք չէր անցել այդպես անել: Բայց հիշեց այդ հոտը:

Առավոտյան լույսը, դեռ թույլ ու ցրված, դանդաղ ներս սողոսկեց մութ վարագույրների տակ՝ շրջապատելով կահույքը եւ սփռվելով հատակին:

Նրա գիշերազգեստը քրտինքով էր ներծծված, դողում էր, բայց սփոփվում էր, որ գոնե այդ պահին արթուն էր եւ գիտակից: Որովհետեւ, հենց որ ներարկում էին անում, նորից սուզվում էր կիսագիտակից վիճակի մեջ: Գուցե կարող էր նույնիսկ ծխախոտ ծխել: Բայց դա լրացուցիչ ջանքեր կպահանջեր: Ստիպված էր լինելու ձեռքը հանել ծածկոցի տակից, մեկնել դեպի գիշերային սեղանին դրված ծխախոտն ու լուցկիները, վառել գլանակներից մեկը եւ ծուխը ներս քաշել: Իսկ հետո այնքան էր հազալու, մինչեւ զղջար, որ երբեւէ կատարել է նույնիսկ ամենաանշան շարժումը: Նա լսում էր դրսում երգող թռչուններին: Շուտով Մեյեթը կարթնանար եւ ջրամանն ու սրբիչը ձեռքին կմտներ իր ննջասենյակ: Առավոտյան այդ ծեսերն այնքան անիմաստ եւ հոգնեցուցիչ էին դարձել: Կնախընտրեր հանգստանալ եւ օրն ավելի ուշ սկսել:

Նա փորձեց վերհիշել իր կյանքը պոլիոմիելիտից առաջ, նախքան մարմնի՝ այսպիսի ծանր բեռ դառնալը, նախքան իմանալը, թե որքան դժվար է լինելու քայլելը: Հիշեց՝ ինչպես էր քայլում մոտակա բլուրներում, վազում հոր ետեւից եւ օգնում նրան կրելու նկարչական պարագաները: Կամ ինչպես էր սպասուհու հետ գնում շուկա, կիրակի առավոտյան մայրիկի հետ պատարագի կամ Քիթիի հետ դպրոց: Մարմինը դեռ *խոչընդոտ* չէր իր համար, երբ քայլում էր: Բայց պոլիոմիելիտից ապա-

քինվելուց հետո մարմինը նոր ծանրություն ձեռք բերեց: Ոչ միայն ֆիզիկապես, մտածում էր, այլեւ մետաֆիզիկապես: Այն դարձավ ծանր՝ ժայռի պես, որն ստիպված էր քարշ տալ: Վթարից հետո մեկ վայրկյան իսկ չէր ազատվում այդ ծանրության գիտակցումից:

Ստիպված էր ընդունել, որ եղել են նաեւ պահեր, երբ գիտեր ուրախության եւ երջանկության իմաստը. այլ կերպ ինչպե՞ս ուժ կգտներ՝ մարմինը քարշ տալու: Եվ այսպես, առավոտյան փորձեց վերհիշել այն օրերը, երբ այնքան հեշտ էր առանց որեւէ մեկի օգնության արթնանալն ու անկողնուց վեր կենալը:

Եթե այդպիսի օրեր երբեւէ գոյություն էին ունեցել, այժմ դրանք կորել էին թանձր մառախուղի մեջ, որ դոնդողի պես՝ ծանր ու դանդաղ նստում էր նրա շուրջբոլորը:

Ֆրիդան մեծացել էր որպես եռանդուն, կենսունակ աղջիկ, որ մազերը կարճ էր կտրում եւ մարզական տաբատ էր հագնում: Բանաստեղծություններ էր կարդում, ընկերների հետ դուրս գալիս զբոսնելու եւ սիրահարված էր Ալեքսին: Տղամարդկանց նախընտրում էր կանանցից, հորը՝ մորից, տղաներին՝ աղջիկներից: Միջնակարգ դպրոցում իր ընկերների բազմության մեջ միայն մեկ աղջիկ կար, մնացածը տղաներ էին: Հոր ձեռքով արված ընտանեկան լուսանկարում նա տղամարդու պես է հագնված: Քույրերն ու մայրը բոլորն էլ նրբագեղ զգեստներով են, մինչդեռ ինքը տղամարդու կոստյումով է, բաճկոնով եւ փողկապով: Մազերը ետ են սանրված, աջ ձեռքին ձեռնափայտ է, եւ ուղիղ նայում է լուսանկարչական խցիկին:

Նրա դեմքի արտահայտությունից եւ պահվածքից դժվար է վստահ լինել, որ լուսանկարում աղջիկ է: Մինչ մայրն ու քույրերը սեթեւեթ ժպտում են, նա լուրջ դեմքով է: Նույնիսկ մի փոքր սառն ու վճռական, թերեւս գոռոզ տեսք ունի, եթե դատելու լինենք, թե որքան սադրիչ է իր կեցվածքն այս «պաշտոնական» ընտանեկան լուսանկարում: Բայց նա կարող էր իրեն թույլ տալ նման վարքագիծ, քանի որ հայրիկի սիրելին էր: Դոն Գիլյերմոյի վեց դուստրերից միայն Ֆրիդան կրթություն ստացավ: Առաջին ամուսնությունից ծնված նրա երկու դուստրերը գրեթե չէին հիշատակվում: Դոնյա Մաթիլդան հրաժարվել էր թույլ տալ աղջիկներին ապրելու իրենց հետ, դրա համար էլ նրանք հայտնվեցին մենաստանում: Մաթիլդան ավելի բարի չէր իր իսկ ավագ դստեր նկատմամբ, որին

իր անունով էին կոչել: Երբ աղջիկը տասնհինգ տարեկանում մի տղայի հետ փախավ, մայրը նրան թույլ չտվեց տուն վերադառնալ: Հայրը կարծես խոսելու իրավունք չուներ մոր որոշումների դեմ: Նա մեղմ էր, զուսպ ու ներամփոփ: Լուսանկարչի իր աշխատանքից հետո քաշվում էր իր սենյակ եւ դաշնամուր նվագում կամ գերմանական փիլիսոփայություն կարդում: Նա երբեք չէր խոսում իր անցած կյանքի մասին, կամ այն մասին, թե կարոտե՞լ է Գերմանիան, իր մայրենի լեզուն, ուսումը: Կողակիցը՝ Մաթիլդան, Մաթիլդայի, Ադրիանայի, Ֆրիդայի եւ Քրիստինայի (կամ ինչպես ասում էին՝ Քիթիի) մայրը, վճռական կին էր, գործնական, համառ եւ գրեթե մշտապես դյուրագրգիռ ու չար: Հավանաբար մորից էր Ֆրիդան ժառանգել իր համառությունն ու որոշակի չոր բնավորությունը:

Մայրն անհրաժեշտ չէր համարում, որ Ֆրիդան կրթություն ստանա: Ինչպես մյուս երեք դուստրերի դեպքում, նա Ֆրիդային սովորեցրեց այն ամենն, ինչ կինը պետք է իմանար ամուսնանալու եւ սեփական երեխաներ ունենալու համար: Աղջիկը գիտեր եփել, մաքրել, կարել, ասեղնագործել, հյուսել, էլ ինչի՞ համար էին այդ անհարկի ծախսերը: Բայց հայրն անդրդվելի էր: Նա ասում էր, որ Ֆրիդան ամենից շատն է իրեն նման, եւ քանի որ ինքն ուսումը չէր ավարտել, վճռել էր, որ դուստրը կավարտի իր ուսումը եւ բժիշկ կդառնա:

Դոն Գիլյերմոն երբեք չէր ասում, որ որդի է ուզում, բայց Ֆրիդան զգում էր դա, եւ դա հաստատվեց հոր ժպիտով այդ օրը, երբ նա լուսանկարեց ընտանիքին, ու Ֆրիդան կանգնած էր կենտրոնում՝ տղամարդու պես հագնված:

Դոնյա Մաթիլդան անգրագետ կին էր: Դա չէր անհանգստացրել Ֆրիդային այն օրերին, երբ նա տղամարդու կեցվածքով նկարվում էր հոր լուսանկարչական խցիկի առջեւ: Այն ժամանակ մայրն այլեւս իմաստ չէր տեսնում՝ դրա հետ կապված որեւէ բան ձեռնարկելու: -Կարդալ եւ գրել սովորե՞լ: Ինչի՞ համար: Կյանքն առանց այդ էլ բավականին բարդ է, - ասում էր նա աղջկան:

Մայրիկը ճիշտ էր,- այդ առավոտ տխուր մտածեց Ֆրիդան,- որքա՜ն ճիշտ էր նա:

Հետագայում Ֆրիդան հաճախ մտածում էր՝ որքան տարօրինակ է, որ ինքն ամենափոքր կանխազգացում իսկ չէր ունեցել, թե ինչպիսի շր-

ջադարձ կկատարեր իր կյանքն այդ օրը: Սեպտեմբերն էր: Նա զբոսնում էր շուկայամերձ տարածքում՝ Ալեքսի հետ ձեռք ձեռքի եւ ներծծում աշնան առաջին անձրեւի բուրմունքը: Նրա ուշադրությունը գրավեցին հնաոճ իրերի խանութի ցուցափեղկի դեղին սեխերն ու ճենապակե տիկնիկի երկնագույն զգեստը: Վառ, պարզորոշ հիշում էր գույներն ու նարնջի կտորը, որով Ալեքսը կերակրել էր իրեն: Նարնջի թարմացնող հյութից իր ամբողջ մարմինը փշաքաղվել էր: Հյութը ցած հոսելով կաթում էր Ալեքսի մատներից, իսկ ինքը լիզեց դրանք մեկ առ մեկ: Ինքն ու Ալեքսը կանգնած էին փողոցում, Ալեքսը սուզվել էր իր աչքերի մեջ: Մեղմ քամին շոյում էր իր մեջքը, ինքը հպվեց Ալեքսի մաշկին՝ վերնաշապիկի տակ, եւ մի ջերմություն սփռվեց իր ընդերքում: Գիտեր, որ անցորդներն իրենց են նայում. մի կին ժպտաց:

Վթարին նախորդող այդ պահը, երբ նա ոտքից գլուխ գիտակցում էր իր մարմինը, թերեւս վերջին անգամն էր իր կյանքում, որ զգում էր ամբողջը: Հազիվ թե իմանար, որ ընդամենը մի քանի վայրկյան անց իր ամբողջ աշխարհը փշուր-փշուր է լինելու, եւ որ ոչինչ այլեւս նույնը չի լինելու: Երբ էլ որ հիշում էր այդ օրը, մտածում էր, թե ինչպես է իր ճակատագիրը կնքվել թղթե հովանոցով, որ Ալեքսն էր իր համար գնել շուկայից: Արդեն կանգառում էին, երբ հիշեց, որ իր հովանոցն ինչ-որ տեղ է մոռացել: Ետ վազեցին եւ մեկ ուրիշը գնեցին: Մանրամաղ անձրեւը դադարել էր հենց այն պահին, երբ տրամվայ էին նստում: Այդ ժամանակներում տրամվայները դեռ նորություն էին քաղաքում եւ փայտից էին պատրաստված: Տրամվայը լեփ-լեցուն էր, եւ նրանք երկուսով հազիվ կարողացան տեղ գտնել: Նույնիսկ այսօր ինքը կճանաչեր ուղեւորների դեմքերը՝ փիրուզագույն շալով հնդկուհուն, կապույտ տաբատով տղամարդուն՝ կեղտոտված ծնկներով, ասես ծնկի իջած էր եղել կամ գուցե ընկել էր, չիլի կարմիր պղպեղով լի զամբյուղով կնոջը: Քրտինքի, թաց մազերի եւ Ալեքսի ձեռքի նարնջի հոտը: Կիսաշրջազգեստի միջով ինքն զգում էր Ալեքսի ոտքի հպումը: Տրամվայն արդեն պատրաստվում էր թեքվել, երբ արգելակների ճռռոց լսվեց: Ապա դղրդոց, փայտի ճարճատյուն եւ փշրվող ապակու ձայն: Ֆրիդան ո՛չ հարվածն զգաց, ո՛չ էլ ցավ:

Ճիշտ չէ, թե վթարի ենթարկվելիս ինչ-որ բան ես զգում: Չկա ոչ մի զգացողություն, ոչ մի միտք: Կաս եւ չկաս՝ օդում պտտվող փոշեհատի-

կի նման: Տեսնում ես կապույտ երկինքը եւ նրա մի մասն ես, մի մասն ես օդի, ջրի, զբոսայգու կանաչ բուսականության: Սահում ես լռության մեջ, որտեղ սեփական սրտի տրոփյունն անգամ չես կարող լսել: Արդյո՞ք դա անէությանը հաղորդակցվելու փորձառությունը չէ:

Եվ անդորր, այո, հիշեց անդորրը: Ըստ էության՝ դա նրա միակ հիշողությունն էր վթարի մասին: Երեխա ժամանակ մի քանի անգամ ծալում էր թուղթը, ապա մկրատով համաչափ, սիմետրիկ պատկերներ էր կտրտում: Նրա թղթե արեւը ճառագայթներ ուներ, բայց զուրկ էր կենտրոնից: Վթարի մասին իր հիշողությունը նման էր մեջտեղում անցք ունեցող այդ արեւին:

Չգիտեր, թե որքան ժամանակ էր բացակայել իր մարմնից: Հաջորդ բանը, որ հիշում էր, պղպեղներով կինն էր, որ վազում էր՝ սեփական աղիքները ձեռքերում պահած: Լսեց ինչ-որ մեկի օգնության կանչը, իսկ հետո մեկ ուրիշի բղավոցը՝ *«Ballerina, ballerina»:* -Ի՞նչ հիմարություն,- մտածեց,- ինչի՞ մասին է խոսում:- Ձեռքը բարձրացրեց ու տեսավ, որ արյունոտ է եւ ոսկու փոշով պատված: Տեսարանն անիրական էր, ասես իրեն անսպասելիորեն տեղափոխել էին թատրոն: Կամ արդեն մահացած էր:

Հիշեցի, որ կարմիրը եւ՛ կյանքի գույնն է, եւ՛ մահվան գույնը: Հետագայում, երբ փորձում էի հիշել ջախջախված մարմինս, արյունն ու ոսկու փոշին, մտածում էի, որ կյանքս դեռ այն ժամանակ էր գունագեղ ու զարդարուն: Եթե երբեւէ նկարեի վթարը, կօգտագործեի այդ երկու գույները: Բայց դա միակ նկարն է, որը երբեք չեմ նկարել, որքան էլ որ ընկած էր իմ բոլոր աշխատանքների հիմքում:

Որովհետեւ այն ամենն, ինչ երբեւէ իրականում նկարել եմ, իմ վթարն է եղել,- մտածեց նա այդ առավոտ պատուհանից դուրս նայելով:

Հետագայում իմացավ, որ վթարից հետո մերկ պառկած է եղել փողոցում՝ արնաշաղախ մարմինը պատված ոսկու փոշով, որը երեւի տան պատեր ներկող աշխատողներից մեկն է տանելիս եղել: Հիշեց վրան հակված մի տղամարդու, որ ծունկը սեղմել էր իր որովայնին եւ իր ներսում գտնվող ինչ-որ բան էր դուրս քաշում: Հանկարծ արյունը հորդեց՝ հոսելով ազդրերն ի վար: Ճչաց եւ նորից կորցրեց գիտակցությունը:

Ուշքի եկավ հիվանդանոցում: Ալեքսը, որ վթարից հրաշքով էր անվնաս պրծել, հետո իրեն ասաց, որ իր աջ ոտքը՝ կաղ ոտքը, կոտրվել էր

տասնմեկ տեղից, իսկ աջ ոտնաթաթը հոդախախտ էր եղել եւ փշրվել: Ողնաշարի ստորին հատվածը կոտրվել էր երեք տեղից, կոտրվել էին անրակը եւ երկու կողոսկր: Ձախ ուսը դուրս էր ընկել: -Բժիշկները կկարողանային ամեն ինչ նորից կարգավորել, բացի ողնաշարից եւ կոնքի կոտրվածքից,- ասաց Ալեքսը: Հետո նկարագրեց այն, ինչ տեսել էր սեփական աչքերով. մետաղե երկար մի ձող՝ բազրիքը, մխրճվել էր իր որովայնը ձախ ազդրի մոտ եւ դուրս եկել հեշտոցից:

Ողջ-ողջ ցցի էր հանվել: Հիվանդանոցում մարդիկ նրան պատգարակով արագ տեղափոխեցին միջանցքներով՝ բացականչելով. -Շտա՛պ, շտա՛պ, շտա՛պ: Վիրահատարանում սպիտակ դիմակով բուժքույրը թեքվեց վրան եւ ասաց. -Խորը շունչ քաշեք եւ հաշվեք մինչեւ տասը:- Ներշնչեց եթերը՝ մտքով իսկ չանցկացնելով, թե կյանքում դեռ քանի անգամ կենթարկվի դրա հոտին: Վերջապես թաղվեց երանելի մոռացության մեջ:

Բժիշկները վստահ չէին, թե ողջ կմնա: Բայց նա ողջ մնաց: Նրա երիտասարդ մարմինը դիմադրեց: Նա ապաքինվեց՝ անմիջապես սովորելով, թե ինչպես իրեն վարժեցնի ցավին, որ բնակություն էր հաստատել իր մարմնում եւ դարձել ենթավարձակալ, որին երբեք չէր կարողանա վտարել:

Տղամարդը, որ քաջություն էր ունեցել ձողը սառնասրտորեն դուրս քաշելու նրա մարմնից, Ալեքսին օգնեց Ֆրիդային պառկեցնել բիլիարդի սեղանի վրա մոտակա բարում, երբ օգնության էին սպասում: -Պառկած էիր այդտեղ՝ կանաչ թաղիքի վրա՝ մերկ, արյունով պատված ու ոսկու փոշում թաթախված: Անցորդները կարծում էին, թե վիրավոր պարուհի ես, դրա համար էլ քեզ անվանեցին *ballerina*՝ պարուհի: Դու այնքան գեղեցիկ էիր,- վիրահատության հաջորդ օրը նրան ասաց Ալեքսը, երբ նստած էր կողքին եւ բռնել էր ձեռքը:

Երեխա ժամանակ ստիպված էր սովորել անշարժ պառկել, եւ դա օգտակար եղավ վիրահատությունից հետո: Անշարժ, ոտքից գլուխ գիպսով պատված՝ առաջին մի քանի օրը կարող էր միայն լաց լինել: -Ես սովոր եմ ցավին, այնպես որ դա լավ է,- ասաց Ալեքսին, կարծես նա՛, ոչ թե ինքը մխիթարվելու կարիք ուներ: Ինքը ողջ էր մնացել եւ, չնայած ցավին, թեթեւություն էր զգում: Բայց ժամանակ առ ժամանակ համակվում էր բոլորովին նոր զգացողությամբ՝ գիտակցելով, թե որքան փխրուն եւ թափանցիկ էր իր շուրջն ամեն բան: Մահը տեսած լինելով մյուս կող-

մից՝ նա սառնարյուն վստահության էր հանգել: Ասես հանկարծ մարդկանց միջով եւ սեփական իրականությունից անդին տեսնելու ունակություն էր ձեռք բերել:

Հիվանդանոցում վերադարձավ սեփական մարմնի՝ օտարածին էություն լինելու այդ նախկին զգացողությունը. ինքնատարանջատման այդ փորձառությունն էր վերապրում՝ հիշելով, թե ինչպես էր փախչում պատուհանի ապակու մյուս կողմի փոքրիկ աղջկա մոտ: Նա սեփական մարմինն ընկալում էր որպես մի մեխանիզմ. բոլոր զգայարանների սաստիկ սրվածությունը նրան թույլ էր տալիս հետեւել ցավի ընթացքին՝ ե՛րբ էր հայտնվում եւ որտե՛ղ, ինչպե՛ս էր այդ մեխանիզմի յուրաքանչյուր մաս գործում՝ անկախ իր գիտակցական կամքից, ինքնաշխատ ավտոմատի պես: Գիտակցում էր, թե որքան է իր մարմնի վիճակն ազդում իր զգացմունքների, վարքի, մտքերի վրա: Այն, որ դա *իր մարմինն* էր, վթարից հետո նրա համար այլեւս նույն բանը չէր նշանակում:

Նա արդեն սովորել էր (պոլիոմիելիտ. դաս առաջին), թե որքան դժվար է պատկերացնել ուրիշի ցավը, նույնիսկ այն ժամանակ, երբ այդ ուրիշը սեփական երեխադ է: Մայրը ցնցումից համրացել էր, իսկ հայրը հիվանդացել: Հոր առողջական վիճակն արդեն իսկ վատթարացել էր էպիլեպսիայի հաճախակի նոպաներից, որ տանջում էին նրան: Այն մեկ ամսվա ընթացքում, ինչ ինքն անշարժացել էր հիվանդանոցում, մայրը երկու անգամ այցելեց իրեն, իսկ հայրը՝ միայն մեկ անգամ: Նրանց համար այդ ամենը չափազանց շատ էր թվում: Եթե չլինեին քույրը՝ Մաթիլդան, Ալեքսը եւ իր դպրոցական ընկերները, ինքը բոլորովին մենակ կլիներ: Քսան այլ հիվանդների հետ մի սենյակում էր՝ դագաղի նման գիպսե խեցու մեջ մեջքի վրա պառկած: Մարմնի ոչ մի մասը չէր կարողանում շարժել, բացի ձախ ոտքի եւ ձախ ձեռքի մատներից:

Սկզբում ցավն անտանելի էր: Եվ նորից՝ խոսքեր չէր գտնում բացատրելու, թե որքան տանջալից էր դա: Կարող էր ասել, որ դա ծակող ցավ է եւ թափանցել է մարմնի բոլոր մասերը: Բայց հրաժարվեց՝ նույնիսկ չսկսած: Ո՛չ միայն ոչ ոք չէր հասկանա, այլեւ շուտով կհոգնեին՝ հասկանալ փորձելուց: Ինչպե՞ս կարող էր նկարագրել կրակի վրա այրվող մարմինը, կսկծացող վերքը: Այդ բառերն օգտագործելո՞վ: Գիտեր, որ խոսքերը չեն օգնի մարդկանց՝ զգալու այն, ինչ ինքն է զգում: Մի ան-

գամ, երբ մոր եւ քույրերի հետ եկեղեցում էր, երիտասարդ մի կին ուշագնաց եղավ քահանայի քարոզի ժամանակ: Կնոջ վերջույթներն սկսեցին ցնցվել անզուսպ դողէրոցքով, եւ սարսափազդու խորն ու սպառնալից տղամարդկային մի ձայն արտաբերվեց նրա բերանից: -Սատանա՛ն է, սատանա՛ն,- գոչեց քահանան՝ տենդագին խելահեղությամբ խաչը թափահարելով նրա վրա:

Ես դիվահար եմ,- սարսափով մտածում էր հիվանդանոցում պառկած՝ համոզված լինելով, որ այդ նույն դեւն այժմ բնակվում է իր մարմնի եւ ոսկորների մեջ:

Կարծում էր, որ ավելի հեշտ կլիներ տանել ցավը, եթե ինչ-որ մեկը գոնե իմանար, թե ինքն ինչ է զգում: Ինքն իրեն սփոփում էր այն միակ ձեւով, որը գիտեր, որը մայրն էր սովորեցրել իրեն: -Կանցնի,- ասում էր իրեն այցելողներին:- Երբ ապաքինվեմ, ամեն ինչ առաջվա պես կլինի:- Ալեքսը համաձայն էր: -Իհարկե,- ասում էր:- Իհարկե, ամեն ինչ նույնը կլինի:

Գիշերը հետեւում էր, թե մահն ինչպես է թեւածում իր անկողնու շուրջը եւ երազում էր դեղին թիթեռ լինել:

Հետո, շատ ավելի հետո նա մի կտավ նկարեց, որն անվանեց «Երազ»: Դա նկարելու համար ժամանակ եւ ուժ պահանջվեց: Հիվանդանոցում եղած առաջին մի քանի գիշերը վախենում էր, որ մահն իրեն կպահանջի քնած ժամանակ: Ինչպե՞ս պարտության մատնել մահին: Ինչպե՞ս խաբս տալ մահին: Ինչպե՞ս նրան հեռու քշել: Կմախքը նկարելուց հետո նա իրեն ավելի լավ էր զգում: Ինչպես ստվարաթղթե կմախքները, որ վաճառում էին շուկայում Մեռյալների օրը, իր սեփական նկարված մահը դարձավ կենցաղային հարմարանքի տիպի ինչ-որ բան: Նա կմախքը դրեց իր անկողնուն եւ գանգը հենեց երկու բարձերի վրա՝ ավելի հարմար լինելու համար: Կմախքի ձեռքերի մեջ ծաղիկների մի փունջ դրեց:

Այդպես նա կերպավորեց իր վախը, բայց դա չնվազեցրեց մահվան ազդեցությունը: Նկարում անհանգստացնողը կմախքը չէ, այլ բույսը՝ քնած Ֆրիդայի վերեւում, որ տարածում է իր արմատները, հյուսում իր սարդոստայնը, սպասում:

Եվս երեք ամիս անցկացրեց տանը՝ անկողնուն գամված: Նրա շուր-

ջը պատ էր բարձրանում: Նա արդեն մեկուսացած էր, հույսերը խորտակված, թակարդված մի մարմնի մեջ, որը երբեք չէր վերականգնվելու եւ որից ինքը միայն հազվադեպ կարող էր փախչել:

Բայց ջախջախված մարմինը նրան ետ չէր պահում աղմկարար ու պահանջկոտ լինելուց: Կրկին լսեց մոր ձայնը, որ ասում էր՝ *Կանցնի,* ինչպես մոգական մի հմայախոսք, որը վերականգնելու էր իր առողջությունը: Մայրը չգիտեր՝ ուրիշ ինչ կերպ մխիթարեր դստերը: Դոնյա Մաթիլդան չէր հասկանում, թե ինչու պետք է նման ողբերգություն պատահեր իր ընտանիքի հետ: Որպես բարեպաշտ կաթոլիկ՝ նա տանջվում էր այս հարցի համար եւ պատասխանը փնտրում՝ երկինք նայելով: Ինչո՞ւ բարի Տերը, որին ինքն ամեն օր աղոթում էր, թողեց, որ իր աղջիկն այդքան տառապի: Բավական չէ՞ր, որ նա հիվանդ էր պոլիոմիելիտով, եւ դա թիրախավորել էր նրան ամբողջ կյանքի ընթացքում: Թե՞ Աստված պատժում էր իրեն՝ Մաթիլդային: Ֆրիդան գիտեր, որ ամեն օր վաղ առավոտյան, անտանելի շոգն սկսվելուց առաջ, մայրը գնում էր մոտակա եկեղեցի, մատներն ընկղմում մուտքի մոտի՝ մկրտության քարե ավազանի սուրբ ջրի մեջ, ծնկի իջնում եւ խաչակնքվում: Ապա նստում էր ետեւի նստարանին, պառավի պես գլխաշորը ցած քաշում ճակատի վրայով մինչեւ հոնքերը եւ աղոթում, աղոթում, որ Աստված ողորմա իր խեղճ, դժբախտ երեխային:

Նյարդերն արդեն քայքայված՝ Դոնյա Մաթիլդան իրեն տանջում էր հետագա կասկածներով: Ֆրիդան, չցանկանալով մոր հոգսերն ավելացնել, ձեւացնում էր, թե քաջ է: Եվ, այո՛, քաջ էր՝ զգացմունքախառն իր ստերով՝ փորձելով փարատել ցանկացած մտահոգություն, որ կարող էին ունենալ իր ամենամոտիկ մարդիկ: -Նայիր ինձ, դե՛, ես լավ եմ, ավելի ու ավելի եմ լավանում, - ասում էր:- Ինձ համար մի՛ անհանգստանա, մայրիկ, ո՛ղջ կմնամ:- Նա իր մեջ ուժ էր գտնում՝ մյուսների տրամադրությունը բարձրացնելու եւ վերջ էր տալիս խղճահարությանը, որն այդքան արհամարհում էր: Մի քանի ամիս անց, երբ Ֆրիդան իրոք լավ էր, Դոնյա Մաթիլդան երախտագիտության պատարագ պատվիրեց՝ համոզված, որ իր աղոթքները լսելի են եղել: Որոշ ժամանակ,- ըստ էության բավականին երկար ժամանակ,- նրա հումորը վերականգնվեց:

Ֆրիդան երբեք ինքն իրեն չէր հարցնում, թե ինչու դա պետք է իր հետ պատահեր: Չէր հավատում, թե կա մեկը, որը նման հարցի պատասխանն ունի:

Հենց որ լավ զգաց, եւ մեջքի ու ոտքի ցավը դարձավ տանելի, սկսվեց ծանծրույթը: Ընկերներին խնդրեց այցելել, գրել եւ գրքեր ուղարկել իրեն: Խոհարարին հանձնարարեց հատուկ ուտեստներ պատրաստել՝ միայն իր համար: Քիթիին խնդրեց մնալ եւ ընկերակցել իրեն, ինչպես նախկինում: Ալեքսին գրած նամակներում բողոքում էր, թե որքան է ծանձրանում եւ ինչպես է նախանձում նրան՝ Եվրոպայում նրա առաջիկա շրջագայությունների հետ կապված: Բայց ծանձրույթը նշան էր, որ ապաքինվում է:

Երբեմն սպիտակեղեն էր ասեղնագործում, բայց հիմնականում կարդում էր: Դոնյա Մաթիլդան գիտեր, սակայն, որ իր դուստրը չի կարող ամբողջ ժամանակը կարդալով անցկացնել: Նա մտածեց, որ նկարելը կարող է լուծում լինել: Ֆրիդան այդ ամառն անցկացրել էր՝ աշխատելով հոր ընկերոջ տպարանում: Տուն էր գալիս եւ ոգեւորված խոսում շվեդ նկարիչ Անդերս Ցորնի մասին, որի նկարները կրկնօրինակում էր: Հայրը նրան սովորեցրել էր, թե ինչպես ռետուշի միջոցով շտկի լուսանկարները, եւ ինքն արդեն լավ հասկանում էր գունային երանգներից ու վրձնահարվածներից: Հայրը երբեմն գովում էր նրա համբերատարությունն ու կենտրոնանալու կարողությունը: Եվ այսպես, Դոնյա Մաթիլդան որոշեց, որ նկարչությունը կարող է Ֆրիդային ժամանակավորապես շեղել եւ զբաղեցնել, մինչեւ լիովին ապաքինվի: Հենց որ ոսկորներն ամրանային, եւ կարողանար ոտքի կանգնել, այլեւս դրա կարիքը չէր ունենա: Սա՛ ասաց նա իր դստերն այն առավոտ, երբ նրան բերեց ներկերն ու վրձինները, որոնք Ֆրիդան լավ գիտեր, քանի որ դրանք իր հորինն էին:

Հիշում էր՝ մայրը կանգնած էր իր մահճակալի մոտ՝ մուգ շագանակագույն ատլասե զգեստով, որն ընդգծում էր նրա գունատ դեմքը: Մայրը բավական ժամանակ իրեն լավ չէր զգում. նրան տանջում էին ստամոքսի սուր ցավերը, որ, ի վերջո, վերանալու էին՝ միայն մեկ կամ երկու ամիս հետո վերսկսվելու համար: Տանջվում էր նաեւ գլխացավերից, որ հաճախ նրան ստիպում էին ամբողջ օրն անկողնում անցկացնել: Նրանք երկուսով մտերիմ չէին. իսկապես, Դոնյա Մաթիլդան իր չորս դուստրերից ոչ մեկի հետ մտերիմ չէր, բացառությամբ, թերեւս, Քիթիի, որը դեռ երեխայի պես էր եւ երբեք չէր հակադրվում մորը: Մոր եւ դուստրերի միջեւ դատարկ մի տարածություն կար, մի հեռավորություն, որ լցված էր սպասուհիներով, որոնք եփում էին, լվանում եւ հոգում նրանց մասին, կանայք, որոնց ծանրաշարժ խոշոր մարմինները կանգնած էին

աղջիկների եւ նրանց մոր միջեւ: Ֆիզիկական շփումը շատ քիչ էր, շատ քիչ էին գրկախառնություններն ու ողջագուրումները: Ֆրիդան միշտ զգում էր մոր ներկայությունը, բայց ասես նա կողքի սենյակում լիներ, ո՛չ ամբողջովին իր մոտ, մռայլ, տխուր եւ վատառողջ:

Դրա համար էլ զարմացավ, երբ մայրը բերեց ներկերն ու վրձիններ-ը: Ֆրիդան երբեք չէր մտածել նկարելու մասին: -Ա՛յ, սա կարող է քեզ հետաքրքրել,- ասաց մայրը,- նկարելը քեզ կօգնի հանգստանալ եւ միտքդ շեղել վթարից:- Ֆրիդան նկատեց, որ Դոնյա Մաթիլդայի համար դժվար էր արտասանել այդ բառը: Մայրը նրան ցույց տվեց փոքրիկ պատկերակալը, որն այնպես էր պատրաստել, որ կարելի էր դնել մահճակալի վրա: Ֆրիդան զգաց, թե ինչպես կոկորդում մի գունդ շարժվեց, եւ արցունքներն այրեցին աչքերը: Երախտապարտ էր մորը՝ իր առողջության նկատմամբ ցուցաբերած անհանգստության համար:

Մայրը սովորաբար այդքան բացեիբաց չէր դրսեւորում իր սերը, եւ ինքը համոզված էր՝ այդ պահին Դոնյա Մաթիլդան կարծում էր, որ դուստրն այլեւս երբեք չի քայլելու:

Ֆրիդան սեղմեց մոր ձեռքը եւ համբուրեց այն: Դոնյա Մաթիլդան հուզված էր ու շփոթված: Նա շոյեց դստեր ճակատը՝ գլուխը շրջելով մի կողմ, որպեսզի թաքցնի իր զգացմունքները: Նրա համար անտանելի էր տեսնել իր կենսախինդ երեխային՝ պառկած այդպես անշարժ, այդպես վիրավոր եւ այդուհանդերձ այդպես համբերատար: Նա ինքն իրեն ասում էր, որ ամեն ինչ ավելի լավ կլինի, երբ Ֆրիդան այլեւս գամված չի լինի անկողնուն, եւ իրենք վերջապես կհեռացնեն գիպսը: Կմոռանա իր ամբողջ ցավը, նրա սպիները կբուժվեն, եւ կյանքը կշարունակվի այնտեղից, որտեղ կանգ է առել:

Ֆրիդան վեց տարեկանից զբաղվում էր տարբեր մարզաձեւերով, նույնիսկ ֆուտբոլ էր խաղում, այդ պատճառով էլ տղայի պես ուժեղ էր, մկանուտ եւ արագաշարժ: Վթարից հետո, երբ գամված էր անկողնուն եւ չէր կարող շարժվել, ստիպված էր մոռանալ այն ամենն, ինչ իրեն սովորեցրել էին: Վարժվում էր տոկունությանը: Սկզբում տանջալից ցավն էր: Հետո խելագարվեց, քանի որ ստիպված էր անշարժ պառկել: Մանկության փոքրիկ ընկերուհին այլեւս կողքին չէր, որ օգներ իրեն: Բայց հիշեց, թե ինչ էր սովորեցրել իրեն իր փոքրիկ ընկերուհին (դաս երկրորդ). երբ ցավը քեզ գամում է մարմնիդ, դու պետք է դուրս գաս քեզնից, եթե ուզում ես ողջ մնալ: Եվս մեկ անգամ նա պետք է ձեւ գտներ անշարժ պառկելու եւ միեւ-

նույն ժամանակ՝ լինելու ուրիշ մի տեղում - եւ ուրիշ մեկը: Նկարելու մասին մոր առաջարկը խիստ հետաքրքրեց նրան: Եվ երբ հայրը միտք հղացավ նրա անկողնու վերեւում հայելի ամրացնել, որպեսզի նա կարողանա տեսնել իր դեմքը, սկսեց նկարել այն, ինչ ամենամոտն էր՝ իրեն:

Վթարից ի վեր հայրը գլուխը կորցրել էր: Նախկինից ավելի ինքնամփոփ էր դարձել, հիմա հազիվ էր բերանը բացում: Մայրն ինքն էր նրան ճաշ մատուցում: Նա ուտում էր մենակ, անխոս, առանց բառ իսկ արտաբերելու, հետո փակվում էր իր սենյակում եւ դաշնամուր նվագում: Դոն Գիլյերմոն եկել էր Եվրոպայից՝ մեկ այլ աշխարհից եւ այլ ժամանակից, եւ թվում էր, թե երբեք ամբողջությամբ չի միացել նրանց հետ՝ իրենց աշխարհում ու ժամանակում: Ֆրիդայի համար անտանելի էր նրա տխրությունը: Մանավանդ որ՝ նա Աստված չուներ, որին ապավիներ: Երբեմն մտածում էր, թե ինչպե՞ս կարող էր մայրն ապրել այդքան աներեւակայելի ներամփոփ, փակ ու տխուր տղամարդու հետ:

Այն ժամանակ ես շատ քիչ բան գիտեի տղամարդկանց մասին, որպես զույգ ապրելու մասին, այն մասին, թե նրանց համար արդյոք ավելի լավ է լռակյա՞ց լինել, թե՞ շատախոս,- մտածեց Ֆրիդան՝ արդեն լրիվ արթնացած: Նրա սենյակը դեռ թաղված էր մթան մեջ: Բայց դա արդեն արգանդի գիշերային, թավշյա, տաք ու հարմարավետ մութը չէր: Լույսը կարծես ուներ իր սեփական կյանքն ու առաքելությունը՝ նրան ենթարկել եւս մեկ օրվա:

Համոզված էր, որ ոտքի տանջալից, դիվային ցավը մանկության տարիներին՝ մի յուրատեսակ նախապատրաստություն էր վթարին: Հիշողության մեջ դաջվել էր, թե ինչպես էր կորցրել խոսելու կարողությունը առաջին նոպայից հետո: Այդուհանդերձ դեռ պետք է ընդուներ, որ ցավը չի կարող արտահայտվել բառերով, այլ միայն՝ անհոդաբաշխ ճիչերով: -Ո՛չ թե ճիչերին: Ո՛չ թե բառերով նկարագրություններին: Հո՛րն է պարտական,- մտածեց,- խելահեղ հայացքի՛ն՝ նրա աչքերում, որն ինքը երբեք չի մոռանա, եւ նրա խոսքերին՝ *Ասա՛ ինձ, ասա՛:*

Առաջին անգամ, երբ վրձինը վերցրեց նկարելու, պառկած էր այն նույն սենյակում, որտեղ, պոլիոմիելիտով հիվանդ, պառկած էր երեխա ժամանակ, միայն թե այս անգամ դատապարտված էր ցավի՝ ամբողջ կյանքի ընթացքում: Ցավը տարածվել էր ամբողջ մարմնով մեկ՝ դիրքավորվելով եւ պատրաստվելով մնալ այդտեղ:

Այդքան երկար ժամանակ անշարժ մնալով՝ առավել դիտողունակ էր դարձել: Ոչինչ այլեւս պարզ կամ փոքր չէր թվում. ասես աշխարհը տեսնում էր խոշորացույց ապակու միջով: Ձանազանում էր գրեթե անտեսանելի նշաններն անգամ՝ իր սենյակի առարկաների հարթ թվացող մակերեսների վրա: Նկատում էր մանրամասներ, որոնց վրա նախկինում երբեք ուշադրություն չէր դարձրել՝ միահյուսվող բարակ եւ հաստ թելերը, որ անհավասար անցնում էին անկողնու սպիտակեղենի վրայով. փոքր ճաքերն ու ճեղքերը, որ փոշի էին հավաքում երբեմնի հարթ ու սպիտակ պատի վրա. նրան անհանգստացնում էին բարձի վրա ասեղնագործված վարդերի անհամաչափությունները,- երբ անուշադրության պահին ինչ-որ մեկի ձեռքը (մո՞ր, քրո՞ջ) կարմիր թելն անցկացրել էր կապույտ նշագծումից ընդամենը մեկ միլիմետր հեռու,- պահը, երբ ինչ-որ մեկը հավանաբար մտնում էր սենյակ եւ կանչում իր անունը՝ խանգարելով կենտրոնանալ: Փոքր սեղանի մուգ շագանակագույն ոտքի վրայով բաց գույնի շեղագիծ մի շերտ էր իջնում, ասես կատուն ճանկռած լիներ: -Բայց կատուն ինչո՞ւ պիտի ճանկռեր սեղանի ոտքը,- մտածեց: Եվ այդ միտքը նրան տեղափոխեց մեկ այլ աշխարհ՝ երեւակայական ձեռքերի, երեւակայական կատուների:

Հանկարծակի սահմանափակված իր աշխարհում, որի օրեցօր փոքրանալն զգում էր անընդհատ, նա միաժամանակ նոր լույսի ներքո տեսավ դեմքերը: Ավելի շատ ուշադրություն դարձրեց դիմագծերին, դեմքի արտահայտություններին, ծամածռություններին, ձայնի տարբեր հնչերանգներին եւ հագուստի գույներին: Կարծես անկողնուն գամված լինելն իրեն ինչ-որ կերպ ստիպում էր ավելի շատ նկատել շուրջն եղածը եւ աստիճանաբար աշխարհին նոր, հետաքրքրաշարժ տարողություն էր հաղորդում:

Նույնիսկ իրեն էր այլ կերպ տեսնում: Նայելով իր դեմքին հայելու մեջ՝ նկատեց, որ իր երիտասարդ մաշկը չի համընկնում մութ, գրեթե խոժոռված հայացքի հետ: -Ծերանում եմ,- մտածեց,- տարիքն արդեն երեւում է աչքերիս մեջ: Ինձ թվում է, թե ամեն ինչ իմացա միանգամից, մի ակնթարթում: Ընկերուհիներս աստիճանաբար են կին դառնում, իսկ ես ակնթարթորեն տարիքս առա: Կարծես ամեն ինչ շատ պարզ է դարձել, եւ ես գիտեմ, որ այնտեղ, մյուս կողմում ոչինչ չկա, որովհետեւ եթե լիներ, կտեսնեի,- գրեց Ալեքսին:

Հիմա գրեթե ամեն օր նկարում էր՝ ուրվանկարներ, էտյուդներ եւ իր շրջապատի մարդկանց դիմանկարները, բայց հիմնականում՝ իրեն: Դա այլեւս պարզապես ժամանց չէր: Նկարչությունն ամբողջովին կլանեց նրան: Նա հետեւողականորեն ուսումնասիրեց եվրոպական արվեստի պատմությունը, հատկապես Վերածննդի դարաշրջանի մեծ վարպետների աշխատանքը, եւ սեփական ձեռքը վարժեցրեց տոկունության: Արագ առաջադիմեց, ձեռքն ավելի վստահ դարձավ եւ ավելի արագ էր հասնում իր ուզածին: Նրան դուր էր գալիս Ալեքսի համար նկարած իր ինքնանկարը: Ինքն այն ուղարկեց Ալեքսին՝ հուսահատությունից, սիրուց, նրան ավելի մոտ զգալու անհրաժեշտությունից մղված: Անընդհատ խոսքեր էր վատնում նրա վրա, ամեն օր գրում էր նրան, բայց դա բավական չէր: Եվ նա գրեց իրեն, բայց նրա նամակները մի տեսակ քաղաքավարի էին, արդեն հեռավոր ու սառը: Ասես փոստով ուղարկելուց առաջ դրանք տվել էր կարդալու մեծահասակ մեկին: Ալեքսն իր առաջին սերն էր, եւ ինքը չէր կարողանում համակերպվել այն մտքի հետ, որ վթարը կարող է բաժանել իրենց: Իր անմխիթար վիճակը միայն ժամանակավոր էր. պարզապես համբերիր, Ալեքս,- գրում էր նրան սկզբում: Բայց Ալեքսը խուսանավում էր, եւ մինչ ինքն ապաքինվում էր դեռ, նա պատրաստվում էր ճանապարհորդել:

Ալեքսը նրանց փոքրիկ խմբի ղեկավարն էր եղել: Նրա հետ՝ դպրոցն ավելի քիչ էր ձանձրալի: Իրենք միասին էին երեք տարի՝ միջին դպրոցում սովորելու սկզբից մինչեւ վթարը: Հավանաբար հենց նա էր փրկել իր կյանքը: Ալեքսի այցելությունները հիվանդանոց ավելի ու ավելի հազվադեպ էին դառնում, իսկ հետո նա հեռացավ: Անկողնուն գամված ընկերուհուց նրան բաժանելու համար ծնողները, որոնց համար պարզ էր, որ վթարի հետեւանքով Ֆրիդան ընդմիշտ հաշմանդամ է դարձել, Ալեքսին երկարատեւ ճանապարհորդության ուղարկեցին Եվրոպա: Ֆրիդայից որքան հնարավոր է հեռու: Հետագայում Ֆրիդան մտածում էր՝ արդյոք Ալեքսն արդեն այդ ժամանակ զգացե՞լ էր, թե վթարը որքան է փոխելու իրենց հարաբերությունները:

«Ինքնադիմանկարում» *նրա դեմքի արտահայտությունը մեղմ է, հայացքը՝ մելամաղձոտ, տխուր ժպիտի նրբերանգով: Մարմինը թաքնված մարտահրավեր է արտահայտում, բայց դեմքը լուրջ է, աչքերը՝ հանգիստ ու թախծոտ: Նկարը մեղմություն, քնքշություն, ոգեղենություն է*

ներշնչում: Եվ մենություն՝ սեւ մթության մեջ պարուրված, որ առանձնացում է նրան իր շրջապատից: Դա Ֆրիդայի միակ ինքնանկարն է, որտեղ նա դեռ նուրբ, խոցելի, զարմանալիորեն կանացի՝ զգլխիչ աղջիկ է, որն ասես խնդրում է Ալեքսին՝ պաշտպանել իրեն: Այդ նրբությունը բացակայում է նրա հետագա ինքնանկարներից, որտեղ նա ասես զրահ է հագել: Կամ դիմակ:

Այդ նույն տարում նկարեց քրոջ՝ Ադրիանայի դիմանկարը՝ խոր կտրվածք ունեցող լանջաբաց զգեստով: Նրա ուսերն ու կուրծքն ասես դուրս են թափվում զգեստից, որն այնպիսի տեսք ունի, կարծես ուր որ է ցած է սահելու հարթ սպիտակ մաշկի վրայից եւ մերկացնելու է ցանկագրգիռ մարմինը: Կարծես Ֆրիդան միտումնավոր է նկարել այդ դիմանկարը՝ որպես իր ճիշտ հակապատկերը: Ադրիանայի մեջ չկա զսպվածության կամ նրբագեղության նշույլ, նա զուտ ցանկասիրություն է: Այնուամենայնիվ, նրա ետեւում ամպամած երկնքում լույս կա, գմբեթ՝ լուսավորված պատուհանով: Նրա համար հույս կա, մինչդեռ Ֆրիդայի համար կա միայն մութ, փակ տարածություն:

Միայն շատ ավելի ուշ հասկացավ, թե որքան տարբեր է այդ նկարն իր մյուս բոլոր ինքնադիմանկարներից: Եվ դա միայն իր գեղարվեստական անփորձության պատճառով չէր: Այդ առաջին ինքնադիմանկարը տարբեր էր, որովհետեւ ինքը նկարել էր գաղտնի դրդապատճառով. ուզում էր դրանով ետ նվաճել Ալեքսին: Դա Ալեքսին հրապուրելով ետ բերելու պարզ մի փորձ էր՝ իր համար բաց մնացած միակ ճանապարհով:

Ֆրիդայի դիմանկարը ստանալուց հետո Ալեքսն իսկապես վերադարձավ նրա մոտ, եւ որոշ ժամանակ նրանք կրկին միասին էին: Ֆրիդան արդեն գիտակցում էր, թե ինչն է հետագայում դառնալու իր նկարների բնորոշ առանձնահատկությունը. դա նրանց խոսելու զորությունն էր:

Հանկարծ նա մեծացավ: Կարծես մինչեւ վթարն ապրել էր առանց իր մասին իրական գիտակցության, ճյուղից ճյուղ թռչող կապիկի ձագի պես, որ ճչում է հրճվանքից՝ երբեմն հիշելով, որ ինքն այնքան էլ նման չէ մյուսներին: Հիշեց այդ զգացումը, ինքնամոռացության այդ պարբերական երանությունը, թեեւ դեռ մանկուց զգացել էր մութ մի ստվերի սավառնող ներկայությունն իր գլխավերեւում: Երբեմն, երբ բակում մեջքի վրա պառկած՝ վեր էր նայում տների պատերով շրջանակված երկն-

քի քառակուսի կտորին, անհայտ մի տեղից մի ամպ էր հայտնվում մաքուր, կապույտ երկնքում՝ հանկարծ մթնեցնելով բակը: Եվ ինքը սարսռում էր: Կամ երբ գիշերներն ուժասպառ անկողին էր սողոսկում եւ քուն մտնելուց անմիջապես առաջ, աչքերն արդեն փակ, մարմինը կուչ էր գալիս կոպիտ սավանի տակ (դեռ զգում էր դա նույնիսկ հիմա, նույն անկողնում), երբեմն պատկերացնում էր սառը մի ձեռքի հպում: Նման անսպասելի պահերին փշաքաղվում էր:

Այդուհանդերձ, դիմադրողականության աճող ուժը ստիպում էր արագ մոռանալ այդ ամենը: Սովորաբար հաջորդող էյֆորիան նրան հիշեցնում էր պահմտոցի կամ շախմատ խաղալու մասին: Ասես մի պահ խուսափել էր մահից՝ հաջորդ անգամ է՛լ ավելի ծանր հարված ստանալու համար:

Հիմա գիտեմ, որ վթարից հետո ամեն ինչ պարզապես փախուստի եւ ինքնախաբեության տրվելու մարտավարություն էր: Երբ քեզ հարվածում է տրամվայը՝ գրեթե վերածելով փափուկ մի զանգվածի, երբ զգում ես սեփական վախճանդ, չկա ապաքինում, միայն կարճատեւ դադար է,- մտածեց:

Ցավն ինձ ստիպեց գիտակցել մարմինս: Մարմինս ինձ ստիպեց գիտակցել վատթարացումն ու մահը: Այդ գիտակցությունն ինձ ծերացրեց: Իմ մահվան դատավճիռը գուցե հետաձգվել է, բայց հիմա ստիպված էի ապրել երկակի գիտակցմամբ: Ես ոչ միայն մահանալու էի - այդտեղ արտառոց ոչինչ չկար, բացի նրանից, որ ստիպված էի դա գիտակցել զգայուն տարիքում - բայց հստակ գիտեի, թե դա ինչ է նշանակում: Որովհետեւ արդեն անցել էի դրա միջով: Ի տարբերություն այլ դատապարտվածների, որոնց համար մահն աբստրակցիա է, վերացարկում, քանի որ գաղափար չունեն, թե իրականում ինչ է իրենց սպասում, մահվան իմ կեցությունն ուղեկցվում էր մշտական հիշեցումով՝ ցավի առկայությամբ:

Տասնինը տարեկան էր, երբ վերջապես նորից ոտքի կանգնեց: Իր կրթության գումարը վերջացել էր: Պետք է աշխատանք գտներ: Միակ բանը, որ սովորել էր անել ապաքինման ընթացքում, նկարելն էր: Մի երեկույթի ժամանակ հանդիպեց Մաեստրոյին՝ Մեքսիկայի ամենահայտնի նկարչին, եւ դրանից հետո գլուխը մտցրեց, թե պետք է նրան ցույց տա իր նկարները: Որոշեց, որ նա իրեն կասի՝ արդյոք իմաստ ունի՞ իր՝ նկարելու մտադրությունը: Մտքով իսկ չէր անցնում, թե Մաեստ-

րոն կարող է մերժել: Մանկության տարիներին անգամ՝ անսովոր համառ էր, բայց վթարից հետո առավել ինքնավստահ դարձավ: Հանդգնում էր անել այն, ինչ ուրիշները չէին համարձակվում, քանի որ ուներ այն մարդու քաջությունը, ով կորցնելու ոչինչ չունի:

Ճանապարհ ընկավ դեպի այն շենքը, որտեղ Մաեստրոն աշխատում էր որմնանկարի վրա: Քանի որ չէր կարող իր կտավները տանել դեպի փայտամած, խնդրեց նրան ցած իջնել: Փոքրիկ աղջկա խռպոտ ձայնով հետաքրքրված՝ Մաեստրոն ցած իջավ: Նա մոտեցավ Ֆրիդային եւ ուշադիր նայեց վերջինիս հետաքրքիր դեմքին՝ թմբլիկ բերանով եւ խիտ սեւ հոնքերով: Առանց քաշվելու՝ Ֆրիդան ուղիղ նայեց Մաեստրոյի աչքերին: Հետը բերել էր իր երեք նկարները: Նրանք հենվել էին շենքի ճակատային պատին, որի վրա Մաեստրոն աշխատում էր: Ֆրիդան շրջեց նկարները, որպեսզի նա տեսնի: Ասաց, որ ինքը կորցնելու ոչինչ չունի, շտապ աշխատանքի կարիք է զգում: Նկարում է, որովհետեւ դա համարում է ամենահեշտ եւ ամենաքիչ ծանծրալի զբաղմունքը: Լավ կլիներ, եթե կարողանար դրանից որոշակի գումար վաստակել: Իր աշխատանքի մասին Մաեստրոյի ունեցած կարծիքից կախված կլինի՝ արդյո՞ք պետք է մեկ այլ զբաղմունք փնտրի, քանի որ մտադրություն չունի խաբելու ինքն իրեն, թե տաղանդավոր է՝ եթե այդպես չէ: Կարո՞ղ էր նա օգնել իրեն՝ ասելով ճշմարտությունը: Այդ ամենն ասաց արագ-արագ, առանց շունչ քաշելու: Հետո ձեռքերը ծալեց կրծքին եւ նայեց նրան:

Չասաց, որ նկարչությունն իր միակ փրկությունն էր այն մեկուսացումից, որի մեջ ապրում էր, որ դուր էր գալիս, թե ինչպես է նկարչությունն ամբողջությամբ կլանել իրեն, եւ երբ նկարում էր, թվում էր՝ սառցե պալատում վերագտել է իր փոքրիկ ընկերուհուն:

Մաեստրոն ուշադիր նայեց նկարներին. Ֆրիդայի խնդրանքն անսովոր էր, բայց նրան դուր եկավ աղջկա բացատրությունը, հատկապես երբ ասաց, որ նկարելը համարում է փող աշխատելու ամենաքիչ ծանծրալի միջոցը: Նրան հուզել էր աղջկա վճռականությունն ու լրջությունը: Ֆրիդան կանգնած սպասում էր՝ անհամբեր, լարված: Մաեստրոն շատ երկար զննեց նկարները:

Մաեստրոն ասաց, որ աղջիկն անկասկած տաղանդավոր է, բայց ինքն ուզում է նրա նկարած ավելի շատ գործեր տեսնել՝ այդքան կարեւոր մի բան արտահայտելուց առաջ: Ֆրիդան հրավիրեց նրան իր ծնողների տուն՝ այցելելու իրեն: Նա խոստացավ, որ կգա: Միայն այդ ժամա-

նակ Ֆրիդան թեթեւացած շունչ քաշեց: Եթե իր մյուս կտավներն էլ դուր գային Մաեստրոյին, գուցե ինքն իսկապես կարողանար ապրուստը վաստակել նկարչության միջոցով: Այդ ժամանակ միայն փողի մասին էր մտածում եւ հոր մասին, որն այլեւս կարգին աշխատանք չուներ: Հայրն ավելի ու ավելի էր ընկճվում եւ հուսալքվում: Վաղուց անցել էին այն օրերը, երբ Դոն Գիլյերմոն կարող էր արժանապատիվ ապրուստ վաստակել որպես լուսանկարիչ: Եվ հետո՝ մայրն էր, որ հյուծվել, մաշվել էր դստեր ու նաեւ իր հիվանդությունից, պարտավորություններից ու աղքատության վախից: Ֆրիդան ողջ էր մնացել վթարից հետո, բայց նրա բժիշկների, դեղորայքի եւ ոտքերի հենարանների համար դեռ պետք էր վճարել: Եթե Մաեստրոն աջակցեր իրեն, գուցե ամեն ինչ փոխվեր:

Մի քանի օր անց, երբ տեսավ նրա տնային փոքրիկ ցուցահանդեսը, Մաեստրոն այլեւս կասկած չուներ, որ իր առջեւ բացառիկ մի տաղանդ է: -Դուք պետք է նկարեք,- ասաց լրջորեն: -Նա այնպես էր նայում Ֆրիդային ու նրա նկարներին, ասես չէր հագենում դրանցից: Ասես չէր կարողանում նկարներն ամբողջությամբ առանձնացնել այն անսովոր անձնավորությունից, ով նկարել էր դրանք: Մաեստրոյին հատկապես տպավորել էր այն, որ Ֆրիդան նախընտրել էր նկարել, քան իր հիվանդությունը որպես պատրվակ օգտագործելով ոչինչ չանել: Այդ աղջկա, նրա կոպտության, կյանքի ծարավի մեջ արտասովոր, հիացական մի բան կար, որն այնքան ակնհայտ էր նրա յուրաքանչյուր շարժումից: Ավելին, պարզեց, որ նա վերջերս է միացել Կոմունիստական կուսակցությանը, ինչը մեկ այլ ընդհանուր բան էլ էր տալիս իրենց: Արվեստից հետո քաղաքականությունը երկրորդ կարեւոր բանն էր նրա կյանքում, բայց Ֆրիդայի եւ իր նոր նկարիչ ընկերների համար, ինչպիսին Թինա Մոդոտին էր, գաղափարախոսությունն ավելի քիչ կարեւոր էր, քան դրա տված հնարավորությունը՝ միասին լինելու:

Ֆրիդայի մազերը, շոշափելիս՝ խոնավ ու կպչուն, սփռված էին բարձի վրա: Մոխրագույնի տարօրինակ շերտը ծածկում էր նրա դեռ խիտ մուգ բաշը: Նրա մտքով անցավ, որ պետք է մազերը լվանա, բայց հետո ծիծաղեց իր ակամա այդ մղումի վրա: Իր մարմինը հենց այնպես չէր արձագանքի: Ձեռքը բարձրացրեց եւ ետ տվեց ճակատին խռնված անկանոն մազափունջը: Մազերը նրա մարմնի միակ մասն էին, որ դեռ կենդանի էին: Հայրը փարթամ մազեր էր ունեցել: Հիշեց՝ ինչպես էր նա երբեմն կանգ առնում խոսքի կեսին եւ մատներով հարդարում դրանք,

եւ ինքն ինչպես էր սիրում այդ շարժումը, ցրվածության այդ նշանը: Հայրն իրեն ասում էր, որ իր մազերը ձիու մազերի պես կոշտ են: Մաեստրոն գլուխը թաղում էր այդ մազերի մեջ՝ ներշնչելով դրանց բուրմունքը: Նա իրեն բոլորովին այլ բան էր ասում,- որ իր մազերն ամենանուրբ մետաքսի պես փափուկ են: Մազերը սանրելիս ինքը միշտ մտածում էր Մաեստրոյի մասին, թե ինչպես էր նա գիշերները քանդում իր հյուսերը, եւ ինքը վզի վրա զգում էր նրա տաք շունչը: Եվ ինչպես էին իր կյանքի այդ երկու ամենակարեւոր տղամարդիկ այդքան տարբեր կերպ տեսնում իր մազերը:

Մենակ էր սենյակում: Հայրը վաղուց էր մահացել, իսկ Մաեստրոն ուրիշ կնոջ անկողնում էր: Քիթին հոգնել էր, իսկ ընկերները հեռու էին: Ավելի ու ավելի էր վախենում լույսից եւ օրվա անողոք գալուստից:

Հենց օրը բացվում էր, մտածում էր Մաեստրոյի հետ առաջին հանդիպման մասին եւ այն մասին, թե ինչ կասեր նրան, եթե այժմ այստեղ իր հետ լիներ:

Մաեստրո,- կասեր,- հիշում եմ, երբ առաջին անգամ մերկացա ու մերկ կանգնեցի քո դիմաց: Իհարկե, վարանում էի: Այնքան երիտասարդ էի, քեզնից քսան տարով փոքր եւ այնքան անինքնավստահ. իմ միակ զենքը համարձակ լինելն էր: Որոշեցի փորձել քեզ՝ ցույց տալով մարմինս՝ սկսելով թիկունքիցս: Երանի տեսնեի աչքերդ, երբ զննում էին ինձ: Չորացած ոտքս: Վիրահատություններիս թողած սպիները, այն ամենն, ինչը միայն բժշկիս աչքերի համար էր: Ես ուզում էի քեզ, բայց միեւնույն ժամանակ վախենում էի, սիրտս բերանիս մեջ էր: Բարձրանալով արվեստանոցիդ աստիճաններով՝ ինքս ինձ ասացի. -Ոչ, ես չեմ մերկանա նրա առջեւ, չեմ կարող ինձ վտանգի ենթարկել՝ նրան այդքան շուտ կորցնելու համար, ես չափազանց շատ եմ անհանգստանում նրա համար: Եվ հաջորդ պահին որոշեցի անել ճիշտ հակառակը: Կմերկանամ, իսկո՛ւյն, թող նայի, թող միանգամից տեսնի ամեն ինչ: Չէ՛, պահմտոցի չեմ խաղա այս մարդու հետ: Եթե մարմինս նրա մեջ զզվանք առաջացնի, ողջ կմնամ: Ավելի վատ բաներից եմ ողջ մնացել: Զրահով պաշտպանված եմ եւ՛ ներսից, եւ՛ դրսից, հաստ կաշի ունեմ:

Բայց ամբողջ այդ ընթացքում հույս ունեի, որ կճանաչես իմ այն մյուսը եսը, այն մեկը, որ անզեն աչքով չի երեւում, նա, ով ապրում է խոր փոսի մեջ եւ դուրս է ելնում միայն նկարներում:

Իսկ հետո մտանք քո արվեստանոց: Հիշում եմ միայն լույսը՝ պայ-

ծառ, սուր, անողոք: Դուռը փակելուն պես ինձ գրկեցիր այնպես, որ հետո դարձավ սովորական: Ես քեզ ուժով մի կողմ հրեցի: Մի պահ կորցրեցիր հավասարակշռությունդ՝ զարմացած իմ կոպտությունից, եւ ես ծիծաղեցի: Մտածեցիր, որ դա խաղ է, որ ես խաղում եմ, իսկ հետո արվեստանոցիդ մեջտեղում ես մերկացա եւ մեջքով շրջվեցի դեպի քեզ: -Եկե՛ք, լավ նայեք,- ասացի:- Սկզբում նայեք իմ մեջքին եւ բոլոր վիրահատությունների բոլոր սպիներին, եւ իմ չորացած ոտքին ու ծուռ ոտնաթաթին, եւ հետո եկեք այստեղ, եթե համարձակություն ունեք, եթե դեռ ուզում եք ինձ:

Մինչ այդ երբեւէ մտածե՞լ էի իմ մասին՝ որպես խեղանդամի: Միայն այդ բառից խորշում էի: Ինչու՞ ինչ-որ մեկն անպետք կարող էր լինել հենց միայն այն պատճառով, որ կաղ է: Ես մերժեցի նման գաղափարն իսկ, որ այդ բառը կարող է վերաբերվել ինձ, չնայած մանկուց գիտեի, որ մարդիկ այդպես էին մտածում, երբ տեսնում էին ինձ կաղալիս: Երբ առաջին անգամ հանդիպեցինք, լավ էի զգում եւ միայն երբեմն էի քարշ տալիս ոտքս: Երբ ցերեկվա պարզ լույսի ներքո քո արվեստանոցում քեզ ցույց տվեցի իմ մարմինը, առաջին անգամ հասկացա բառի իրական իմաստը, որովհետեւ այն վերից վար գրված էր իմ մեջքի երկայնքով՝ վիրաբույժի նշտարի կոպիտ կտրվածքներով: Ես դրոշմված էի: Խարանված: Ինձ նվաստացած էի զգում եւ վախենում էի, ինչպես երեխա ժամանակ, երբ հեծանիվ էի քշում զբոսայգում, իսկ մյուս փոքրիկ աղջիկներն իմ ետեւից կանչում էին՝ Ցից-ո՛տքն է գալիս: Մաեստրո, ես նույնիսկ պատկերացնել չէի կարող, թե ինչ կտեսնի իմ մեջ մի նկարիչ, որն ունեցել է աշխարհի ամենագեղեցիկ կանանց: Զգացի, թե ինչպես է քննախույզ հայացքդ մեջքովս ցած սահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր սպիի վրա, ասես զննելու համար ցավի իմ քարտեզը: Չգիտեմ՝ ինչքան ժամանակ էի այդպես կանգնել այդտեղ: Երբ շրջվեցի, դու նայեցիր ինձ լայն բացված աչքերով, կարծես ուրվական լինեի:

Հետո ինձ առար ձեռքերիդ մեջ: Ինձ պառկեցրիր պղնձե տաշտի մեջ եւ բացեցիր ջուրը: Ես պառկեցի, աչքերս փակ, իսկ դու օճառում էիր ինձ՝ ձեռքդ զգուշորեն դիպցնելով մաշկիս, ասես վախենում էիր, թե կվնասես: Առաջին անգամ վստահություն զգացի, որ այլեւս մենակ չեմ: Իսկ հետո հրաշք տեղի ունեցավ, Մաեստրո, դու ճանաչեցիր ինձ, եւ հենց դրա համար հիմա ես ուզում եմ, որ ինձ հետ լինես, ուզում եմ եւ չեմ ուզում քեզ:

Ոչ ոք երբեք այդքան մերկ չի եղել, որքան ես էի այդ ժամանակ: Նորմալ մարդիկ պարզապես մերկ են: Բայց իմ մարմինը եւ՛ մերկ էր, եւ՛ վիրավոր. այն խոցելի էր: Իմ սպիները քեզ չվախեցրին: Սպիների միջոցով է, որ դիպչում ես մարդու մենությանը: Ես դա սովորեցի քեզնից, քեզ հետ, այդ օրը:

Հետագայում ես նկարեցի այդ սպիները, որպեսզի ուրիշները հասանելի լինեն իմ մենությանը:

Նորից նայեց անկողնու ծածկոցին՝ փնտրելով ոտքը, որն այլեւս չկար, թեեւ ինքը դեռ զգում էր այն՝ որպես իր կենդանի մի մասնիկը: Նույնիսկ կարող էր շարժել ոտքի մատները: Երբ մտածում էր այն ամբողջ նվաստացման մասին, որ կրե՛լ էր այդ ոտքի պատճառով... Մտածեց, որ դա այն նույն ոտքն է, որ Մաեստրոյի նախկին կինը՝ Լուպեն, ծաղրել էր իր հարսանիքի ժամանակ՝ քսանհինգ տարի առաջ: Միայն երբ վերջապես անդամահատեցին ոտքը, որն ինքն այդքան դժկամորեն քարշ էր տվել իր ողջ կյանքում, հասկացավ, որ այդ կինը ճիշտ էր: Գեղեցկուհի Լուպեն հարբած էր եւ դժբախտ, քանի որ Մաեստրոն ամուսնանում էր Ֆրիդայի հետ: Արդեն գիշեր էր, երբ հավաքվել էին հյուրասենյակում (կոնյակ, տեկիլա), մարդիկ պարում էին, խմում, նստում բազմոցին: Եվ մեկ էլ Լուպեն բացեց նեղ, սեւ կիսաշրջազգեստի բացվածքն ու ցույց տվեց իր երկար, սպիտակ, մերկ ոտքը: «Մաեստրո, տե՛ս, թե ինչ է քեզ պակասում»,- ասաց նա բարձր, չափազանց բարձր ձայնով: Լուպեն գիտեր ինչ է անում, նա գիտեր, որ իր եւ Մաեստրոյի նոր կնոջ միջեւ այդ իմաստով երբեք չի կարող որեւէ համեմատություն լինել: Նույնիսկ Ֆրիդայի առողջ ոտքը չէր կարող համեմատվել դրա հետ: Լուպեն կանգնած էր անշարժ (թե՞ այդպես էր թվում), մարմարե շքեղ քանդակի նման, նրա ճերմակությունը շլացուցիչ էր կիսամութ սենյակում:

Բոլորը տեսան նրա արարքը, դժվար թե որեւէ մեկը չտեսներ: Ծուխը, երաժշտությունը, ծիծաղի ձայնը: Լուպեն՝ իր նրբագեղ, մարմինը կիպ գրկող երեկոյան զգեստով, մերկ ուսերով: Եվ Ֆրիդան՝ իր գյուղացիական զգեստով, որ սպասուհուց էր վերցրել՝ Մաեստրոյին հաճոյանալու համար: Ի սարսափ մոր՝ նա անկողնուն էր նետել հարսանեկան սպիտակ զգեստը: Եվ հիմա կատաղած՝ Ֆրիդան ուզում էր հանել այդ հիմար կնոջ աչքերը, որն իրեն նվաստացնում էր իր սեփական հարսանիքի ժամանակ:

Դոնյա Մաթիլդան, որն ասես ավելի շատ թաղման համար էր հագնված, քան թե հարսանիքի, նույնպես տեսավ առաջ մեկնված ոտքը: Մռայլադեմ եւ խստապահանջ՝ նա ճիշտ հակապատկերն էր Լուպեի, բայց նաեւ սեփական դստեր, որն ավելի շատ էր նման Լուպեին, քան իրենցից որեւէ մեկը կցանկանար: Ֆրիդան նայեց մորը եւ նկատեց, որ նա արագ թարթում է, ասես լավ չի տեսնում կամ չի հավատում սեփական աչքերին: Ինքը շատ լավ գիտեր մոր մարմնի լեզուն, նրա ներփակ զսպվածությունը, վախը մտերմությունից, ֆիզիկական շփումից: Այդ ամենն ընդամենը մեկ վայրկյան տեւեց: Հետո Դոնյա Մաթիլդան հավաքեց ինքն իրեն, զգաստացավ եւ արագ շրջվեց: Որ նման բան պատահեր իր դստեր հարսանիքի՛ն, որ Մաեստրոյի նախկին կինը հրապարակավ այդպես մերկանա՛ր: Մի՞թե վերջ չուներ այդ խայտառակությունը, որ դուստրերը բերում էին իր գլխին: Մաթիլդան փախել էր տնից: Իսկ այս մեկն էլ ամուսնացել էր մի ծեր տղամարդու հետ, այն էլ՝ սպասուհու հագուստո՛վ: Եվ հիմա՝ ոտքի հետ կապված այս ամոթաբեր տեսարանը:

Դոնյա Մաթիլդան սարսռաց, ասես այրվածք ստացած լիներ, ասես մինչ այդ երբեք մերկ ոտք չէր տեսել: Ֆրիդան տեսավ, թե մայրը որքան էր սարսափած, ո՛չ այնքան սարսափած էր ձիգ, ողորկ մարմնի տեսքից, որքան այն մտքից, թե ինչ կարող է դա արթնացնել տղամարդու մեջ: Նա վիրավորված էր մեկ այլ կնոջ հանդեպ մոր ակնհայտ, մշտական վախից: Նույնիսկ հարսանիքի ժամանակ Դոնյա Մաթիլդան չէր հավատում, որ իր խեղճ վատառողջ դուստրը կարող է հաղթող դուրս գալ: Եվ եթե հաղթեր էլ, հաղթանակը կարճատեւ կլիներ: Ֆրիդան չէր կարողանա դիմակայել գեղեցիկ կանանց, որոնք մշտապես շրջապատում էին նկարչին. վերջինիս մասին խոսակցությունները հասել էին նույնիսկ Դոնյա Մաթիլդայի ականջին: Նա արդեն զգում էր, թե որքան դժվար է լինելու Մաեստրոյին պահպանելու համար պայքարը, եւ որքան է տառապելու Ֆրիդան:

Բայց այդքան սադրիչ կերպով ցուցադրված ոտքը նաեւ ապտակ էր Ֆրիդայի դեմքին: Լուպեի պահվածքը ցնցեց նրան, եւ Մաեստրոյի հետ հանդիպելուց հետո առաջին անգամ կասկածներ ունեցավ, թե արդյոք կկարողանա՞ դիմագրավել նրա շուրջը սավառնող այս բոլոր կանանց: Երախտապարտ էր Մաեստրոյին, որ գերադասեց իրեն ընտրել Լուպեի փոխարեն: Նա դեռ շատ երիտասարդ էր՝ հասկանալու համար, որ հենց նոր տեղի ունեցած տեսարանն ի նպաստ իրեն էր, ոչ թե Մաեստրոյի:

Դեռ չէր կարող իմանալ այն, ինչ պարզելու էր,- որ Մաեստրոյի վերջին հարսանիքը նրա կյանքում նոր էջի սկիզբ չէր: Մաեստրոն շարունակելու էր սիրահետել գեղեցիկ աղջիկներին, քանի որ նրա կարծիքով դրանք ոչ մի կապ չունեին Ֆրիդայի՝ իր երրորդ կնոջ հանդեպ ունեցած սիրո հետ:

Մաեստրոն արդեն բավականին խմել էր: Երբ Դոնյա Մաթիլդան մեջքով շրջվեց այդ տեսարանից, Ֆրիդան չնկատեց Մաեստրոյի դեմքի արտահայտությունը: Ծխով լցված սենյակի կիսամթնում եւ լամպի թույլ լույսի ներքո նա չէր կարող չտեսնել Լուպեի ալաբաստրե ճերմակ ոտքը: Չէր կարող չլսել նրա ծաղրող մեկնաբանությունը, բայց որոշեց անտեսել նրան եւ պարզապես շրջվեց՝ վերսկսելու իր խոսակցությունը: Այն, ինչ Ֆրիդան տեսավ, մի տղամարդ էր, իր ամուսինը, որի համար ամբողջ ներկայացումը զվարճալի էր: Ֆրիդան թեթեւացած շունչ քաշեց: Գերազանցության զգացումը համակեց նրան: Նա մոտեցավ հարբած Լուպեին եւ պահեց վերջինիս, որպեսզի չընկնի: -Գլխացավ ունեմ,- ասաց Լուպեն՝ ուժասպառ լինելով, աչքերը փակ ու արդեն բավականին թուլացած: Ինչ-որ մեկը նրան մի բաժակ ջուր բերեց: Ֆրիդան անձեռոցիկն ընկղմեց ջրի մեջ եւ դրեց Լուպեի ճակատին: Ֆրիդայի առջեւ գեղեցիկ մի կին էր, որը պարտվում էր հաշմանդամի հետ կռվում: -Կներես,- փնթփնթաց Լուպեն՝ չնայելով նրան: -Ներելու բան չկա,- ասաց Ֆրիդան՝ վայելելով սեփական մեծահոգությունը: Միայն ավելի ուշ, երբ հիշեց Լուպեի խոսքերը, հասկացավ, որ պարտվողն ինքն է, գիտակցեց իրավիճակի ողջ դաժանությունը:

Բայց այդ պահին՝ իր հարսանիքի օրը, նա մտածեց, թե ինչպես էր Մաեստրոն, թեեւ ինքը Լուպեի ցանկագրգիռ մարմինը չուներ, հենց իրեն ընտրել, իրեն, ում սիրում էր: Դա նրա երիտասարդության եւ ինքնավստահության հաղթահանդեսի մի պահ էր: Եվ մայրը, որը հեռվից անհանգստանում էր Ֆրիդայի համար, երբեք չթողեց նրան իմանալ այն, ինչ պատրաստվում էր պարզել ինքն իր համար. որ նրա հաղթանակը կարճատեւ կլինի, որ հաղթանակն ու պարտությունը եղբայր ու քույր են, որ գեղեցիկ ոտքը միշտ կհաղթի կաղին,- պարզապես այդպիսին է իրականությունը: Եվ որ սերը,- բացառիկ դեպքերում,- կարող է վերաճել բոլորովին այլ բանի, մի բանի, որը կապ չունի, թե ինչպիսի ոտքեր ունես: Բայց Ֆրիդան դա դեռ չէր հասկանում եւ չէր կարող տանել մերժ-

ման այդ անիծյալ վախը, որից տանջվում են կանայք: Դա մի զգացողություն էր, որ շուտով անձամբ էր ճանաչելու:

Նա երբեք չէր մոռանում այդ միջադեպը կամ այդպիսի տարբեր փորձ ունեցող երեք կանանց՝ գեղեցկուհի լքված Լուպեին, միամիտ, հիվանդ Ֆրիդային եւ ցնցված կաթոլիկ մորը: Իսկ ետին պլանում տղամարդիկ էին՝ Մաեստրոն, հայրը, ընկերները, բոլոր նրանք, որ իրենց այնպես էին պահում, կարծես կանացի այդպիսի հիստերիկ պոռթկումներն իրենց հետ կապ չունեն: Տեսարանը խեղդվեց երաժշտության եւ բարձրաձայն խոսակցության աղմուկ-ժխորի մեջ:

Բայց ամեն անգամ, երբ մտածում էր այդ մասին, նրան միշտ ցավ էր պատճառում այն հիշողությունը, թե մայրն ինչպես է հավաքում զգեստի ծալքերը, շրջվում կրնկի վրա եւ դուրս գալիս սենյակից՝ թեթեւակի կորացած ուսերով, մի տեսակ պարտվածի տեսքով:

Հարսանիքից անմիջապես հետո նա հասկացավ, որ Մաեստրոյի սերն իր հանդեպ՝ չի բացառում այլ կանանց:

Իհարկե, նա աչք ունի այլ կանանց վրա,- ասում էր ինքն իրեն. ավելի լավ նայիր ինքդ քեզ, բացիր աչքերդ: Սիրելի՛ Մաեստրո, իմ հիվանդությունը կամ, ավելի ճիշտ, իմ հիվանդությունները քո լավագույն դաշնակիցն էին: Ես երախտապարտ էի, որ դու նույնիսկ բարեհաճեցիր ինձ նկատել: Ես այնքան պարզ ու հասարակ էի եւ անտաշ ու միաժամանակ հանդուգն: Ես ոչ ոք էի, տաղանդավոր սկսնակ, որ ներկ էր շաղ տալիս կտավի վրա եւ երազում էր աջակցել իր ընտանիքին՝ վաճառելով իր նկարած գործերը: Իսկ դու նշանավոր էիր, ամենանշանավոր նկարիչն ու կանանց սրտերի գիտակ տղամարդն ամբողջ Մեքսիկայում: Ես, իհարկե, գիտեի դա, բոլորը դա գիտեին, բայց իմ երկու նախորդների նման կարծում էի, թե անսահման սիրով կկարողանամ ինչ-որ կերպ փոխել եւ ընտելացնել քեզ: Որովհետեւ, իհարկե, ոչ ոք քեզ երբեք այդքան չէր սիրել, որքան ես: Բայց այդ ժամանակ առաջին անգամ հասկացա, որ... Ոչ, ոչ, այդպես չէր, ես ոչինչ չէի հասկացել: Ես չափազանց մանկամիտ էի, չափազանց ինքնավստահ: Դու ինքդ ասացիր այդ մասին եւ, իմիջիայլոց, հիշատակեցիր քո վերջին «օգնականին»՝ Իոնային: Օ, այո, հիշում եմ այդ պահը, նրա անունը, ընդարմացման, թմրածության այդ զգացումը, երբ ես դեռ տեսնում եմ, դեռ լսում եմ, բայց այլեւս չկամ. չեմ զգում ձեռքերս կամ ոտքերս... սիրտս դադարել է բաբախել... չեմ

կարողանում շարժվել, չեմ կարողանում մեկ բառ իսկ արտաբերել... ես թպրտում եմ... ես անհետանում եմ: Դու պահում ես ինձ եւ չես թողնում ուշաթափվեմ... նստեցնում ես ինձ աթոռին... անհանգստացած ես երեւում, բայց ես այդ ամենը տեսնում եմ հեռվից... Ես ինձ մեկուսացված, փայտացած եմ զգում:

Պետք է խոստովանեմ, որ եւ՛ ապշած էի, եւ՛ հիացած, թե ինչպես պատահաբար հիշատակեցիր, որ քնում ես մեկ այլ կնոջ հետ: Դա զրույցի ժամանակ էր՝ խոսակցության մեջ, ո՛չ թե կռվի կամ վեճի, այլ սովորական խոսակցության մեջ: Որովհետեւ քեզ համար սեքսն այլ կանանց հետ- քո «մոդելների», «օգնականներիդ», կին ընկերներիդ եւ հովանավորյալներիդ հետ- հենց այդպես էր՝ պատահական: Նրանք միշտ մոտ էին, ձեռքի տակ: Նրանք օդի պես շրջապատում էին քեզ: Սկզբում փորձում էի գեղեցիկ կանանց նվաճելու, տիրելու քո ցանկությունը հասկանալ՝ որպես քո գեղարվեստական բնույթի մի մաս, քո՝ ամեն ինչում բացարձակ գեղեցկության ձգտելու մի մաս: Բայց պարզվեց, որ նկարելը քեզ պարզապես տալիս է հնարավորություններ, որ ուրիշ տղամարդիկ չունեն: Կանայք հաճախ մերկ էին- դու սիրում էիր մերկ մարմիններ նկարել, եւ դա նրանց տիրանալու միջոց էր- եւ ցուցադրվելու համար մատչելի էին քո աչքին, քո հպմանն ու քո բոլոր զգայարաններին: Ինչպես ափսեի վրա: Դու նկարում էիր նրանց, բայց արձագանքում էիր որպես արական սեռի ներկայացուցիչ: Քո պահվածքը մտածելու տեղ չէր թողնում, երբեք մտքովդ չէր անցնում, որ արարքներդ կարող են ցավ պատճառել ինձ: Այն օրը, երբ առաջին անգամ հասկացա Իոնայի հետ քո հարաբերությունների բնույթը, փորձեցիր ինձ ասել, թե այդպիսի բաները քեզ համար կարեւոր չեն: Ասացիր, որ դա ուղղակի մակերեսային, ֆիզիկական հարաբերություն է: *Ֆիզիկական,*- ասացիր. դա քո օգտագործած բառն է: Ինչպե՞ս կարող էիր այդքան անխոհեմ լինել՝ դա ինձ ասելու համար,- ինձ, որի մարմինն ահաբեկել է իմ ամբողջ կյանքը: Բայց այնքան էի ապշած, որ ոչինչ չասացի:

Քո մի լուսանկարը կա, Մաեստրո. կանգնած ես Մարիա Ֆելիքսի հետ՝ քո նկարած նրա դիմանկարի դիմաց: Նա կանգնած է կիսադեմով, բաց գույնի զգեստով: Մերկ ուսերով է, խիտ սեւ մազերը թափված են թիկունքին: Կանգնած եք իրար կողքի, ձեր մարմինները գրեթե իրար են հպվում (բայց դեռ չեն հպվել): Նրա աջ ձեռքը քո ուսին է: Դա գրեթե սեփականատիրոջ վերաբերմունք է: Նա նայում է ուղիղ աչքերիդ մեջ,

կարծես ուզում է ասել՝ դու ի՛մն ես: Դու արդեն որոշակի տարիք ունեցող այր ես՝ նոսրացած մազերով եւ փոքր-ինչ կռացած: Դու նայում ես նրան՝ դեմքիդ այնպիսի երանելի մի ժպիտով, որ լուսանկարը մնում է դաջված իմ հիշողության մեջ: Սկզբում մտածեցի, թե հիանում ես նրա գեղեցկությամբ, դրա համար էլ վայելում ես նրա ներկայությունը: -Ճուտ պատահականություն էր, որ դա Մարիա Ֆելիքսն էր, ոչ թե մեկ այլ ցնցող տեսարան,- ասացի ինքս ինձ, երբ տեսա լուսանկարը թերթերում: Եվ ես չէի նեղվի, չէի երկմտի, եթե բռնած չլինեիր նրա արմունկից: Երկուսով այնպիսի տեսք ունեիք, ասես ձեզ բռնացրել էին պարելիս, եւ պատրաստվում էիք թաքնվել տեսադաշտից: Նրան պահելու քո ձեւը մատնում էր երկուսիդ էլ: Դա չափազանց մտերմիկ էր: Ես հասկացա, Մաեստրո, որ դու շատ լավ գիտես այդ շլացուցիչ, ագռավի փետուրների պես սեւ մազերով կնոջը: Դրա ցավը նման էր միգրենի, որ հանկարծ բռնում է քեզ, տեւում է օրերով եւ երբեք ամբողջովին չի անհետանում: Ապրում ես սպասողական վիճակում, վախի մեջ՝ թե հաջորդ հարվածը երբ է լինելու:

Իր ամուսնության այդ առաջին տարիներին Ֆրիդան զբաղվում էր միայն նկարչությամբ: Նա ինքն իրեն չէր համապատասխանում՝ անտեսելով իր տաղանդը, հենց այն, ինչն այդքան գերել էր Մաեստրոյին: Մաեստրոն նրա համար ավելի կարեւոր դարձավ, քան նկարելը: Ֆրիդան կարծում էր, որ նա ճանապարհ է գտել դեպի իր բանտի ներսում խոր թաղված իր ներքին եսը: Մերթընդմերթ ինքը վրձին էր հպում կտավին եւ նկարում, հիմնականում դիմանկարներ, դրամատիկ ոչ մի բան, ցավալի կամ արյունոտ դեռ ոչինչ: Փող կար, ինքն այլեւս կարիք չուներ այդ մասին անհանգստանալու:

Անհրաժեշտ էր իր մեջ ուժ գտնել՝ շարունակելու համար նկարել աշխարհի մեծագույն նկարիչներից մեկի կողքին: Ինքը շրջապատված էր նրա փառքով, եւ սկզբում դա ստիպում էր ավելի անվստահ զգալ իրեն: Թերթերն իր մասին գրում էին որպես Մաեստրոյի հմայիչ կնոջ, ո՛չ թե որպես նկարչի: Տաղանդավոր երիտասարդ կինը, որը ոչ մի կրթություն չուներ, չէր վաճառել կամ ցուցադրել իր նկարները, ամուսնանալուն պես գիտակցեց Մաեստրոյի կնոջ իր կարգավիճակի մասին: Նա գրեթե ամբողջովին կորցրեց ինքնավստահությունը:

Այսպիսով, նրա նոր նպատակն էր՝ գոնե լավ կին դառնալ, սովորել,

թե ինչպես պատրաստի Մաեստրոյի սիրելի ուտեստները, որոնք ինքը ծաղկազարդ զամբյուղով բերում էր նրան՝ փայտամածի մոտ: Նույնիսկ փոխեց իր տեսքը: Հագուստն իր համար դասակարգի խնդիր էր, «մեքսիկականության» հանրաճանաչ ազգային գաղափարախոսության մի մաս: Ուզում էր պահպանել Մաեստրոյի ուշադրությունը եւ հիացած պահել նրան: Գիտեր, որ նրան դուր են գալիս Տեխուանայի մեքսիկացի կանանց գյուղացիական զգեստները: Հանկարծ սկսեց հագնել երկար կիսաշրջազգեստներ եւ գույնզգույն շալեր գցել՝ մազերի մեջ ծաղիկներ ու ժապավեններ դնելով. փողոցում նրան տեսնելով՝ մարդիկ ապշահար շրջվում էին: Երեկվա քաղաքային աղջիկը ժամանակակից երիտասարդ կնոջից, որը սիրում էր տաբատներ, կաշվե բաճկոններ եւ տղամարդու կոշիկներ կրել, իրեն միտումնավոր վերածեց Տեխուանայի գյուղացի կնոջ: Սկզբում տարաշխարհիկ հագուստը Մաեստրոյին հաճոյանալու միջոց էր. միայն ավելի ուշ դա դարձավ Ֆրիդայի անհատականության եւ ոճի մի մասը: Բոլորն, ովքեր ճանաչում էին Ֆրիդային, նրա կերպարանափոխությունը զարմանալի էին համարում: Բայց Մաեստրոյի համար էր միայն, որ նա հագնվում էր, եփում, ապրում:

Գաղափարախոսությունն իր համար Մաեստրոյին մոտ լինելու եւս մեկ միջոց էր: Շրջապատված լինելով աղքատությամբ եւ անարդարության հանդեպ լինելով զգայուն՝ Ֆրիդան ընդունում էր նրա հավատը կոմունիզմի գաղափարախոսության եւ արդարության գաղափարի նկատմամբ: Եվ իր համար Մաեստրոն, որն իր տիեզերքում մի գլուխ վեր էր բոլորից, ավելի ու ավելի էր անձնավորում կոմունիզմը:

Հարսանիքից երկու տարի անց նկարեց իրենց դիմանկարը՝ «Ֆրիդա եւ Դիեգո Ռիվերաներ»: Մուգ կանաչ լայն կիսաշրջազգեստով եւ կարմիր շալով՝ ինքը կանգնած է Մաեստրոյի կողքին՝ նրա ձեռքը բռնած: Գլուխը կոկետաբար սեթեւեթանքով թեքել է դեպի Մաեստրոն, ասես ամեն րոպե պատրաստ է դնել նրա ուսին: Մաեստրոյի աջ ձեռքում ներկապնակ է եւ վրձիններ: Նա գեղանկարիչ է: Իր ձեռքերը դատարկ են: Ինքը պարզապես նկարչի կինն է. սովորական մեքսիկացի գյուղացի կնոջ տեսք ունի: Այս նկարը չունի ոչ իր առաջին ինքնադիմանկարի գայթակղիչ որակը, ոչ էլ հետագա աշխատանքների լրջությունը: Իրեն է նկարել, բայց ասես դա ինքը չէ: Միրալիր է եւ խոնարհ, այստեղ անհատականության դրոշմ չկա: Ոչ մի հետք քնքշանենգ այն աղջկանից,

նկարչից, ապագա հմայիչ կնոջից, որին սիրահարվել էր Մաեստրոն: Նա՛ է նկարի կենտրոնում. ինքն ընդամենը կցորդ է, արտացոլանք, ստվեր:

Փոխակերպվելուց եւ իրեն նորովի հայտնագործելուց հետո՝ նրա հիմնական հասարակական դերը մեծ նկարչի տարաշխարհիկ կին լինելն էր: Հենց դա էր, որ նրա նկարներից ավելի շատ էր գրավում հանրությանը: Հիմա ամեն առավոտ այնպես էր հագնվում, ասես պատրաստվում էր բեմ դուրս գալ: Նա այնպիսի մեկի պրոֆեսիոնալիզմն էր դրսեւորում, ով ետքայլ է անում՝ տվյալ օրն իր դերի համար լավագույն զգեստն ընտրելուց առաջ: Յուրաքանչյուր մանրուք արտացոլում էր, թե ինչպես է նա ընկալում այդ դերը: Նրա արտաքինում ոչ մի ինքնաբուխ բան չկար, ամեն ինչ կապված էր ինքնադրսեւորման հետ: Հագուստի՝ նրա ընտրությունը նրան թույլ էր տալիս մտնել իր դերի մեջ եւ ելույթ ունենալ:

Նա տիրապետել էր տարանջատման, մարմնից բաժանվելու տեխնիկային դեռ վաղուց, երբ երեխա ժամանակ փախչում էր երեւակայական դռան միջով՝ միանալու իր երեւակայական փոքրիկ ընկերուհուն: Կամ՝ երբ ամիսներ շարունակ պառկած էր լինում իր գիպսե վիրակապերում բանտարկված՝ հայելու մեջ սեփական արտացոլանքին նայելով: Որոշ ժամանակ անց՝ այն, ինչ տեսավ, ինքը չէր, այլ դիմակ: Ըստ էության նրա գրեթե բոլոր ինքնադիմանկարները պատկերում են դիմակի անշարժ հայացքը: Դիմակներն իր համար կարեւոր էին, դրանք իրականությունն էին թաքցնում իրենց ետեւում: Ինչպես յուրաքանչյուր դերասանի դեպքում, դիմակներն ու զգեստները նրան թույլ էին տալիս դառնալ այնպիսին, ինչպիսին ուզում էր լինել: Մաեստրոյի հետ նրա կյանքը շուտով վերածվեց թատերախաղի, որտեղ ինքն էր ձեւավորում իր զգեստներն ու դեկորացիաները, գրում սցենարը եւ բեմականացնում պատմությունը, բեմադրում եւ հանդես գալիս գլխավոր դերում: Իսկ հետո այդ ամենը տեղափոխում էր կտավի վրա:

Նա ժամերով սանրում էր մազերը եւ հագնվում՝ առօրյան վերածելով ծեսի: Տարազը, դիմահարդարումը, վարսահարդարումը ինքզինքն իր ձեռքում պահելու նրա բոլոր միջոցներն էին: Եվ նա հումորի զգացում ուներ: Նրան զվարճացնում էր Մաեստրոյի հետ ցուցադրաբար շրջագայելը, սիրում էր դերասանական բոլոր խաղերն ու հնարքները: Երբ

առավոտները կանգնում էր հայելու առջեւ, ճարտար շարժումով քսելով իր վառ կարմիր շրթներկը, անմիջապես ուրիշ մեկն էր զգում իրեն, այլ կին էր դառնում: Ինչպես մի կմախք՝ զարդարված վառ գույնի լաթի ծածանվող կտորներով:

Հարցը, որ հուզում էր նրան, հետեւյալն էր. եթե հիվանդությունը ստիպում է քեզ ատել սեփական մարմինդ, ինչպե՞ս կարող ես ակնկալել, թե որեւէ մեկը կսիրի քեզ: Նա հավատում էր, որ գտել է այդպիսի մարդու եւ չէր կարող իրեն ենթարկել նրան կորցնելու վտանգին: Դա միայն իր էգոն չէր: Բացառությամբ ամենավաղ մանկության՝ սեփական մարմնի հետ իր հարաբերությունները երբեք պարզ չէին եղել: Իր մարմինը ցավոտ մի բեռ էր, բուժման առարկա: Իսկ հետագայում՝ իր արվեստի առարկա: Ունայնության գործիք: Ու նաեւ հաճույքի, բայց ամենից առաջ դա *առարկա* էր եւ *գործիք:*

Կրկին, ինչպես երբ փոքր էր եւ ապաքինվում էր պոլիոմիելիտից, նա հայտնվեց մի իրավիճակում, երբ կարող էր ամբողջովին ետ քաշվել, թաքցնել իր թերությունները եւ այդպիսով ինքն էլ թաքնվել: Կամ կարող էր ուշադրություն հրավիրել իր վրա իր միտումնավոր տարաշխարհիկ տեսքով եւ դարձնել այն հանրաճանաչ ու սիրված: Ինքն աշխատեց լինել հանրաճանաչ ու սիրված: Դաշինքներ էր կնքում. անօգնականները միշտ դաշինքներ են կնքում: Եվ այդպես, Լուպեն՝ երեկվա թշնամին, դարձավ իր լավագույն ընկերուհին: Մաեստրոյի տեսադաշտում հայտնված ցանկացած նոր կնոջ ընկալում էր որպես սպառնալիք եւ փորձում էր իր կողմը գրավել: Իժի պես՝ նախ հիպնոսացնում, ապա չեզոքացնում էր վերջինիս իր հմայքով: Այնուհետեւ կաթվածահար էր անում իր թույնով: Ֆրիդան վախենում էր, որ Մաեստրոն կլքի իրեն, եւ պաշտպանում էր իրեն այնպես, ինչպես կարողանում էր:

Այդ օրերին նա իր նկարչությունն անվանում էր *մակերեսային, անկարեւոր,* ասես խոսքն այնպիսի սիրած զբաղմունքի մասին է, ինչպիսիք են այգեգործությունը կամ ասեղնագործությունը: Այդ կերպ ոչինչ չէր վտանգում: Հայտնվելով արվեստի եւ գոյատեւման միջեւ՝ ընտրեց վերջինը: Բոլոր վատառողջ մարդկանց նման՝ նա գոյատեւման ուժեղ բնազդ ուներ, եւ դա նրան մշտապես աչալուրջ էր պահում, նույնիսկ եթե դրա համար պատճառ չկար: Դա բնազդն էր կնոջ, ով գիտեր, որ չի կարող թույլ տալ, որ Մաեստրոն վտանգված զգա: Մի՛ կծիր քեզ կերակրող

ձեռքը, մտածում էր՝ կրկնելով մոր նախազգուշացումը: Երկար ժամանակ թաքնվում էր թվացյալ համեստության շղարշի ետեւում՝ ասելով, թե նկարելը պարզապես «սիրած զբաղմունք» է, որովհետեւ իրեն ամենից ապահով էր զգում, երբ Մաեստրոյի աչքում պարզապես մի կին էր, ով նկարում էր որպես ժամանց, սեփական զվարճության համար: Ճիշտ այնպես, ինչպես Դոնյա Սաթիլդան էր պատկերացնում, երբ Ֆրիդային տվեց առաջին ներկերն ու վրձինները: Իրեն հարմար էր պահպանել այս կերպարը:

Մաեստրոն աջակցում էր նրա նկարչությանը՝ որպես ընկեր, հովանավոր, այնպես, ինչպես աջակցում էր իր աշակերտներին: Նա դրան ավելի լուրջ էր վերաբերվում, քան Ֆրիդան: Մաեստրոն ասում էր, որ Ֆրիդան ավելի լավ դիմանկարիչ է, քան շատ հայտնի նկարիչներ, ավելի լավը, քան ինքը, ավելի լավը, քան Պիկասոն: Սովորեցնում էր ոչ ոքի չնմանակել, հավատարիմ լինել ինքն իրեն: Նա Ֆրիդային ծանոթացրեց եկեղեցիներում ուխտի փոքրիկ նկարների ժողովրդական ավանդույթի հետ, մի ձեւ, որը Ֆրիդան խանդավառությամբ ընդունեց: Նա ճանաչեց Ֆրիդայի տաղանդը, այն, որ *ինչ-որ* բան կա նրա նկարներում, որն անձնական է, ինտիմ, ցավոտ եւ ամբողջովին անհատական ու հստակ: Մաեստրոն գիտեր, թե որքանով են դրանք տարբերվում իր սեփական նկարներից: Գաղափարախոսությունից, պատմությունից ու քաղաքականությունից զուրկ լինելով՝ Ֆրիդայի նկարները հզոր էին այլ կերպ: Բայց նրա մտքով երբեք չէր անցնում, որ Ֆրիդան կարող է դառնալ իր մրցակիցը: Ի վերջո, ինքն աշխարհահռչակ նկարիչ էր, իսկ Ֆրիդան հայտնի էր հիմնականում որպես իր կինը:

Մաեստրոն իրենց համար երկու տուն կառուցեց՝ միացնող կամրջով, եւ Ֆրիդան՝ նրա այս տաղանդավոր փոքրիկ կինը, որ պնդում էր, թե նկարում է միայն ինքն իրեն զվարճացնելու համար, որ իր արածը լուրջ բան չէ, ունեցավ իր սեփական արվեստանոցը:

Բայց կար եւս մեկ պատճառ, թե ինչու Ֆրիդան իրեն որպես նկարչուհի չէր ներկայացնում: Ժամանակ էր պետք ընդունելու, որ ցավի սատանան այդտեղ է մնալու, եւ որ իր կարողացած միակ ժամանակավոր բանը նրան քնած պահելն է: Ուժ էր պետք դա ընդունելու համար, շարունակելու նկարելը, ոչ թե թաղելու ինքզինքը եւ թույլ տալու, որ հիվանդությունն ամբողջովին սպառի իրեն:

Մաեստրոն մեծ պատվերներ էր ստանում ոչ միայն Մեքսիկայում, այ-

լեւ ԱՄՆ-ում՝ Դեթրոյթում, Նյու Յորքում եւ Սան Ֆրանցիսկոյում:

Ֆրիդան առաջին անգամ գնաց ԱՄՆ: Այնտեղ մրսում էր: Մեջքը նրան նեղություն էր պատճառում: Մաեստրոն աշխատում էր ինչ-որ տեղ դրսում, փայտամածի վրա: Ֆրիդան չգիտեր ինչ աներ այս օտար երկրում: Նա սովոր չէր մենակ մնալու եւ վախենում էր, հատկապես գիշերը: Հիվանդությունը նրա մեջ վախ էր սերմանել: Տանը՝ Մեքսիկայում, ինքը երբեք մենակ չէր, այնտեղ ուներ Քիթիին, ծնողներին, մյուս քույրերին ու ընկերուհիներին: Ինչո՞ւ էր եկել այստեղ:

Ինչո՞ւ Մաեստրոն չէր տեսնում, որ նա չի կարող ապրել Ամերիկայում: Մի՞թե ակնհայտ չէր, որ նա դժբախտ է՝ հեռու լինելով (ինքն իրենից, իր երկրից), որ վատ է զգում Նահանգներում: Մաեստրոն, սակայն, լավ էր զգում: Այն ամենն, ինչ տեսնում էր, սեփական կարիքներն էին, սեփական կարեւորությունը: Նրան սիրաշահում էին Նյու Յորքի էլիտան, նույնիսկ հարուստ արդյունաբերողները, թեեւ նա ինքը կոմունիստ էր: Մաեստրոն սնափառ, բայց պրագմատիկ մարդ էր. դրանում պարադոքսալ կամ սխալ ոչինչ չէր տեսնում: Նրա ամերիկյան պատվերները փող էին բերում, եւ դա երբեք չէր բավականացնում:

Մինչդեռ նրա տարաշխարհիկ դեկորատիվ կինը՝ ծաղիկը կոճակի անցքում, ինչպես ինքն էր սիրում ասել, մելամաղձոտ էր, երբեմն նույնիսկ ընկճված: Ամեն ինչից առավել՝ կարոտախտով էր տառապում: Երբեմն մտածում էր, թե ինչի վրա է ծախսում իր ժամանակը: Մաեստրոյի վրա, ընկերների վրա: Արդյո՞ք դա ժամանակի վատնում էր: Եվս մեկ հարց, որին պատասխան չուներ: Դեռ վստահ չէր, որ ինքն իսկապես նկարիչ է: Գիտեր միայն, որ ուզում է նկարել եւ վաճառել իր նկարները, որպեսզի գումար աշխատի եւ անկախանա: Եվ որ հանճարի կին էր դարձել:

Մինչ Մաեստրոն նկարում էր իր քայքայիչ, հակասական, հախուռն որմնանկարները, Ֆրիդան մենակ նստում էր տանը եւ, երբ ներքին դեւը մղում էր նրան, ձեռքը մեկնում էր իր վրձիններին:

Փոքրիկ նկարները, որ նկարում էր այդ ժամանակ, անսովոր էին եւ ցավով լի: Թեեւ դրանք խոստովանական էին, բայց խիստ հանդուգն բնույթ ունեին, քանի որ դանակի պես կտրում անցնում էին մարդու միջով: Նույնիսկ երբ անմիջապես վերծանել չէր լինում, դրանք ներքին ազդեցություն էին գործում, ասես որովայնիդ հարված ստանայիր:

Նա վերադարձավ Ամերիկայից «Իմ զգեստն է կախված այնտեղ» նկարով: Այդ ձմռանը Նյու Յորքում առատ ձյուն էր տեղացել, եւ նա աշխատել էր այդ կտավի վրա մոխրագույն լույսի տակ, որ բնակարան էր թափանցում բարձր, նեղ լուսամուտների միջով: Վառ կանաչ երանգ էր ավելացրել զուգարանակոնքի եւ սափորի միջեւ ձգվող լվացքի պարանից կախված զգեստին, սառցե մոխրագույն ծովի եւ հեռվում՝ քաղաքի ֆոնի վրա: Այնքան անմխիթար տեսք ունի մեքսիկական այդ զգեստը՝ կախված աղբ ու ծխանցքերից, երկնաքերներից եւ ֆոնդային բորսայից վեր, վեր եկեղեցու ծայրածողից՝ դոլարի իր նշանով՝ նոր աստծու, որին աղոթում էին ամերիկացիները, եւ հեռվում՝ Ազատության արձանից: Մարմնից զրկված, մենակ, մի տեսակ կորած՝ այդ օտար շրջապատում: Դրա կողքին՝ ետին պլանում հսկայական գովազդային վահանակ է՝ կինոաստղի պատկերով, որ կին է, կամ այն, ինչ Հոլիվուդն էր նրան վերածել: Ոչ մի կենդանի հոգի չկա այս նկարում: Դրանում տարօրինակ ոչինչ չկա: Տարօրինակն այն է, որ նկարում Ֆրիդան չկա: Նրան ճանաչող յուրաքանչյուրի համար այս բացակայությունը՝ ինքն իրենից հրաժարվելը, անակնկալ է: Սովորականն անելու փոխարեն,- նկարել ինքն իրեն՝ իր գոյությունը հաստատելու համար,- նա պարզապես այլեւս չկա:

Նա ուզում էր Մաեստրոյին երեխա պարգեւել, բայց վերջինս արդեն երկու երեխա ուներ եւ այդքան էլ շատ չէր ցանկանում երրորդն ունենալ: Հետագայում հասկացավ, որ դա միակ պատճառը չէ, որ ինքն իր համար էլ է երեխա ուզում: Գիտեր, որ երեխաներ ունեցող կանայք երբեք այդքան անհուսորեն միայնակ չէին, եւ կարծում էր, որ եթե երեխա ունենա, ինքն իրեն ավելի քիչ միայնակ կզգա: Սերը բավական ուժեղ դեղամիջոց չէր՝ նրա աճող մեկուսացումը բուժելու համար:

Մեկ վիժում, հետո մյուսը: Դրա մասին հիշողությունը դեռ վառ էր, ինչպես մղձավանջ. արթնանում է, իսկ սավանը թաթախված է արյան մեջ: Մենակ է: Լաց է լինում, հետո օգնություն է կանչում: Նրան շտապ տեղափոխում են հիվանդանոց: Մարմինն ընկած է Դեթրոյթի Հենրի Ֆորդի հիվանդանոցի վիրահատական սեղանին: Ճլացուցիչ լույսերն իջնում են իր գունատ դեմքին, աչքերը փակ են, քրտինքի կաթիլներ են փայլփլում ճակատին: Ոտքերը լայն բացված են եւ բարձրացված հենարանների վրա: Դեռ արնահոսում է. վարդագույն, կարմիր եւ մանուշակագույն վարդեր են կարծես ծաղկում մարմնի տակ՝ արյունով թաթախ-

ված սավանի վրա: Բուժքույրերը սարսափազդու տեսք ունեցող գործիքներ են պատրաստում՝ ասեղներ, դանակներ, սեղմիչներ, գդալիկներ: Իր մարմինը քնած է եւ անշարժ: Այս անգամ ցավից կխուսափի: Նստելով նրա բացված ոտքերի միջեւ՝ բժիշկն սկսում է աշխատել: Ներս է մտցնում գործիքը: Ձեռքը մեկնում է բուժքրոջ կողմը, եւ նա մեկ ուրիշ գործիք է տալիս: Բժշկի թեւքերն արյունոտ են: Քնած երիտասարդ կնոջ մարմնի խորքից նա հանում է պտղի մնացորդները: Քերում է նրա արգանդի մեռած հյուսվածքը. անիմաստ է՝ լերդացած արյան այս թանձրուկը երեխա անվանել: Սա իր առաջին վիժումն է: Ծուտով կարթնանա սառը քրտինքի մեջ՝ սրտխառնոց զգալով: Կփսխի: Քրքրված արգանդը դեռ որոշ ժամանակ կշարունակի արյունահոսել: Այնպիսի զգացողություն կունենա, ասես այն ներսից դուրս են շրջել:

Դեռ հիվանդանոցում սկսեց նկարել *«Հեների Ֆորդի հիվանդանոցը»:* Մաեստրոն նրան անատոմիայի գրքեր բերեց, իսկ բժիշկը բերեց պտուղը ֆորմալդեհիդի մեջ: Հետո Մաեստրոն նրան ասաց, որ գլուխգործոց է նկարել, որ ոչ մի կին երբեք նման բան չի նկարել: Եթե դա ճիշտ էր, ապա նկարը թանկ նստեց նրա վրա:

Սղնավանջներում տեսնում էր ֆորմալդեհիդի մեջ լողացող՝ իր վիժած պտուղը: Ի վերջո, այն ամբողջական ու առանց վնասելո՞ւ էին հանել: Ի՞նչ մեծության էր: Ի՞նչ սեռի: Մեկ այլ երազում իր չծնված երեխան ողջ էր, լողում էր՝ շարժելով ձեռքերի ու ոտքերի փոքրիկ մատները: Կապույտ աչքեր ուներ եւ ծիծաղում էր: Բայց դա երեխա չէր, դա իր սիրելի տիկնիկն էր: Տիկնիկը մեռած էր: Երեխան մեռած էր:

Նա նկարում է իրեն տիկնիկի հետ. ողբ երեխայի համար, որը երբեք չի ունենա: «Տիկնիկով ինքնադիմանկարում» նա տիկնիկը պահել է իր ձեռքերում, չի խաղում հետը կամ դիպչում նրան, նույնիսկ նրան չի նայում: Տիկնիկը երեխայի չի փոխարինում. պարզապես հիշեցում է դա, մեռած առարկա:

Ֆրիդան նստած է սոսկալի մռայլ ու դատարկ սենյակի փոքրիկ մահճակալին, մերկ տիկնիկի կողքին: Նստած նայում է, ծխում: Դա այն ամենն է, ինչ կարող է անել: Նախկինի պես միայնակ է: Այլեւս ոչինչ չի սպասում: Տխուր ու դատարկ է զգում:

Դեթրոյթում վիժումից հետո ո՛ր կողմն էլ շրջվեր՝ մահ էր տեսնում: Ելք կա՞ր արդյոք այս ամենից,- հարցնում էր: Արդեն այդ ժամանակ

մտածում էր ինքնասպանության մասին: Բայց գիտեր, որ մահը միշտ կա որպես հնարավորություն: Ինքը, որ ստիպված էր պայքարել գոյատեւելու համար, տեսնում էր, թե ինչպես է մահը քմծիծաղում իր վրա ամեն ներարկման ժամանակ, ամեն վիրահատությունից առաջ: Այն միշտ հասանելիության սահմաններում էր:

Առավել մեծ մարտահրավերը կյանքն էր, ոչ թե մահը: Պետք է ինքն իրեն ծնունդ տար: Ինքզինքը կյանքին վերադարձնելու համար: Կրեր իր ցմահ դատապարտումը՝ առանց բողոքարկման հնարավորության: Ապրեր: Եթե միայն կարողանար բացատրել Մաեստրոյին, թե որքան խորն է, որքան կործանարար է *համր* լինելու, *վտարանդի* լինելու այդ զգացումը: Կուզեր իմանալ՝ հասկանո՞ւմ էր նա իրեն, երբեւէ հասկացե՞լ էր: Երբեմն մտածում էր, որ ինչ-որ չափով հասկանում էր: Երբեմն էլ՝ ասես խոսում էին տարբեր լեզուներով, նա՝ քաղաքականության եւ գաղափարախոսության լեզվով, այն, ինչ տեսնում էր որպես իր իրականություն, իսկ ինքը՝ հույզերի, ցավի եւ մենության լեզվով: Արական եւ իգական արվե՞ստ: Ինքն այդպես չէր մտածում: Բայց գիտեր տարբերությունը՝ իրականության ընկալման տղամարդու եւ կնոջ փորձառությունների միջեւ, եւ նույնիսկ ավելին՝ հիվանդ եւ առողջ մարդու փորձառությունների միջեւ:

Երբեմն, անկասելի ուժի նման, նրա ծանոթ դեւը պարզապես պետք է պոռթկար: Դա անելու ուղիներ էր փնտրում: Օգտագործում էր արցունքներ, լաց, հայհոյալից բառեր: Միայն նկարչությունը կարող էր ճնշել կամ վերահսկել դրան: Որովհետեւ երբ ինքը նկարում էր, իրեն ազատված էր զգում սեփական մարմնից: Իր մարմինը պարզապես միջնորդ էր դառնում: Մոռանում էր այդ մասին եւ իր մասին: Եվ խաղաղության այդ թանկ պահերը նրա պարգեւն էին:

Նրա ինքնանկարները ցույց էին տալիս, թե ինչպես է գոռում փոսի միջից՝ կանչելով Մաեստրոյին: Ինքը պետք է հավատար իրենց միջեւ հաղորդակցության հնարավորությանը: Որովհետեւ արտաքուստ նույն կենսուրախ, վառ ու գունագեղ անձնավորությունն էր, խնդություն պարգեւող նույն արտիստը, որին բոլորը պաշտում էին եւ որը հազիվ թե երբեւէ դժգոհեր:

Նա հայտնաբերեց, որ ինքնադիմանկարներ նկարելը բարձրացնում է իր ինքնավստահությունը: Նրա «գայթակղիչ» եւ մյուս ինքնադիման-

կարների հիմնական տարբերությունը առաջիններում ինքնագիտակցության բացակայությունն էր, իսկ վերջիններում դրա ուժեղ ներկայությունը: Ժամանակի հետ դաժանորեն անմիջական դարձավ: Հետագա ինքնանկարներում նա այլեւս գեղեցիկ չէր, ուղղակի տարօրինակ տեսք ուներ: Չէր հրապուրում, պարզապես ուշադրություն էր հրավիրում իր վրա: Դեմքը դարձավ չոր եւ լուրջ: Արտահայտված այտոսկրերը եւ առատ հոնքերն ասես քարից կերտված լինեին: Խիստ, սեւ աչքերը նայում էին կա՛մ դիտողի ուղիղ միջով, կա՛մ ուղիղ կողքով: Նա միտումնավոր չափազանցնում էր իր ինքնանկարների դաժանությունը:

-Նայե՛ք ինձ,- ասում էր:- Ես ողջ եմ, եւ դա ինձ ցավ է պատճառում: Այդ ինքնադիմանկարները նման էին նրա գոյությունը վավերացնող վկայագրերի՝ մեկ, երկու, երեք, չորս: -Էքզիբիցիոնիզմ է,- ասում էին: Բայց նրա համար ինքնադիմանկարներ նկարելը մի տեսակ կախարդական ծես էր, յուրատեսակ մի էկզորցիզմ:

Նա չէր հաճոյանում ժողովրդականություն վայելող ճաշակին եւ առավել եւս՝ չէր փորձում գրավել հանրությանը: Բացի այն առաջին ինքնադիմանկարից, մնացած բոլորն անխնա էին եւ՛ բնորդի, եւ՛ դիտողի հանդեպ: Կարծես նրան չէր հետաքրքրում՝ դուր կգա՞ն ինչ-որ մեկին, թե՞ ոչ: Ինքն իր կյանքն էր նկարում, ինչո՞ւ պիտի այն դուր գար որեւէ մեկին: Իր դեմքին թույլ բեղեր էր նկարում, մի բան, որ ցանկացած այլ կին կարող էր սպիտակեցնել, պոկել, սափրել, թաքցնել: Հակված էր սադրելու, իսկ ինչո՞ւ ոչ: Ո՞վ է ասում, թե կինը չի կարող զվարճանքի համար բեղեր պահել իր ալ-կարմիր շուրթերի վերեւում: Մաեստրոյին գրավել էր նրա անդրոգինային՝ երկսեռ հատկությունը, նա հրապուրիչ էր համարում այդ արական դրսեւորումը կանացի դեմքին: -Օ՛, տղամարդիկ ենթագիտակցաբար բոլորը համասեռամոլներ են, նրանց գրգռում է կնոջ շուրթերի վերեւում տեսնել բեղերի այդ փնջիկները, ինչպես սեռահասուն դարձող տղայի դեմքին,- ուրախ բացատրում էր ինքը՝ կարծես զվարճանալով այդ մտքից: Համենայն դեպս, գիտեր, որ դա մարդկանց ստիպում է կանգ առնել եւ նայել: Բայց միայն փոքրիկ բեղերը չէին մարդկանց ուշադրությունը գրավողը, այլ նաեւ աչքերը, դեմքը, հագուստը, ամբողջ անձը: Սա եւս մեկ սադրանք էր, միջոց՝ ստիպելու մարդկանց ոչ միայն կանգ առնել եւ նայել, այլեւ տեսնել:

Երբ նույնիսկ դա բավարար չէր, նա դիմում էր ավելի ուժեղ, ավելի դաժան լեզվի: Նկարում էր կոտրված վրձին, ոտքի վրայի վերքեր, կտրված սիրտ, կտրտված երակներից հոսող արյուն, նետերով խոցված մարմին, իրեն՝ մեռած, իրեն՝ հողի մեջ տնկված: Նկարում էր սաղմեր եւ վիժած պտուղներ, արյունոտ ճերմակ սավաններ եւ ծնունդ՝ լայն բացված ոտքեր, նորածին մանկան՝ դուրս նայող գլուխ: Ոչ մի նուրբ կամ քաղցր բան չկար ծնունդաբերող կնոջ ճիչում, ծնվող երեխայի,- հենց ի՛ր,- լացի մեջ:

Նա դեռ այն զգացումն ուներ, որ մահը ստվերի պես հետեւում է իրեն՝ թեւածելով իր յուրաքանչյուր նկարի վրա: Զգում էր, որ իր գործն ամեն գնով այդ ստվերը զսպելն էր, դրա հանդեպ ունեցած վախին տիրապետելը, գուցե այն իր նկարներում ընդգրկելը: Մաեստրոն սիրում էր ասել, որ նկարչությունն իր կյանքն է: Ինքը նման հայտարարություններ չէր անում, բայց դա պակաս ճիշտ չէր նաեւ իր պարագայում: Բարձրաձայն վատաբանում էր իր նկարները, բայց իրականությունն այն էր, որ նկարչությունն իր փրկօղակն էր. պահում էր իրեն ջրի երեսին եւ թույլ էր տալիս լողալ, շնչել:

Դեթրոյթում էր, երբ մայրը մահացավ: Դոնյա Մաթիլդան մահացավ անսպասելիորեն՝ լեղապարկի վիրահատությունից հետո, հենց այն ժամանակ, երբ Ֆրիդան հույս ուներ, թե մայրը վերջապես կազատվի ստամոքսի նենգ ցավերից, լարվածությունից եւ վատ տրամադրությունից, որ մշտապես տանջում էր նրան: մտածում էր, որ դա ինչ-որ հիմար կատակ է՝ մեռնել այդպիսի սովորական, հասարակ վիրահատությունից: Ավելի հեշտ կտաներ, եթե մայրը մահացած լիներ կյանքին սպառնացող ինչ-որ բանից:

Նա ինքը հազիվ էր փրկվել երկրորդ վիժումից հետո: Գրեթե մահացու արնահոսել էր եւ դեռ ապաքինվում էր: Գիտեր, թե ինչ է նշանակում պառկել վիրահատական սեղանին՝ շրջապատված սառը պատերով եւ դիմակավորված դեմքերով, որոնք հետագայում նորից հայտնվեցին իր մղձավանջներում: Ծատ լավ էր ծանոթ եթերի առաջին ընդունման եւ գիտակցության ամբողջական կորստի միջեւ ընկած այդ պահին, այդ պահին, երբ տեսողությունդ մշուշվում է, երբ խելահեղորեն շնչասպառ որսում ես օդը՝ վախենալով, որ երբեք չես վերադառնա, բայց դա միայն ստիպում է քեզ ավելի արագ սահել անգիտակից վիճակի մեջ:

Վերջին բանը, որ հիշում ես հատակն իջնելուց առաջ, չարթնանալու բնազդային այդ վախն է: Անգիր գիտեր նախավիրահատական ամեն մի րոպեն, եւ այդ մասն այլեւս չէր վախեցնում իրեն, այդ պահը, երբ դադարում ես մարդ լինել եւ դառնում ես պարզապես ֆիզիկական մարմին,- ինչ-որ մեկի, ոչ մեկի,- որը պետք է պատրաստել գործողության: Իսկ դա նշանակում է մարմինը դնել վիրահատական սեղանին, կաշեփոկերով ամրացնել եւ ծածկել, ապա բացել այն հատվածը, որտեղ մեկ վայրկյան անց վիրաբույժն իր կտրվածքը կանի: Ծանոթ էր յոդով ներծծված բամբակի սառը հպումին, հոտին, որ հասնում էր իր քթանցքերին եւ ստիպում հազալ, իրեն ծածկող սավանի խշշոցին, խուլ ոտնաձայներին, արտացոլիչից ընկնող՝ միացված լույսերին: Իր մասին երրորդ դեմքով խոսող ձայներին,- ասես արդեն անգիտակից կամ մահացած լիներ: Քիթ եւ բերան ծածկող դիմակների վերեւում գտնվող աչքերին: Անանձնական հպումներին, մեքենայական շարժումներին մարդկանց, ովքեր ամբողջ օրն անցկացնում են այս վիրահատարանում, երբ մի մարմին փոխարինում է մյուսին: Գիտեր, որ Դոնյա Մաթիլդան հենց այսպես պետք է զգացած լիներ իր կյանքի վերջին գիտակցված վայրկյանների ընթացքում:

Երբեք ժամանակ չի եղել, մենք երբեք ժամանակ չենք ունեցել միմյանց համար,- մտածեց նա այդ առավոտ անկողնում: -Միշտ մտածում ենք, թե ժամանակ կունենանք ամեն բան ասելու եւ բացատրելու նրանց, ում հանդեպ անտարբեր չենք, ցույց տալու, թե որքան ենք հասկանում եւ սիրում նրանց: Հանկարծակի մահն անարդար է բոլորի հանդեպ, ներառյալ նրանց, ովքեր անցյալում են մնացել: Երբ խոսում էինք, միշտ հիվանդության, սննդի, այլ մարդկանց մասին էր լինում: Կամ Հայրիկի մասին: Այնքան շատ բան մնաց չասված: Եթե ապրեր, գուցե մի օր ուժ կհավաքեի նրան հարցնելու. -Մայրի՛կ, ինչո՞ւ չեկար ու չտեսար ինձ հիվանդանոցում վթարից հետո, երբ մտածում էի, որ մեռնում եմ, երբ այնքա՛ն մենակ էի եւ վախենում էի մահից:

Վերջին անգամ, երբ տեսան իրար, իր՝ Ամերիկա մեկնելուց անմիջապես առաջ, դարձյալ վիճում էին Մաեստրոյի առիթով: Դոնյա Մաթիլդան տանել չէր կարողանում նրան: Դժգոհ էր, որ նրանք երկուսով էին մեկնում: Համոզված էր, որ երկար ճանապարհորդությունը կքայքայի իր դստեր առողջությունը: Որ նրան այնտեղ ոչինչ չէր սպասում, բացի ցուրտ եղանակից, վատ սնունդից եւ միայնությունից: Դոնյա Մաթիլդան կարող էր ասել, որ կգնա նրանց հետ, քանի որ Ֆրիդայի համար դա

ավելի լավ կլիներ: Բայց միայն ցինիկաբար հիշեցրեց Ֆրիդային այն մասին, թե ինչպես է նրա նկարիչը՝ հայտնի կոմունիստը, պատրաստվում որմնանկարներ նկարել կապիտալիստների համար, որոնց փողը կարծես թե նրան չէր անհանգստացնում:

Քո նկարիչը,- այդպես էր նա անվանում Մաեստրոյին, կարծես թե վերջինս իսկական նկարիչ չէր, այլ պարզապես իր դստեր հորինած մեկը: Դոնյա Մաթիլդան նստած էր սեղանի մոտ եւ բարձի երես էր ասեղնագործում ու խոսում: Նիհարած դեմքն այլայլված էր, սովորականից ավելի գունատ: Վատառողջ տեսք ուներ, բայց ի տարբերություն դստեր՝ չէր փորձում թաքցնել դա: Նրա տառապանքը ցուցադրական էր. միակ զենքը, որ ուներ ամուսնու եւ երեխաների դեմ: Նա խղճահարությունն օգտագործում էր իր ուզածին հասնելու համար: -Դու միշտ հավատում ես թերթերի ասածին, կարող էիր գոնե որոշակի հարգանք եւ երախտագիտություն ցուցաբերել նրա հանդեպ, այդ մարդն աջակցում է այս ամբողջ ընտանիքին,- գոչեց Ֆրիդան՝ կատաղած դուրս նետվելով տնից: Միշտ նույն պատմությունն էր մոր հետ. վեճեր, լռություն, նախատինք: Անիմաստ էր նրա հետ խոսելու փորձ անել, փորձել նվաճել նրա սերը: Իսկ չորս քույրերից ինչո՞ւ հենց ինքը պետք է այդքան ջանք գործադրեր,- մտածում էր՝ արցունքներն աչքերին:

Նա Մեքսիկա ժամանակին չվերադարձավ: Օրերով գնացքով ճամփորդեց Դեթրոյթից, բայց այդպես էլ տեղ չհասավ: Երբ հասավ հիվանդանոց, մայրն արդեն անգիտակից վիճակում էր: Կռացավ եւ համբուրեց նրա ճակատը: Մայրը բացեց աչքերը եւ սեղմեց իր ձեռքը: Այդքանը: Բայց Ֆրիդան վստահ չէր, որ նա ճանաչել է իրեն:

Դեթրոյթ վերադառնալուց հետո նա իր օրերն անցկացնում էր փողոցին նայող պատուհանի մոտ նստած: Հինգերորդ հարկից նայելիս՝ մարդիկ կարծես դեսուդեն էին նետվում, ինչպես այն համր ֆիլմերից մեկի կերպարները, որոնք նա շատ էր սիրում դիտել: Գուցե դա ճիշտ էր, հնարավոր է, որ Նահանգներում մարդիկ իսկապես այլ կերպ էին շարժվում, ավելի արագ: Նստում էր այդ պատուհանի մոտ, մտքերն այլ տեղում էին, մարմինը լարված էր: Ասես իր մի մասը մահացել էր մոր հետ: -Ես պետք է ասեի, որ կկարոտեմ քեզ, մայրիկ,- մտածում էր՝ մատը ցրված շարժելով պատուհանի դռնակի վրայով: Բայց այլեւս չկարողացավ բացել այդ դուռը: Ելք չկար այդ ճնշող, օտար սենյակից: Տանջվում էր իրենց անավարտ հարաբերությունների համար, այն բոլոր բաների համար, որ

իրենց միջեւ մնացել էին չասված: Մոր լուռ անհանգստությունը: Լռությունները, որոնցով շրջապատեց դստերը:

Եվ սենյակը, ամբողջ դատարկությունը, որ կլանել էր իրեն:

Հարակից հիվանդությունների հաջորդականությունը վերածվեց տոկունության եւ ցավի երկար, գրեթե շարունակական փորձության: Նա ավելի ու ավելի էր ստիպված լինում կենտրոնանալ իր վրա: Փորձում էր անտարբեր չլինել, բայց շրջապատի մարդիկ երբեմն նրա պահվածքը համարում էին եսասեր եւ եսակենտրոն: Մինչդեռ ինքը պարզապես փորձում էր գոյատեւել: Ինչպե՞ս կարող էր դա բացատրել նրանց,- մտածում էր: Ինչպե՞ս կարող էր նրանց ասել, որ պետք է գերագույն, աներեւակայելի ջանքեր գործադրի՝ նույնիսկ առօրյա ամենակենցաղային բաներն անելու համար, ինչպես, օրինակ, վեր կենալն է, լվացվելը, քայլելը, նստելը: Երբեմն ցավն այնքան ուժեղ էր լինում, որ նույնիսկ չէր կարողանում նստել: Ֆիզիկական իր ջանքերը չէր կարող բառերով արտահայտել, եւ դա ակնհայտ դարձավ միայն այն ժամանակ, երբ գրեթե ուշաթափվում էր: Կարծում էր, թե ինքն է մեղավոր, որ ուրիշներն իրեն չեն հասկանում: Մեղադրում էր իրեն, որ իրենից ուժեղ է ձեւանում: Դրա գինն այն էր, որ մարդիկ սովորեցին տեսնել ուժեղ կնոջ, կնոջ, որ կարող էր ամեն ինչ ինքնուրույն անել, որն օգնության կարիք չուներ եւ նույնիսկ օգնում էր ուրիշներին: Դա նրան դուր էր գալիս, բայց լարվածությունը հաճախ չափազանց շատ էր իր համար:

Եվ երբ այլեւս անկարող էի շարունակել, երբ պետք է ցույց տայի, թե որքան թույլ եմ, այն ժամանակ ինձ մեղադրում էին, որ եսասեր եմ: Կամ էլ օգտագործում եմ իմ թուլությունը՝ ինքս ինձ վրա ուշադրություն հրավիրելու համար: Ո՛չ, հիվանդի եւ առողջի միջեւ չկա՛ փոխզիջում, չկա՛ իրական փոխըմբռնում: Բայց մինչեւ դա հասկացա, արդեն ուշ էր,- մտածում էր նա, երբ ջերմաստիճանը բարձրանում էր: Նա դիտում էր, թե ինչպես է առավոտյան լույսն ավելի ու ավելի մոտ թափանցում պատուհանից:

Ամեն առավոտ ստուգում էր իր մարմնի վիճակը: Խնամքով: Չէր ուզում սուր ցավի վտանգին ենթարկվել: Կրկնում էր նույն շարժումները, շարժվում եւ ձգվում էր նույն ձեւով, միշտ զգուշորեն, միշտ վախենալով,

որ ցավը կտիրի իրեն, եթե մի պահ թուլացնի զգոնությունը: Սկզբում շարժում էր ոտքը: Ապա կենտրոնանում էր ողնաշարի վրա՝ ծոծրակից մինչեւ մեջքի փոքր հատվածը, որտեղ սովորաբար կենտրոնանում էր ցավը: Սուր կամ բութ՝ ցավը, որպես կանոն, նորից հայտնվում էր հենց նույն տեղում՝ մեջքի ստորին հատվածում: Իր համար դժվար էր հրաժարվել առավոտյան այդ ծեսից, թեեւ հիմա դա կարող էր անիմաստ լինել, որովհետեւ այդ սովորական, գրեթե ավտոմատ շարժումները մարմնի հետ իր միակ մնացած կապն էին:

Հանկարծ հիշեց մեկ այլ առավոտ՝ քսան տարի առաջ: Մեկ այլ սարսափելի ցնցում, երբ իրեն դավաճանել էին երկու ամենամոտ մարդիկ:

Թվում էր, թե հենց երեկ էր.

Սկզբում լույսը հայտնվեց: Այն դանդաղ սողաց իր կոպերի տակ՝ արյան պես տաք ու կարմիր: Ասես ներսից ինքն իրեն նայեր, մաշկի տակից, որտեղ արյունը հոսում է երակների միջով եւ արեւի հպումից դառնում բաց վարդագույն: Դեռ ցանկություն չուներ բացելու աչքերը: Երբեմն կոպերն իր միակ պաշտպանությունն էին իրականությունից: Կոպերը՝ մաշկի այդ երկու բարակ ծածկերը, թույլ էին տվել իրեն ավելի խորը ներքաշվել, մեկուսանալ ինքն իր մեջ՝ մի տարածք, որտեղ ոչ ոք եւ ոչինչ չէր կարող վնասել իրեն: Այդ առավոտ նա իրեն ջերմ ու ապահով էր զգում, երբ պառկած էր անկողնում՝ մի տեսակ խաղաղ բացակայության մեջ ներսուզված:

Գիտեր, թե ինչ է տեսնելու, երբ բացեր աչքերը: Մահճակալի ձախ կողմում գիշերային սեղանն էր, իսկ դրա վրա մի սկուտեղ՝ դեմերոլի փոքրիկ շշով, ներարկիչ, մի քիչ բամբակ եւ սպիրտ: Եվ մի բաժակ ջուր, որը Մայեթը թողել էր նախորդ գիշեր՝ նախքան իրեն վերմակով լավ ծածկելը, պատուհանը փակելն ու լույսն անջատելը: Օդի փոքրիկ պղպջակները, ասես մանրանկար թափանցիկ մարգարիտներ, կպած էին պատերին: Մի ծաղկաման կար՝ շուկայից գնված դաշտային ծաղիկների փնջով, մի տուփ ծխախոտ ու լուցկի: Սեղանին՝ այգուց քաղած թարմ նռներով մի թաս էր, իսկ դրա վերեւում՝ սպիտակ պատին լուսանկարներ էին փայտե մուգ շրջանակների մեջ: Աջ կողմում տեսնելու էր առանց վարագույրի մեծ պատուհանը: Եվ եթե նստեր ու պատուհանից դուրս նայեր, կանաչ ծառեր կտեսներ: Դեռ սովոր չէր երկրորդ հարկի ննջասենյակին եւ նոր տանը գտնվող արվեստանոցին, որը նրա համար Մաեստրոն էր կառուցել՝ իր տան հարեւանությամբ:

Նրա սենյակը նոր տանը լուսավոր էր եւ ընդարձակ, այնքան տարբեր իր ծնողների՝ ծանր կահույքով լցված տան առաջին հարկի հին, մութ սենյակից, որտեղ մեծացել էր: Աչքերը դեռ փակ՝ ձեռքը մեկնեց դեպի ներարկիչը՝ ցավն սպանելու համար: Դա անում էր ամեն առավոտ. սկզբում ներարկումը, հետո ծխախոտը, որ ծխում էր անկողնում՝ սպասելով ներարկման կախարդական ներգործությանը: Միայն դրանից հետո էր ձեռնարկում բոլոր մյուս նախապատրաստությունները նոր օրվա համար՝ վեր կենալ, լվացվել, հագնվել, ուտել: Մատներն արդեն դիպչում էին ներարկիչին, երբ մտափոխվեց: Այդ առավոտ մտածեց, որ կարող է արթնանալ առանց դեմերոլի: Այտուցված ոտքը չէր ցավում, թեեւ գիտեր, որ դա հավանաբար կփոխվի հենց որ կանգնի այդ ոտքի վրա: Բայց պատրաստ էր խիզախելու այդ օրը, քանի որ արթնացել էր առանց իր սովորական սեղմիրանի կամ բութ ցավի, որ այն սովորաբար պատճառում էր իր կողոսկրերին՝ դժվարացնելով շնչելը:

Նախորդ օրը նրան այցելել էր բժիշկ Վելասկո ի Պոլոն՝ միակ բժիշկը, որին ինքը վստահում էր, որ չի հորինի ինչ-որ նոր, տանջանքի էլ ավելի ցավոտ մի գործիք, ինչ-որ նոր տեսակի մի սեղմիրան: Վերջապես, մեկ ամիս անց նա հանել էր գիպսը: Ներշնչեց՝ օդով լցնելով թոքերը: Այդպես պառկած էր՝ վայելելով ազատության այդ հրաշալի զգացումը: Պետք է որ այսպես զգացած լինեին միջնադարյան ասպետները, երբ հանում էին զրահը, որը սահմանափակում էր նրանց շարժումները, բայց ճակատամարտում պաշտպանում էր անխուսափելի մահից: Ազատվելով գիպսի սահմանափակումներից՝ վերջապես իրեն թեթեւ էր զգում, ինչպես թիթեռը, որը հենց նոր է թոթափել թրթուրի մարմինը: Ամեն անգամ, երբ ընթացակարգը կրկնվում էր, եւ ինքն ազատվում էր գիպսից կամ մարմինը վանդակող որեւէ այլ բանից, ասես ամբողջովին ազատված լիներ մարմնից: Հանկարծ անհավանական մի թեթեւություն էր զգում: Անմարմին լինելու այդ զգացումը երկար չէր տեւում, թերեւս ոչ ավելի, քան մեկ վայրկյան, մեկ ակնթարթ: Բայց զգացողությունն այնքան ուժեղ էր, որ մտածում էր՝ թերեւս արժեր կրել այդ թշվառ զրահը, հենց միայն նրա համար, որ զգար դրանից ազատվելու բերկրանքը:

Պետք է որ հրաշալի լինի թռչելը եւ ոչ թե ինձ նման ստիպված սողալը,- ոչ առաջին անգամ մտածեց նա՝ վաղանցուկ այդ առավոտյան: Բժիշկը հետազոտեց վերջին վիրահատությունից մնացած նրա մեջքի սպիները՝ հավանության քրթմնջոցներ արձակելով, եւ նա արդեն մտա-

ծում էր, թե ինչպես է մտնելու տաք ջրով լի լոգարանն ու ժամերով այնտեղ պառկելու ջրի տակ՝ պարզապես երկարացնելու համար թեթեւության այդ զգացումը: Քանի որ իր մարմինը ջրի տակ գրեթե անկշիռ կլիներ: Ծատ էր ուզում ոչ թե մարմինը, այլ պարզապես ջրի ջերմ հպումն զգալ: -Առողջ մարդիկ պետք է որ մշտապես այդ զգացողությունն ունենան, քանի դեռ ինչ-որ բան չի սկսել ցավել,- մտածեց: Իրեն հետաքրքրում էր այն միտքը, որ նրանք հիմնականում *չեն զգում* իրենց մարմինը: Եվ երբ գիտակցում են այդ մասին, դա սովորաբար վատ նշան է: Անհանգստությունը կամ ցավն է, որ նրանց հիշեցնում է իրենց մարմնի մասին: Իհարկե, դա կարող է նաեւ հաճույքը լինել, ինքը չպետք է մոռանա հաճույքը: Եթե ինքն առողջ լիներ, մարմինն իրեն փակ վանդակի պես չէր զգա: Պարզապես վեր կկենար եւ կքայլեր՝ մտածելով մեկ այլ բանի մասին, քանի որ մարմինը կատարյալ աշխատանքային վիճակում կլիներ եւ չէր խանգարի իր շարժումներին: Ինչպես ամեն առավոտ իր շրջապատի մարդիկ, ինչպես Քիթին, Մաեստրոն, երեխաները:

Բայց միայն առողջ մարդիկ կարող էին իրենց թույլ տալ սեփական մարմնի մասին չմտածելու ճոխությունն ու հաճույքը: Երբ ամբողջ կյանքումդ հիվանդ ես, քեզ ցմահ բանտարկյալի պես ես զգում:

Այդուհանդերձ, նա այնքան ուրախ էր այդ առավոտ՝ առանց գիպսե պատյանի արթնանալու եւ ազատ շնչել կարողանալու համար: Ծխախոտ վառեց՝ արդեն աչքերը բացած: Ծուխը երկար ներքաշեց՝ լցնելով թոքերը եւ թույլ տալով, որ նիկոտինը թափանցի արյան մեջ: Սա մեկ այլ առավոտյան ծես էր, զգայական հաճույք: Նրան դուր էին գալիս ծխախոտի հոտը եւ նուրբ թղթի հպումը, երբ գլանակը պտտում էր մատների մեջ, եւ ծխախոտի փշուրները գիրկն էին ընկնում: Հետո արեւը ներխուժեց սենյակ, եւ յուրաքանչյուր առարկա հանկարծ նոր տեսք ստացավ: Գույները կարծես ճչում էին, ասես կենդանացած լինեին: Երկու օր էր՝ ինչ չէր փսխում, երեւի դա հույսի փոքրիկ շող էր երեխայի համար, որին կրում էր: Դա նրա երրորդ փորձն էր: Վերջին անգամ բժիշկն ասել էր. -Սա քեզ կսպանի, այլեւս մի՛ հղիացիր, եթե չես ուզում ինքդ քեզ սպանել: Ֆրիդան դեռ հույս ուներ երեխա ունենալ, նա ուզում էր ապացուցել ինքն իրեն, որ կարող է դա անել, բայց միեւնույն ժամանակ վախենում էր, որ մարմինը նորից կըմբոստանա նման բեռ կրելու դեմ:

Սպասուհուն ասելու էր, որ որոշել է այդ առավոտ անկողնում չնախաճաշել: Ազատ էր եւ դա նշելու էր՝ նստելով սեղանի մոտ, ինչպես

ցանկացած նորմալ մարդ, նախաճաշելով եւ թղթերը թերթելով: Եթե, իհարկե, հիվանդ ոտքը չխանգարեր: Այն նորից սկսել էր իրեն զգացնել տալ, բայց դեռ տանելի էր: Գիտեր, որ ցավը կթուլանար ներարկումից հետո, բայց չէր կարողանա քայլել, կամ եթե կարողանար էլ, ապա, գուցե, քայլեր մինչեւ մյուս տանը գտնվող Սաեստրոյի ստուդիան միայն: -Պետք է ինքս ինձ նախապատրաստեմ ոտքիս մատների անդամահատմանը,- մտածեց: Այն բանից հետո, երբ ոտքի մատներից մեկը բառացիորեն ընկել էր, այլեւս չէր կարող վիրահատությունը հետաձգել: Միայն կամքի ուժով չէր կարող կասեցնել փտախտը. դա հասկացել էր՝ վիրակապի տակ գտնելով սեւ, փտող մարմնի մի կտոր: Բայց այդ առավոտ չէր ուզում մտածել փտախտի մասին:

Երբ մտածում էր քսան տարի առաջվա այդ օրվա մասին, առաջին բանը, որ հիշում էր, այն էր, թե որքան անբացատրելիորեն կենսուրախ էր: Գրեթե ամբողջ առավոտն անցկացրել էր լոգարանում, իսկ սպասուհին օգնում էր լվացվել՝ իր հիվանդ ոտքի պատճառով: Հետո բուժքույրը եկավ վիրակապը փոխելու: -Այնքան էլ լավ տեսք չունի, պետք է շուտափույթ ինչ-որ բան անեք,- ասաց բուժքույրը, կարծես Ֆրիդան ինքը դա չգիտեր: -Վաղը,- պատասխանեց Ֆրիդան,- վաղը ես բժշկի հետ վիրահատության օր կնշանակեմ: «Միայն ոչ այսօր,- մտածեց,- այսօր ազատ եմ, ազատ եմ սեղմիրանից, իմ մութ մտքերից»: Նա մազերը հյուսեց եւ ամրացրեց կրիայի պատյանից պատրաստված երկու նոր սանրերով, որոնք վերջերս Սաեստրոն էր նվիրել: Ապա մի բաժակ թունդ սեւ սուրճ խմեց եւ մրգային աղցան կերավ: Նախաճաշելիս թերթերն էր կարդում. նրա ուշադրությունը գրավեցին ֆաշիզմի վերելքն ու այդ տարի Գերմանիայում տեղի ունեցող զարգացումները:

Վերջապես, ձեռնափայտին հենվելով, դանդաղ շարժվեց դեպի Սաեստրոյի արվեստանոց: Ուզում էր պատմել նրան, թե որքան լավ էր զգում այդ առավոտ, գուցե նույնիսկ հաջողվի պահպանել երեխային: Որոշեց ասել նրան դա, չնայած գիտեր, որ նա կմռայլվի իր հղիության մասին հիշատակումից, քանի որ խելագարություն էր համարում այդպես վտանգի ենթարկել իր առողջությունը:

Կարծես թե նա չգիտեր, որ ինքը միշտ գնում է դեպի անհնարինը, դեպի անհարկի վտանգները, խենթ համառությունը, մարմինը մինչեւ վերջ լարման ենթարկելը:

Հետագայում տարօրինակ էր թվում, որ ինքը ոչ մի կանխազգացում չի ունեցել՝ թե ինչ է սպասվում այդ օրը, այնպես, ինչպես որ կանխազգացում չէր ունեցել մինչեւ վթարը: Կարծում էր գիտե՝ ինչպես կարդալ նշանները, որ կարող է զգալ, թե Մաեստրոյի կյանքում երբ է նոր կին հայտնվում՝ աչքերը փախցնելու, նյարդայնանալու եւ անընդհատ շտապելու նրա շարժուձեւից: Եվ նրա՝ հեռուն նայող հայացքից ու ճաշի ժամանակ անբնականորեն ուրախ մթնոլորտից: Մաեստրոն կսկսեր զրուցել քաղաքականությունից, որպեսզի խուսափի քննարկել, թե իրականում ինչ է կատարվում իրենց երկուսի միջեւ: Դրանք Մաեստրոյի փոքրիկ խորամանկություններն էին՝ տան մթնոլորտը քիչ թե շատ տանելի դարձնելու համար:

Նաեւ համոզված էր, որ հոտից կարող է ճանաչել նոր սիրուհուն: Երբ Մաեստրոն արվեստանոց մտնելուց առաջ թեթեւ, թաց մի համբույր էր դրոշմում իր այտին, ինքը միշտ կարող էր ասել՝ արդյո՞ք նա իր վրա մեկ այլ կնոջ հոտ է կրում: Բայց այդ օրը չկարողացավ ճանաչել իր քույր Քրիստինայի՝ Քիթիի հոտը: Գուցե որովհետեւ սովոր էր դրան: Քիթին միշտ իրենց կողքին էր, եւ նրա հոտն արդեն միախառնվել էր Ֆրիդայի ու Մաեստրոյի հոտերի հետ: Կամ միգուցե,- մտածում էր հետո,- ինքը չէր զգացել դա, քանի որ Քիթիի հոտը դեռ չկար նրա վրա: Միգուցե այդ օրը նրանց հանկարծակի մի կիրք էր համակել, ինչպես մակընթաց մի ալիք:

Քիթին հաճախ էր նստում Մաեստրոյի մոտ որպես բնորդ նկարվելու, որը մի անգամ նույնիսկ հայտարարեց, թե նա իր սիրելի մոդելն է: Եվ միշտ այդտեղ էր, նրա կյանքի մի մասը: Բայց Ֆրիդան զարմանում էր, թե ինչպես եւ ինչու է Քիթին դարձել նրա սիրուհին: Ինչպե՞ս կարող էին նրանք երկուսով այդպես արհամարհել իրեն, երբ պետք է իմանային, թե իրենց կրկնակի դավաճանությունն իրեն որքան ցավ էր պատճառելու: Միգուցե ինքն անարդար էր եղել Քիթիի հանդեպ,- մտածում էր հետո,- երբ մեղադրել էր նրան այդ սիրավեպի համար: Բայց ուրիշ ի՞նչ կարող էր անել: Իրենց ամուսնության հենց սկզբից Մաեստրոն մեծ նշանակություն էր տվել սեփական ազատությանը, ինչպես երեւում էր նրա պահվածքից, եւ ինքն ստիպված էր վարժվել դրան, եթե չէր ուզում կորցնել նրան: Ինքը պետք է անմիջապես հասկանար, որ նա՛, ո՛չ թե Քիթին էր կատարել առաջին քայլը: Քիթին միշտ համեմատաբար հնազանդ կին էր, եւ գուցե հենց դա էր Մաեստրոն այդքան գրավիչ համարել:

Այո, հետո հասկացավ, որ մեղադրել է Քիթիին Մաեստրոյին գայթակղելու համար, եւ որ Քիթին դա արել է այնքան բնազդաբար: Դա նվազեցնում էր Մաեստրոյի պատասխանատվությունը նրանց դավաճանության համար, եւ ինքը կարող էր արդարացնել նրան: Ինքն ավելի շատ հոգում էր Մաեստրոյին արդարացնելու մասին, քան Քիթիի մասին: Չէր կարող վտանգել իրեն՝ կորցնելով նրա սերը, ինքը չէր կարող գոյատեւել առանց դրա: Բայց կարող էր գոյատեւել առանց Քիթիի,- մտածում էր այն ժամանակ, թեեւ տարիների ընթացքում այնքան էլ վստահ չէր: Քիթին իրեն ամբողջությամբ նվիրել էր Ֆրիդային՝ մեջքի վիրահատությունից հետո, երբ նրա առողջությունը հանկարծակի վատթարացավ: Այդ նա էր, ոչ թե Մաեստրոն, որ օրեր ու գիշերներ էր անցկացնում Ֆրիդայի հետ՝ ընկերակցելով նրան, զբաղեցնելով, կերակրելով ու լողացնելով, սանրելով մազերը եւ դիմանալով նրա տրամադրության կտրուկ փոփոխություններին: Իր համար հետաքրքիր էր՝ արդյո՞ք Քիթին դա անում էր, որովհետեւ մեղավոր էր զգում սիրավեպի համար: Բայց այդ ամենը քսան տարի առաջ էր. նա դեռ այդքան մեղավո՞ր էր զգում: Գիտեր, որ մեղքի մի մասն ինքն է կրում: Մինչ Մաեստրոյի հետ Քիթիի սիրավեպը՝ Ֆրիդան երբեք չէր կասկածել, երբեք չէր խանդել նրան: Ինքը երբեք նրան որպես կին չէր տեսել, այլ միայն՝ որպես քույր:

Աստվա՛ծ, որքա՛ն մեծամիտ էի,- մտածեց հիմա:- Այնքան վստահ էի, որ Քիթին ոչ մի կերպ չի կարող համեմատվել ինձ հետ:

Մարմինը: Քիթին: Իր հիվանդ մարմինը: Քիթիի դավաճանությունը: Տասնմեկ ամսով ավելի երիտասարդ, ամաչկոտ, ինքնամփոփ Քիթին: Երկու երեխաների՝ Ֆրիդայի պաշտելի Անտոնիոյի եւ Իզոլդայի մայրը: Չորս Կալո քույրերից եւ երկու խորթ քույրերից միակը, որ երեխաներ ունի: Ոչ ոք, բացի Մաեստրոյից, Ֆրիդայի համար այնքան կարեւոր չէր, որքան իր փոքր քույրը: Նա չէր կարողանում Քիթիից առաջ ժամանակ հիշել: Իրենք ասես երկվորյակներ լինեին: Միշտ միասին, չնայած Ֆրիդան գերիշխում էր: Մանկապարտեզ, դպրոց, պոլիոմիելիտ: Իր հնազանդ փոքրիկ Քիթին, որ գիտեր, թե ինքն ինչքան էր վախենում մենակ մնալուց եւ միշտ կողքին էր, հանգստացնում էր իրեն, երբ լաց էր լինում, հետը պառկում էր անկողնում, մինչեւ ինքը քներ: Նրանք անբաժան էին մինչեւ որ Ֆրիդան ընդունվեց հեղինակավոր միջնակարգ դպրոց: Դոն Գիլյերմոն կարծում էր, որ Քիթին, ինչպես մյուս երկու քույրերը, «դան-

դաղամիտ» է: Քիթին՝ կանաչ աչքերով, լուսավոր մաշկով, փամփլիկ, կլորիկ: Եվ լուռ ու անպահանջկոտ: Միշտ իրեն ենթակա: Նա այն ամենն է, ինչ ես չեմ,- միշտ մտածում էր Ֆրիդան: Այնուամենայնիվ, նա միանգամայն նորմալ էր համարում, որ իր կրտսեր քույրը պետք է լսի իրեն: Եվ ծառայի իրեն: -Ինչ-որ բան բաց թողեցի՞,- մտածեց, երբ ամեն բան անցած էր, եւ ամեն ինչ ներվել էր: Այո, բաց էր թողել այն փաստը, որ Քիթին ինքնին գեղեցիկ, ցանկալի կին էր:

Մի անգամ մտավ Մաեստրոյի արվեստանոց, երբ Քիթին նստած էր նրա մոտ նկարվելու համար: Նա նստած էր աթոռին՝ մերկ եւ ակնհայտորեն արդեն հոգնած: Եվ նույնիսկ չփորձեց ծածկվել, երբ քույրը ներս մտավ: -Ինչ գեղեցի՜կ է,- քնքշորեն մտածեց Ֆրիդան: Քիթիի փորը հարթ էր, կուրծքը՝ պիրկ. երկու հղիությունները ոչ մի ազդեցություն չէին ունեցել նրա արտաքինի վրա: Մաեստրոն նյարդայնանում էր, նա չէր կարողանում բավականին արագ նկարել, քանի որ Քիթին հոգնել էր ոտքն օդում անհնարին դիրքում պահելուց: Ֆրիդայի գալուստն ուրախացրեց նրանց: Նրանք ծիծաղեցին եւ միասին կերակրվեցին: Ինքը, ամուսինը եւ իր մերկ փոքր քույրը:

Վաղուց անցած այդ օրն արդեն կեսօր էր դառնում, երբ Ֆրիդան վերջապես դուրս եկավ իր սենյակից արվեստանոց գնալու: Դռան առջեւ կանգ առավ: Այն կիսաբաց էր: Ձայներ չլսեց, ինչը սովորաբար նշանակում էր, որ Մաեստրոն մենակ է եւ աշխատում է: Հրելով բացեց դուռը եւ ներս մտավ: Սկզբում չտեսավ նրան: Մաեստրոն գրասեղանի մոտ կռացած չէր իր ուրվանկարների վրա, ոչ էլ կանգնած էր նկարակալի դիմաց: Երբ շրջվեց, որ դուրս գա, նկատեց անկյունում դրված մահճակալը: Դեռ կարող էր պատկերացնել տեսարանը, ասես կանգնած լիներ այդ նույն տեղում՝ նրա արվեստանոցի մաշված փայտե շեմքին: Դա նման էր շատ ծանոթ լուսանկար հիշելու:

Եվս մեկ նկար, որն այդպես էլ չնկարեցի,- մտածեց՝ հիշողությունից անսպասելիորեն վրդովված:

Մահճակալին պառկած էր մերկ Քիթին: Նա քնել էր կողքի թեքված, ոտքերը վեր՝ դեպի իրեն քաշած, ինչպես մանուկ ժամանակ էր սեղմված տեղավորվում իր կողքին: -Գրկիր ինձ,- կասեր այն ժամանակ: Ֆրիդան ձեռքերով փաթաթվում էր նրա գոտկատեղին եւ այդպես պահում, մինչեւ նա քնում էր: Տարիներ անց Քիթին էր այդպես գրկում Ֆրիդային, երբ նա չէր կարողանում քնել:

Քիթին հանգիստ քնած էր, կեսօրվա լույսը նրբորեն շոյում էր նրա գեղեցիկ մաշկը: Ֆրիդան տեսավ, թե որքան *ավարտուն,* որքան կատարյալ ու անթերի է նրա մարմինը: Դռան շեմքից հայացքն ընկավ նրա ծնկի տակի սպիտակ սպիին, որը միակ փոքրիկ անկատարությունն էր Քիթիի մարմնի վրա: Հիշեց, թե ինչպես էին խաղում այգում, եւ Քիթին հարցրեց՝ կարո՞ղ է քշել իր հեծանիվը: Բայց անվարժ ու անշնորհք էր քշում եւ, մի քանի մետր չանցած, ընկավ՝ կտրելով ծունկը: Ֆրիդան մաքրել էր կտրված տեղի ավազն ու հողը եւ վերքի խորքից ապակու մի կտոր հանել: Հիշեց, թե ինչպես էր արյունը կպչում իր մատներին եւ ինչպես էր կանաչ ապակու թափանցիկ կտորը բարձրացրել վեր՝ դեպի արեւը:

Մաեստրոն քնած էր Քիթիի կողքին: Նա նույնպես մերկ էր: Քիթին նուրբ ու փխրուն տիկնիկի տեսք ուներ նրա մեծ, ամրակազմ մարմնի կողքին: -Եթե շրջվի Քիթիի կողմը, կճզմի նրան,- հիշում էր, որ այսպես մտածեց:

Մի որոշ ժամանակ ինքը պարզապես կանգնած էր՝ դռան շրջանակին հենված, անշարժ՝ կլանելով պահն ու օրը: Կարծես Քիթին մահացած լիներ: Իր աչքերի առջեւ պատկերներ էին լողում. Քիթին բակում իր ձեռքը բռնած, երբ Ֆրիդան սովորում էր նորից քայլել՝ նրա հետ ելնելով հիվանդի իր մահճակալը, ծիծաղելով եւ առաջ մեկնելով շոկոլադով կեղտոտված ձեռքը: Քիթին, դեմքը ամուսնու բռունցքի հարվածներից կապտած, կրծքով կերակրում է փոքրիկ Իզոլդային, գդալով Ֆրիդային ապուր է տալիս: Քիթին՝ վիրահատարանում իր ձեռքը բռնած, երբ արդեն իրեն վիրահատության էին պատրաստում:

Երկինքը կապույտ էր, առանց ամպի կտորի: Լսում էր, թե դրսում ինչպես են մարդիկ կանչում իրար, եւ շուն է հաչում: Զգում էր ներկերի, կտավատի յուղի եւ ավելի ուժեղ մի բանի հոտը՝ նրանց մարմինների հոտը: Զննելով նրանց այդ վիճակում՝ այն զգացողությունն ունեցավ, ասես ապակու այն բեկորն ինչ-որ տեղ իրեն էր ներսից խորը խոցել: Ցավին ընտելացած լինելով՝ ամենաթույլ հեկեկոցն արձակեց:

Մաեստրոն առաջինը բացեց աչքերը: Զարմացավ՝ տեսնելով Ֆրիդային դռանը հենված, բայց կարծես վրդովված չէր: Թեթեւակի դիպավ Քիթիի ուսին: Վերջինս դանդաղ արթնացավ եւ շրջվեց նրա կողմը: Միայն այդ ժամանակ, հետեւելով նրա հայացքի ուղղությանը, Քիթին տեսավ քրոջը: Կտրուկ ուղղվեց՝ նստելով եւ գլուխն առանց խոսքի ափերի

մեջ առնելով, ասես պատրաստվում էր լաց լինել: Նստած էր այդպես՝ գլուխը խոնարհած, դեմքը թաքցրած, մինչեւ որ Ֆրիդան վերջապես դուրս եկավ՝ դուռն իր ետեւից փակելով:

Այժմ նա նորից շուրջը նայեց: Որոշ ժամանակ հետեւում էր առավոտվա լույսի շարժմանը, բայց տենդը մշուշեց տեսողությունը: Բարակ, բայց անթափանց մի վարագույր, ինչպես այն վարագույրը, որ երբեմն կախված է հիվանդանոցի մահճակալների շուրջ, արդեն քաշվել էր իր եւ մյուսների միջեւ: Իր հայացքը, նույնիսկ ձայնն ու արցունքները, աղաչանքներն ու հպումը կարծես այլեւս չէին հասնում նրանց: -Մի՞թե միշտ այդպես չէր եղել,- մտածում էր:- Մի՞թե իր ողջ կյանքը չէր անցկացրել թաղանթով պարուրված, որն այժմ ավելի ու ավելի անթափանց էր դառնում: Իրեն մնացել էին միայն պատահական, անհուսալի հիշողություններ: Եվ իր հիշողությունը կարծես նուրբ սարդոստայն լիներ: Դեռ կարողանում էր պահպանել հավասարակշռությունը երկու կետերի միջեւ ընկած բարակ թելի վրա՝ աղոտ այն հույսով, որ վերջապես կտեսնի ամբողջ սարդոստայնը, որ իր կյանքն ի վերջո իմաստալից կառուցվածք կունենա:

Մտքով վերադարձավ Քիթիի դավաճանության տեսարանին: Նախկինում հարյուր անգամ տեսել էր քրոջը մերկ: Երբ երեխա ժամանակ միասին լողանում էին լոգարանում, երբ նա ունեցավ իր առաջին դաշտանը, երբ նրանք միասին հագնվում էին: Բայց այդ օրը կարծես առաջին անգամ էր տեսնում նրան: Նա պառկած էր անկողնում՝ մերկ, գեղեցիկ, շատ ավելի գեղեցիկ, քան Ֆրիդան: Եվ այնքա՛ն բաց՝ աչքերի, ձեռքերի հպման համար: Նրա գեղեցիկ դեմքը, ասես քարակերտ՝ նրա կորությունները: Առաջին անգամ Ֆրիդան քրոջը տեսավ Մաեստրոյի աչքերով, տղամարդու եւ նկարչի աչքերով: Համոզված էր, որ Մաեստրոյի համար Քիթիի մարմինն արվեստի գործ էր: Եվ նույնիսկ հասկացավ, թե ինչու ներդաշնակության իր բուռն տենչանքի մեջ նա ձգտեց դեպի այդ մարմինը: -Պարզապես չէր կարող դիմակայել մարտահրավերին,- մտածեց, երբ տեսածից հետո ուշքի եկավ:

Բայց մի բան, որ չէր կարողանում հասկանալ, համենայն դեպս ո՛չ այդ պահին, այն էր, թե ինչու իր քույրը, իր փոքր քույրը, իր պաշտպանն ու խնամողը, անցել էր սահմանագիծը: Մինչեւ որ հետո չհասկացավ, որ այդ սահմանագիծը գոյություն ուներ միայն ի՛ր գլխում:

Նախկինում էլ գիտեր, որ Մաեստրոն իրեն դավաճանում է: Ինքը դա դավաճանություն չէր անվանում: Երբ երիտասարդ էր, ինքն իրեն ասում էր, որ Մաեստրոյին դրա խթանիչ գրգիռն ու հույզն է պետք, որ նա նկարիչ է, արվեստագետ, ով մշտապես զգայությունների փնտրտուքի մեջ է: Իսկ կանայք նետվում էին նրա վրա: Ուզում էին նրա բնորդուհին լինել, անմահանալ նրա որմնանկարներում: Մաեստրոյի հետ սեռական հարաբերությունը կարճ ճանապարհ էր սերունդների մեջ հիշվելու համար: Վստահ էր՝ նրանք իրենց առաջարկում էին նույնիսկ ավելի փոքր շահի համար:

Նա կատաղում էր: Վիրավորվում: Երբեմն կարող էր իրեն թույլ տալ նման հույզեր: Բայց պատմության մեկ այլ, ավելի դաժան կողմ կար, որ միայն իրեն էր հայտնի: Նրա վիրավոր մարմինը միշտ չէ, որ կարող էր պատրաստակամ ծառայել Մաեստրոյին: Հաճախ ամիսներ էր անցկացնում հիվանդանոցում, եւ էլ ավելի հաճախ հյուծված էր լինում կամ տառապում էր ցավերից: Ու երբեմն այնպես էր թվում, թե հենց ինքն է դավաճանում նրան, ինքն է, որ հուսահատեցնում է նրան: Մի տարի, ճիշտ է, շատ ավելի ուշ, իր մեջքին յոթ վիրահատություն արեցին: Ինն ամիս անցկացրեց հիվանդանոցում: Ինքն անօգնական էր եւ ի վիճակի չէր պահանջելու, որ նա հավատարիմ լինի, համենայն դեպս այդպես էր ասում ինքն իրեն:

Եվ Մաեստրոն կլլում էր կանանց այնպես, ինչպես մյուս մարդիկ ուտում էին իրենց սիրելի միրգը կամ պաղպաղակը: Նա չէր փոխվում: Բայց քրոջ հետ տեղի ունեցած միջադեպից հետո Ֆրիդայի ներսում ինչ-որ բան ընդմիշտ փոխվեց:

Մտացրիվ՝ մատը շարժեց չորացած շուրթերի վրայով: Եվ ատամների, ասես հաշվում էր դրանք: Տգեղ ատամներ ուներ, մի քանիսը՝ փտած: Հիշեց, որ իր սպասուհին, որի ատամները նույնպես լավը չէին, ծիծաղելիս ձեռքով փակում էր բերանը: Դրա համար էլ Ֆրիդան հիմնականում ժպտում էր: Եթե հանկարծ ինքնամոռաց ծիծաղում էր, կարող էիք տեսնել նրա փտած, նիկոտինից գունափոխված ատամները: Նա, որ այդքան ուշադրություն էր դարձնում իր արտաքինի ամեն մի մանրուքին, շրթներկի եւ զարդերի գույնին, մազերի մեջ դրվող ծաղկի տեսակին, անտեսում էր ատամները: Եթե միայն ստիպված լիներ անհանգստանալ իր հիվանդ ողնաշարի, մեջքի վերքերի, ոտքերի փտած մատնե-

րի համար... Շատ էր նեղվում, որ ոչինչ, իր ոչ մի մասը կարգին չէր աշխատում: Նույնիսկ ատամներն էին անառողջ: Բայց վատ ատամները կարելի էր թաքցնել: Նա քողարկում էր իր չորացած ոտքը երկար շրջազգեստների, սեղմիրանը՝ լայն վերնաշապիկների տակ, իսկ վատ ատամները՝ ժպիտի եւ ոսկե մետաղաշապիկների ետեւում: Հատուկ առիթների համար նա կրում էր վարդագույն գոհարներով զարդարված ոսկե շապիկներ, իսկ հետո ծիծաղում էր լայն բացված ուրախ ժպիտով: Բայց ավելի հեշտ էր քողարկել իրեն, ժպտալ այնպես, որ ատամները չերեւան: Կամքի ուժ, քողարկում, ինքնատիրապետում. ահա այն առաջնորդող սկզբունքները, որ օգնեցին նրան գոյատեւել:

Այդ զուսպ ժպիտը նրա տեսքն ավելի մեղմ էր դարձնում լուսանկարներում, քան ինքնադիմանկարներում, թեեւ նա երբեք ամբողջովին հանգիստ չէր տեսախցիկի առջեւ: Միշտ կեցվածք էր ընդունում: Նա լավ դերասանուհի էր: Սիրում էր ինքնաբուխ, անմիջական տեսք ունենալ, բայց իրականում հավատում էր ինքնատիրապետմանը: Ինքնատիրապետումը նման էր զրահի, որն ավելի լավ էր պահում մարմինը, քան գարշելի սեղմիրանները: Կամքի ուժն էր, որ նրան հնարավորություն էր տալիս գոյատեւել:

Քիթիին նման կամքի ուժ կամ ֆիզիկական ջանք պետք չէր իր կյանքն ապրելու համար: Ֆրիդան դեռ մանկուց նախանձում էր նրան, երբ ինքն ամիսներով գամված էր անկողնուն, իսկ Քիթին վազում էր խոհանոց՝ իր համար ուտելիք բերելու, խաղալիքներն էր իրեն տալիս եւ պարելով զվարճացնում: Ֆրիդան իր հիվանդությամբ քրոջը, ինչպես եւ բոլորին, իր ծառան էր դարձրել: Քիթիի ազատ տեղաշարժը մի բան էր, որն ինքը երբեք չէր ունեցել: Քիթիի մարմինը չէր այլանդակվել հիվանդության կամ դժբախտ պատահարի կամ նույնիսկ ծննդաբերության պատճառով: Այո, նա երկու երեխա ուներ, մինչդեռ Ֆրիդան միայն վիժումներ էր ունեցել, որոնցից յուրաքանչյուրը սպառնալիք էր կյանքի համար: Հենց այդ, եթե ոչ մեկ այլ, պատճառով նրա համար դժվար էր հաղթահարել այն, ինչ քույրն արել էր իրեն:

Քիթին ուներ լավ ոտքեր, լավ ատամներ, ժպիտ. այն ամենն, ինչ Ֆրիդան չուներ: Այնպես որ՝ Ֆրիդան ստիպված էր փոխհատուցել դա՝ նորից հորինելով ինքն իրեն տարաշխարհիկ հագուստի եւ տարօրինակ սանրվածքների, դիմահարդարման ու զարդերի օգնությամբ: Նա ստիպված էր տքնաջան աշխատել դրա վրա, ամեն օր: Քիթին նման բա-

նի կարիք չուներ, ամենեւին: Բացի դրանից, նա միակ մարդն էր, որ հստակ գիտեր, թե որքան է արժեւորում Ֆրիդային ամեն առավոտ արթնանալը, լվացվելը, հագնվելն ու քայլելը: Այդուհանդերձ, խղճահարություն չէր ցուցաբերել: Դավաճանել էր՝ առանց երկմտելու: Նրա դավաճանությունը տարբերվում էր Մաեստրոյի դավաճանությունից, բայց նույնքան անձնական եւ նույնքան ցավալի էր:

Դու ինձ այնպես ես վերաբերվում, ասես հիմար լինեմ,- մի անգամ նրան ասաց քույրը:- Նա խոսում է ինձ հետ, նա լսում է, հասկանո՞ւմ ես: Ի տարբերություն քեզ՝ նա ինձ մարդու պես է վերաբերվում:- Բայց Քիթին դա ասել էր ոչ համապատասխան պահին, երբ Ֆրիդան դեռ կարծում էր, թե Քիթին պարզապես իր համար պատիվ է համարում, որ Մաեստրոն վերջապես ուշադրություն է դարձնում իրեն: Ինքն այդտեղ էր, նրա բնորդուհին էր: Ինչո՞ւ պետք է հակառակվեր մեծն Մաեստրոյին, երբ շատ ուրիշներ դա չէին արել: Ֆրիդան կարող էր միայն պատկերացնել այն տեսարանը, որտեղ Մաեստրոն կարծես տխուր, լքված երեխա լիներ. -Ես այնքան միայնակ եմ, Քի՛թի:- Եվ Քիթիին՝ նրան մխիթարելիս: Կանայք սիրում էին նրան մխիթարել: Նա կանանց եւ՛ հիացմունք, եւ՛ խղճահարություն էր ներշնչում: Հոգ չէր տանում, թե ինչպես կնվաճի նրանց: Ուրեմն ինչու՞ այս սիրավեպը պետք է իրեն ավելի շատ ցավ պատճառեր, քան մյուսները, որոնց մասին գիտեր, իհարկե: -Ի սեր Աստծո, ինչո՞ւ ես ամեն ինչից դրամա սարքում,- հարցրեց իրեն Մաեստրոն:

Երկուսն էլ իր ամենամոտ մարդիկ էին, այնքան մոտ, որ գիտեին իր բոլոր սպիներն ու վերքերը, այն ամենն, ինչ այդքան խնամքով թաքցնում էր բոլորից: -Երբե՛ք,- խոստացավ ինքն իրեն այդ օրը, - երբե՛ք ոչ ոքի թույլ չեմ տա այդքան մոտենալ ինձ: Դա վտանգավոր է կյանքի համար:

Դեռ հիշում էր այդ խոստումը, որն, իհարկե, անհնար էր պահել: Քանի որ չէր կարող իր կյանքից կտրել-ջնջել ո՛չ Քիթիին, ոչ էլ Մաեստրոյին. դա նման կլիներ ինքնանդամահատման:

Մաեստրոյի հետ Քիթիի սիրավեպը տեւեց առնվազն մեկ տարի: Մաեստրոն նրա համար ոչ միայն բնակարան գնեց ծնողների տան մոտ, այլ նաեւ մեքենա: Քիթին դրանով տանում էր հորը, երեխաներին ու Մաեստրոյին, բոլորին, բացի քրոջից: Ֆրիդան իրեն այնպես էր պահում, կարծես Քիթին գոյություն չուներ: Հենց այդ ընթացքում նա կրկին վի-

ժեց, եւ անդամահատեցին ոտքի մատները. դատարկ արգանդ, վերքեր, մեջքի ցավեր եւ ամբողջովին լքված լինելու զգացում:

Նկարում պատկերված է դանակահարված մերկ կին. արյունն այնքան շատ է, որ թափվում է նկարի շրջանակի վրա: Նա իր վրձինը թաթախել էր վառ կարմիր ներկի մեջ, որ չափազանց կարմիր էր արյան համար, ապա քսել էր հատակին, մահացած կնոջ մոտ կանգնած մարդասպանի վերնաշապիկին, որի դանակից դեռ կաթում էր նրա արյունը: Մարդասպանը՝ կոշտուկոպիտ արտաքինով մաչոյի մի կերպար՝ ցինիկ ժպիտով, մի ձեռքը գրպանն էր դրել եւ այնպիսի տեսք ուներ, կարծես ասում էր. -Դե ինչ, ընդամենը դանակով հասցված մի քանի փոքրիկ վերք են: Կնոջ ոտքը, իր նրբագեղ սեւ կոշիկով եւ ցած իջած գուլպայով, զավեշտալի տեսք ունի, ինչպես եւ արյան դիտավորյալ չափազանցված քանակությունը: Միգուցե դա է պատճառը, որ այդ ամբողջը հանկարծ ծիծաղի անզուսպ ցանկություն է առաջացնում:

Նրանց կռիվները,- դրանք միշտ սիրահարների վեճեր էին,- ծագում էին սիրո նկատմամբ ունեցած տարբեր մոտեցումներից: Այդ տարբերությունը Ֆրիդայի համար ակնհայտ դարձավ միայն ավելի ուշ, իր բոլոր մյուս հարաբերություններից հետո, որոնցից ոչ մեկը չթուլացրեց նրա կապվածությունը Մաեստրոյի կամ իր սեփական տառապանքի հանդեպ: Վստահ չէր՝ արդյո՞ք դա նրանից էր, որ նա տղամարդ է, բայց արվեստը նրա համար ավելի կարեւոր էր, քան սերը: Իր համար ամենակարեւորը Մաեստրոն էր: Ինչը նշանակում էր, որ դատապարտված է տառապելու:

Քսանյոթ տարեկան էր, երբ Մաեստրոն դավաճանեց իրեն քրոջ հետ: Հենց այն, ինչից մայրը վախենում էր (եւ լռում էր), տեղի ունեցավ,- մտածեց: Մաեստրոյի բոլոր սիրուհիները մեկ ընդհանուր բան ունեին՝ մարմիններ, որոնց հետ ինքը չէր կարող մրցել: Այն ժամանակ կարծում էր, թե այդ պատճառով է նա այդքան հաճախ դավաճանում իրեն, եւ դա ցավ էր պատճառում: Բայց մայրը մի բանում էր սխալվել: Որքան էլ Մաեստրոն, որպես գեղանկարիչ, փափագում էր հենց գեղեցկության տիրանալը,- այն ներդաշնակությանը, որ պակասում էր իր՝ Ֆրիդայի մարմնին,- նա առավել շատ ձգտում էր ցանկացած կնոջ տիրանալու ազատությանը՝ անկախ նրանից, թե ինչպիսին է այդ կինը: Եթե իր մար-

մինը լիներ առողջության տիպար, եթե ինքը նույնքան սքանչելի լիներ, որքան դերասանուհի Դոլորես դել Ռիոն՝ այդ օրվա իշխող գեղեցկուհին, որը եղել էր (ինքը գիտեր) Մաեստրոյի սիրուհիներից եւս մեկը, դա՛ էլ նրան չէր կասեցնի: Բայց ինքն այդ հասկացավ, երբ արդեն ուշ էր, երբ այլեւս ոչինչ չէր կարող փոխել:

Տարիներ շարունակ հանդուրժում էի նրա սիրային արկածները, որովհետեւ կարծում էի, թե սիրուհիները նրան տալիս են մի բան, որ ես չեմ կարող,- նկատի ունեմ՝ ֆիզիկական ինչ-որ բան: Եվ տարիներ շարունակ նրանք հայտնի գեղեցկուհիներ էին: Ես վաղուց դադարեցի նրանց հետ մրցելու փորձեր անել: Նա վերջապես կանգ առավ, երբ եկավ Էման: Էման ամեն ինչ էր, բացի գեղեցիկ լինելուց, բայց ուներ համբերություն եւ ըմբռնում, որն անհրաժեշտ էր Մաեստրոյին: Միգուցե ես նախկինում սխալ էի, միգուցե նա չէր ձգտում ներդաշնակության, կատարելության: Միգուցե նրան պարզապես մի ուս էր պետք՝ վրան լաց լինելու համար: -Ուրեմն քեզ իջեցրին Էմայի մակարդակի,- ասացի չարախնդորեն: Ես սոսկալի էի Մաեստրոյի հանդեպ, եւ ավելի վատը՝ Էմայի հանդեպ: Ոչ այն պատճառով, որ ինչ-որ բան ունեի խեղճ Էմայի դեմ, որը տարիներ շարունակ պաշտում էր նրան հեռվից, վաճառել էր նրա նկարներն իր պատկերասրահում եւ, հավանաբար, տառապում էր, քանի որ նա անտեսում էր իրեն: Ոչ, սոսկալի էի, որովհետեւ դառնորեն չարացած էի: Ես դժբախտ էի, որովհետեւ, դիտավորյալ թե ոչ, նա ակնհայտորեն ինձ հիմարի տեղ էր դնում: Իր հետ ամուսնության գրեթե բոլոր քսանհինգ տարիների ընթացքում ես ապրել էի այն համոզումով, որ կանանց միջեւ ընտրություն անելիս՝ ինչ-որ բան արտացոլում է կատարելության հանդեպ գեղանկարչի նրա ձգտումը: Մի բան, որից ես,- լինելով այնպիսին, ինչպիսին կայի,- անմասն էի: Մի բան, որը փորձում էի փոխհատուցել՝ դիմելով կանացի ամենատարբեր խորամանկություններին ու հնարքների: Ժամանակի զուր վատնում: Ես նկարելու իմ ժամանակը,- միակ բանը, որի մասին հոգ էի տանում,- հատկացնում էի՝ նրան ստիպելու համար, որ սիրի ինձ, նրան հրապուրելու, գայթակղելու, նրա կողքին լինելու համար:

Կարծում էի դա այնպիսի մրցություն է, որ ինձ նման մեկը, գուցե փայլուն տաղանդի տեր, բայց հիվանդ, երբեք չի կարող հաղթել: Բայց ինձ մխիթարում էի այն մտքով (էլ ի՞նչ էր մնում), որ ես եւ Մաեստրոն մի-

ասին ինչ-որ առանձնահատուկ բան ունեինք, որ մեր հարաբերություններն այնքան ամուր էին, որ կարող էին դիմակայել այս անցողիկ սպառնալիքներին: Բանն այն էր, որ մյուս մարդիկ մեր կյանքում այնքան կարեւոր չէին մեզ համար, որքան մենք՝ միմյանց համար: Ես հավատում էի, որ մեր սերը շատ յուրահատուկ է, այնպիսի մի սեր, որտեղ դիմացիդ անձնավորությունը ներկայացնում է քո ողջ տիեզերքը, այնպիսին, որ կատարելագործում է ձեզ, որտեղ դուք ոչ թե տղամարդ եւ կին եք, այլ *պարզապես մարդ արարածներ:*

Կար ժամանակ, երբ, վիատ հուսահատության մեջ, իմ յուրաքանչյուր կտավում Մաեստրոյին էի պատկերում: Ասես դրանով կարող էի կախարդանք դնել նրա վրա եւ պահպանել ինձ համար:

Մեր հարաբերություններում հավասարակշռություն չկար: Ես էի, որ նրա կարիքն ունեի, ես, որ միշտ քաղցած էի, միշտ ուշադրության էի ծարավի, հավաստիացում էի ուզում: Իմ աշխարհում նա էր լույսի ու ջերմության աղբյուրը: Նա իմ սնունդն էր, իմ դեղորայքը: Նա իմ սեւեռուն մոլուցքն էր: Ինչո՞ւ թողեցի, որ դառնամ այդպես ամբողջովին կախված նրանից: Որովհետեւ հիվանդ էի, խոցելի էի, թույլ էի:

Լեզուն սահեցրեց մնացած ատամների վրայով: Ներքեւի ատամներից երեքը չկային: Գումարած վերեւի ատամներից երկուսը, եթե չհաշվեր այն երկուսը, որ պետք է քաշեր (չնայած անիմաստ էր համարում ապառնի ժամանակը գործածել): Այնպիսի զգացողություն ուներ, ասես բոլորը թուլացել էին, եւ ինքը կարող էր քաշել դրանք: Համենայն դեպս, ամիսներ շարունակ ապուրից եւ ջրիկ շիլայից բացի ոչինչ չէր ուտում: - Սարսափելի է, թե ինչպես է հիվանդությունը հասուն մարդուն հասցնում երեխայի մակարդակի, - մտածեց: Իր ատամները, իր ոսկորների պես, իր քառասունյոթ տարուց ավելի հին էին: Հաշվեց, որ դրանք պետք է երկու անգամ ավելի հին լինեին, որովհետեւ ստիպված էր առողջ մարդուց երկու անգամ ավելի շատ ջանքեր գործադրել, որպեսզի գոյատեւեր: Այնպես որ, ինքն առնվազն ութսուն, գուցե նույնիսկ հինսունչորս տարեկան էր: Հանկարծ այդ միտքը զվարճալի համարեց. հումորի զգացումը դեռ չէր կորցրել:

Քիթիի հետ միջադեպից հետո Ֆրիդան տեղափոխվեց այն տնից, որ իր համար Մաեստրոն էր կառուցել: Թողեց նրան: Ցավում էր արվեստանոցը լքելու համար- անշուշտ, չէր կարող դժգոհել, որ Մաեստրոն չի հար-

գել իրեն՝ որպես գեղանկարչի: Երրորդ վիժումից եւ ոտքի վիրահատությունից ապաքինվելուց հետո իր համար սիրեցյալ գտավ, հետո՝ եւս մեկին. ինչ-որ պահի դադարեց հաշվել կամ հոգ տանել՝ տղամարդիկ են դրանք թե կանայք: Կարեւորը մաշկի հպումն էր, կիրքը: Այդպես սովորեց զատել սերը (ինքը դա անվանում էր սեր, բայց իրեն թվում էր, որ ավելի ու ավելի նման էր կախվածության) կրքից, մի բան, որ բացարձակապես չէր կարողանում անել Մաեստրոյի հետ: Նրանից ինքն ուզում էր երկուսն էլ, բայց իրենց ընդհանուր տիեզերքում անհագ կիրքը միակողմանի էր, ի՛ր կողմից: Ֆրիդայի համար կիրքը Մաեստրոյի սիրո հաստատումն էր: Միայն երբ Քիթիի հետ միջադեպը տեղի ունեցավ, հասկացավ, որ այդ երկուսն անպայմանորեն կապված չեն: Բայց շարունակում էր արդարացումներ փնտրել Մաեստրոյի համար: -Կարո՞ղ է արդյոք պատահել,- երբեմն մտածում էր հուսահատ,- որ մարդիկ, ովքեր այդքան մեծ կիրք ունեն իրենց արվեստի հանդեպ, ի վերջո, ուրիշների համար ոչինչ չեն թողնում: Թե՞ կիրքը պարզապես էներգիայի որոշակի տեսակ է, որն անսպառ չէ: Թե՞ իրենց մտերմությունն էր խնդիրը: Կարո՞ղ են երկու հոգի այդքան մտերիմ լինել եւ այդուհանդերձ կիրք զգալ: Վերջապես, միգուցե իր (չափից ավելի՞) սեռական ցանկությունը հենց կյանքի նկատմամբ իր կրքի արտացոլումն էր: Բայց սրանք բոլորը հարցեր էին, որ անհանգստացնում էին նրան դեռ Քիթիի հետ միջադեպից առաջ:

Սկսեց լրջորեն խմել եւ վերադարձավ լուրջ նկարչության: Ստիպված էր նկարել, քանի որ իր զգացած հուզական ցավը- որը կարծես տիղմի պես նստել էր նրա հին, ֆիզիկական ցավի վրա- չափազանց ուժեղ էր զսպելու համար:

Իրեն ավելի լավ էր զգում, երբ տղամարդու հետ էր. այդպես էր բուժում Մաեստրոյի հասցրած վերքը: Իր երիտասարդ սիրեցյալը, որ լավ ճանաչում էր երկու քույրերին էլ, նկարագրեց նրանց միջեւ եղած տարբերությունը. Ֆրիդայի ներսում կրակ էր վառվում, Քիթին այդպիսին չէր: Եվ իրեն ասաց. -Այդպիսի կրակ ունեն միայն այն մարդիկ, ովքեր գիտեն մահը:

Ցերեկը նկարում էր, իսկ գիշերը գնում էր պարելու: Նա ինքն իրեն գերազանցելու կարիք ուներ: Դրա համար էլ պարում էր: Նրան դուր էր գալիս սպիտակ վերնաշապիկով, խաղացկուն մկաններով, փայլող դեմքով եւ նուրբ դիմագծերով այդ երիտասարդը: Երբ իր մարմինը հետեւում

էր նրան աղոտ լուսավորված, ծխով լցված սենյակում, զգում էր, որ նրա հանդեպ իր ցանկությունն աճում է: Գլուխը դնում էր նրա ուսին, սեղմվում նրան եւ շնչում հոտը՝ հալվելով նրա գրկում: Հետո նա դուրս էր սահում իր գրկից: Արագ եւ ճկուն՝ կորչում էր պարողների ամբոխի մեջ՝ միայն իր մոտ վերադառնալու համար: Ինքը կրկին սեղմում էր նրան իր գրկում, մինչեւ որ զգում էր մարմնի ջերմությունը: Պարում էին համաչափ: Այդ պահին իր համար ոչինչ ավելի կարեւոր չէր, քան նրա հպումն ու բուռն ցանկությունը: Ես ուզում եմ քեզ՝ շշնջում էր նրա ականջին: Այդ տղամարդն ստիպեց իրեն զգալ կենդանի, ուժեղ, ցանկալի:

Հետո, երբ խոսում էին սիրո մասին, ինքը նրան ասաց. - Դու իմ սիրեցյալն ես, բայց ոչ իմ սերը:- Երիտասարդը նայեց նրան եւ ժպտաց: Նա չնեղացավ իր խոսքերից: Այդ գիշեր սենյակում մատների ծայրերը մեղմ ու զգուշորեն սահեցրեց նրա քնած մարմնի երկայնքով, որպեսզի չարթնացնի նրան: Երիտասարդ տղամարդու մարմին: Ես անկուշտ եմ,- մտածեց:- Ես հաճույք եմ ուզում, ուզում եմ, որ իմ մարմինը ցավից բացի ուրիշ մի բան զգա:

Արդյո՞ք Ֆրիդայի երեւակայությունն էր դա, թե՞ արեւի այն պայծառ շողն այժմ իջել էր հատակին եւ սկսել պարտված սողալ, երբ խավարը վերանվաճում էր սենյակը: -Թե՞ տենդն էր, որ մշուշում, պղտորում էր լույսի եւ մութի երանգները,- հոգնած մտածեց նա:

Լուսադեմին այդտեղ իր անկողնում պառկած՝ այժմ զգում էր իր մարմնի միայն որոշակի մասեր՝ ոտքը, որ չուներ, ատամները, դեմքը, ձեռքերը, մազերը, սիրտը: Սի՞րտը: Սիրտը դեռ բաբախում էր, ինքն զգում էր, թե ինչպես է արյունն անցնում իր երակների միջով, բայց դրա համար սիրտը պետք է աշխատեր: Հոգնած էր նա՝ իր այդ սիրտը, որն ինքն այնքան հաճախ էր նկարել՝ վիրավոր ընկած հատակին, իր գրկում. ձախ փորոք, աջ փորոք, ձախ նախասիրտ, աջ նախասիրտ. փականներ, երակներ, զարկերակներ: Անատոմիական առումով դա պարզ մի պոմպ էր: Իրականության մեջ, ի՛ր իրականության, սիրտը ճմլված, արյունոտ, ցավոտ մի գունդ էր, որ դողում, թպրտում էր սեփական ձայնի արձակած հնչյունից կամ դրա բացակայությունից:

Մտածում էր Մաեստրոյի մասին եւ այն մասին, թե ինչպես էր իր կենդանի սիրտը, իր կյանքը, այդքան տարի դողում, թպրտում նրա ձեռքերում:

Նրան ժամանակ էր պետք, որպեսզի նկարը բյուրեղանա: Գույները ցավի փոքրիկ բյուրեղներ էին, որոնք ժամանակի ընթացքում կուտակվում էին իր օրգանիզմում: Դրանք պետք է անցնեին իր արյան հոսքի միջով մինչեւ մատների ծայրերը: Ձեռքը վերցնում էր վրձինը եւ քսում ներկերին: Վրձինը հպվում էր կտավին: Այսպես սկսվում էր բյուրեղները կտավի վրա տեղափոխվելու քիմիական գործընթացը՝ դառնալով գեղանկարչություն: Դրանից հետո որոշ ժամանակ իրեն ավելի լավ էր զգում, կարծես իր գեղանկարը ինչ-որ նախնական, պարզունակ ծես լիներ՝ չար ոգիներին հեռացնելու համար: -Ծեսեր, ես չեմ կարող ապրել առանց դրանց,- մտածում էր՝ վրձինը քսելով կտավին: Ներսումս չափազանց շատ կուտակված խավար կա: Ինչպե՞ս եմ դիմանալու:

«Կտրված մազերով» *ինքնադիմանկարում Ֆրիդան նստած է աթոռին՝ ձեռքին մկրատ: Նա արդեն կտրել է երկար մետաքսե բաշը, որ Մաեստրոն այնքան շատ էր սիրում, եւ սեւ մազափնջերը թափված են ամբողջ հատակով մեկ: Նա շրջապատված է քառսով, քառսով եւ անապատով: Գույները մուգ են, մթնոլորտը՝ ծանր ու մռայլ: Ֆրիդան դեն է նետել իր երկար շրջազգեստներն ու շալերը, գյուղացիական հագուստը, որ կրում էր Մաեստրոյի համար: Նորից տղամարդու պես է հագնված: Նա պատժում է Մաեստրոյին: -Քո Ֆրիդան գնացել է, չկա,- նկարում նրան ասում է Ֆրիդան:*

Այստեղ, ներսում, ցավում է,- ասում էր՝ ձեռքը կրծքին սեղմելով: Օրական մեկ լիտր կոնյակ էր խմում: Քիթիից հետո ամեն ինչ բարդացավ: Ֆրիդան եւ Մաեստրոն ապրում էին առանձին, բայց առանց մեկը մյուսի չէին կարող: Նրանք շարունակում էին ամեն օր տեսնել միմյանց:

Ընկերներից մեկին նա գրում էր.

Մենք անհեթեթություններով լի ստի մեջ ենք ապրում, եւ ես այլեւս չեմ դիմանում դրան: Նախ, նա ունի իր աշխատանքը, դա իրեն պաշտպանում է շատ բաներից, եւ ապա՝ կան նրա գործերը, որ զվարճացնում են իրեն: Մարդիկ նրան են փնտրում, ոչ թե ինձ: Ես գիտեմ, որ նա միշտ շատ հոգսեր ունի իր աշխատանքի հետ կապված. այդուհանդերձ, նա ապրում է լիարժեք կյանքով եւ չունի իմ դատարկությունը: Ես ոչինչ չունեմ, որովհետեւ նրան չունեմ: Կարծում էի, թե անում եմ ամեն ինչ, որպեսզի օգնեմ նրան ապրել, եւ որ կյանքում չկա այնպիսի իրավիճակ, որը ես չկարողանամ հեշտությամբ հաղթահարել: Բայց հիմա գիտեմ, որ

ոչնչով չեմ տարբերվում ցանկացած այլ հիասթափված, լքված կնոջից: Ես անարժեք եմ: Ես ոչինչ չեմ կարող անել: Ես չեմ կարող ապրել մենակ:

Իմ վիճակն այնքան ծիծաղելի եւ անիմաստ է թվում, որ ոչ ոք չի կարող հասկանալ, թե որքան չեմ կարողանում ինքս ինձ տանել, որքան եմ ատում ինքս ինձ, լավագույն տարիներս վատնեցի որպես սիրուհի՝ անելով այն, ինչը, կարծում էի, լավագույնն է նրա համար եւ ամենաշատը կօգնի նրան: Ես երբեք չէի մտածում իմ մասին, եւ վեց տարի միասին լինելուց հետո նրա պատասխանն էր, թե հավատարմությունը բուրժուական արժեք է, որը գոյություն ունի միայն շահագործման եւ տնտեսական շահույթ ստանալու նպատակով:

Նա այլեւս չէր ուզում, որ Մաեստրոն խնամք տանի եւ աջակցի իրեն: Ուզում էր վերջապես սեփական գումարն սկսել վաստակել: Արդյո՞ք փողն էր պատճառը, որ մինչեւ Քիթին՝ ինքը հանդուրժում էր Մաեստրոյի սեռական արկածները,- սկսեց հարց տալ իրեն: Աստծուն էր հայտնի, որ ծնողների տանը փողը երբեք չէր բավականացնում: Այն ծախսվում էր դեղերի, բժիշկների, սեղմիրանների, ներարկումների, բուժքույրերի վրա: Վթարից հետո երբեք չէր կարող վստահ լինել, որ հայրը բավականաչափ գումար կունենա, իսկ չունենալու դեպքում իր վիճակը չի վատթարանա: Ֆրիդայի եւ Մաեստրոյի ամուսնությունից շատ չանցած, երբ նրանք դեռ Դեթրոյթում էին, բժիշկները Ֆրիդային ասացին, որ ողնաշարի վիճակը վատացել է, քանի որ նրան ժամանակին՝ վթարից անմիջապես հետո չեն վիրահատել: Նրա ծնողները, հավանաբար, չէին կարող իրենց թույլ տալ եւս մեկ վիրահատություն: Արդեն ծախսել էին իրենց բոլոր խնայողությունները նրա վրա: Ահա թե ինչու էր ցանկանում աշխատել, նկարել եւ վաճառել իր նկարները: Իսկ հետո նրա կյանքում հայտնվեց Մաեստրոն: Նա իր վրա վերցրեց Ֆրիդայի հիվանդության ֆինանսական բեռը: Ֆրիդային փողն անձամբ չէր հետաքրքրում, բայց հասկանում էր, որ դրա կարիքն ունի: Ուզում էր բավականաչափ ունենալ, որպեսզի իրեն ապահով զգա: Բայց ինքը չէր կարող դա ինքնուրույն վաստակել: Նա ամբողջովին կախված էր Մաեստրոյից, ինչպես հասկացավ, երբ բաժանվեցին:

1938 թվականի աշնանն առաջին անգամ մենակ էր Նյու Յորքում:

Նախկին այցելությունների ժամանակ նա պարզապես տիկին Ռիվերան էր, որ ուղեկցում էր ամուսնուն: Երիտասարդ: Ամաչկոտ: Ոչինչ չկար այն տարաշխարհիկ, հետաքրքրաշարժ անձնավորությունից, որը հետո պետք է դառնար: Բայց բոլորովին այլ մի կին էր, որն իր ցուցահանդեսում ողջունեց Նյու Յորքի էլիտային եւ ավանգարդային արվեստի երկրպագուներին: Թեեւ ոմանք Մաեստրոյի պատճառով էին եկել, սակայն ցուցահանդեսից հետո Ֆրիդային այլեւս չէին նայում որպես սոսկ նրա կցորդը: Ֆրիդայի քսանհինգ նկարները տարբերվում էին այն ամենից, ինչ նրանք նախկինում տեսել էին: Նա հենց տեղում վաճառեց նկարների կեսը եւ դրանից մեծ ինքնավստահություն ձեռք բերեց: Հանդիպեց նոր մարդկանց, ովքեր հիացած էին իրենով եւ հմայված էին իր արտաքինով ու հումորի զգացումով: Վերջապես ինքն իր գլխի տերն էր, մենակ, հաջողակ եւ զգում էր, որ ազատ է Մաեստրոյից: «Փոքրիկ Ֆրիդա». այսպես էին նրա մասին արտահայտվում քննադատները ցուցադրությունից հետո: Երեսունմեկ տարեկան մի կին, մինչդեռ նրա մասին այնպես էին գրում, կարծես երեխա լիներ: Բայց գրում էին նաեւ իր նկարների մասին, եւ դա նրան հույս էր ներշնչում, որ վերջապես անկախանալու է: Այդուհանդերձ, նկարչի համար, ով առաջին անգամ էր ցուցադրում իր աշխատանքներն ԱՄՆ-ում, նա տարօրինակ կերպով անտարբեր էր գրախոսությունների նկատմամբ:

Այդ երեկո բացմանը միայն մեկ իսկապես հուզիչ պահ կար,- հիշեց նա,- եւ դա այն ժամանակ էր, երբ հայտնվեց Ջորջիա Օ'Քիֆը: Ծանոթ էր ամերիկուհու աշխատանքին եւ նրա ոճավորված, սեքսուալացված ծաղիկներին: Ջուլիանն իրեն ծանոթացրեց երկար, գունատ տունիկայով ու չալմայով մի կնոջ հետ: Նա բռնեց Ֆրիդայի ձեռքից, - նրա ձեռքը տաք էր - եւ տարավ դեպի *«Իմ ծնունդը»* նկարը: Նա կանգնած նայում էր նկարին: -Նախկինում ոչ ոք չի համարձակվել նկարել սա: Դուք նկարել եք մի բան, որը երբեք չէր կարելի պատկերացնել, թե հնարավոր է տեսնել, որին ոչ ոք երբեք չի համարձակվում ականատես լինել, քանի որ ցնցված են կնոջ՝ կյանք պարգեւելու զորությունից,- ասաց նա իրեն: Այդ խոսքերից Ֆրիդան փշաքաղվեց: Այս կինը չէր կարող իմանալ, որ դրանք իր համար ավելին են նշանակում, քան որեւէ քննադատ, կամ նույնիսկ ինքը՝ Մաեստրոն, կարող էր ասել: Կնոջ թավշյա աչքերը թափանցող հայացքով իրեն էին նայում, ասես կարողանում էին տեսնել

խնամքով հարմարեցված իր դիմակի միջով, գույնզգույն հագուստի շերտերի միջով, սեղմիրանի միջով, հենց իր մաշկի միջով: Ֆրիդան դողաց, երբ Ջորջիան, ոչ պատահաբար, թեթեւակի համբուրեց իր շուրթերը: Ոչ թե ցանկությունից, այլ ակնթարթային ճանաչումից: Ֆրիդան զգաց, որ իր նկարին ընդամենը մեկ հայացք գցելուց հետո՝ այս կինը, որին նախկինում երբեք չէր հանդիպել, ըմբռնման այնպիսի մակարդակ էր ցուցաբերել, որի մասին ինքը միշտ երազել էր:

Ապշած այն գիտակցումից, որ նման բան ընդհանրապես հնարավոր է, թեկուզ կարճ ժամանակով, նա այնպես էր նայում իր իսկ նկարին, կարծես առաջին անգամ էր դա տեսնում: Հենց այդ ժամանակ Ջուլիան Լեւին՝ պատկերասրահի սեփականատերը, մոտեցավ նրան՝ հմայված թե՛ նրանով, թե՛ նրա նկարներով: Հետո մեկ ուրիշը եկավ՝ ինչ-որ բան պատմելով նրան իր աշխատանքի մասին, բայց դա այլեւս նշանակություն չուներ: Կարեւոր էր եւ նշանակություն ուներ միայն վայրկյանի այն հատվածը, երբ մեկ ուրիշը լիովին հասկացավ իրեն: Այդ երեկո նա շրջում էր ամբոխի մեջ՝ որպես գեղանկարչուհի Ֆրիդա Կալոն: Հրապուրիչ եւ հետաքրքիր: Եվ հասկացավ, որ ցավը, բարեբախտաբար, այդ պահին ողորմածորեն քնած էր: Նրա դեւը քնած էր, լուռ, խաբված:

Հաջորդ օրը հազիվ էր կարողանում քայլել: Կրունկին վերք էր բացվել: Որը բավական էր՝ իրեն հիշեցնելու համար, որ մենակ չէ, որ երկու Ֆրիդա կա՝ մեկը տեսանելի, իսկ մյուսը՝ թաքնված, որ հայտնվում է միայն իր նկարներում: Ուստի նախընտրում էր նստել սրճարաններում եւ հետեւել մարդկանց: Չէր կարող փախչել ինքն իրենից, իր հիվանդությունից:

Նա իր օրերն անցկացնում էր Նիք Մյուրեյի հետ: Նիքին հանդիպել էր Մեքսիկայում եւ այդ ժամանակվանից կարոտել էր նրա ձայնը, ձեռքերը, ծիծաղը: Գրում էր նրան, որ իրենց սերն այնքան գեղեցիկ է եւ իրական, որ ստիպում է մոռանալ իր ցավն ու խնդիրները, նույնիսկ երբ նա հեռու է: -Ես այնքան մոտ եմ քեզ, որ կարող եմ լսել քո ծիծաղը,- գրում էր:

Նիքն իր լուսանկարներն էր երեւակում արվեստանոցում, մինչ ինքը երաժշտություն էր լսում: Կամ լուսանկարում էր իրեն: Ֆոտոխցիկի ետեւում կանգնած՝ նա Ֆրիդային հիշեցնում էր հորը՝ թեթեւակի կռացած, գլուխը սեւ կտորի տակ, միայն ձեռքերն ու ոտքերն էին երեւում:

Նիքը նման էր հրեշի՝ կես մարդ, կես մեքենա: Նիքի նման, Դոն Գիլյերմոն էլ լուսանկարելիս պահանջում էր հանգստություն եւ լռություն, երբ դուստրերը քրքջում էին, տեղավորվում եւ պատրաստվում լուսանկարվել «հետագա սերունդների համար», ինչպես ինքն էր սիրում ասել: Հիմա լուրջ տեսք ընդունեք, սա լուսանկար է հետագա սերունդների համար: Այդ բառը՝ սերունդներ, անհանգստացնում էր Ֆրիդային, եւ մի պահ մտածեց, որ կասի հորը, բայց հետո մտափոխվեց: Ի՞նչ կարող էր ասել նրան: Որ հետագա սերունդ գոյություն չունի: Որ գոյություն ունի միայն ներկա պահը, մարմինների խառնվելը, նրա խոսքերը, նաֆթալինի գնդիկների հոտը՝ տղամարդու կոստյումից, որ վերցրել էր, քրոջ զգեստի հպումը, սպասումը: -Ես եղել եմ այնտեղ եւ ետ եկել: Հավատա՛ ինձ, այնտեղ ոչինչ չկա,- մտածեց՝ սեւեռուն նայելով հոր ֆոտոխցիկի ոսպնյակին: Բայց ոչինչ չասաց: Արդեն շատ լավ գիտակցում էր, որ խոսքերն անզոր են:

Երբ Նիքն իր լուսանկարներն էր անում, ինքը ժպտում էր նրա կիկլոպյան աչքի ուղղությամբ: Փաթաթվել էր ալպիական մանուշակի գույնի շալով: -Նրա այդ գեղեցիկ երկար մատները... սիրում եմ դրանց նուրբ հպումը,- մտածում էր՝ աչքերը կիսափակ, ասես հալչելով նրա գրկում:- Եվ նրա նիհար, երկարուկ մարմինը՝ իմ մարմնի կողքին: Նիքը դիտում էր իրեն՝ ֆոտոխցիկի աչքի միջով: -Մի՛ շարժվիր,- ասաց: Եվ ինքը կանգնած էր այդտեղ՝ եւս մեկ րոպե երազելով: Ֆոտոխցիկը որսաց այդ երազկոտ, երջանիկ ժպիտի հետքը, ժպիտ, որ երբեք չէր երեւում իր նկարներում:

Այդ օրն իր դեմքին ընկած լույսը փութանցիկ էր, աղոտ ու մեղմասահ: Նիքը լուսավորելու վարպետ էր: Լուսավորության արքայազն. ինքն այսպես էր անվանել նրան հենց առաջին անգամ, երբ տեսավ նրա լուսանկարները Մեքսիկայում: Նա բարետես տղամարդ էր, երկար դեմքով եւ կանոնավոր դիմագծերով: Սիրում էր նրա ձայնի մեղմությունն ու շարժումները: Իր համար հեշտ էր կեցվածք ընդունել Նիքի ֆոտոխցիկի առջեւ լուսանկարվելիս: Կարոտով նայեց նրան: Բացեց շալը, կարծես պատրաստվում էր հանձնվել նրան: Ծալը ցած սահեց հարթ մաշկի վրայով՝ մերկացնելով վիզն ու ուսերը: Ալպիական մանուշակի գույնն իր դեմքին պայծառություն էր հաղորդում, որ կարծես ցրում էր աչքերի մուգ կարծրությունը: Նիքը մի պահ թողեց տեսախցիկը եւ մոտեցավ իրեն գրկելու: Երաժշտությունն ու երգչի թախծալից ձայնը սփռվեցին

արվեստանոցի պատշգամբում: Նիքը քնքշորեն համբուրեց իրեն: -Չափազանց քնքշորեն,- մտածեց: Ինքն ավելին էր ուզում: -Ինչո՞ւ ինձ երբեք չի բավականացնում քնքշությունը կամ կիրքը,- զարմացավ,- նույնիսկ կատարյալ մտերմության այդպիսի պահին:

Նորից տեսավ հորը՝ արվեստանոցում՝ շատ տարիներ առաջ: Նա ծիծաղում էր իր կոստյումի վրա, հանդուգն հայացքով ամբարտավան երիտասարդի՝ իր ընդունած կեցվածքի վրա: Երբ լուսանկարելն ավարտել էր, Դոն Գիլյերմոն մոտեցավ եւ թփթփացրեց իր ուսին՝ գլուխը տարուբերելով: -Ի՜նչ հրաշալի գաղափար է,- ասաց,- լուսանկարվելու համար տղամարդու պես հագնվելը:- Երկուսն էլ զվարճանում էին, եւ հայրը մի պահ մոռացավ, թե որքան հիվանդ է իր աղջիկը: Ֆրիդան դա մոռացնել տվեց: Աչքի պոչով նկատեց, որ Դոնյա Մաթիլդան հավանություն չի տալիս իր փոքրիկ խորամանկությանը, եւ տխրեց դրանից:

Խոժոռված մոր մասին հիշողությունից հուզախռով՝ շալը ետ քաշեց ուսերին: -Պետք չէ՛ թաքնվել,- կանչեց Նիքը սեւ շորի տակից: Հանգստացի՛ր: Ինքն է՛լ ավելի ամուր փաթաթվեց շալով: Գունդուկծիկ էր եղել փշոտ մացառախոզի պես, կարծես սպասում էր, որ Նիքը վիրավորելու է իրեն: Որոշ բառեր այդ ազդեցությունն էին ունենում իր վրա: Ինչո՞ւ էր նա օգտագործել այնպիսի բառեր, որոնք ինքն ատում էր, որոնք իրեն ստիպում էին կասկածներ ունենալ: Ոչ, չէր կարող վստահ լինել նույնիսկ Նիքի վրա: Չէր կարող հանգստանալ եւ ամբողջությամբ տրվել նրան, քանզի գիտեր, որ նա կարող է շատ մեծ ցավ պատճառել իրեն: Հանկարծ զղջաց, որ ինչ-որ հույսեր է փայփայել: Թույլ էր տվել, որ նա շատ մոտենա, գիտեր, որ նույն սխալն է կրկնում: -Նա կլքի ինձ,- մտածեց տխուր, կարծես Նիքի չափազանց քնքուշ համբույրն արդեն կրում էր նրա հեռացման եւ իր սպասվող պարտության դառը համը:

Տուն վերադառնալուց անմիջապես հետո Նիքն իրեն նամակ ուղարկեց՝ հաստատելով իր ամենավատ մտավախությունները: Ձեռքերը կատաղությունից դողում էին նամակը կարդալիս: Ի՛ր վրա էր կատաղած: -Ես պետք է իմանայի, - մտածում էր: Իր ներսի կինը ջախջախված էր, իրեն կրկին մերժել էր սիրած տղամարդը: Ավելի ուշ պատասխանեց եւ մի վերջին նամակ գրեց նրան: Դա բարեկամաբար գրված նամակ էր, կարծես իրենց միջեւ երբեք որեւէ բան չէր եղել: Կամ եթե եղել էլ էր, ապա ոչ ավելին, քան աննշան մի սիրավեպ ընդամենը: Դա իր վրեժն էր:

Ինքնուրույն ապրելու եւ անկախ լինելու նրա որոշումը կարճատեւ էր: Նրա նկարները չէին վաճառվում, իսկ հիվանդությունը փող արժեր, որ նա չուներ: Աղքատ ծնողները չէին կարող օգնել նրան: Թեեւ վաճառել էր Նյու Յորքի իր ցուցադրության նկարները, եւ նրա հեղինակությունն աճում էր, բայց հաշիվները դեռ չէր վճարել: Վճարելու համար ոչինչ չկար, ստիպված էր վերանայել իր որոշումը եւ, ինչպես նախկինում շատ անգամներ, հարմարվել իրավիճակին:

Կարողացել էր մեկ տարի ապրել առանց Մաեստրոյի: Այժմ վերադարձավ նրա մոտ: Ասաց, որ ներել է նրան: Մաեստրոն ասաց, որ երբեք ոչ մեկին այնպես չէր սիրել, ինչպես իրեն: Ինքը չհավատաց նրան: Նորից միասին էին, բայց նրանց միջեւ ամեն ինչ նույնը չէր: Ներեց նաեւ Քիթիին, քանի որ առանց նրա չէր կարող, թեեւ վստահ չէր, թե *«ներելը»* ճիշտ բառ է՝ իր զգացածն արտահայտելու համար:

Նա թափված մազերով ինքնադիմանկարներ էր նկարում: Մարիա Ֆելիքսից հետո նրա արձակած մազերը դարձան տխրության եւս մեկ խորհրդանիշ: Մաեստրոյին դուր էր գալիս, երբ նա մազերը բարձրացնում էր թագի պես: Բայց թագն ընկել էր, եւ երկար մազերը փաթաթվել էին պարանոցին՝ գրեթե խեղդելով նրան: Մտածում էր, որ իրականում պետք է ոչ թե իրեն նկարեր, այլ գնացքներ, երկու գնացք, որոնք շարժվում են միմյանց կողքով, զուգահեռ գծերով, երբեք չհանդիպելով: Փորձեց հիշել այն պահը, երբ իրենց կյանքն սկսեց շարժվել տարբեր ուղղություններով, երբ մեկն այլեւս չէր ճանաչում մյուսի վարքի նրբերանգները, քանի որ ոչ ոք հարկ եղածին չափ ուշադրություն չէր դարձնում: Բայց չկարողացավ ճշգրիտ հիշել:

Երեւի նման պահ չէր էլ եղել: Գուցե հենց սկզբից էին այդպես ապրել, ինքը պարզապես չէր գիտակցել դա: Նա դադարեց փորձել մրցակցել այլ կանանց հետ Մաեստրոյի մտերմության համար: Իրավիճակն ավելի տանելի դարձնելու համար վերադարձավ իր հին մարտավարությանը: Ընկերացավ Մարիա Ֆելիքսի հետ, ինչպես արդեն ընկերացել էր մաեստրոյի նախկին կնոջ՝ Լուպեի, Կարմենի, Լոլայի, Պաուլետի, Դոլորեսի հետ: Այսպես էր վնասազերծում նրանց: Կային նորերն էլ, իհարկե, բայց Քիթիից հետո Ֆրիդայի համար նրբին խորամանկությունների դիմելու ուժ չէր մնացել: Մեջքի ցավը նրա համար դժվարացնում էր նստելը, երբեմն նույնիսկ պառկելը: Որքան էլ տարբեր տեսակի սեղմիրան-

ներ էր փորձում, դրանք բոլորն էլ անհարմար էին, չափազանց ծիգ եւ դժվարացնում էին շնչելն ու քնելը: Նույնիսկ մատների անդամահատումից հետո էլ ոտքը չլավացավ: -Միեւնույն է,- մտածում էր,- Մաեստրոն դեռ ինչ-որ տեղ մոտակայքում էր:

Երազ տեսավ, ոչ առաջին անգամ, որ դուրս է եկել իր բոժոժից եւ թռել: Որ վերջապես թոթափել, մի կողմ է գցել իր մարմինը, ինչպես թիթեռը: Եվ այնժամ հասկացավ, որ նույնիսկ մարդու համար հնարավոր է ազատվել իր մարմնից: Ինքը կճեղքեր մարմին-խաբեություն-խանդ արատավոր օղակը՝ Մաեստրոյի հետ անկողին չմտնելով: Ասաց նրան, որ այլեւս սեքս չի լինելու: Իրենց հարաբերությունները գերազանցում էին մարմինը,- ասաց նրան: Ինչու՞ տանջել իրեն եւ նրան: Մաեստրոն ինքն էլ բավական հաճախ էր ասում, որ սեքսն իր համար ոչինչ չի նշանակում: -Եթե ճիշտ էր, որ նա երբեք չէր դադարել սիրել իր այդ անտեսանելի կողմը,- ասում էր ինքը,- ապա նրա համար հեշտ կլիներ անտեսել ֆիզիկական մասը:- Երբ նա խնդրեց նորից ամուսնանալ իր հետ, ինքն ասաց. -Լավ, բայց հիշիր, ես չեմ ուզում, որ դու լինես իմ անկողնում:- Նա համաձայնեց: -Մի քիչ արագ համաձայնեց, - հետո մտածում էր ինքը:- Բայց, անկախ իր կասկածներից, հանգստություն զգաց իրենց հարաբերություններում ձեռք բերված նոր հավասարակշռությունից:

Իրարից զատվելուց հետո թվում էր, թե Մաեստրոն հետզհետե ավելի ու ավելի է փոքրանում, մինչեւ որ դարձավ երեխա, որին ինքը կարող էր օրորելով քնեցնել:

Եվ այնպես եղավ, որ նրա ամուսինը՝ իրենից քսան տարով մեծ չափահաս տղամարդ, աստիճանաբար դարձավ այն որդին, որն ինքը երբեք չէր ունեցել: Մաեստրոն ինքը տեղյակ էր այս փոփոխության մասին, երեւի թե նույնիսկ իրենից առաջ: Իր *«Կիրակնօրյա երազ»* որմնանկարում նա իրեն պատկերեց որպես տասներկու-տասներեք տարեկան դեռահասի, որ բռնել է նրբագեղ խալաթով եւ փետրավոր գլխարկով Սահ Տիրուհու ձեռքը: Նկարեց նաեւ Ֆրիդային՝ մայրաբար իրեն փաթաթված: Այս դիմանկարում պատահական ոչինչ չկար, որ նրա ձեռքը տղայի ուսին էր:

Այն, ինչ Մաեստրոն չէր ասում կամ չէր կարող ասել բառերով, արտահայտում էր, ինչպես Ֆրիդան ինքն էր անում, իր արվեստում՝ իր

որմնանկարներում: Թեեւ նրա նկարած տեսարանները մտերմական չէ-ին, Ֆրիդան գիտեր ինչպես դրանք կարդալ: Օրինակ՝ նրա նկարում պատկերված կնոջ դիրքից եւ որոշ այլ մանրամասներից- ասենք՝ ինչ-պես էր նկարել աչքերը- գիտեր, թե մոդելներից որ մեկն է եղել նրա սի-րուհին:

Քիթիից հետո Ֆրիդան կորցրեց ամբողջ հետաքրքրությունը Մա-եստրոյի սիրային հարաբերությունների նկատմամբ: Դադարեց տեսա-րաններ սարքել: Իր հիվանդությունն այնքան լավ, այնքան ակնհայտ արդարացում էր նրա անհավատարմության համար: Բայց ինքն արհա-մարհում էր նրան, որ չէր կարողանում զսպել սեռական ձգտումը, եւ դա նոր տարր էր իրենց հարաբերություններում: Եթե կար մի բան, որ ինքն ատում էր, դա ինքնատիրապետումը կորցնելն էր: Դա մահացու մեղք էր համարում: Մյուս կողմից, Մաեստրոն ատում էր ինքնատիրապետումը:

Երբեմն, երբ նրան տանջում էին կասկածները, իրեն մեղադրում էր, որ եսասեր է: -Երբ սիրահարված ես, դիմացինիդ երջանկությունն ավե-լի կարեւոր է քեզ համար, քան սեփական երջանկությունդ,- մտածում էր: Մաեստրոն,- դրանում ինքը վստահ էր,- չէր դադարել սիրել իրեն, եթե սերը նշանակում էր հոգատարություն եւ աջակցություն: Բացառությամբ մի բանի, որ սիրո մասին ունեցած նրա պատկերացումը չէր բացառում այլ կանանց հետ հարաբերությունները: Հարաբերություններ. այդպես էր նա անվանում դրանք: -Մեկը մյուսին չի բացառում,- ասում էր նա: Ինքն առաջին անգամը չէր լսում, որ նա նման բան է ասում, եւ ստիպեց իրեն, որ վարժվի դրան ու դրա համար չընդվզի նրա դեմ: Նույնիսկ այն բանից հետո, երբ տեսավ նրան Քիթիի հետ, սկսեց մտածել, թե ինչո՞ւ պետք է ընդվզի դրա համար, արդյո՞ք նրա հաճույքն ավելի կարեւոր չէ իր համար, քան իր սեփականը: Ավելին, միայն հիմա, երբ ազատ էին իրենց հարաբերությունների ֆիզիկական մասից, իրենք կարողացան հասնել այն հոգեւոր միությանը, որի մասին ինքը մի ժամանակ երազել էր: Այդպիսի պահերին տեսնում էր իրավիճակի այն ամբողջ պարադոք-սը, երբ, քրոջ դավաճանության հետեւանքով, իր սեփական հարաբերու-թյունը Մաեստրոյի հետ թեւակոխում էր այլ, ավելի բարձր փուլ:

Դեռ կարոտում էր նրան: Նա շարունակում էր լցնել իր աշխարհը- լք-վելու եւ աղքատության վախի՞ց, թե՞ անհնարին սեր փնտրելու պատճա-ռով. դա այլեւս նշանակություն չուներ: Նախընտրում էր չվերլուծել դր-

դապատճառները. վախենում էր նրանից, ինչ կարող էր հայտնաբերել: Միեւնույն ժամանակ ավելի լավ էր գիտակցել, թե ինչ խոչընդոտ է առաջացնում մարմինը- իր սեփական եւ այլ կանանց- խոչընդոտ, որը միշտ եղել էր, բայց այժմ վերածվել էր պատի, որի վրայով ինքն այլեւս չէր կարող անցնել:

Այդ պատճառով էլ ստիպված էր իրենց հարաբերությունների համար մեկ այլ ձեւ գտնել: Կարծես թե սերը մի հեղուկ էր, որը հեշտությամբ կարելի էր լցնել մի անոթից մյուսը, նա կնոջ սերը մոր սիրո վերածելու միջոց գտավ: Դա ցավալի ընտրություն էր, բայց, հավանաբար, միակը, որ ինքն ուներ: Եվ ինքնակարգապահության պատճառով վերափոխումն այնքան էլ դժվար չհամարեց: Էությունը նույնն էր՝ ջերմությունը, նաեւ՝ մտերմության ու կախվածության զգացումը:

Ինչպես նաեւ տիրելու ցանկությունը:

«Տիեզերքի սիրալիր գիրկը» *նկարում Մաեստրոն նրա տիեզերքի կենտրոնն է: Նա պատկերում է Մաեստրոյին որպես մեծ, երջանիկ երեխայի՝ պառկած իր գրկում, կարծես ասում է, որ սա է նրա իսկական չափը: Ինքը մայրն է, որ օրորում է նրան, խնամում եւ պաշտպանում: Մաեստրոն պառկած է մերկ ու անպաշտպան, անօգնական: Ինչ-որ գրոտեսկային, եթե ոչ այլասերված բան կա Մաեստրոյին՝ չափահաս տղամարդուն, որպես երեխա պատկերելու մեջ: Նա գրկել է իր ամուսնուն, իսկ այդ ամուսինը մանկահասակ երեխա է: Եվ իր գրկում նա լավ է զգում՝ հանգիստ ու ապահով: Ինքը նրանից ոչինչ ավելին չի խնդրում, այլ միայն՝ այդտեղ լինելը, իր գրկում հանգստանալը: Դա իրեն ապահովության զգացում է տալիս. ինքը երբեք չի լքի նրան՝ իր փոքրիկ տղային, իր խեղճ փոքրիկ գորտուկին: Իր սիրտը լցվում է նրան օրորելու ցանկությամբ, այնպես, ինչպես կաներ, եթե երեխա ունենար:*

Նկարչությունն այլեւս մեծ Մաեստրոյի երիտասարդ կնոջ «հոբբին» չէր: Այն դարձել էր սուր անհրաժեշտություն, միջոց՝ դիմակայելու նրա դավաճանությանը եւ սեփական նոր դերին: Ճիշտ այնպես, ինչպես ավտովթարն էր փոխել Ֆրիդայի կյանքը, նույն կերպ Մաեստրոյի դավաճանությունը Քիթիի հետ սկիզբ դրեց Ֆրիդայի վերաբերմունքի փոփոխությանը նկարչության նկատմամբ: Նա երախտապարտ էր, որ դա

իրեն հնարավորություն է տվել ավելի լուրջ վերաբերվել ամեն ինչին:

Ստիպված էր նկարել. այլեւս չէր կարող շարունակել ցավից ճչալ:

Կար ժամանակ, շատ վաղուց, ինչպես հիմա նրան թվում էր, երբ ուզում էր լինել նույնքան ուժեղ, որքան Մաեստրոն: Մի անգամ գրեց, որ նա իր համար «նման է կակտուսի, որն աճում է ամենուր, ինչպես ավազի, այնպես էլ ժայռերի մեջ: Եվ երբ ծաղկում է, նրա ծաղիկները շքեղ կարմիր են, կիսաթափանցիկ ճերմակ կամ արեւանման դեղին: Նա պատված է փշերով՝ պաշտպանվելու համար: Նրա ցողունն ուժեղ է, դիմացկուն, եթե անգամ աճում է թշնամական տեղանքում, եւ նրա արմատներն ավելի խորն են թափանցում, քան տագնապը, մենությունն ու վիշտը»:

Բայց ինքն այդպես ուժեղ չէր: Իր պաշտպանական մեխանիզմն այլ էր: Այն հարմարեցված էր՝ իրեն հիվանդությունից ու ցավից պաշտպանելու համար: Մաեստրոն կարողանում էր *բացառել ուրիշներին,* նույնիսկ երբ նրանք ներկա էին: Ինքը երբեմն ատում էր նրա այդ ունակությունը՝ ապրել միայն սեփական անձի համար (սեփական արվեստի համար՝ կասեր նա իրեն), բոլորին ստորադասել սեփական կարիքներին՝ առանց նույնիսկ այդ մասին գիտակցելու: Ինքն այդ ինքնակենտրոնացումն անվանում էր անտարբերություն: Բայց դրա համար մեկ այլ բառ կար՝ եսակենտրոնություն:

Ինչպե՞ս կարող էր դիմակայել նրան: Նրա գրավչությունը նման էր արեգակի ձգողականության, որն իր ուղեծրի մեջ է քաշում այլ մոլորակների: Ինքն ազատ չէր, չէր պոկվել նրանից: Ինքը կախված էր նրանից, նրա ուժից, փող աշխատելու, իրեն դեպրեսիաներից դուրս քաշելու, իր մասին հոգ տանելու նրա ունակությունից: Նա իրեն ավելի շատ էր պետք, քան ինքը նրան: Ինքն անհագորեն միայնակ էր, ի վիճակի էր սպառել հնարավոր ամբողջ ուշադրությունն ու ջերմությունը եւ դեռեւս քաղց զգալ:

Ցավոտ մարմին, անցանկալի մարմին: Երկու պատճառով էլ տուժել եմ: Ոչ միայն ցավ եմ զգացել, այլ նաեւ մերժվել եմ: Որքան էլ որ ջանք եմ թափել, երբեք չեմ կարողացել առանձնացնել ինձ մարմնից: Ինձ երբեք չհաջողվեց թիթեռ դառնալ: Որքա՜ն ավելի հեշտ կլիներ ինձ համար, եթե միայն հավատայի Աստծուն եւ սատանային, դրախտին եւ դժոխքին, հոգու անմահությանը: Բայց վթարից հետո գիտեի, որ հոգիս կախված է միայն մարմնից, այս սարկոֆագից, որից ելք չկա: -Դու կա-

րող ես ինձ ազատել այս սարսափելի գերությունից,- ասացի Մաեստրոյին՝ պատկերացնելով, որ մարմինս խոչընդոտ չէ հոգուս համար: Սիրի՛ր ինձ, խնդրում եմ, սիրի՛ր ինձ:- Ես նրանից սեր էի աղերսում, ցանկացած տեսակի սեր:

Մի օր, հիշում եմ, Մաեստրոն նստեց մահճակալիս մոտ եւ բռնեց ձեռքս: Մեջքիս հերթական վիրահատությունից հետո էր, եւ ես նորից անշարժ էի: Նայեցի նրա զվարթ դեմքին, մեծ աչքերին ու անկեղծ ժպիտին: Նա լավ տրամադրություն ուներ. միշտ բարձր տրամադրություն էր ունենում, երբ նկարչական գործերը լավ էին լինում: Նրանից բեւեկնախեժի հոտ էր գալիս, ձեռքերը ներկոտ էին: -Պատկերացրու,- ասաց,- նորից սիրահարվել եմ: Իսկապե՞ս: Էլի՞:- Հարցրի՝ չկարողանալով քողարկել ձայնիս ցինիզմը: Նա նկատեց դա: -Մի փոքր միայն,- նա արագ շտկեց իրեն՝ աչքով անելով՝ ցույց տալու համար, որ պարզապես կատակում է: Չէր կատակում: -Աղջիկը նախկինում մոդել է եղել, եւ ինձ մի քանի մոդել է պետք իմ նոր որմնանկարի համար,- բացատրեց նա: -Իհարկե, ուրիշ էլ ի՞նչ,- մտածեցի՝ ոչինչ չասելով: -Երբ առաջին անգամ հայտնվեց, ինձ ամենեւին հետաքրքիր չթվաց,- շարունակեց Մաեստրոն:- Դեմքը չափից դուրս սիրալիր էր, քիչ էր մնում ետ ուղարկեի: Բայց երբ հանվե՛ց: Այդ մարմի՛նը: Եթե միայն տեսնեի՛ր,- ասաց՝ իր մեծ ու ամուր ձեռքերով օդում գծելով նրա կազմվածքը: Ինչ-որ միամիտ, համարյա տղայական հուզախառով ու հիացախառն բան կար աղջկա գեղեցկության մասին հայտնելու այդ ձեւի մեջ: Կարծես խոսում է մի հոյակապ, գեղեցիկ կենդանու մասին,- իմ առաջին միտքն այսպիսին էր:

Այդ աղջկան չէի հանդիպել, բայց Մաեստրոյի շարժումներն ու ոգեւորությունը բավական էին ինձ համար՝ պատկերացնելու նրան: Գրեթե տեսնում էի նրան՝ մերկ կանգնած Մաեստրոյի դիմաց: Եվ Մաեստրոյին՝ նրան նայելիս: Եվ այն, ինչ տեսա, սարսափելի էր: Որովհետեւ դա ոչ մի կապ չուներ գեղեցիկ կենդանիների հետ:

Ինքս ինձ ետ պահեցի ավելի շատ բան պատկերացնելուց: Ստիպված էի, այլապես նորից կտեսնեի Քիթիին նրա անկողնում: Եվ դա չափազանց շատ ցավոտ կլիներ:

Մինչ Մաեստրոն շարունակում էր խոսել, տխրության եւ ուրախության խառն զգացողություն ունեցա: Ես վիրավորված էի նրա դաժանությունից, երբ նկարագրում էր երիտասարդ աղջկա մարմինը: Վիրահատությանս վերքն սկսեց տրոփել ցավից: Բայց մենք նորից միասին

էինք, եւ նա վստահել էր ինձ: Այդ հին անվստահելիության զգացումը վերադարձավ. Նրա մեջ տղամա՞րդն էր խոսում, թե՞ նկարիչը: Թե՞ երկուսն էլ: Ես չէի ուզում իմանալ: Այդպես ավելի քիչ ցավոտ էր: Ես գիտեի, որ երբ նա խոսում էր կատարյալ մարմնի հանդեպ իր հմայվածության մասին, իսկապես խոսում էր *գեղեցկությամբ* իր հմայվածության մասին: Նա հիանում էր գեղեցկությամբ եւ ներդաշնակությամբ, որտեղ էլ որ հանդիպեր դրանց, եւ այդ հարցում մենք նույնն էինք: Բայց, ի տարբերություն ինձ, եթե կես հնարավորություն տային այդպիսի գեղեցկության տեր լինելու, նա չէր երկմտի այն նվաճելու հարցում:

Լսելով, թե ինչպես է նա խոսում այդ աղջկա մասին, հասկացա, որ իմ մեջ եղած կինը նրա համար անտեսանելի է: Ես լսեցի այս անտեսանելի կնոջ ձայնը, լսեցի նրա խոսքերը՝ ի՛մ խոսքերը. -Իմ սիրելի երեխա, ինչպես եմ ես քեզ սիրում:- Իմ ձայնը չէր ստում: Դա մի կնոջ ձայն էր, որը վերջապես հաշտվել էր իր վիճակի հետ: Այդ պահին ես ատում էի Մաեստրոյին մայրաբար ընդունելու իմ վարվելակերպը, այդ վարմունքը՝ անվերապահ ընդունել ամեն բան, ինչ անում էր իմ պաշտած երեխան:

Ինձ ցավ էր պատճառում իմ կանացիությունը ժխտելը: Ես երեխա էի ձեռք բերել, բայց կորցրել էի տղամարդու: Ինչպես Մաեստրոն խոստովանեց ինձ,- պատմություններ էր պատմում, որոնք երբեք չէր պատմի իր մորը, բայց մենք նաեւ լավագույն ընկերներ էինք,- ինքը վերջապես գոհ էր: Ինքս ինձ ասացի, որ մեր հարաբերությունների ճշգրտումը պակաս կարեւոր է, քան այն իրողությունը, որ երկուսս էլ ընդունում էինք, որ մեզ համար դա միասին մնալու միջոց էր:

Ես տենչում էի լիակատար փոխադարձ ընդունելություն, որին հասնելու միակ ճանապարհը դա էր: Դեռ հիշում եմ այդ օրը նրա ձեռքի ջերմ հպումը, երբ բռնեց ձեռքս: Ես այնքան կոկիկ տեղավորվեցի նրա ձեռքի մեջ, թաքնվեցի ու կծկվեցի այնտեղ մթության մեջ՝ չշարժվելով, չշնչելով: Տենչում էի նրա հպումը, ո՛չ թե երեխայի, այլ տղամարդու հպումը: Ես տենչում էի նրան: Բայց ստիպված էի զսպել այդ կարոտը եւ վերածել այլ բանի:

Մաեստրոյի կախվածությունը Ֆրիդայից, իր սիրային գործերին հավանություն տվող նրա ժպիտից՝ հետզհետե ավելանում էր: Մայրական ժպիտը: Նա սիրում էր Մաեստրոյին այն ըմբռնումով, ամեն բան ներող այն սիրով, որի մասին բոլորն են երազում, որի մասին երազում էր հենց

ինքը: Նրանք հասել էին նվիրված հավատարմության, որը Ֆրիդայի համար թերեւս ամենակարեւորն էր: Նա վստահ էր, որ այլեւս ոչինչ չի կարող խաթարել իրենց հարաբերությունները, ոչ մի դավաճանություն՝ նրանը լինի թե իրենը:

Իրենց երկրորդ հարսանիքի ժամանակ,Սան Ֆրանցիսկոյում, Ֆրիդան այլ կին էր: *Սեր* բառը պարզապես ընդհանուր մի տերմին էր նրանց փոխադարձ կախվածության համար: Մենակության սարսափելի վախը նրան վերադարձրել էր Մաեստրոյի մոտ: Առանց Մաեստրոյի նա չէր կարողանա տանել իր հիվանդության դժոխային անդունդը: Նա պարզապես չէր կարող մենակ լինել:

Ոչ ոք չի կարող միայնակ ապրել ցավի հետ. դա անհնար է:

Բայց Ֆրիդան այլեւս իրեն պարզապես նրա զոհը չէր համարում: Համակված Մաեստրոյով, որը մնում էր նրա հիացմունքի եւ սեփականատիրական ցանկության առարկան, նա կարծում էր, թե գտել է այդ ցանկությունն իրականացնելու միջոցը՝ թույլ չտալով, որ իր մոլուցքը կործանի երկուսին էլ: Եթե Մաեստրոն եսակենտրոն էր, ապա ինքը տիրական էր եւ ավելի ու ավելի էր գիտակցում այդ մասին: Ինքն ուզում էր նրան իր համար, եւ այդ ցանկությունը գերազանցում էր բոլոր մյուսներին: -Եթե չեմ կարող ունենալ քո մարմինը, ապա քո հոգին եմ ուզում,- ասում էր նրան: -Բայց դու արդեն ունես այն,- ասում էր Մաեստրոն՝ ծիծաղելով, ինչպես ասում էր, իր «միստիֆիկացիաների» վրա: Ֆրիդան մեծասիրտ չէր: Նա եսասեր էր, քանի որ իրեն վիրավորել էին, եւ ինքն իր համար վրեժ լուծելու միջոց չէր գտել: Նա իր սեռական ցանկությունն ուղղորդեց այլ ուղղությամբ:

Այն, ինչ մնացել էր, քաղց էր, դատարկություն, կարծես ինչ-որ մեծ ու կարեւոր բան պակասում էր: Սիրո չբավարարված կարիքը դաժան մի աստծո պես կառավարում էր նրա կյանքը: Ոչ ոք չէր կարող նրան տալ այդ սերը, քանի որ դա անվերապահ էր: Նույնիսկ մայրն այդպես չէր սիրել նրան: Միայն հայրը, թերեւս:

Ցերեկվա լույսն ավելի էր ուժեղանում: Առաջ վախենում էր մթությունից, բայց հիմա նրան դուր չէր գալիս այդքան շատ լույսը, կտրուկ ուրվագծված մակերեսները, ստվերների բացակայությունը: Կամ գուցե դա այս տեսանելի աշխարհի որոշակիությունն էր: Հատկապես դաժան էր համարում արեւով ողողված առավոտները, երբ ցերեկը խժռում էր սեն-

յակի անկյուններում գտնվող գիշերվա վերջին մնացորդները: Այլեւս թաքնվելու տեղ չուներ: Պատերի ճերմակությունը ցավեցնում էր աչքերը: Ճերմակ, ինչպես դատարկ տեղերն իր հիշողության մեջ: -Հիշողության այդ փշրանքներն իմ գիտակցությունից մնացած բեկորներն են,- մտածեց Ֆրիդան:- Եվ դրանք կանհետանան, լույսը կգունաթափի հիշողությունս, ինչպես սխալ հեղուկի մեջ ընկղմված լուսանկարները:

Մի կում ջուր խմեց՝ մի պահ պահելով բերանում, բայց այլեւս չէր կարողանում համն զգալ: Նույն հաջողությամբ կարող էր լինել կաթ կամ թեյ. նա համի զգացողություն չուներ: -Հիմա արդեն դա էլ է կորել,- մտածեց տխրությամբ:

Սառը ջուր շփեց ճակատին եւ քունքերին: Զգում էր, թե ինչպես է ջերմությունը բարձրանում, ամբողջ մարմինն սկսում էր դողալ: Դողացող ձեռքով ջրի բաժակը ետ դրեց գիշերային սեղանին: Օրեր շարունակ տարուբերվում էր տենդի նոպաների եւ անհանգիստ քնի միջեւ:

Երազ տեսավ, որ ժպտում է՝ հագին երկար, ճերմակ գիշերազգեստ, մազերն արձակած եւ լայն տարածված ձեռքերով, ասես ողջունում էր ինչ-որ մեկին: Այն պահին, երբ թեքվել էր ինչ-որ մեկի ձեռքը բռնելու, արթնացավ: Ճերմակ գիշերազգեստով, արձակած մազերով, ձեռքը մեկնած:

Միայն վերջին երեք տարիների ընթացքում քսանութ տարբեր տեսակի սեղմիրաններ էր փորձել՝ գիպսից, պլաստմասից, երկաթից, կաշվից: Սեղմիրանը վանդակ էր, եւ սա փոխաբերություն չէր, հատուկ նրա մարմնի համար կառուցված վանդակ էր: Առանց դրա նրա մարմինը կփլուզվեր, միսը կախ կընկներ, իսկ ոսկորները ցրիվ կգային, չէր կարողանա նստել, էլ ուր մնաց կանգնել: Նա համբերատար էր, երբ իր չափերն էին վերցնում, տեղադրում էին սեղմիրանը եւ ձգում պտուտակները՝ ավազի փոքր պարկերի օգնությամբ ձգելով իր ողնաշարը կամ կախելով իրեն ամբարձիչ հատուկ սարքի լծակից: Համբերատար էր, երբ սպասում էր, որ իր դիակի (ոչ մարմնի) գիպսը չորանա: Հավատում էր բժիշկներին, երբ յուրաքանչյուր նոր, ավելի ժամանակակից սեղմիրանը դնելիս ասում էին, որ ավելի լավ կլինի: Համաձայնում էր ամեն ինչի, սակարկություններ անում ինքն իր հետ՝ երբեք չդժգոհելով: Բայց քիչ հույս ուներ, թե իսկապես կլավանա, պարզապես մտածում էր, որ կշարունակի գոյատեւել:

Եվ նույնիսկ այդտեղ սահմաններ կային: Այդ սահմաններից դուրս

գալը, մինչեւ վերջին դառնագին հաղթանակը տառապելը, սպասելը, որ մահը խղճա իրեն, հիմա ավելի շատ վախկոտության էր նման, քան խիզախության: Ոչ ոք չէր կարող նրան մեղադրել հեշտությամբ հանձնվելու համար: Երեսուներկու վիրահատությունը (գուցե եւ ավելին,- վստահ չէր,- նրա հաշվարկն այնքան ճշգրիտ չէր, ինչպես նախկինում) բավարար ապացույց էին, որ պայքարել է իր կյանքի համար այնքան ժամանակ, քանի դեռ կարծում էր, որ դրանում իմաստ կա:

Բայց սահմանափակվել միայն շնչելով, կուլ տալով եւ բաբախող սիրտ ունենալով՝ պարզապես նշանակում էր սպասել, մինչեւ մահն իր վերջնական հարվածը կհասցնի:

Խղճացե՞լ էր իրեն Մաեստրոն հենց սկզբից: Հենց միայն այդ մտքից կոկորդում դառը, թանձր մի գունդ էր գոյանում, որ նա պարզապես չէր կարող կուլ տալ: Այդ կասկածն էր երբեմն նրան տանջում, եւ չէր ուզում դրան անդրադառնալ:

Որովհետեւ, եթե այդպես էր, ապա ինչո՞վ էին տարբերվում Մաեստրոյի հետ իր հարաբերությունները մոր եւ հոր հարաբերություններից: Արդյո՞ք Դոնյա Մաթիլդան իր ամուսնուն համարում էր թույլ անձնավորություն, որովհետեւ վերջինս տառապում էր էպիլեպսիայով եւ ամաչկոտ, չափազանց զգայուն, արտիստիկ խառնվածք ունեցող մարդ էր: Արդյո՞ք նա առավելապես խղճահարության զգացում է ունեցել նրա հանդեպ, նվիրվածության, պատասխանատվության զգացում՝ անօգնական մարդու հանդեպ: Դա չէր կանխում ջերմության եւ մտերմության զգացումը, բայց եւ չէր բացառում սառը հեռավորությունը, որ տիրում էր նրա ծնողների միջեւ: Մայրը տառապել էր: Գուցե նա այլ բան էր սպասել, սպասել էր ավելին: Ինչպես ցանկացած կին: Ինչպես Ֆրիդան:

Նույնիսկ եթե նրանց հարաբերություններն ի սկզբանե այդպիսին չէին, ժամանակի ընթացքում Մաեստրոյի սերը նրա հանդեպ վերածվեց խղճահարության: Նրանց միջեւ միշտ մի անհավասարություն, մի բաց տարածք կար, որը Ֆրիդան փորձում էր լցնել այն ամենով, ինչ կարող էր մտածել: Ինքը դա գիտեր այն անհավատության եւ երախտագիտության պատճառով, որ զգացել էր հենց սկզբից, զգացումներ, որոնք երբեք ամբողջովին չէր կորցրել: Ուրիշ ի՞նչ կարող էր զգալ իր նման հաշմանդամը, բացի խորապես շնորհակալ լինելուց, որ ինչ-որ մեկը դեռ ուզում էր իրեն նայել: Սկզբում սիրտը լցվում էր, եւ արցունքներ էին հոսում՝ հենց միայն կողքին քնած Մաեստրոյին նայելիս: -Ես երբեք, եր-

բեք չպետք է բաց թողնեմ նրան, որովհետեւ ո՞վ գիտե՝ արդյո՞ք երբեւէ կկարողանամ նորից գտնել նման բան,- մտածում էր այդ ժամանակ: Եվ իրեն ուժեղ մեկն էր պետք, որից կարողանար կառչել, որպեսզի չխեղդվի: Մաեստրոն ժայռի պես ամուր էր: -Եթե ուզում ես լինել այստեղ՝ այս աշխարհում,- ինքն իրեն ասում էր Ֆրիդան,- ուրեմն բռնիր այս մարդուց եւ երբեք բաց չթողնես նրան:

Մտածում էր, թե արդյո՞ք իրենց մեծ եւ,- ինչպես վաղուց հավատում էր,- տիեզերական սերը չէր առաջացել իր կարիքից եւ Մաեստրոյի խղճահարությունից: Ինքն այդ սիրո շուրջ առասպել էր հյուսել: Որովհետեւ մի իրավիճակում, երբ հիվանդությունը մաս առ մաս խժռում էր իրեն- մինչ ինքը կռվով դիմադրում էր այնպես, ինչպես արել էր մանկության տարիներին, երբ տենդագին, բորբոքուն մտքով կարծում էր, թե շունը փորձում է կծել իր ոտքը- չէր կարող վտանգել իրեն՝ կորցնելով զգացումի թեկուզ այն փոքր պատառիկը, որ Մաեստրոն կարող էր ունենալ իր հանդեպ:

Բայց փորձից գիտեր, որ յուրաքանչյուր հիվանդություն սնվում է խղճահարությամբ եւ ծաղկում է ինքնախղճահարությամբ: Որքան էլ հասկանալի լիներ, սա այն զգացումն էր, որը նա թույլ չէր տալիս ո՛չ իրեն, ո՛չ ուրիշներին:

Բայց ի՞նչ, եթե Մաեստրոյի խղճահարությունն այն ամենն էր, ինչ կար. մի՞թե անգամ դա շատ քիչ էր: Այո, ես ավելին էի ուզում, քան խղճահարությունը, զգում էի, որ դրանից ավելիին եմ արժանի: Իհարկե, Մաեստրոյի խղճահարությունը բավարար չէր, երբ դա պետք է փոխհատուցում լիներ հիվանդ ոտքի համար, մեղմեր ցավը եւ ստիպեր ինձ առողջ ու նորմալ զգալ: Բայց քանի որ դա չէր կարող լինել, եւ քանի որ նրա սերն ուժ չուներ ինձ լիարժեք ու նորմալ դարձնելու, ես յուրահատուկ լինելու միջոց գտա- հուսահատությունից, ո՛չ թե քաջությունից: Ես նույնիսկ սովորական հաշմանդամ չէի, ես քայլող այլանդակ հրեշի ցուցադրություն էի: Բեղավոր մի կին՝ ծաղկանոցը գլխիս վրա, կրկեսային շքերթի համար հագնված: Զարմանալի չէ, որ Նահանգներում երեխաները բղավում էին. «Ո՞ւր է կրկեսը», երբ տեսնում էին ինձ:

Ոտքիս ամրակապի նման՝ էսթետիկան եւ հատկապես էկզոտիկան ինձ լավ ծառայություն էին մատուցում: Ես լավ դերասանուհի էի: Միայն թե իմ կյանքում տեսանելի ամեն ինչ կեղծ էր: Կողակիցս իրականում իմ

ամուսինը չէր, այլ իմ երեխան, եւ մեր մեծ սերը պարզապես առասպել էր: Ինձ ուժ էր պետք այդ ամենը նկարելու համար: Իմ նկարներն ուղեցույց էին դեպի խաբուսիկ ցուցադրության եւ երկդիմության աշխարհ: Նկարչությունն ինձ համար միակ ապահով տեղն էր՝ ճշմարտության տեղ, ապաստան: Միակ տեղը, որտեղ ես իսկապես կարող էի լինել ինքս:

Հանկարծ սեփական ստերն ու ինքնախաբեությունը նրան հիվանդացրին: Առաջ նվաստացած կլիներ միայն այն մտքից, որ Մաեստրոն խղճահարություն էր զգում իր հանդեպ, կվաներ նման զգացումները՝ համարելով անարժան, իրենից ցածր: Բայց դրանք այդուհանդերձ զգացումներ էին, եւ նա երբեք չէր կարող հագենալ դրանցից: Միեւնույն ժամանակ ինքն իրեն համոզեց, որ ինքն է տվողը: Ինչպիսի՛ մոլորություն մեկի համար, որի հենց հագուստը, նկարները, դեմքը դրականորեն ճչում էին, որ մարդիկ ուշադրություն դարձնեն իրեն, իրեն, իրեն:

Սաստիկ հոգնել էր ինքն իրենից: -Մահը պետք է որ գա՝ որպես փարատիչ թեթեւացում ու հանգիստ, երբ այլեւս չես կարող դիմանալ ինքդ քեզ,- մտածում էր:

Մտածում էր հոր մասին եւ թե որքան էր կարոտել նրան այս տարիների ընթացքում: Իրենք ունեին ընդհանուր հիվանդություն եւ այն նույն տեսակի մենակությունը, որ հիվանդությունից է առաջանում: Դոն Գիլյերմոն մահացել էր սրտի կաթվածից, բայց Ֆրիդան համոզված էր, որ նա մահացել էր, որովհետեւ այլեւս չէր կարող դիմանալ սեփական մարմնին կամ հենց ինքն իրեն:

Նա տեսավ, թե ինչ է տեղի ունենում, երբ մարմինդ հրաժարվում է քեզնից: Քաղաքում էին, երբ հայրը փլվեց մայթին հենց իր դիմաց: Դա տեղի ունեցավ առանց նախազգուշացման, ասես բռունցքով հարվածեին ստամոքսին կամ փամփուշտով գնդակահարեին: Հայրը հանկարծ մեկնվեց մեջքի վրա, բերանից փրփուր էր գալիս: Ամբողջ մարմինը սաստիկ դողում էր, երբ ոսկրոտ ձեռքերով փորձում էր կառչել օդից: Ինքն այդ ժամանակ ինը կամ տասը տարեկանից ավելի չէր կարող լինել: Կանգնել էր հոր կողքին՝ համոզված, որ նա մահանում է հենց իր աչքի առջեւ: Այնքան սարսափած էր, որ չէր կարողանում շնչել եւ մտածում էր, թե ուշագնաց կլինի:

Ֆրիդան դա համարում էր խորհրդավոր մի հիվանդություն, որը եր-

բեմն համակում էր հորը, սովորաբար գիշերը: Երբ հայրը նոպա էր ունենում, Դոնյա Մաթիլդան աղջիկներին անհանգստացած ուղարկում էր տան հակառակ ծայրը եւ փակում էր ննջասենյակի դուռը: Եվ երբ Ֆրիդան հարցնում էր, թե ինչ է կատարվում, մայրը խուսափում էր հարցից ու ասում, որ սարսափելի ոչինչ չկա, հերթական տագնապներից մեկն է: Ինչպիսի՞ տագնապ: Ո՞վ էր հարձակվել եւ տագնապ պատճառել հորը: Դրանք հարցեր էին, որոնց մայրը երբեք չէր պատասխանում: Եվ ինքն ավելի էր շփոթմունքի մեջ ընկնում, երբ հաջորդ առավոտյան հայրը հայտնվում էր նախաճաշին միանգամայն նորմալ տեսքով՝ հանգիստ ըմպելով սուրճը եւ թերթ կարդալով, ասես նախորդ գիշեր ոչինչ չէր պատահել:

Հիմա այդ նույն մարդը՝ իր հայրը, սպիտակ վերնաշապիկով եւ նրբագեղ կոստյումով, ժամացույցի ոսկե շղթայով եւ մետաքսե փողկապով, պառկած էր փոշոտ մայթին, ներկերի խանութի դիմաց: -Ինչպես ծեր մի հարբեցող,- մտածեց՝ ամոթից ցնցվելով, որ կարող է նույնիսկ նման բան մտածել: Ինքը թեքվեց նրա վրա: -Հայրի՛կ, հայրի՛կ, ի՞նչ է պատահել, ասա՛ ինձ, ի՞նչ է եղել:- Մտքով անցավ, որ այժմ նույն բանն է ասում իր հիվանդ հորը, նույն խոսքերն է արտաբերում, որ նա ասել էր, երբ դիվային ցավն առաջին անգամ հարձակում էր գործել իր ոտքի վրա: Սակայն հայրը չէր լսում իրեն: Նրա աչքերը լայն բաց էին, բայց միայն սպիտակուցներն էին երեւում: Հանկարծ ինքն սկսեց դողալ: Հենվեց պատին: Այդտեղ կանգնած՝ ցնցվում էր, ատամները սեղմած, բռունցքները սեղմած:

Շուրջն սկսեցին մարդիկ հավաքվել: Մի տղամարդ դուրս եկավ փողոցի դիմացի դեղատնից եւ շոյեց Ֆրիդայի գլուխը: -Մի՛ վախենա, փոքրիկ աղջիկ, քիչ հետո նա լավ կզգա,- ասաց: Հետո թեքվեց հոր վրա եւ ինչ-որ բան դրեց նրա քթի տակ, բայց ինքը չտեսավ, թե ինչ: Ցղածգությունները դադարեցին, եւ հայրը դանդաղ վեր ելավ մայթից, հանեց թաշկինակն ու բերանից սրբեց թքի ու փրփուրի բարակ հետքը: Նա թափ տվեց կոստյումի փոշին եւ բռնեց Ֆրիդայի ձեռքը: Առանց խոսքի: Ինչ-որ մեկը հարցրեց. -Ձեզ բժիշկ պե՞տք է: Այստեղ մոտերքում բժիշկ կա:- Դոն Գիլյերմոն պարզապես թափահարեց գլուխը եւ շարունակեց քայլել փողոցով: Գունատությունը, սակայն, մատնում էր նրան: Նրանք լուռ քայլում էին տուն, եւ ոտնաձայներն էին միայն լռությունը խախտում: Ինքը չէր համարձակվում որեւէ բան հարցնել, եւ հայրն էլ ոչ մի

բացատրություն չտվեց: Նրա գաղտնիքը բացահայտվել էր անհայտ մարդկանց ամբոխի առջեւ եւ իր երեխայի առջեւ: Գետնից բարձրանալիս Ֆրիդայի դեմքին ոչ միայն վախ էր տեսել, այլ նաեւ ամոթ: Գիտեր, թե ինչպիսի տեսք պետք է ունեցած լիներ իր ջղածգվող մարմինը, եւ ինչպիսի ամոթ պետք է զգացած լիներ իր փոքրիկ աղջիկը: Նա գրկեց Ֆրիդային՝ շշնջալով. -Մի՛ վախենա, ես լավ եմ:- Աղջիկը գլխով արեց: Նա գիտեր, որ հայրը լավ չէ, եւ իրեն անօգնական էր զգում:

Հաջորդ անգամ, երբ հայրը պատրաստվում էր գնալ լուսանկարահանման, Դոնյա Մաթիլդան փոքրիկ աղջկան կանչեց ննջասենյակ: Նա զգեստապահարանից մի փոքրիկ սրվակ վերցրեց եւ տվեց Ֆրիդային: -Սա հետդ վերցրու, եւ եթե հայրդ նորից ընկնի, պարզապես բացիր շիշը եւ պահիր քթի տակ: Մեջը սպիրտ կա, հենց որ հոտ քաշի, իրեն լավ կզգա: Եվ ուշադիր կլինես, որ ֆոտոխցիկը ոչ ոք չգողանա,- ավելացրեց մի շնչով: Այդպես ինքն իմացավ, որ հայրը տառապում է էպիլեպսիայով: Սեփական փորձից գիտեր, որ ամեն հիվանդություն իր հետ ամոթ է բերում, իսկ այս մեկը, ինչպես ինքն էր տեսել, առավել եւս ամոթալի էր, քանի որ կարող էր հարվածել ցանկացած վայրում, ցանկացած պահի: Եվ դա թաքցնելն անհնար էր:

Ֆրիդան վերցրեց փոքրիկ շիշը եւ զգուշությամբ դրեց գրպանը: Չնայած վախեցած էր, բայց որոշակի հպարտություն էր զգում, որ մայրն իրեն էր վստահել հորը: Հիշողությունից չէր կարողանում ջնջել հոր ծռմռված դեմքը եւ շրջված աչքերը, որոնց միայն սպիտակուցներն էին երեւում: Բայց առավել վատ էր այն բանի գիտակցումը, որ իր հայրը՝ մեծահասակ եւ ընտանիքի գլուխ, կարող էր այդպես կորցնել վերահսկողությունը սեփական մարմնի նկատմամբ:

Մենք երբեք չենք խոսել իմ վթարի մասին,- մտածում էր Ֆրիդան:- Բայց նա միակ մարդն էր, որ գիտեր, թե ինչ եմ զգում: Նա գիտեր, թե ինչ է ինձ սպասվում, եւ ավերված էր ու ամայի:

Զգում էր, թե ինչպես է Դոն Գիլյերմոն ներքաշվում ինքն իր մեջ: Նրա հիվանդությունն այնպիսի մի բան էր, որ իր կարծիքով պետք է թաքցներ՝ ինչ գնով էլ լիներ: Հենց դրա պատճառով էլ թողել էր համալսարանը Գերմանիայում, դրա պատճառով նա չուներ առօրյան հաղթահարելու տոկունություն: Բոլոր կարեւոր որոշումները նա թողել էր կնոջը: Կինն էր մեծացրել աղջիկներին, տան հոգսը հոգացել, հետեւել սպասուհիներին, ուտելիքին, հյուրերին: Ֆրիդայի վթարը միայն սրեց իրավի-

ճակը: Դոն Գիլյերմոն այդպես էլ երբեք չապաքինվեց դրանից: Գոյատեւելու եւ իրեն ինչ-որ կերպ պաշտպանելու համար նա սահմանեց տարբեր կանոններ, որոնց հետեւում էր կետ առ կետ. պետք է սնվեր մենակ, որոշակի ժամի, իսկ հետո քաշվում էր իր սենյակ եւ դաշնամուր նվագում՝ դարձյալ մենակ: Միայն որոշակի ստեղծագործություններ, սակայն: Հետո կարդում էր միայն որոշակի գրքեր: Սենյակի լույսերը մարում էին երեկոյան ժամը տասին: -Խիստ կանոններ, սահմանափակումներ, որոնք նա դնում էր իր վրա,- սեղմիրանի պես,- մտածեց Ֆրիդան: Հակառակ դեպքում նրա կյանքը ջարդված սյան պես կխորտակվեր:

Մեր տարբերությունն այն էր, որ ես ավելի ուժեղ էի: Ես կռվում էի իմ դեւի հետ՝ մերկացնելով նրան, բացահայտելով, դատապարտելով: Ես անողորմ էի: Հիվանդությունս մաշում էի, չորացնում՝ հյութաքամ անելով, շահագործում էի: Համառորեն դիմակայում էի, հակադրվում էի նրան: Ես ապրում էի մշտական ներքին լարվածության մեջ՝ կենաց-մահու պայքար մղելով: Եվ իմ ցավը դուրս էի քաշում խորքերից ու հանում մակերեսի վրա՝ մերկացնելով լույսի տակ եւ հանրության ուշադրությանն ի ցույց դնելով: Դեւերն ատում են դա: Ես ցուցադրում էի ոչ միայն այդ ցավի դեմքը, այլեւ մարմինը, ոտքերը, վերքերը, սիրտը, ստամոքսը, ողնաշարը: Եվ դա ինձ ուժ էր տալիս: Իմ ապստամբությունը սկանդալային էր, որովհետեւ ոչ միայն նկարում էի, այլեւ նկարում էի ցավն ու հիվանդությունը: Հիվանդ մարդիկ դա չեն անում: Իսկ հա՞յրս: Նա ավելի ու ավելի խորասուզվեց իր մենության մեջ: Իսկ վերջում արդեն դժվար էր նրան դուրս հանել այդտեղից: Մյուս կողմից, ես հրաժարվում էի ընդունել իմ նկատմամբ կայացված դատավճիռը:

Արդյոք մարդիկ ավելի քի՞չ էին խղճում ինձ դրա համար, կամ գուցե ավելի շա՞տ:

Մտածում էր, թե ինչ կասեր իր մեղմաբարո հայրը: Նա մելամաղձոտ էր եւ, եթե ուժ ունենար, կփախչեր մի տեղ, որտեղ իրեն ոչ ոք չէր ճանաչում եւ ոչ ոք չէր կարող անհանգստացնել: Գուցե նույնիսկ մահվան գիրկը, եթե դրա համար ուժ ունենար: Ֆրիդան գիտեր, որ հայրը կհասկանար, թե ինքն ինչու պետք է փախչեր իր մարմնից, կյանքից, որ ոչ այլ ինչ էր, քան նվաստացուցիչ, անթաքույց ու անխարդախ տոկունություն: Եվ խորտակում: Իր կյանքը խորտակվել էր ջարդված սյան նման:

Հիշեց, թե որքան թշվառ էր, երբ նկարում էր այդ նկարը: Դա միայն իր հիվանդությունը չէր, քանի որ հիվանդությունն ավելին է, քան պարզապես ցավը, դա այն ամենն է, ինչ շրջապատում եւ բխում է այդ ցավից: Ինչպես մեխերը՝ գամված իր մերկ մարմնի մեջ: Կարող էր գրեթե ճանաչել դրանցից բոլոր հիսունվեցն էլ՝ մելամաղձ, մենություն, հյուծում, տկարություն, ճակատագրին հնազանդություն, դժբախտություն, թշվառություն, հուսահատություն, վախ, կարոտ: Չէր կարող տանել այդ ամենը,- մտածեց վհատ եւ հուսալքված:

Զգում էր, թե ինչպես է փլուզվում: Իր ողնաշարի փոխարեն քարե սյուն նկարեց: Բայց նույնիսկ քարն էր փշրվում: Սյունը, որ բարձր էր պահել Ֆրիդային, այժմ խորտակվում էր չափազանց ծանր բեռան տակ: -Այլեւս չեմ կարող կրել այս բեռը,- ասում է Ֆրիդան այդ նկարում: Նրա քայքայումը սկսվեց մահից տասը տարի առաջ, բայց այստեղ դա դեռ ներքին գործընթաց է, որը տեսանելի է միայն նկարներում: Մարմինը դեռ ամբողջական է, թեեւ բաց դրված է ասես վիրահատական սեղանին: Առաջին անգամ նկարում է մարմին՝ գրեթե կիսով չափ կտրատված, ինչպես խոզի մսի երկու սրունքները: Հերձված մարմինը բացված մի վերք է: Սարսափելի է նայելը: Բաց վերքը խորն է եւ արյունահոս: Դա արդեն նույնիսկ վերք էլ չէ, այլ խոր պատռվածք: Մարմինը նման է անձրեւի կարոտ ճաքճքած չոր հողին՝ ետին պլանում: Մի սարք կա, որ արհեստականորեն միասնական է պահում այն: Բայց ոչինչ, ո՛չ այդ սարքավորումը, ո՛չ որեւէ վիրահատություն, դեղամիջոց, ներարկում չի կարող կանգնեցնել ընդհանուր քայքայումը: Սյունը հնարավոր չէ վերականգնել, վերքը հնարավոր չէ բուժել: Ֆրիդան լալիս է, քանի որ բացարձակապես ոչինչ հնարավոր չէ անել, քանի որ դա իր ճակատագիրն է:

Տարօրինակ է, սակայն, որ գրեթե արյուն չի հոսում մեխերով ծակծկված վերքերից, ասես նրա մարմինը վաղուց մեռած լինի:

Նրա կտավները փոքր էին, որպեսզի տեղավորվեին ծնկներին դրվող պատկերակալին կամ արվեստանոցի մի փոքր ավելի մեծ պատկերակալին: Ինքն ընդամենը մի քանի մեծ կտավ էր նկարել: Մինչդեռ Մաեստրոն նկարում էր հսկայական մակերեսների, ամբողջ դահլիճների, տասը մետր բարձրությամբ պատերի վրա: Մաեստրոյի որմնանկար-

ներն առլեցուն էին մարդկանցով ու գաղափարներով: Թեեւ ինքն իսկապես հիանում էր նրանով, բայց երբեք գայթակղություն չէր ունենում ընդօրինակելու: Մաեստրոյի համար, սակայն, գաղափարներն ավելի կարեւոր էին, քան մարդիկ, եւ Ֆրիդան նկատում էր, որ դա երբեմն վերածվում էր գաղափարախոսության: Եվ որտեղ նա առաջնորդում էր, ինքը հետեւում էր: Նա ուներ անհատականության ուժ՝ մարդկանց դեպի իրեն եւ իր գաղափարները ծգելու համար, բայց միայն կյանքում, ո՛չ արվեստում: Ֆրիդայի նկարները չափազանց փոքր էին ճնշված զանգվածների, բանվորների եւ նրանց դասակարգային պայքարի համար: Որտե՞ղ էր տեղավորելու բոլոր ապստամբ զանգվածներին եւ բոլոր ացտեկներին, տոլտեկներին, հնդկացիներին, գյուղացիներին, հեղափոխական առաջնորդներին ու պատմական գործիչներին, որոնցով լեփ-լեցուն էին Մաեստրոյի որմնանկարները: Այդ բոլոր դրոշ-պաստառներն ու արդյունաբերական մեքենաները եւ մարդկանց, որոնք հազարներով քայլում են դեպի պայծառ ապագա: Դրա համար տարածք էր պահանջվում: Մաեստրոյի խոշոր մարմնին տարածություն էր պետք՝ նրա արվեստին թռիչք տալու համար: Ֆրիդայի նկարներն ավելի շատ ի՛ր նման էին՝ փոքր ու կտրուկ, ճշգրիտ եւ ահաբեկող:

Այնուամենայնիվ, նա Մեքսիկայի կոմունիստական կուսակցության անդամ էր: Երբ Մաեստրոյին վռնդեցին, դուրս եկավ, բայց հետո նորից միացավ: Մասնակցում էր բողոքի երթերին, «Ինտերնացիոնալ» էր երգում, ատում էր անարդարությունը եւ հավատում էր, որ կոմունիզմն աշխարհը կփրկի աղքատությունից: Ընկեր Ստալինի գլխավորությամբ: Ստալինի անավարտ դիմանկարը դեռ անկյունում դրված պատկերակալի վրա էր: Իր սեփական կոմունիզմը խոսքերից այն կողմ չէր անցնում, թեեւ գումար էր հավաքում Իսպանիայի քաղաքացիական պատերազմի մասնակիցների համար: Այլ կերպ ասած՝ ամեն ինչ եզրափակվում էր խոսքերով, երգերով, պաստառներով, ելույթներով եւ Մաեստրոյի հետ համերաշխությամբ: Եվ մի քանի վատ նկարներով, որոնք նախընտրում էր մոռանալ: Վատ նկարներն աններելի էին: Դրանք ավելի շատ Մաեստրոյի, քան կոմունիզմի հանդեպ իր սիրո արտացոլումն էին: Չէր կարծում, թե նա առանձնապես սիրում էր դրանք. Մաեստրոն անկաշառ աչք ուներ: Ոչ էլ վստահ էր, թե նա շատ է հավատում իր կոմունիզմին:

Աչքն ընկավ Ստալինի անավարտ դիմանկարով նկարակալին: Ինչո՞ւ երբեք չէր նկարել Լեւ Տրոցկուն: Արդյո՞ք այդ տղամարդու հանդեպ իր

սեփական զգացմունքների պատճառով, թե՞ այն պատճառով, որ Մաեստրոն կապերը խզել էր նրա հետ:

Մեքսիկայում եղած առաջին տարվա վերջում, երբ իրենց միջեւ ամեն ինչ արդեն վերջացած էր, Ֆրիդան Տրոցկուն մի ինքնանկար նվիրեց նրա հիսունութերորդ տարեդարձի կապակցությամբ: Դա ավելի մեղմ է, քան իր մյուս ինքնանկարները: Պաստելի գույնի շալով եւ կանաչ եզրագծով նարնջագույն կիսաշրջազգեստ հագած՝ նա կանգնած է նույն գույնի բաց վարագույրներով պատված բեմանման մի բանի վրա: Դեմքը խնամքով շպարված է, մազերը կոկիկ հարդարված, շուրթերը վառ կարմիր, այտերը՝ վարդագույն. այդ ամենն ասես թատերական ներկայացման գովազդային վահանակ լինի: Ձեռքին ծաղիկների մի փունջ է, ասես հենց նոր է ստացել իրեն պաշտող երկրպագուից: Նկարում չկան դրամատիկ մանրամասներ, չկան վերքեր, արյուն կամ կենդանիներ: Դա նուրբ, անհավակնոտ նկար է. նա կրկին օգտագործում է իր հմայքը, ինչպես արեց Ալեքսի համար իր առաջին ինքնանկարում: Նկարը հուշանվեր է:

Երբ կտավը նվիրեց, Տրոցկին ջերմորեն համբուրեց նրա այտը: Տրոցկու կինը՝ Նատալյան, ուշադիր զննեց նկարը: Դեռ կասկածամիտ՝ նա մտերմության որեւէ նշան էր փնտրում: Դրանք չգտնելով՝ հանգստացավ: Բայց երբ ի վերջո դուրս եկան տնից, Տրոցկին ստիպված եղավ թողնել դիմանկարը:

Երբ այդ առավոտ ուղեւորները Տամպիկո նավահանգստում իջան «Ռութից», Ֆրիդայի հայացքը կանգ առավ Տրոցկու վրա: Ոչ թե այն պատճառով, որ նա հրաշալի տեսք ուներ, այլ որովհետեւ ինքն այնքան հուզված էր՝ հանդիպելով կոմունիստական հեղափոխության իսկական հերոսի, էլ չասած՝ Մաեստրոյի կուռքերից մեկի հետ: Նրա աչքին՝ հսկայական բեռնանավը տեղափոխում էր ընդամենը մեկ ուղեւորի՝ փոքրիկ, փոքր-ինչ կռացած, ակնոցավոր եւ մոխրագույն այծմորուքով տարեց մի տղամարդու: Նա թվիդե վերնազգեստով էր, մարզական լայն, կարճ տաբատով եւ գլխին բերետ էր դրել: Ֆրիդան այնտեղ էր՝ Մաեստրոյի անունից նրան ողջունելու համար եւ որպես հյուրընկալող տանտիրուհի ու թարգմանչուհի: Տրոցկին եւ նրա կինը՝ Նատալյան, մնալու էին Ֆրիդայի ծնողների տանը:

Տրոցկուն տեսնելուց հետո միայն Ֆրիդան ուշադրություն դարձրեց նրա ուղեկցի վրա: Նատալյան ասես Տրոցկու ստվերը լիներ եւ կես քայլ նրանից ետ էր մնում: Սկզբում Նատալյան չէր ուզում նավից ափ իջնել: Եվս մեկ անծանոթ երկիր, էլ ավելի անծանոթ մարդիկ: Ինչպե՞ս կարող էր վստահ լինել, որ իրենց դիմավորողներն իսկապես բարեկամներ են: Մեկ տարի փախուստի մեջ լինելուց եւ աքսորում ապրելուց հետո նա չգիտեր, թե ինչ է սպասվում իրենց հետագայում:

Գրեթե երկու տասնամյակ անց Ֆրիդան վերհիշեց այդ պահը: Նատալյան, պարզվեց, ճիշտ էր՝ իր մտավախությամբ: -Եթե նրանք այդ օրը Մեքսիկայում ափ իջած չլինեին, եթե հետեւած լինեին Նատալյայի բնազդին, գուցե Տրոցկին դեռ ողջ լիներ,- մտածում էր:

Այն ժամանակ, սակայն, վրդովված էր Նատալյայի երկմտանքից: Չնայած իր նրբագեղ վերարկուին, բարձրակրունկ կոշիկներին ու գլխարկին, Նատալյան ուշադրության արժանի չէր թվում: Գուցե երկար ճանապարհ անցնելու, իսկ գուցե ցրտի կամ վախի պատճառով նա լուռ էր եւ թվում էր մի տեսակ անհնքնավստահ ու ինքն իրեն կորցրած: Ֆրիդան անմիջապես հասկացավ, որ կինը սովոր էր, որ իրեն վերաբերվեն որպես ամուսնու ստվերի, նրա կյանքի կինոնկարահանման հրապարակում անանուն մեկի: Ֆրիդայի ուշադրությունը կենտրոնացած էր Տրոցկու վրա: Հազիվ էին հանդիպել, իսկ նա արդեն հաճոյախոսություններ էր անում իր արտաքինի վերաբերյալ: - Ինչպիսի՛ գեղեցկություն, ես այնքան շատ եմ լսել ձեր մասին, բայց հիմա, այսպես, իրականում տեսնելով ձեզ...- Հետո կանգ առավ՝ ասես բառեր չգտնելով, նրա աչքերը փայլում էին անկեղծ հիացմունքից: Ֆրիդան ծիծաղեց եւ սկսեց պատմել նրան Մաեստրոյի, կլիմայի, տան մասին: Տրոցկին հմայիչ էր եւ զրուցասեր: Երբ գնում էին դեպի երկաթուղային կայարան, որտեղ նախատեսված էր պաշտոնական ընդունելությունը, Ֆրիդան արդեն լիովին հանգիստ էր զգում իրեն: Նատալյայի աչքերում որսալով իր սեփական արտացոլանքը՝ նա ինքն իրեն նայում էր որպես ճչացող, ծղրտացող թութակի: Եվ ամեն անգամ, երբ նկատում էր ինչ-որ մեկի անհավանությունը կամ նույնիսկ զուտ վերապահումը, ավելի բարձրաձայն, աղմկոտ, ավելի վերամբարձ էր դառնում:

Ֆրիդայի ծնողների տանն իրենց առաջին տարվա ընթացքում Նատալյան չէր կարող չնկատել, թե որքան ժամանակ է Տրոցկին անցկացնում Ֆրիդայի հետ, ինչպես է ավելի ու ավելի նոր պատրվակներ գտ-

նում, որպեսզի իրենք միասին լինեն. էքսկուրսիաներ, հանդիպումներ, ճամփորդություններ: Նատալյան չէր կարող չլսել ծիծաղի բարձր ձայները, որ գալիս էին նրա աշխատասենյակից, պատառիկներ նրանց զրույցից, բառեր, որոնք չէր ինքը կարող հասկանալ, բայց որոնք հնչում էին մեղմաձայն ու քնքուշ: Նրանց հարաբերություններն սկսվեցին ընթրիքի ժամանակ բազմանշանակալից հայացքներով: Ապա Տրոցկին նրան գիրք էր առաջարկելու: Հետո գրքի էջերում Ֆրիդան գտնելու էր նրա գրած նամակներից՝ անպարկեշտ առաջարկություններով: Ֆրիդային դուր եկավ նրա համարձակությունը եւ որոշեց բարձրացնել նետած ձեռնոցը:

Սկզբնապես Քիթին էր, որ գրավել էր Տրոցկու ուշադրությունը: Նա սեղանի տակ դիպչում էր Քիթիի ոտքին կամ անցնելիս կանգնեցնում էր եւ հրավիրում իր սենյակ: -Նրան հետաքրքրում է միայն սեքսը, ոչ թե ռոմանտիկան,- որոշեց Քիթին: Համենայն դեպս, այնքան էլ տպավորված չէր եւ, ի տարբերություն քրոջ, շատ էլ չէր հիանում նրանով, որ զիջեր:

Սիրեկաններ դառնալով՝ եւ՛ Ֆրիդան, եւ՛ Տրոցկին փորձում էին ձեւականորեն պահպանել բարեկամական, բայց պաշտոնական հարաբերությունների տեսքը: Ֆրիդան քսանինը տարեկան էր եւ շոյված էր աշխարհահռչակ այդ հեղափոխականի, այդ փայլուն մտավորականի ուշադրությունից: Հիանում էր նրանով այնպես, ինչպես Մաեստրոյով: Թերեւս Տրոցկին ամենաշատն իրեն գրավում էր այն պարզ պատճառով, որ Մաեստրոն հիանում էր նրանով: Միաժամանակ, ենթագիտակցական մի ցանկությամբ, վրեժ էր ուզում լուծել Քիթիի հետ Մաեստրոյի սիրավեպի համար:

Հանդիպում էին Քիթիի բնակարանում: Թիկնապահները, քարտուղարը, սպասուհիները, վարորդը, Քիթին, բոլորը գիտեին նրանց հարաբերությունների մասին: Նույնիսկ Նատալյան գիտեր: Բոլորը գիտեին, բացի Մաեստրոյից, որն ասես կույր էր այդ ամենի հանդեպ եւ անտեսում էր նույնիսկ ամենաակնհայտ նշանները:

Ամեն օր Տրոցկին իր քարտուղար Ժանին թելադրում էր Լենինի կենսագրությունը: Երբ Ֆրիդան մտնում էր նրա աշխատասենյակ, նա Ժանին ուղարկում էր թեյ պատրաստելու: Մի անգամ, երբ Ֆրիդան վերնաշապիկը կոճկելով սենյակից դուրս էր գալիս, դեմառդեմ հանդիպեց Նատալյային: Երկուսն էլ կանգ առան՝ մեկը մոխրագույն մազերով շրջանակված գունատ դեմքով, մյուսը՝ փայլող դեմքով, արծակ մազերով եւ

մերկ ուսերով: Նատալյայի խաղաղ տխրությունը վախեցրեց նրան: Նատալյայի մեջ ինչ-որ բան կար, որ Ֆրիդային հիշեցրեց իր մասին: Նա ճանաչեց դավաճանված կնոջ հուսահատությունը: Առաջ ձգվեց, կարծես ուզում էր դիպչել, գուցե նույնիսկ գրկել նրան: Անհրաժեշտություն զգաց նրան մխիթարելու, ասելու, որ իր կողմից ոչ մի լուրջ բան չկա, որ Նատալյան անհանգստանալու կարիք չունի: Եթե միայն կարողանար, նույնիսկ կասեր, որ դա անում է Մաեստրոյի պատճառով: -Ուզում եմ նրան ցավ պատճառել այնպես, ինչպես նա ինձ ցավ պատճառեց, երբ Քիթիի հետ էր,- կասեր:

Բայց Նատալյան անգլերեն չէր խոսում, եւ Ֆրիդան չէր կարող հաղորդակցվել նրա հետ: Արդեն թուլացած մալարիայից եւ կրտսեր որդու ճակատագրի համար անհանգստությունից, որը Խորհրդային Միության աշխատանքային ճամբարում էր գտնվում, Նատալյան քաշվեց տուն՝ էլ ավելի հոգնած, էլ ավելի անհանգստացած: Նա հիսունհինգ տարեկան էր եւ վերջին երեսունհինգ տարին Տրոցկու հետ էր անցկացրել: Գիտեր, որ նա կանանց փեշերի ետեւից վազող է. սովոր էր այդ կյանքին: Բայց Լեւի կիրքը Ֆրիդայի հանդեպ՝ Նատալյային բոլորովին ավերված ու անօգնական դարձրեց: Նա ոչինչ չէր կարող անել դրան վերջ տալու համար: Լուռ հետեւում էր նրա քնքշության դրսեւորումներին՝ սպասելով, թե նա երբ կնկատի, որ ինքը նույնպես գոյություն ունի, որ ինքը նույնպես զգացմունքներ ունի: Եվ որ նա այն ամենն է, ինչ ինքն ունի: Համբերությունը Նատալյայի միակ զենքն էր, համբերությունը եւ հավատը, որ եթե բավական երկար սպասի, ամուսինը կվերադառնա իր մոտ:

Նատալյան շրջվեց եւ միջանցքով ցած քայլեց: Մի վայրկյան Ֆրիդայի ձեռքը կախված մնաց օդում:

Մաեստրոն իրեն այնպես էր պահում, կարծես ոչինչ չէր նկատել: Նա մտածում էր՝ միգուցե շոյվա՞ծ պիտի զգա այն ուշադրությունից, որին արժանանում էր կինը իր հեղափոխական կուռքի կողմից: Վերջում, երբ հետաքրքրությունը կորցրեց Տրոցկու նկատմամբ, Ֆրիդան հասկացավ, որ իր վրեժն ամենեւին նպատակին չի հասել, եւ որ այն ամենն, ինչին հասել էր, իրեն խաղազինվոր զգալն էր:

Որովհետեւ տղամարդկանցից ոչ մեկի կյանքը չէր պտտվում կանանց շուրջը: Մաեստրոն ապրում էր իր արվեստով: Տրոցկին՝ հեղափոխության համար: Կանայք, նույնիսկ շատ սիրված կանայք, նրանց կյան-

քում կենտրոնական տեղ չէին զբաղեցնում: Սիրային հարաբերությունները կողմնակի արդյունք էին, նրանց բնորոշ մի բան, որ անցնում էին հաջողությամբ ու փառքով՝ արվեստում լիներ թե հեղափոխության մեջ: Նատալյան դա հասկանում էր եւ գիտեր, որ իրեն մնում է միայն սպասել: Նրա ամուսինը երբեմն ենթարկվում էր մի տեսակ տենդի, որ ասես վարակ լիներ: Ախտանիշները միշտ նույնն էին, եւ ինքը դրանք անգիր գիտեր՝ անհանգստություն, դողէրոցք, անզսպություն, ցանկասիրություն, թերեւս նույնիսկ անքնություն: Միակ բուժումը՝ իր հետապնդած կնոջը տիրանալն էր: Հետո տենդն անցնում էր համեմատաբար արագ, եւ Նատալյան կարողանում էր բուժել հետեւանքները, որոնք սովորաբար կարճատեւ էին եւ ոչ այնքան դրամատիկ: Նա կարող էր այդ ամենը պատմել Ֆրիդային, եթե իմանար, թե ինչպես: Եվ կարող էր նրա համար անգիր մեջբերել այն նամակը, որը Տրոցկին գրելու էր Նատալյային, երբ Ֆրիդան հեռանար նրանից. -*Ես քեզ շատ եմ սիրում, Նատա, իմ միակ ու եզակի սեր, իմ իսկական սեր, իմ զոհ:*

Ֆրիդան դեռ հիշում էր, թե ինչպես էր Տրոցկիով սիրահարվածության եւ հրապուրվածության առաջին շրջանում կրավորական այդ պառավն անտեսում եւ արհամարհում իրեն՝ ստվերում դարանակալ թաքնվելու եւ սպասելու համար: Բայց նա անտեղյակ էր Նատալյայից, որը կրթություն էր ստացել Սորբոնում, ուսումնասիրել էր արվեստի պատմությունը, ինքն էլ հեղափոխական էր եւ հետագայում դարձել էր ոչ միայն նրա քաղաքացիական կինը (ո՞ւմ էին պետք ամուսնության՝ բուրժուական նման պայմանականությունները) եւ նրա երկու հասուն որդիների մայրը, նաեւ նրա քարտուղարն ու ուղեկիցն աքսորում: Այս Նատալյայի մասին Ֆրիդան ոչինչ չգիտեր:

Այդ օրը վաղ առավոտյան անկողնում պառկած՝ նա մտածում էր Նատալյայի մասին: Ինքը նրանից սովորել էր, որ միայն այն դեպքում, երբ ինքդ ենթարկվել ես հետապնդման եւ սպառնալիքի, իսկապես կարող ես գնահատել, թե ինչ է նշանակում միասին լինել քո տղամարդու հետ: Եվ ինչպես չես դա գիտակցում, քանի դեռ մեկ ուրիշը չի դառնում նրա միակ ապաստանը, նրա միակ տունը:

Մի օր երկու կանայք միասին հայտնվեցին խոհանոցում, եւ Ֆրիդան Նատալյային մեկ բաժակ թեյ առաջարկեց: Մի պահ վարանելուց հետո Նատալյան համաձայնեց: Դրսում տեղատարափ էր, եւ լսելի էր հորդ

անձրեւի հանդարտ, միապաղաղ թմբկահարման ձայնը: Մի պահ, խոսքեր չգտնելով, Նատալյան բացեց պայուսակը, որը երկու ձեռքով սեղմել էր՝ կարծես վախենալով, թե ինչ-որ մեկը կգողանա իրենից, եւ երկու լուսանկար հանեց: Նա դրանք մեկնեց Ֆրիդային՝ սեղանի, ճենապակյա երկու բաժակներում լցված չինական թեյի ոսկեգույն հեղուկի, որսի տեսարանով նկարազարդված թեյամանի եւ սկուտեղում դրված տորթի վրայով: Լուսանկարները փոքր էին, ատամնավոր եզրերով: Մեկը կրտսեր որդու նկարն էր. Սերգեյ, 1911 թ.,- գրված էր նկարի ետեւում: Նրա ձեռքին խաղալիք էր՝ շնիկ կամ գուցե արջուկ: Մյուս որդին, որին հոր անունով Լեւ էին կոչել, ավագ եղբոր լուրջ դեմք ուներ: Նրանք նավաստու զգեստ էին հագել: Լուսանկարները ֆոտոտաղավարում չէին արվել՝ ինչպես հարկն է: Ինչ-որ մեկը, գուցե նրանց հայրը կամ մի բարեկամ, այգում գնդակով խաղացող, շնչակտուր երեխաներին կանչել էր ու ասել, որ կանգնեն ֆոտոխցիկի առջեւ: Լեւն ու Սերգեյը դեռ քրտնած էին, ծարավ եւ անհամբեր ուզում էին գնալ նորից խաղալու: Նատալյան երբեք չէր դադարում անհանգստանալ նրանց համար, նա շատ լավ գիտեր, որ չի կարող պաշտպանել նրանց այն փաստից, որ Տրոցկին իրենց հայրն է: Ֆրիդան Տրոցկուց իմացել էր, որ Սերգեյը Կրասնոյարսկի աշխատանքային ճամբարում է. իրենք չգիտեին՝ թե արդյո՞ք նա դեռ ողջ է: Լեւ-կրտսերն ապրում էր Փարիզում: Թեեւ նրանք արդեն հասուն տղամարդիկ էին, պայուսակից Նատալյայի հանած նկարներում, անմահացել էին որպես տղաներ:

Նա նաեւ գիտեր Տրոցկու երկու դուստրերի մասին՝ նրա առաջին ամուսնությունից: Զինան ինքնասպան էր եղել 1933 թվականին Բեռլինում: Նինան ավելի վաղ մահացել էր տուբերկուլյոզից: Բայց մինչեւ այն պահը, երբ տեսավ տղաների փոքրիկ դեմքերի սպիտակ եզրաշրջանակով լուսանկարները, Ֆրիդան չէր մտածել, որ նկարներն այն ամենն էին, ինչ մնացել էին Նատալյային նրանց համատեղ կյանքից: Սակայն Նատալյան ոչ մի զգացմունք չէր ցուցաբերում, ասես ոչինչ այլեւս կապ չուներ իր հետ, կարծես այդ ամենը պատկանում էր ինչ-որ հեռավոր անցյալի: Նա նկարները հանել էր միայն այն պատճառով, որ կարծում էր՝ դա կարող է օգնել Ֆրիդային հասկանալու, թե ինչպես է խորտակվել իրենց կյանքը: -*Ստալին,*- ասաց Նատալյան՝ նայելով պատուհանից դեպի բակ: Ասես այդ միակ անունը բացատրում էր ամեն ինչ:

Ֆրիդան ձեռքում բռնել էր լուսանկարները՝ չիմանալով ինչ անել

դրանց հետ: Մտածում էր՝ սեղանի՞ն դնի, թե՞ ետ տա Նատալյային: Եվ ի՞նչ պետք է ասի կամ անի: Երբ վերջապես ծգվեց ու դիպավ նրա ձեռքին, զգաց, որ մաշկը չոր է եւ տաք:

Հանկարծ նրա դիմաց նստած էր մեկ ուրիշ Նատալյա, մի կին, որ իր հետ կիսում էր իր ամենախոր վախերը: Այդ կինը, որ Ստալինի բարկությունից փախչելով՝ հեռացել էր Ալմա-Աթայից եւ Օսլոյից, Թուրքիայից ու Ֆրանսիայից եւ այժմ իրենց մոտ՝ Մեքսիկա էր եկել, հուզեց նրան: Այդ կինը, որ չգիտեր, թե որն է լինելու իր ճամփորդության հաջորդ կանգառը: Նրա նախկին կյանքի միակ ապացույցն իր երկու որդիների լուսանկարներն էին:

Եթե անգամ ռուսերեն իմանար, Ֆրիդան չէր կարողանա պաշտպանել Ստալինին: Ո՛չ այս կնոջ առջեւ:

Հայացքը հառեց Ստալինի դիմանկարին՝ սենյակի խորքում: Գիտեր, որ իր այս վերջին նկարն անավարտ է մնալու: Երկար ժամանակ շատ թույլ էր այն ավարտելու համար: Ամեն անգամ, երբ վրձինը ձեռքն էր վերցնում, հիշում էր այդ կեսօրը եւ Նատալյային, տանիքին թմբկահարող անձրեւը եւ երեխաների դեմքերը լուսանկարներում: Նրանց թեյախմությունից շատ չանցած՝ Լեւ-կրտսերը սպանվեց Փարիզի հիվանդանոցներից մեկում: Սերգեյն անհետացավ, չքացավ, հավանաբար նույնպես սպանվեց:

Ինչո՞ւ ընդհանրապես ցանկացա նկարել նրա դիմանկարը,- հարցնում էր իրեն՝ այգաբացի լույսի ներքո նայելով կտավին պատկերված Ստալինի դեմքին: Նույն այն պատճառով, որ օրերս Մաեստրոյի հետ գնացել էր բողոքի երթի՝ ի հեճուկս անձրեւի, ցրտի եւ իրեն: Լինելու համար նրա կողքին, ցույց տալու, որ ինքը միշտ նրա հետ է լինելու: Ստալինի այս դիմանկարը նրա համար պարզապես Մաեստրոյի հետ մերձենալու եւս մեկ միջոց էր. տե՛ս, ես քեզ հետ եմ, ես հասկանում եմ քեզ: Դա Ֆրիդայի (Նատալյայի, կնոջ) ռազմավարություններից մեկն էր՝ կառչել քո տղամարդուց՝ աջակցելով նրան իր համար կարեւոր գործում, այս դեպքում՝ քաղաքականության եւ գաղափարախոսության մեջ: Արեց այն ամենն, ինչ կարող էր: Մտավ Կոմունիստական կուսակցության շարքերը, այնուհետեւ դուրս եկավ, երբ Մաեստրոյին հեռացրին, որպեսզի հետո, վերջում, նորից միանա նրանց, երբ դա էր միայն իրեն մնացել: Նույնիսկ դադարեց տեսնել Տրոցկուն եւ Նատալյային այն բանից հետո, երբ Մաեստրոն քաղաքական վեճ ունեցավ նրանց հետ: Սո-

վորեց նրա հռետորաբանությունը: Սովորեց խոսել նրա համար կարեւոր բաների մասին՝ հեղափոխության, աղքատության, իրավունքների, բանվոր դասակարգի մասին: Հավատում էր նույն գաղափարներին: Երբեք ամբողջովին հաջողության չէր հասնում, սակայն. գիտեր, որ լիովին համոզիչ չէ, եւ որ իր նկարները հակասում են իր խոսքերին: Դրանք ցույց էին տալիս, որ իրեն իրականում մտահոգում է ոչ թե գաղափարախոսությունը, այլ սեփական ցավը, դրանք ցույց էին տալիս որ իր արվեստը հեղափոխությանը չի ծառայում: Ամեն անգամ, երբ փորձում էր այլ կերպ, արդյունքները վատ էին լինում: Մաեստրոն չափազանց հարգում էր նրա արվեստը, որպեսզի չհասկանար, թե ինչ խնդիր կա: Եվ երբեք նրան չէր ասում, թե ինչ կամ ինչպես նկարի:

Նատալյան լուսանկարները ետ դրեց պայուսակի մեջ եւ մեկ ուրիշը հանեց: Դա երիտասարդ Տրոցկու նկարն էր. ճակատին թափված խիտ, սեւ մազերով էր նա, հանդարտ ժպիտը դեմքին: Ակնհայտ էր, որ լուսանկարն արվել էր շատ վաղուց, նախքան նրա բոլոր երեխաների սպանվելը, եւ նախքան նրա կյանքի՝ համատարած փախուստի վերածվելը: *Նա իմ «դուշան» է, իմ հոգու հոգին,*- ասաց Նատալյան՝ ձեռքը դնելով կրծքին: Ֆրիդան բնազդային հակակրանք ուներ նման պաթոսի հանդեպ: Նատալյան մուգ կապույտ զգեստ էր հագել, եւ նրա գունատ, լյարդագույն բծերով ձեռքն աչքի էր ընկնում մուգ գործվածքի ֆոնին: Ֆրիդայի կոկորդը չորացավ: Նա զգաց այն տխրությունը, որով այժմ ապրում էր Նատալյան: Հասկանալու համար ռուսերեն իմանալու կարիք չկար: Բայց գիտեր «դուշա» բառը, Նատալյայի ամուսնուց էր սովորել: *Դուշա, հոգիս,*- ասում էր նա՝ համբուրելով Ֆրիդայի դեմքը, պարանոցը, կուրծքը: Տրոցկու վերջնական դավաճանությունն այն էր, մտածում էր այդ ժամանակ, որ նա նույն բառն էր ասել ինչպես Նատալյային, այնպես էլ իրեն:

Հիշեց նրա շարժումների ու խոսքերի պարզունակությունը: Ոչ ոք Նատալյայի պես երբեք չէր նկարագրել, թե ի՛նքն ինչ է զգում Մաեստրոյի հանդեպ: Որովհետեւ հենց այդպիսին էր Մաեստրոն՝ իր հոգու հոգին, իր տիեզերքի կենտրոնը, հենց կյանքն ինքը: Շատ տարիներ անց նա նկարեց *«Դիեգոն եւ ես»* նկարը: Մտածելով Նատալյայի մասին՝ արցունքներ նկարեց իր աչքերում: Միայն տասնամյակներ անց նա հասկացավ այդ կնոջը, որն ամբողջովին ուժազրկվել էր ու գունազրկվել,

այդ կնոջը, որը գոյություն ուներ բացառապես ամուսնու շնորհիվ: Վերջինիս խնամելը միակ բանն էր, որ նրան դեռ ողջ էր պահում: Նա ապաստան տվեց ամուսնու անհանգիստ, հալածված հոգուն: Ասես երկրորդ մաշկ լիներ նրա համար:

Իսկ եթե իդեալական սիրո նախապայմանն այն է, որ մեկի հոգին կարող է տեղափոխվել մյուսի դատարկ, ամայի տարածությո՞ւն,- հարցնում էր ինքն իրեն այդ հանդիպումից հետո: Վստահ չէր, թե գիտե պատասխանը:

Երկու տարի անց՝ 1940 թվականի օգոստոսին, Տրոցկու համար Նատալյայի մտավախությունները ճիշտ դուրս եկան: Մի մարդ, որին Ֆրիդան ճանաչում էր, եւ որի ընկերուհին աշխատում էր Տրոցկու համար, սպանեց նրան սառցատապարով:

Երբ լսեց այդ լուրը, անմիջապես պատկերացրեց, թե ինչպես է Նատալյան մտնում Տրոցկու աշխատասենյակ եւ տեսնում նրան հատակին թափված արյան լճակում՝ սառցատապարը գանգի մեջ մխրճված: Նատալյան երեւի զգացել էր, թե ինչպես է նրա հոգին դուրս թռչում իր կրծքից՝ իրենից հետո թողնելով սառցե ամայություն:

Դուք նման եք գիշերային երկնքով անցնող գիսաստղի,- մի անգամ իրեն ասաց Տրոցկին: Փոխաբերությունն իրեն դուր եկավ: Կրակի գունդ, որն այրում է այն ամենն, ինչին դիպչում է, մինչեւ որ ինքը չի այրվում:- Որտեղի՞ց են ծնվում ձեր այդ գույները, այդ կենսախնդությունը, այդ *ալեգրիան*,- ուզում էր իմանալ նա: -Մահին մոտ լինելուց,- պատասխանեց ինքը: Նրա սրաթափանց կապույտ աչքերը նայեցին իրեն ոսպնյակների ետեւից: -Եվ այն ամենն, ինչ մնացել է՝ ինքս ինձ պաշտպանելու համար, ինքնակարգապահությունն է,- քրթմնջաց նա՝ ավելի շատ դիմելով ինքն իրեն, քան Ֆրիդային:

Իր նման՝ Տրոցկին էլ մարտնչող էր, եւ իրեն դուր էր գալիս, որ երկուսին էլ բնորոշ էր դա: Նա երբեք դժվարություններից չէր պարտվում: Ասես ապրում էր ի հեճուկս հանգամանքների, ճակատագրի, աստվածների, բռնակալների: Ինքը տխրեց, երբ լսեց նրա մահվան մասին: Երկու տարուց ավելի չէին տեսել միմյանց, քանի որ նա վիճել էր Մաեստրոյի հետ, որին մեղադրում էր ստալինիստ լինելու համար: Հիշեց, թե ինչպես էր այդ մարդը, այդ «ծերուկը», ինչպես անվանում էր նրան, թեեւ Մաեստրոյից ընդամենը ութ տարով էր մեծ, իր ներկայությամբ իրեն պահում երիտասարդի պես՝ ժամանակավորապես մոռանալով Նատալ-

յայի, իր մահացած երեխաների, փախստականի իր կյանքի մասին: Եվ որքան երախտապարտ էր իրեն՝ մոռացության այդ պահերը նվիրելու համար: Բայց երբ իմացավ մանրամասները, սահմռկեց եւ մտածեց, որ նրա դաժան մահվան մեջ գրեթե անմարդկային մի բան կա: Իմացավ, որ նա թիկնապահներին թույլ չի տվել վերջ տալ մարդասպան Մերկադերին: Գիտակցությունը դեռ բավականաչափ տեղն է եղել, որպեսզի չթողնի: -Մի՛ սպանեք նրան, նա պետք է խոսի,- ասել է՝ հատակին լճացած սեփական արյան մեջ պառկած: Ինքը բավականին լավ էր ճանաչում Տրոցկուն, որպեսզի հասկանար, որ խոսքը խղճահարության մասին չէր մեկ այլ մարդու հանդեպ, որի ճակատագիրը նա պահում էր իր ձեռքերում, այլ այն տեղի մասին, որ Տրոցկին կզբաղեցներ պատմության տարեգրության մեջ: Մահամերձ վիճակում պառկած՝ Լեւ Տրոցկին ուզում էր այդ մարդը՝ իր մարդասպանը, որի կեղծանունն էր Ռամոն Մերկադեր, կանգնի դատարանի առջեւ եւ հաստատի, որ սպանությունը պատվիրել է Ստալինը: Նա գիտեր, որ մարդասպանի կյանքը կարեւոր է հենց իր՝ Տրոցկու անմահության համար: Ֆրիդան հիացած էր, որ նա կարողացավ պահպանել այդպիսի երկաթյա կամք՝ նույնիսկ վերջին շնչում: -Նա՛, ո՛չ թե Ստալինն էր երկաթյա,- մտածեց այդ ժամանակ:

Չէր կարողանում հայացքը հեռացնել Ստալինի դիմանկարից: Իր համար շատ ուշ էր՝ ոչնչացնել սեփական փխրուն թուլակամության եւ հուսահատության այդ վկայությունը: Մտածեց՝ պետք է որ խելքը կորցրած լիներ, երբ մեկ տարի առաջ նրա մահը կորուստ էր անվանել: Հիմա կարող էր ինչ-որ ինքնահեգնանք թույլ տալ իրեն, բայց հենց այդպես էր տարել Ստալինի մահն այն ժամանակ: Վերջին տարին անցկացրել էր մի տեսակ կրոնական եռանդի մեջ: Դա պայմանավորված էր իր ֆիզիկական վիճակով, իր՝ արդեն իսկ ակնհայտ անկումով: Իսկ երբ մասնատվում եք, պետք է գտնեք ինչ-որ բան, որից կառչեք, ինչ-որ բան, որ կպահի ձեզ՝ առաջ շարժվելը շարունակելու համար: Վերադարձավ քաղաքականություն, քանի որ քաղաքականությունը, ինչպես սերը, կապ էր ստեղծում: Դա կապի, հաղորդակցության միջոց էր, կարող էր օգնել իրեն՝ մի քիչ երկար ապրել: Ստալինը մարմնավորել էր ֆաշիզմի դեմ պայքարը: Ինքը միակը չէր, որ աչք փակեց Սիբիրի աշխատանքային ճամբարների կամ Տրոցկու եւ նրա որդիների սպանության վրա: Եվրոպական ձախերը, նույնիսկ իր ընկերներն ու Մաեստրոն, տառապել էին նույնատիպ կուրությամբ:

Ինչպես ամեն մի կրոնի, այնպես էլ կոմունիզմի դեպքում՝ գաղափարի հանդեպ հավատն ավելի կարեւոր էր, քան նրա անունով կատարված հանցագործությունները,- մտածեց Ֆրիդան՝ նայելով, թե սենյակի լույսն ինչպես է հետզհետե ուժեղանում:

Կրկին հիշեց Նատալյայի մահացած որդիների երկու փոքրիկ լուսանկարները: Նատալյան, ավերված ու ամայի հոգով, նստած էր ինչ-որ տեղ Մեխիկոյում, երբ Ֆրիդան, Տրոցկու սպանությունից ութ տարի անց, նորից միացավ Կոմունիստական կուսակցությանը՝ ասելով, որ ուզում է իր կյանքը նվիրել հեղափոխությանը եւ *ինչ-որ օգտակար բան* նկարել: -Մի՞թե մարդ կարող է այդքան փոխվել,- մտածեց, թեեւ գիտեր՝ պատասխանն այո էր: Հաբերն էին իրեն այդպիսին դարձրել: Եվ ալկոհոլը: Եվ թմրադեղերը: Եվ ցավը, որի անկառավարելի դեւը դուրս էր եկել վերահսկողությունից:

Ինձ համար անիմաստ է հիմա ամաչել այդ նկարներից,- մտածեց: Չորս տարի առաջ արված՝ մեջքի տարբեր վիրահատություններից հետո զգում էր, թե ինչպես է սահում դեպի անդունդ: Անդամահատումն այդ ճանապարհի վերջին կանգառն էր: Ավելի ու ավելի քիչ էր վստահում ձեռքերին: Սկզբում կորցրեց գույների վերահսկողությունը: Դրանք դարձան պղտոր, ասես յուրաքանչյուրի մեջ չափից ավելի մոխրագույն կար: Նկարում էր կեղտոտ վրձիններով եւ հախուռն շարժումներով, շերտ առ շերտ: Նրա արվեստի քայքայումն ավելի ու ավելի տեսանելի էր դառնում՝ սկսած այն բանից, թե ինչպես էր խառնում գույները, մինչեւ իր ընտրած լեյտմոտիվը: Եվ դա հետզհետե սաստկանում էր, ինչպես փտախտը: Ինչպես վարակը, որ ոտքից, արյան միջոցով, տեղափոխվեց կտավների վրա: Նկարչությունը պահանջում է ճշգրտություն եւ վերահսկողություն, իսկ նա կորցրել էր երկուսն էլ: Ինքն իրեն ասում էր, որ նկարները նվիրված են հեղափոխությանը, բայց գիտեր, որ դրանք պարզապես վատ նկարներ են: Անշնորհք, քաոսային, հիմար նկարներ: Քանի որ հիվանդությունն այժմ տարածվել էր նրա ուղեղում: Կոմունիզմը նրա վերջին կապն էր աշխարհի հետ, եւ նա վրդովված էր, որ իր ձեռքը չէր կարող հետեւել իր իդեալներին: Ասես նրա մարմինը գիտեր, որ հեղափոխությանը միանալը նշանակում է իր լիակատար պարտությունը, վերջը:

Ներկի շերտերը կտավի վրա եւ շպարանքի շերտերը նրա դեմքին ավելի ու ավելի թանձր էին դառնում:

Նա անհետանում էր, դա զգում էր մատների ծայրերում:
Նրա մեջ գտնվող փոքրիկ աղջիկը երբեք չէր հանել մահվան դիմակը:

Ոտքի մատների անդամահատումից հետո նա ավելի ու ավելի հաճախ էր մտածում ինքնասպանության մասին: Մաեստրոյին ասաց, որ այլեւս չի կարող նկարել: -Երբ բռնում ես վրձինը, եւ ձեռքդ դողում է,- ասաց նրան,- երբ այլեւս չես կարողանում գույները խառնել, երբ տեսողությունդ մշուշվում է, երբ վերահսկողությունդ կորցնում ես եւ զգում ես հոգնածության անդիմադրելի ձգումը, ապա պետք է հանձնվես: Հարցը միայն այն չէ, որ այլեւս չեմ կարողանում կառավարել իմ ձեռքը, ես նույնիսկ չեմ կարողանում մտածել: Ես այլեւս ասելու ոչինչ չունեմ եւ գիտեմ, որ ավելի վատ է լինելու, ոչ թե լավ: Ի՞նչ կանեիր դու,- հարցրեց նրան: -Մնա ինձ հետ, մնա հանուն ինձ, դու ինձ պետք ես,- պատասխանեց Մաեստրոն՝ չպատասխանելով նրա հարցին:

Այդ ժամանակ բավական էր հավատալ, որ նա իր կարիքն ունի: Դա բավական էր իր սնափառությունը սնուցելու համար: Բայց հիմա մտածեց, որ նա իսկապես չի հասկացել իր հարցը: Մաեստրոն երբեք չէր ունեցել այդ տանջալից անօգնականությունը, վերահսկողությունը կորցնելու այդ զգացումը:

Ներեցեք ինձ, եթե կարող եք, Նատալյա, Ստալինի դիմանկարի համար: Ես դա նկարեցի Մաեստրոյի պատճառով: Այո, դա իմ արդարացումն էր իմ թույլ տված այդքան շատ հիմար սխալների համար: Մտածում էի, որ եթե արվեստիս մեջ զոհաբերեմ ցավ արտահայտելու իմ կարիքը, նա նորից ուշադրություն կդարձնի ինձ: Բայց ի՞նչ զոհաբերություն է դա, երբ ոչ ոք դրա կարիքը չունի կամ չի խնդրում, եւ երբ, ի վերջո, դրանից ոչինչ չես ստանում: Ծիծաղելի էր մտածել, որ եթե ես նկարեմ հեղափոխության համար «օգտակար» նկարներ, դա կարող է ամրապնդել իմ հարաբերությունները Մաեստրոյի հետ: Դա էժան գաղափար էր եւ փոխզիջում: Նա երբեք ինձ չէր խնդրում քաղաքական ներգրավվածություն ունեցող նկարներ նկարել. նա միայն շատ լավ գիտեր, որ իմ վերջին նկարները, ներառյալ Ստալինի դիմանկարը, հուսահատության արարքներ էին:

Երբ սկսում ես քայքայվել այնպես, ինչպես ես, ի՞նչ է քեզ մնում: Ես հավատում էի ինքս ինձ, իմ ուժին՝ որ կհաղթահարեմ այս հիվանդությունը: Այլեւս չունեմ այդ ուժը: Ես հավատում էի սիրո իմ ինքնահնար

առասպելին: Նույնիսկ դա արդեն բավարար չէ, որ կարողանամ շարունակել: Որովհետեւ որոշ ժամանակ անց Մաեստրոյի նկատմամբ իմ սեփականատիրական սերը մահացու թույն դարձավ երկուսիս համար էլ: Եվ թույնը սպանում է ինձ: Բայց նախ պետք է խոստովանեմ, որ դավաճանեցի ոչ միայն ձեզ, այլ նաեւ ինքս ինձ: Վերջին այս մի քանի տարին ես ավելի ու ավելի եմ վերածվել հիվանդ, քրքրված ու հոշոտված խելագար կնոջ, որ ճանկերը խրել է իր զոհի կենդանի մարմնի մեջ՝ սնվելով նրա տաք արյունով: Երկար ժամանակ ես Մաեստրոյի զոհն էի, բայց հիմա նա՛ է դարձել իմ զոհը:

Իմ գոյության միակ միջոցը, Նատալյա, մակաբույծի պես ուրիշների կյանքով սնվելն է:

Դուք քաղաքակիրթ անձնավորություն եք եւ գոնե գիտեիք՝ ինչպես զուսպ ու խոհեմաբար ճնշել սեփական անհատականությունը, ինչպես ապրել հանճարի ստվերում: Դուք ձեզ նվիրեցիք նրան, եւ դա արդյունք տվեց: Ես նախանձում էի ձեր ունակությանը՝ ոչնչացնել սեփական անձը՝ ուրիշին տեղ բացելու համար, եւ միեւնույն ժամանակ արհամարհում էի ձեր ստրկական պահվածքը:

Իմ սեփական անխոհեմ բնույթը միշտ ստիպում էր ինձ բաղեղի պես փաթաթվել տղամարդուն, մինչեւ որ սկսեցի խեղդել նրան: Վաղուց էի զգում, որ բեռ եմ նրա համար, եւ որ երկուսս էլ պարտվող ձախողակներ ենք դարձել: Վախենում եմ, որ վերածվել եմ տղամարդ խժռող մարդակեր բույսի: Վախենում եմ ինքս ինձ համար: Գիտեմ, որ եթե իսկապես մտածում եմ Մաեստրոյի մասին, պետք է հնարավորինս շուտ հեռացնեմ ինձ նրա կյանքից:

Ոչ ոք չի կարող կիսել իմ տառապանքը, նույնիսկ Մաեստրոն: Նա գիտե, թե որքան եմ տառապում, բայց իմանալը նույնը չէ, ինչ ինձ հետ տառապելը,- մտածեց Ֆրիդան:

Իր նկարներում նա խոսում էր ցավի լեզվով: Բայց ավարտելուց հետո նկարն այլեւս միայն նրա ցավը, միայն նրա փորձառությունը չէր արտահայտում: Ցանկացած մարդ կարող էր նույնականացնել իրեն նրա հետ եւ նրա ցավն զգալ՝ ինչպես *սեփական ցավը:* Որքան էլ դրանք դրամատիկ լինեին, նրա նկարները ոչ միայն կարեկցանք էին առաջացնում, այլեւ անմիջական նույնականացում սեփական տառապանքի հետ: Ավարտելուց հետո նկարներն այլեւս նրան չէին պատկանում: Դրանք գերազանցում էին նրան: Երբ Մաեստրոն նայում էր նրա նկարներին,

տեսնում էր նաեւ իր ցավը: Ֆրիդան դա գիտեր. դա նշանավորում էր եւ՛ իր հաղթանակը, եւ՛ իր պարտությունը:

1938 թվականի գարնանն Անդրե Բրետոնը Մեքսիկայում այցելում էր Տրոցկուն եւ հանդիպեց Ֆրիդային: Նա հիացավ Ֆրիդայի նկարներով՝ դրանք անվանելով սյուրռեալիստական: Ֆրիդան ծիծաղեց՝ օրորելով գլուխը: -Ոչ,- ասաց,- դրանք պարզապես ինքնակենսագրական են: Ես իմ կյանքն եմ նկարում, ուրիշ ոչինչ: Ես նկարում եմ իմ ցավը:- Բրետոնը չէր հասկանում, որ նրա կյանքն է սյուրռեալիզմի մարմնավորում: Բրետոնի ամենասիրած նկարն էր *«Ինչ տվեց ինձ ջուրը»:* Նա դրա մեջ էկզոտիկա էր տեսնում, երեւակայություն, երազանքներ: Ֆրիդան տեսնում էր սեփական հիշողությունները: Նա Ֆրիդային առաջարկեց մասնակցել 1939 թվականի մարտին Փարիզում կազմակերպվելիք ցուցահանդեսին: Մաեստրոն համոզեց դա անել, եւ Ֆրիդան դա համարեց պարտավորություն: -Բրետոնի ցուցադրությունը սիրողական էր եւ մակերեսային,- հետագայում գրեց տուն ուղարկվող նամակում:

Այդ գարնանը Փարիզում մրսում էր (նա ամեն տեղ էր մրսում, բացի Մեքսիկայից): Մնում էր բրետոնների մոտ՝ նրանց անխնամ բնակարանում, որտեղ կիսում էր ննջասենյակը նրանց դստեր հետ: Հետո հայտնվեց հիվանդանոցում՝ երիկամի եւ միզապարկի վարակով: Եթե չլիներ Բրետոնի կինը՝ Ժակլինը, որի հետ Ֆրիդան ընկերացել էր եւ որը նրա հետ շրջել էր շուկաները՝ իր հավաքածուի համար հին տիկնիկներ փնտրելու, Ֆրիդան ամբողջովին կորած կլիներ: Փարիզից մեկնելիս իր հետ տարավ միայն երկու հին տիկնիկ եւ տխուր հիշողություններ:

Պիեռ Կոլիի պատկերասրահում «Mexique» ցուցահանդեսի բացման ժամանակ նա այնպես էր զգում, ասես ինքն է ցուցադրվում որպես մեքսիկական բանահյուսության տարր: Միրոն, Կանդինսկին, Դյուշանը, բոլորը հմայված էին նրա նկարներով: Քննադատները հիացած էին, բայց նա բարկացած էր Բրետոնի վրա, որովհետեւ վերջինս իր նկարները դրել էր լուսանկարների, նախակոլումբիական քանդակների եւ իր կիտչի տիպի սեփական հավաքածուի հետ, որ վաճառվում էր Մեռյալների օրը՝ շաքարից պատրաստված գանգեր, թղթե կմախքներ, տիկնիկներ, ծաղիկներ, քաղցրավենիք: Vogue հանդեսի շապիկին պատկերված էր նրա մատանիով ձեռքի լուսանկարը՝ անվանված «Madame Rivera»: Նա սյուրռեալիստական սրբապատկեր դառնալու ճանապարհին էր, բայց

դա իրեն չէր հետաքրքրում: Պիկասոն հմայված էր եւ նրան նվիրեց կրիայի պատյանից պատրաստված՝ մանրանկար երկու ձեռքեր պատկերող ականջօղեր, որ շատ արագ դարձան նրա սիրելի զարդերը: Եվ սովորեցրեց որբուկի մասին իսպանական մի երգ, որն ինքը հետո հաճախ երգում էր քթի տակ:

Նա չէր հավատում, որ ինքը հայտնի է նույնիսկ այն ժամանակ, երբ Լուվրը գնեց իր ինքնադիմանկարներից մեկը: Որպես նկարչուհի փառամոլ չէր: Ինչպես ծանր հիվանդությամբ տառապող յուրաքանչյուրի դեպքում, նրա համար էլ այն փաստը, որ ինքը ողջ էր, բավական էր որպես հատուցում եւ պարգեւ: Երբեմն կանգ էր առնում խոհանոցում աշխատելու պահին՝ ձեռքի փայտե գդալից համեմունքն ու սոուսը կաթելով, կամ դանակը ձեռքին նայում էր հացի փշրանքներին կամ դանակի հետքերին՝ հաց կտրելու տախտակի վրա: Եվ կամ, ուտելիքի համը դեռ բերանում, նկատում էր վրձնի ծայրի ներկը՝ մինչեւ այն կտավին դիպչելը: Կանգնում էր այդտեղ՝ հանկարծակի սուր կերպով գիտակցելով յուրաքանչյուր առարկան, իր մարմնում, աշխարհում առկա՝ իր յուրաքանչյուր շարժումն ու շնչառությունը: Իր գոյության անտարակուսելի փաստը, թեկուզեւ կարճ ժամանակով, այդ օրը, այդ պահին, այդ վայրում, անուրանալի էր, վառ եւ կենդանի:

Այդպիսի պահերը նրա կյանքին այլ իմաստ էին տալիս: Ինչ էլ որ պատահում էր միայն գոյատեւման պարզ արարքից դուրս, նրա համար դրական բան էր: Եթե գոյատեւումն ինքնին հաջողություն էր, ապա մնացած ամեն ինչ հարաբերական էր դառնում:

Իրեն որպես տարաշխարհիկ, հմայիչ սիրողական պատկերելը, արվեստի կարեւորությունն իր կյանքում նսեմացնելը, այնպես, որ խուսափի լուրջ դատողության եւ մրցակցության ենթարկվելուց, միայն Մաեստրոյի հետ ունեցած իր հարաբերությունների պատճառով չէր: Նույնիսկ այն ժամանակ, երբ քննադատները նրան ջերմ ընդունելության արժանացրին Փարիզում եւ Նյու Յորքում, Ֆրիդան ինչ-որ կերպ անտարբեր մնաց դրան: Նրան դուր էր գալիս ուշադրության կենտրոնում լինելը եւ իր նկարները վաճառելը, բայց միայն այդքանը:

Իր նկարները *փոքրիկ էին եւ անկարեւոր,* ինչպես սովորություն ուներ ասելու, ոչ թե Մաեստրոյի հետ համեմատած, այլ իր կեցության հիմնական, բուն փորձի համեմատությամբ: Եվ այս գիտակցությունը ազատագրող ազդեցություն էր ունենում Ֆրիդայի վրա:

Այդ պատճառով էլ կարող էր նկարել սեփական աբորտը, կոտրված մեջքը, արնահոսող սիրտը եւ վիրահատություններից չսպիացած վերքերը: Երբ նայում եք «Հույսի ծառին», հեշտ է պատկերացնել, թե ինչպես է վիրաբույժի նշտարը սահում անկողնում գտնվող կնոջ թիկունքն ի վար՝ շերտ-շերտ կտրատելով նրա նուրբ մաշկը: Հետո ավելի խորն է կտրում՝ բացելով միսը, մինչեւ որ նշտարը հասնում է ոսկորին եւ ողերին: Նկարն այնքան մտահարույց է, որ ստիպում է սարսռալ: Բայց նույնիսկ երկու աչքի ընկնող, արյունոտ կտրվածքներն այնքան զարմանալի չեն, որքան սեղմիրանը, որ ձեռքին բռնել է մյուս Ֆրիդան, որը նստած է դեռեւս անգիտակից այս մեկի կողքին: Սեղմիրանը վարդագույն է, գեղազարդ տեսք ունի - «խոշտանգման գործիքի» պես չէ, ինչպես այն անվանում էր Ֆրիդան - եւ նման է իր լայն, կարմիր շրջազգեստի տակ հագածին:

Սեղմիրանը սահմանափակում էր նրա շարժումները, անհարմար էր եւ ցավոտ, բայց դա նրա թիկունքն ուղիղ էր պահում եւ թույլ էր տալիս շարժվել եւ նստել ու նկարել: Ոչ միայն որոշակի օտարվածություն, այլեւ հումորի զգացում էր պետք՝ սեղմիրանը ներկել գարնանային զգեստի գույնով, մազերի ժապավենների եւ երեխայի ծննդյան օրվա տորթի վրայի ջնարակի գույնով, նույնիսկ ծգտել դափնեվարդի ծաղկի նուրբ երանգին եւ այդ տրտմաթախիծ նկարը տոգորել օդային կենսուրախությամբ:

Այնուամենայնիվ, այդտեղ մի տարր կա, որը հեշտ է չնկատել: Ֆրիդային նկարելու հնարավորություն է տալիս ոչ միայն սեղմիրանը, այլեւ սեփական երկաթե կամքը: Ընդհանրապես նկարելու համար նա նախ պետք է հագնի այդ նույն վարդագույն սեղմիրանը. միայն դրանից հետո կարող է նստել կտավի առջեւ, կամ իրեն վեր քաշել՝ անկողնում ծգվելով նստած դիրք ընդունելու համար: Նախքան հագնվելը (եթե իրեն բավականին լավ է զգում այդ օրը, կարող է այդ գործում օգնության կարիք չունենալ) սկզբում պետք է հագնի սեղմիրանը: Իսկ նա դրանց լայն տեսականի ուներ՝ գիպսե հարմարանքներից, որոնք անշարժացնում էին նրան եւ երբեմն երկար ժամանակ գամում անկողնուն, մինչեւ քիչ թե շատ ճկուն՝ կաշվե, պլաստմասե կամ մետաղական կառուցվածքներ, ինչպիսին իր ձեռքում բռնածն է: Սեղմիրանը հագնելուց հետո կարող էր հագնել լայն շրջազգեստները, որոնք թաքցնում էին այն: Նրա համար բավական չէր լինել ինքնակարգապահ, ինչպես մյուս նկարիչները.

Ֆրիդան պետք է նաեւ կարողանար դիմանալ սեղմիրանը կրելու անհարմարությանը:

Նստում էր եւ նկարում այնքան ժամանակ, մինչեւ սաստիկ հոգնածություն էր սկսվում, եւ ցավը դառնում էր անտանելի: Երբեմն այդ ամենը տեւում էր մի քսան րոպեի չափ: Դա ամենօրյա կռիվ էր եւ կախված էր նրանից, թե ինչպիսի ցավ է ձեռք բերել նույն դիրքում այդքան երկար նստելուց: Կարող էր լինել ակնթարթային, ծակող ցավ, որ անցնում էր, եթե նա փոխում էր դիրքը, կամ կարող էր լինել բութ, ավելի մեղմ ցավ, որն ազդարարում էր բորբոքման մշտական առկայության մասին: Ցավը հաճախ ուղեկցվում էր տենդով, հետո զգում էր, որ ոսկորները ջարդվում են, իսկ մարմինը կտոր-կտոր է լինում: Այդպիսի ցավի դեպքում, որ ուժասպառ անող էր եւ անողոք, նա արագ ցած էր դնում վրձինը եւ դադարում նկարել: Երբեմն կարծում էր, որ ծակող ցավն ավելի հեշտ է տանել, քանի որ, եթե նույնիսկ դրանից շունչը կտրվում էր, դա նրան կարճատեւ հանգստի պահեր էլ էր տալիս: Սովորաբար, սակայն, նա ցավի տհաճ ու անախորժ սահմանագծին էր, որը, դեմերոլի ներարկումների օգնությամբ, գրեթե կարողանում էր անտեսել, նույնիսկ մոռանալ, երբ կենտրոնանում էր իր նկարածի վրա:

Երբ հիվանդացավ թոքաբորբով, հրաժարվեց հիվանդանոց գնալ: Բոլորի համար ավելի հեշտ կլիներ, եթե համաձայներ գնալ, բայց համառորեն ասաց ոչ: Այդուհանդերձ, բոլորը կարծում էին, որ կապաքինվի, քանի որ թոքաբորբը սարսափելի բան չէր. նա ավելի վատ բաներից էր ողջ մնացել: Ո՛չ Քիթին, ո՛չ Մաեստրոն մի բան չէին հասկանում. այն, որ նա հոգնել էր *ողջ մնալուց,* եւ վերջ: Նրա մարմինն անցել էր հիվանդության, սպիների, ցավի եւ հոգնածության իր ուղին: Եվ մարմինը հիշում էր: Այն դանդաղ հաշվում էր, մինչեւ որ հասավ հանրագումարին: Ֆրիդայի եւ նրանց միջեւ տարբերությունն այն էր, որ նա տեղյակ էր այդ մասին: Հագած իր ամենագեղեցիկ զգեստները, հավատարիմ զուգընկերոջ նման փաթաթված իր կմախքին՝ նա պատրաստակամորեն պարում էր մահվան տանգոն:

Եվ այնուամենայնիվ, եթե վթար չլիներ, նկարչություն չէր լինի: Կամ Մաեստրոյի հետ կյանք: Ինքը գյուղական բժիշկ կլիներ. ուզում էր բժշկություն սովորել: Կլիներ ուրիշ մեկը: Ցավի եւ այդ բոլոր վիրահատությունների փորձառությունը նրա կյանքի եւ արվեստի միջեւ կապող թելն

էր: Այդ թելը դրանք իրար էր կապում՝ վերք կարող վիրաբույժի պես: Դրանք նման էին պորտալարի, նկարները սնվում էին նրա ընկերքով՝ ներծծելով իր կյանքը:

Բայց հիմա նրա պարն ավարտին էր մոտեցել: Ոչ միայն թոքաբորբի պատճառով, որն այս անգամ չէր անցնում. դա կարող էր տեսնել իր շրջապատի մարդկանց դեմքերին: Սովորաբար Քիթին սենյակ էր մտնում շատ հանգիստ, Ֆրիդայի քնած լինելու դեպքում: Եվ նա, իհարկե, իրավացի էր, որովհետեւ Ֆրիդան կամ քնած էր, կամ, հաբերի ու դեղամիջոցների շնորհիվ, քնի եւ գիտակցության արանքում՝ այդ հաճելի ինքնամոռաց անորոշության մեջ: Բայց վերջին այդ մի քանի օրերին զգում էր, որ Քիթին, չնայած բոլոր ջանքերին, այլ կերպ էր իրեն պահում: Նախկինի պես մտածկոտ չէր: -Կարծես վարժվում է, թե ինչպես ապրի, երբ այլեւս չլինեմ,- մտածեց նա: Դա մի բան է, որին պետք է ընտելանալ, եթե ուզում ես շարունակել ապրել ինքուրույն: Ակնհայտ ոչինչ չկար, անզգույշ աղմուկը մատնում էր նրան, օրինակ՝ աթոռի տեղաշարժը: Կամ սառնությունը, որն այժմ բուն էր դրել նրա աչքերում, երբ նայում էր մահճակալին, կարծես այն արդեն դատարկ էր:

Քիթին զգում էր, որ դա վերջն է: Նա գիտեր, որ մահը երկար չի կարող տեւել: Ֆրիդայից քիչ բան էր մնացել այդ քայքայվող մարմնում: Նա հեռանում էր: Ամեն օր նա ավելի ու ավելի շատ ժամանակ էր անցկացնում այդ անորոշ մոռացության վիճակում: Այդ վիճակում ցավ չէր զգում, բայց ինքն իրեն էլ չէր զգում:

Որոշ ժամանակ նա չէր կարողանում ճշգրիտ որոշել ցավի աղբյուրը, որը վաղուց դարձել էր իր մարմնի մի մասը, գրեթե հոմանիշը, բայց այժմ այն դարձել էր համընդգրկուն ու ամենակուլ: Այժմ հանգստի ոչ մի պահ չուներ. ցավը մշտական էր.

Կազմալուծումը միակ բառն է, որ գալիս է մտքիդ: Որքա՜ն հիմար եմ եղել, որ ինչ-որ հույսեր եմ ունեցել: Ինչի՞ համար: Նրա համար, որ ցավը՝ իմ դիվային տերն ու տիրակալը, հավերժ անհետանա՞: Որ ցավերի միջեւ ընդմիջումները երկարեն, ոչ թե կարճանա՞ն: Ի՞նչ իմաստ ուներ այդ ամբողջ ինքնախաբեությունը: Գուցե իմ լիակատար ցնորվելը դադարեցնելու համար էր: Ենթադրում եմ, որ երբ այդ ամենը չափից դուրս

շատացավ, խելացի թվաց հուսալը: Իրականում ես ինձ շատ խելացի պահեցի: Ես իմ մարտավարությունն ունեի: Իմ մարմինը ղեկավարում էր իմ ամբողջ կյանքը: Ես ատում էի ինքնագոյատեւումի, ինքնապահպանման այդ սարսափելի բնազդով հարկադիր ապրելը, մինչեւ այն աստիճան, երբ ինքդ քեզ ասում ես. -Ինչ գնով էլ լինի, կարեւոր չէ, ուղղակի թողեք ապրեմ: Կաղ, ծռված, ջարդված, կիսամեռ: Եվ արդեն մեռած, քարի պես սառը:- Քանի՞ օր կամ ժամ է ինձ մնացել: Ներսումս ինչ-որ բան դեռ կառչում է մարմնի այս ողորմելի խլյակից, բայց փտումը տարածվում է եւ պատրաստվում է կլանել ինձ:

Ամենավատն այն է, որ գիտեմ՝ նույնիսկ իմ մարմնի մնացորդի այս մնացորդը ուժ կգտնի շարունակելու: Առանց ոտքի, առանց երկու ոտքի, եթե պետք է, առանց թեւի: Այնքան բան կա, առանց որոնց կարող ես ապրել: Բայց գուցե ոչ առանց սրտի՞: Մարմինը կշարունակի, այո: Բայց կարելի՞ է դա ապրել կոչել: Ամենավատն այն է, որ մարմինը նույնիսկ ընդունել է հաճույքից զուրկ կյանքը: Որովհետեւ մենք այլեւս նույնը չենք: Այն, որ ես դեռ զգում եմ մարմինս, որ, տեսեք, կարող եմ շարժվել, կողքիս շրջվել, հազալ, ծգվել, այլեւս ոչինչ չի նշանակում: Սրտխառնոց եմ զգում դրանից: Այս ավերված խլյակը նողկալի է ինձ համար, ես այլեւս չեմ կարող դիմանալ ենթավարձակալման այս ստորացմանը: Եվ ահա ես, ի վերջո, պարտված եմ: Որովհետեւ ի՞նչ եմ ես անում: Այն փոքր ողջախոհությամբ, որն ինձ մնացել է, փորձում եմ տեսնել, թե ինչ է մնում իմ առանձին մասերից, եւ հաշվել իմ ունեցած վիրահատությունների քանակը:

Ինչու՞ չհաշվել իմ ունեցած հեշտանքների քանակը: Անկասկած, երեսուներկուսից ավելին էին: Բայց ես դրանք վաղուց մոռացել եմ. հաճույքն ավելի շուտ է մոռացվում, քան ցավը:

Հոտից կարող եմ ասել, որ սա վերջն է: Արդեն կարող եմ լսել, թե ինչպես է երկիրն իր հողն անամոթաբար տեղաշարժում՝ ինձ համար տեղ ազատելու համար:

«Արմատներ» *նկարում Ֆրիդայի մարմնից արդեն կանաչ, մսեղ բույսեր են ընձյուղվում: Դրանք պարուրվում են նրա մարմնի շուրջը, ինչպես կենդանու շոշափուկները, դուրս սողալով, ավելի ու ավելի խորը թափանցելով չոր հողի ճաքերի մեջ: Դրանց ծայրերից դուրս են ցցվում բարակ, երականման, արյունով լի փոքրիկ արմատներ: Ժամանակի*

հարց է՝ մինչեւ նրա ամբողջ արյունը կհոսի ծարավ հողի մեջ: Նրա սիրտն արդեն անարյուն է, չորացել է, արգանդը՝ նույնպես. դրա տեղում գտնվող անցքի միջով կարող եք տեսնել բնապատկերի մի մասը: Թեեւ մարմինը դեռ ամբողջական է: Միգուցե նա ուժ չի ունեցել նկարելու կենդանի մարմնի կազմալուծումը, եւ այդ պատճառով՝ սկզբում կարող եք կարծել, թե սա նրա եւս մեկ գեղազարդ, թեեւ հիվանդագին, նկարներից է՝ իր չափազանցված գեղեցկությամբ: Արդյո՞ք նա գեղեցկությունն օգտագործել է՝ խղճահարություն առաջացնելու համար այդ կնոջ/իր հանդեպ, որը պառկած է այդտեղ եւ հանգիստ կլանվում է բույսերի կողմից: Բայց նկարին ավելի ուշադիր նայելիս երեւում է, որ Ֆրիդան արմունկները հենել է բարձին, ասես ինքն արեւային լոգանք է ընդունում, ոչ թե կիսով չափ բանջարեղեն է: Ինքնահեգնանքը բացառում է խղճահարությունը եւ շփոթմունք է առաջացնում:

Նրա աչքերը բաց են, նա դեռ կենդանի է, թեեւ արդեն մարդակեր բույսեր է աճեցնում: Կենդանի դիակի գեղեցկությունը հազիվ թե աչք շոյող է կամ հաճելի: Ընդհակառակը: Բարեկազմ մարմինն այստեղ նրա համար է, որպեսզի ընդգծի իր անողոք տարրալուծումը բուսական սննդի, պարարտանյութի մեջ: Ահա թե ինչու մահացող Ֆրիդան ոչ թե խղճահարություն է առաջացնում, այլ սարսափ մահվան առջեւ, որի սերմը մենք բոլորս կրում ենք մեր որովայնում: Այդ սերմից ծլարձակած հսկա բույսը ժամանակից շուտ պատռում է նրա որովայնը:

Բայց, այդ դեպքում, ինչո՞ւ է նա այդքան հանգիստ, ինչո՞ւ հոգեւարքի տառապալից նշաններ ցույց չի տալիս: Որովհետեւ շատ երկար է տառապել եւ սովոր է դրան: Ինքը նա է, ով ճնշում է ցավը եւ արհամարհում մահը: Պառկած է գետնին. չնչին գիջում, որպեսզի դիտողը կարողանա գնահատել մահվան մոտիկությունը: Եթե նրան պառկեցրած լինեին անկողնու վրա, այդ բոլոր տերեւներն, ավելի շուտ, կարող էին թվալ որպես զարդանկար, ոչ թե մահվան բաղեղ, որը ներկայացնում են, բաղեղ, որ զգուշորեն ու միտումնավոր պարուրել է ամեն բան, բացի նրա պարանոցից, չուզենալով ընդհատել նրա տառապանքը: Նրա տանջալի ցավն ակնհայտ է դառնում, ճիչը բաց բերանից չի գալիս, այլ հենց մարմնի տեսքից, որն ագահաբար խժռում են բույսերը: Ինչպե՞ս կարող են մարդիկ հասկանալ նրա տառապանքը, եթե այս նկարը չստիպի նրանց՝ այդ ամենն զգալ իրենց վրա:

Երեկ, թեեւ այլեւս վստահ չէր՝ երեկ էր, թե մեկ այլ օր, Քիթին իրեն թարմ վարդեր բերեց: Այդ մուգ կարմիրները, որոնք դիպուկ անվանել են Դոն Ժուան: Դեմքը թաղել էր ծաղկեփնջի մեջ՝ ներշնչելով դրա բուրմունքը: -Այնքան հոգնած եմ,- ասել էր: Քիթին հասկանում էր, նա հստակ գիտեր, թե ինչ նկատի ուներ: Նա վերջերս իրեն ցավազրկող ներարկումներ էր անում: Գիտեր, թե որտեղ են Ֆրիդայի դեմերոլի եւ մորֆինի թաքստոցները: Դա բարդ չէր: Ներարկիչում երանելի նյութից մի քիչ ավելի՝ եւ նա երբեք չէր արթնանա:

Ազատիր ինձ այս սարսափելի բանտից,- ասաց: Հասկացավ, որ այժմ Քիթիից ազատություն է աղերսում ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ սիրո համար էր աղաչել:

Բայց Քիթին չպատասխանեց: Ո՛չ այո ասաց, ո՛չ՝ ոչ: Ֆրիդայի գլուխը բարձրացնելով՝ մի բաժակ ջուր մոտեցրեց չորացած շուրթերին: Հետո ջրով բացած քացախով թարմ թրջոց դրեց ճակատին: Նա իր սառը ձեռքը դրեց Ֆրիդայի այրվող ձեռքի վրա եւ պահեց այնքան, մինչեւ ջերմությունն սկսեց իջնել: Ֆրիդայի շնչառությունը մակերեսային էր, ամեն մի շունչը ջանք ու լարում էր պահանջում: -Խնդրում եմ,- աղաչեց մեղմորեն: *Խնդրում եմ:*

Գնալուց առաջ Քիթին վարդերը տեղավորեց ծաղկամանի մեջ եւ ծաղկամանը դրեց սեղանին՝ այնպես, որ Ֆրիդան կարողանա տեսնել: -Վաղը կեսօրին կգամ,- ասաց: -Վաղը կեսօրին,- մտածեց Ֆրիդան, իր վաղն այնքան հեռու է:

Ասես այրվում էր կրակի մեջ: Լույսի ասեղներ էին պարում աչքերի առջեւ, եւ չէր կարողանում ճանաչել սենյակի առարկաները, թեեւ հիմա լույսն ավելի ուժեղ էր: Որքա՞ն ժամանակ պետք է սպասեր վերջին:

Եվ ինչո՞ւ ընդհանրապես սպասել:

Վաղուց արդեն մահն էր զբաղեցրել Մաեստրոյի տեղն իր անկողնում: Անխոս համաձայնության էին եկել, որ եթե անգամ զգար նրա ներկայությունը, Ֆրիդան անտեսելու էր դա: Նա լուռ գործընկեր էր, ինքնահաստատվելու կարիք չուներ: Մահը հանգիստ կթողներ իրեն, հենց որ իր ժամանակը գար: Եվ հիմա այդ ժամանակը եկել էր:

Մաեստրոն չի կարող քեզ այսպես տեսնել,- օրերս ասել էր Քիթին:- Նա քեզ չափազանց շատ է սիրում, եւ իր համար ծանր կլինի տեսնել, թե ինչպես ես տառապում:

Նա վախկոտ է,- պատասխանեց՝անմիջապես էլ զղջալով այդ խոս-

քերի համար:- Խե՜ղճ մարդ, նա մեղավոր չէր, որ չկարողացավ դիտել քայքայումն ու մահը,- մտածեց: Նա սովորաբար շուտ էր գալիս՝ իրեն համբուրելու եւ բարի լույս մաղթելու: -Ինչպե՞ս ես, սեր իմ,- հարցնում էր՝ չիմանալով, թե էլ ինչ պետք է ասի: Իսկ ինքն ի՞նչ կարող էր պատասխանել: -Լավ եմ,- ասում էր,- լավ, այսօր ավելի լավ եմ:- Իհարկե, խաբում էր, բայց երկուսի համար էլ այդպես ավելի հեշտ էր: Հոգնել էր ճշմարտությունն ասելուց, քանի որ այն այլեւս ոչ մի տեղ չէր տանում: Չէր լավանալու, դա հաստատ էր, ուրեմն ինչո՞ւ խոսքերը վատնել: Այնքան էլ վաղուց չէր, որ ամեն օր մանրամասն հաշվետվություններ էր տալիս նրան՝ ճշգրիտ թվարկելով, թե ինչն է ցավում, ինչպես եւ որտեղ: Ինքը հոգնել էր դրանից, իսկ նա՞ ինչու չպիտի հոգներ: Համենայն դեպս, նա այլեւս չէր կարող իրեն օգնել: Այն ամենն, ինչ կարող էր անել, ստիպելն էր, որ նա իրեն մեղավոր զգա անօգուտ լինելու համար, եւ որ նույնիսկ այդ զգացումն արագ վերածվի ինքնախղճահարության: Այդ ամենն այնքան կանխատեսելի էր: Գիտեր, որ իր պատասխանը՝ «Լավ եմ», նրան հանգիստ խիղճ կպարգեւի, եւ իր օրհնությունը կտա, որպեսզի նա շարունակի իր կյանքն այնպես, ասես ամեն ինչ կարգին է:

Դու ինձ անընդհատ ասում ես, որ ավելի լավ ես զգում,- ասաց Մաեստրոն՝ ծաղրալից ու բարկացած կշտամբանքով:

Կարեւոր չէ, թե ինչ եմ քեզ ասում, սիրելիս,- մտածեց Ֆրիդան:- Արդեն պետք է իմանայիր, որ այն, ինչ չեմ ասում, դա՛ է կարեւոր: Իմ իրավիճակում բառերը ոչինչ չեն նշանակում: Երբեմն ինձ հետաքրքիր է, թե ընդհանրապես ինչ ես տեսնում իմ մեջ, եւ ինչ ես մտածում իմ մասին հիմա:

Լավ կլիներ չհարցնեիր, լավ կլիներ՝ չխոսեի: Լավ կլիներ՝ գայիր, պառկեիր կողքիս եւ գրկեիր ինձ: Եվ ջերմացնեիր ինձ: Մրսում եմ. ահա՛ թե ինչ եմ ուզում ասել քեզ: Զգում եմ իմ ուղղությամբ փչող՝ գերեզմանի սառնությունը: Մնա՛ ինձ հետ մինչեւ մեռնեմ, ինձ համար ավելի հեշտ կլինի, եթե գրկես ինձ, ես չեմ ուզում մենակ մեռնել: Պահի՛ր ինձ: Դա երկար չի տեւի, խոստանում եմ: Դեռ բավականաչափ ուժ ունեմ՝ նայելու շուրջս եւ իմ սրտի մեջ: Նույնիսկ եթե հիմա ավարտին է մոտենում: Ձեռքերս սառն են, սիրելիս, տաքացրո՛ւ դրանք: Ես հանգիստ կհեռանամ, նայի՛ր, տե՛ս ինչ հանգիստ եմ: Այլեւս չեմ բարկանում: Հիմա պարզապես սպասում եմ: Ես արդեն նույնիսկ քեզ բաց եմ թողել, իմ սե՛ր, զավա՛կս: Երեկ երեկոյան, երբ քեզ տվեցի մատանին, որ կարծում էիր՝ չպիտի

ստանայիր մինչեւ հաջորդ շաբաթ՝ մեր հարսանիքի քսանհինգերորդ տարեդարձի օրը, այնքա՛ն զարմացած էիր: -Ինչու՞ ես հիմա տալիս ինձ մատանին, չէ՞ որ դեռ վաղ է,- հարցրիր: Ուրախ էի՝ քեզ զարմացած տեսնելով: Դու դեռ հույս ունեիր,- մտածեցի,- հույս, որ փոխհաջորդում էր հուսահատությանը:

Գիտեմ, սիրելիս, դժվար է, երբ չես կարող օգնել քո սիրած մարդուն: Երբ ստիպված ես նայել, թե ինչպես է նա տառապում: -Ես հեռանում եմ քեզնից, շուտով կգնամ,- ասացի քեզ երեկ երեկոյան: Եվ տես՝ հիմա դա տեղի է ունենում: Եվ դու այստեղ չես: Շատ ուշ է, ինձ համար անիմաստ է փորձել իմանալ՝ արդյո՞ք դու երբեւէ ինձ հետ ես եղել իմ ամենամութ ժամերին: Երբ իմ առաջին աբորտն էի անում, կամ երբ վիրահատում էի ոտքս ու մեջքս, երբ ինձ նոր սեղմիրանի մեջ էին դնում, եւ երբ գիշերները գալարվում էի հոգեւարքի տանջանքներում: Որովհետեւ շուրջս միշտ սպասուհիներ ու բուժքույրեր, քույրերս ու ընկերուհիներս կային: Իմ ամենավատ պահերին կողքիս միայն կանայք են եղել, առանց նրանց ես չէի գոյատեւի: Նրանք ինձ համար ապուր էին պատրաստում, լվանում ու հագցնում էին ինձ: Սանրում էին մազերս, որպեսզի գեղեցիկ տեսք ունենամ՝ քեզ համար: Որպեսզի կարողանամ շարունակել ձեւացնել, թե լավ եմ, եւ որ սա միայն աննշան հետընթաց է: -Կանցնի,- ասում էի,- արդեն անցնում է:- Ես, իհարկե, վախից էի խոսում: Չէի ուզում շատ ծանր բեռ լինել քեզ համար, վախեցնել քեզ պարտավորություններով ու պարտականություններով, հոգնեցնել քեզ իմ բոլոր հիվանդություններով: Եվ ճիշտ էի, որ վախենում էի, քանի որ դու հոգնում էիր դրանցից՝ չնայած իմ բոլոր նախազգուշական միջոցներին, խորամանկություններին ու ինքնախաբեություններին: Այն ժամանակ դու ո՛չ ժամանակ ունեիր, ո՛չ էլ համբերություն՝ ինձ հետ մաքառելու, ինչպես որ չունես հիմա: Դու իմ սիրելին ես, այն տղամարդկանցից, որ երբեք չի մտածում հարցնել, թե արդյո՞ք ինձ մի բաժակ ջուր է պետք: Դու ինձ ծաղիկներ ես բերում, բայց ոչ ջուր: Դու վճարում ես այլ մարդկանց, սովորաբար կանանց, որ հոգ տանեն իմ մասին: Այո, ես երբեմն տեսարաններ էի սարքում եւ իրեր նետում քեզ վրա: Այո, զայրույթից, բայց իսկապես այն պատճառով, որ ինձ անօգնական էի զգում: Որովհետեւ դու այստեղ չէիր, երբ ես քո կարիքն ունեի: Բայց անօգուտ էր: -Դու նորից ուշադրություն ես հրավիրում քեզ վրա, դու տիեզերքի կենտրոնը չես, գիտես,- այսպիսին էր քո մեկնաբանությունը: Նվաստացած, ընկճված՝ այն

ամենն, ինչ կարող էի անել, հերոսուհուս դերին վերադառնալն էր: Այն հերոսուհու, որը տառապում է լուռումունջ, որը երբեք չի դժգոհում եւ երբեք պահանջներ չի դնում: Նա ամեն ինչ անում է միայնակ: Այդ թվում եւ, ավելորդ է ասել, մեռնելը:

Դու սովորաբար վերադառնում ես երեկոյան՝ համբուրելու ինձ եւ բարի գիշեր մաղթելու, թեեւ երկար ժամանակ է անցել, ինչ իմ գիշերները բարի էին, կամ, եթե խոսքն եկավ, ցերեկներս նույնպես: Մաճուցիկ եւ ծանր ինչ-որ բան պարուրում է ինձ, դրա շերտերը կուպրի պես դարսվում են իրար վրա: Արդյո՞ք հողն էլ այսքան ծանր է լինելու: Երբեմն, վերջին ուժերիս գնով, դուրս եմ ելնում այս տիղմից: Այս պայքարելն ու քացի-քացի անելն այնքա՛ն բնորոշ է ինձ: Հեշտ չէ հանձնվել մահին, եթե անգամ ուզում ես: Եվ երբեմն օրերով քեզ չեմ տեսնում: Դու նման ես մի տղայի, որը դասերից փախչում է, քանի որ տնային աշխատանքը չի կատարել: Օ՜, մարդիկ գիտեն, թե ինչպես պաշտպանեն եւ խնայեն իրենց, նրանք գիտեն: Որովհետեւ ուրիշի ցավը քո ցավը չէ: Միայն քո սեփական ցավն է քեզ ցավ պատճառում, դա միակ ցավն է, որը կարեւոր է: Իսկ ի՞նչ է անում իմ սիրելին: Նա արդեն մեկ այլ կին ունի իր համար պահած: Էման, ինչն առավել արտառոց է, մխիթարում է քեզ իմ պատճառով:

Գիտեմ՝ տանջվում ես, բայց չե՞ս կարծում, որ մի քիչ շուտ սկսեցիր քեզ մխիթարել: (Տե՛ս, չեմ կորցրել հումորիս զգացումը): Ես հիմա ծիծաղելի եմ համարում քո պահվածքը, ծիծաղելի ու խղճահարույց եւ անկարեւոր: Մյուս կողմից, դա ինձ ցույց է տալիս, թե որքան կենդանի ես դու, ի տարբերություն ինձ: Հասկանում եմ, որ Էմայի օգնությամբ դու փրկում ես քո սեփական կյանքը, քեզ զերծ ես պահում ապագա կորստից ու ցավից: Ամեն ինչ այնքան պարզ է, այնքան թափանցիկ: Այնքան տիպականորեն *տղամարդկային:*

Ես պետք է ավելի սիրալիր լինեի քո հանդեպ: Հենց միայն քո ներկայությունն իմ կյանքում՝ ինձ այն հավաստումը տվեց, որը փնտրում էի, այն, որ, չնայած ամեն ինչին, դու ինձ չես լքի: Ես քեզնից ստացա այնքան, որքան կարող էի: Բայց ինչո՞ւ դա քեզ երբեք չասացի, սե՛ր իմ: Որովհետեւ ուզում էի քեզ խնայե՞լ: Նույնիսկ հիմա՞: Միգուցե վստահ չեմ, որ կհասկանաս ինձ եւ չեմ ուզում պարզել: Այսպես ավելի լավ է: Ես ինքս ինձ եմ խնայում:

Ես մահանում եմ: Մեռնում եմ: Գիտեմ, որովհետեւ ես եմ նկարել դա,

ինչը միայնակ գործ է: Բայց չեմ կարող չցանկանալ, որ դու իմ կողքին լինես: Որովհետեւ ինձ համար ամենադժվարը քեզնից բաժանվելն է: Ի վերջո, այս ամբողջ ընթացքում դու ինձ հետ ես եղել: Դու միակն ես, ում հաջողվեց թափանցել իմ մենության մեջ եւ մնալ այնտեղ: Դա էլ պետք է քեզ ասեի, բայց ես վախկոտ էի:

Լուրջ եմ ասում, իմ սիրելի Մաեստրո, ինձ համար կարեւոր էր իմանալ, որ դու ինչ-որ բան ես տեսել իմ նկարներում, որ դրանք ազդել են քեզ վրա:

Այդ առավոտ մենակ էր եւ վախենում էր: Այլեւս ո՛չ հերոսուհի էր, ո՛չ դերասանուհի: Նախորդ գիշերը վախենում էր քնել, որովհետեւ չգիտեր՝ կարթնանա՞ արդյոք: Առավոտյան վախենում էր ցերեկվանից, քանի որ այն շատ երկար տեւեց եւ միայն ավելի շատ ցավ պատճառեց իրեն:

Մի անգամ կարդացել էր, որ միշտ ինչ-որ տեղ ինչ-որ մեկը կորստի ցավ է ունենում: Այն, որ վերապրել էր պոլիոմիելիտից, վթարից եւ նույնիսկ մետաղյա ծողով բռնաբարությունից հետո, ընդունում էր որպես դրական փաստ: Եվ երախտապարտ էր, որ, որքան էլ հիվանդ, ապրել էր առողջ, նորմալ մարդկանց աշխարհում: Գիտեր, որ տխմարություն է կորուստներն ու ձեռքբերումներն ավելացնելն ու հանելը. այդպիսի հաշվարկները գրեթե զավեշտական էին, եւ իր համար դժվար էր նույնիսկ հիշելը:

Բայց գիտեր, որ գոյություն չի ունենա, հենց որ դադարի հիշել, ուստի երախտապարտ էր պարզության այս վերջին պահի համար:

Ազատվել այդ սարսափելի բեռից:

Կտրել թելը:

Հանգստանալ: Ներել: Եվ վերադառնալ ոչնչի, չգոյության գիրկը:

Ֆրիդային չէր հետաքրքրում, թե հետո ինչ կկտարվի, երբ ինքն այլեւս չլինի: Որպեսզի ինքն ինքը լիներ, այս մարմնի կարիքն ուներ: Նրան ընդամենը մնում էր մեկ վերջին ճիգ գործել՝ կտրել այս բարակ կապող թելը գիտակցության, մարմնի եւ արտաքին աշխարհի միջեւ: Միայն այդպես կարող էր թռչել եւ վերջապես սավառնել ամեն ինչից վեր, ինչպես այն գեղեցիկ թիթեռը, որ մի անգամ իջել էր իր ձեռքին:

Ընդամենը մեկ շաբաթ առաջ էր նշել ծննդյան քառասունյոթերորդ տարեդարձը: Գիտեր, որ դա իր ծննդյան վերջին տարեդարձն է, ինչպես

նաեւ ընկերներին հավաքելու եւ նրանց հրաժեշտ տալու վերջին հնարավորությունը: Քրիսթին եւ Մայեթը լոգարանում նրան նստեցրին աթոռին, օճառեցին մարմինը եւ լվացին մազերը:

Ֆրիդան գլուխը չբարձրացրեց: Խուսափեց նայել լոգարանի դիմացի հայելու մեջ: Գլուխը կախեց՝ նայելով անդամահատված վերջույթին, որտեղ առաջ ոտքն էր: Նրա մարմնից ոչինչ այդքան չէր տխրեցնում իրեն, որքան ծնկից ներքեւ գտնվող վարդագույն մարմնի այդ կլորավուն կճատ վերջույթի տեսքը: Հիշեց հոտը՝ անդամահատումից անմիջապես առաջ. հոտը գալիս էր իր սեփական ոտքից: Դա նեխման հոտն էր, ո՛չ թե բուսականության հեղձուցիչ խոնավ նեխման կամ մրգի բարկ, դառնակծու նեխման: Նրա ոտքը տոթ, կիզիչ օրը մսագործի մոտի մսի մնացորդների գարշահոտությունն ուներ, դրանից անմարդկային գարշահոտ, մահվան հոտ էր գալիս: Միգուցե սխալվում էր, բայց այն զգացողությունն ուներ, որ հոտը մնացել է նույնիսկ անդամահատումից հետո, նույնիսկ վերքը լավանալուց հետո: Մնացել է սենյակի անկյուններում, ծածկոցների ծալքերում, բարձերի տակ, իր թեւատակերում: Այն չէր վերանում, եւ ինքը մտածում էր, թե արդյո՞ք ուրիշներն էլ են զգում այդ հոտը, այցելուները, որոնք քաղաքավարությամբ ոչինչ չէին ասում եւ արագ լքում էին սենյակը: -Դեռ զգո՞ւմ ես այդ հոտը, Քիթի,- հարցնում էր:- Թե՞ ես հայլուցինացիաներ ունեմ:- Քիթին փորձում էր հանգստացնել: -Դա պարզապես քո երեւակայությունն է, ասում էր,- ախր ոտքիցդ համարյա հոտ չի գալիս: Նա զգուշորեն չորացնում եւ փաթաթում էր անդամահատված ոտքը, իսկ հետո իրեն օգնում էր կաշեփոկերով ամրացնել կոշիկով արհեստական վերջույթը՝ հենված լոգարանի պատին, ինչպես ավելորդ մի ուղեբեռ: Դա առավել սարսափելի էր, քանի որ ոտքն այնքա՛ն իրական էր թվում:

Սպիտակ զգեստով եւ կարմիր երկարաճիտ կոշիկներով.- գույների խորհրդանշական կիտչը նրանից չէր վրիպել- այսպես մուտք գործեց: Նրա բեմադրված հրաժեշտն, իհարկե, հիվանդագին ուրախ ներկայացում էր: Վերջին անգամ խաղալով խիզախ, հպարտ, անպարտելի հերոսուհուն՝ նայում էր ուտելիքներով ծանրաբեռնված սեղանի շուրջ հավաքված իր հյուրերին եւ փորձում էր երջանիկ երեւալ: Երջանկության այդ դիմակը կրել էր իր ամբողջ կյանքում: Բացառությամբ իր նկարների: Ինչպես ցանկացած ծաղրածու, նա էլ երկակի կյանքով էր ապրում: Նվաստացած ու միայնակ ապրելու բոլոր այդ տարիներն արդեն անցել

են,- մտածեց:- Մարդիկ տեսնում են միայն այն, ինչ ուզում են տեսնել, միայն այն, ինչը դիմացի բեմի կենտրոնն է: Ինչ-որ մեկին հասկանալ նշանակում է պատասխանատվություն ստանձնել, նշանակում է պարտավոր լինել օգնել: Նույնիսկ երբ մարդիկ ուզում էին ինձ օգնել, ես չափազանց հպարտ էի դա թույլ տալու համար,- մտածեց՝ նայելով ինչպես է քրոջ որդին՝ Անտոնիոն, տորթը խցկում բերանը:

Երկար ժամանակ բավականություն չէր ստացել: Եվ այնուամենայնիվ, նրա համար դժվար էր հրաժեշտ տալ այս բոլոր մարդկանց, տանն ու դրա մեջ եղածին: Նստել էր աթոռին ու նայում էր ծմերուկի կանաչ եւ մսակարմիր շերտերին: Դրանք գայթակղիչ կերպով գունեղ էին ու հյութալի: Ի տարբերություն իր ոտքի մեռած մսի: -Ես արդեն ամեն ինչ դիտարկում եմ միեւնույն տեսանկյունից: Իմ գնալու ժամանակն է,- մտածեց:

Փոքրիկ Անտոնիոն մոտեցավ նրան եւ քնքշորեն գլուխը դրեց ծնկներին: Ի վերջո, ինչ-որ մեկը կկարոտեր իրեն: Հոգնած մի համբույր դրոշմեց նրա փափուկ այտին, զգուշորեն, կարծես վախենալով, որ կարող է վարակել նրան իր սեփական քայքայմամբ:

Մանկան մաշկի քաղցր բույրը: Մոտիկ: Ցերմ: Մաշկ: Մաեստրոյի ջերմ մաշկի հպումը գիշերն անկողնում, երբ ինքը հանկարծ արթնանում էր եւ գրկում նրա քնած մարմինը՝ ներընդունելով նրա ջերմությունը, ներշնչելով համեմունքների, ծխախոտի եւ չոր մրգերի հոտը: Մաեստրոյից այնքան անուշաբույր ուտելի հոտ էր գալիս, որ ինքը կարող էր անմիջապես կծել նրա հարթ մարմնից՝ զուտ հաճույքի համար: Կամ գուցե պարզապես համոզվելու համար, որ նա իսկապես այդտեղ է, իր կողքին: Եթե միայն կարողանար պառկած մնալ նրա կողքին, երբ նա քնած էր:

Երբեմն հենց միայն նրա ներկայությունը բավական էր: Հանգիստ, ավելի ու ավելի մեղմ շնչելը:

Վախենում էր, որ մահն իրեն կպահանջի, երբ ինքը քնած կլինի, ինչպես իր երազում՝ այդ բոլոր տարիներից առաջ տեղի ունեցած վթարից հետո: Երբեմն արթնանում էր խեղդվելով: Այդ ժամանակ ճչում էր: Եվ երբ ոչ ոք չէր գալիս, արթուն պառկում էր՝ դողալով մինչեւ լուսաբաց:

Ծոյելով տղայի գլուխը՝ մտածում էր, թե որքան դժվար է իր համար՝ նստել նրանց հետ՝ ծեւացնելով, թե դեռ ուժերը բավականացնում են: Հոգնել էր ցուցադրական ելույթից:

Երեկոյան ութին բարի գիշեր ասաց եւ հեռացավ իր սենյակ:

Լույսի մի շող ընկավ սավանի վրա, եւ ինքն ուզում էր փախչել դրա ճերմակությունից: Նայեց սկուտեղի վրա դրված ներարկիչին: -Եվս մեկ ժամ,- մտածեց,- ընդամենը մեկ ժամ:

Ձեռքը սահեցրեց անկողնու դատարկ մասով: Ընկերուհին՝ Ադելան, իր հետ էր, երբ բժիշկ Ֆարիլը որոշել էր, որ պետք է անդամահատի. սպասելն այլեւս չափազանց վտանգավոր կլիներ: Ֆրիդան ոտքը դուրս էր հանել ծածկույթի տակից եւ ցույց տվեց նրան: Ոտքի վրա ոչ մի մատ չէր մնացել: Ոտքը նման չէր մարդու մարմնի մասի: Հիշեց ընկերուհու դեմքը, երբ նա տեսավ ոտքը, որն ավելի շատ նման էր չորացած ճյուղի, քան ոտքի: Այն հեռացնելը զուտ տեխնիկական խնդիր էր: -Դա այլեւս ոչ մի նպատակի չի ծառայում,- ասաց ողջամիտ Ադելան՝ հազիվ թաքցնելով իր անհանգստությունն ու սրտխառնուքը: Հիշեց, թե ինչպես վերջին անգամ դիպավ իր սեւացած, այլանդակված ոտքին: Ոչինչ չէր զգում, նույնիսկ սեփական մաշկը: Ոչ առաջին անգամ մտածեց այս ոտքի ճակատագրական դերի մասին իր կյանքում: Ինչպես մոռացված հովանոցը, ինչպես Մաեստրոն, որ իջնում էր փայտամածից՝ նայելու իր նկարներին, ինչպես մերկ Քիթին՝ նրա արվեստանոցում: Թե՞ այդ ամենը պատահականություն է եղել:

Նատալյայի կյանքում միակ պատահականությունը Փարիզում Տրոցկու հետ հանդիպելն էր: Եթե այդ օրը չգնար ցուցահանդեսին, չէր հանդիպի նրան: Դրանից հետո ոչինչ պատահական չի եղել: Նատալյայի կյանքը կառավարելի դարձավ միակ մի մարդու կամքով եւ տրամաբանությամբ, որը հետապնդում էր Տրոցկուն: Եթե Ֆրիդան այդ օրը ավտոբուս նստած չլիներ, վթարի չէր ենթարկվի, ցավը բուն չէր դնի իր մարմնում՝ շարունակելով կառավարել մնացած կյանքը: -Պատահականությունը ճակատագիր է,- ասաց ինքն իրեն՝ հպվելով իր արդեն մեռած ոտքին, հրաժեշտ տալով նրան:

Վիրահատությունից առաջ տեսել էր, թե ինչպես է իր մարմնի մի մասը փտում, եւ պատկերացնում էր, որ մարմինն ինքը քայքայվում է դագաղի մեջ, գետնի տակ՝ վերածվելով նեխած մսի նույնպիսի զանգվածի: Այդ մտքից ավելի վատ զգաց, քան բուն գարշահոտությունից: -Խոստացի՛ր, որ ինձ կդիակիզեն,- ասաց քրոջը: Անակնկալի եկած՝ Քիթին այնպիսի վախեցած մի հայացք գցեց նրա վրա, որը Ֆրիդան արհամարհում էր եւ որից սովորաբար կատաղության էր հասնում: -Խոստացի՛ր

ինձ,- բղավեց: Քիթին ստիպված էր խոստանալ: Մաեստրոն նույնպես, թեեւ փորձում էր Ֆրիդային համոզել, որ նա զառանցում է: Ինչի՞ համար է այս ամբողջ խոսակցությունը դիակիզման մասին: -Վիրահատությունից հետո շատ ավելի լավ կզգաս,- ասաց: Ֆրիդան գիտեր, որ Մաեստրոն դա ասում էր միայն նրա համար, որ ինքը դեռ կարող էր բարձրացնել իր ձայնը: Շատ լավ գիտեր ինքնախաբեության նրա ընդունակությունը:

-Դու այնքան վախենում ես մահից,- առարկեց: Մաեստրոն գունատվեց եւ իր հսկա մարմնով կռացավ նրան համբուրելու՝ չնայած հիվանդության հոտին եւ ոտքի գարշահոտությանը: Ֆրիդան մտածեց, թե իրենից որքան ավելի համարձակ է Մաեստրոն, որովհետեւ ինքն այլեւս չէր դիմանում փտախտի հիվանդագին քաղցրավուն հոտին: Իր ամբողջ կյանքում ատել էր այդ հիվանդ, գարշելի ոտքը, ասես նույնիսկ իրենը չէր: Երբ վերջապես ոտքը սղոցեցին, ատելությունը - իր այն մութ մասը, որը ճնշել էր ամբողջ կյանքում եւ թաքցրել կենսուրախության դիմակի ետեւում - հանկարծ ի հայտ եկավ: Նա հաշմանդամ էր, եւ հիմա այլեւս չէր կարող դա թաքցնել երկար շրջազգեստների տակ կամ այլ կերպ: Նրա մարմնից մի կտոր բացակայում էր, եւ, առավել, քան երբեւէ, նա իրեն մերկաբաց ու ամբողջովին անպաշտպան էր զգում: Իր բոլոր պաշտպանական մեխանիզմները խորտակվեցին: Վիրահատությունից հետո նա ատում էր ինքն իրեն:

Կարծես ոտքի հանդեպ ունեցած զզվանքը դեռ մնացել էր՝ թունավորելով նրա մարմինը:

Երբ Ֆրիդան ոտքը կորցրեց, Մաեստրոն փայտե վերջույթ պատվիրեց: Դա պատրաստված էր կատարյալ՝ ձեւով նման այն ոտքին, որ նա երբեք չէր ունեցել: Ամուր սրնքամկան, գեղեցիկ ձեւավորված մատներ՝ փայլեցված եղունգներով, նույնիսկ գույնը համապատասխանում էր իր մաշկի գույնին: Արհեստական վերջույթը շատ ավելի գեղեցիկ էր, քան իր սեփականը, եւ դա հիվանդագին կերպով գրավիչ էր դարձնում այն: Վերցնում էր այն եւ զննում՝ հիացմունքի ու հետաքրքրասիրության խառն մի զգացումով: -Ես գրեթե չեմ ափսոսում, որ կորցրել եմ ոտքս, երբ հիմա ունեմ այս հիանալի փոխարինողը,- ժպտալով ասաց Քիթին՝ անդամահատումից մեկ ամիս անց: «Ինչքան է սիրում այդպիսի անշնորհք բան ասել»,- մտածեց Քիթին: Չպատասխանեց սակայն: Ֆրիդան հեշտությամբ կարող էր այդ նույն փայտե ոտքը պատուհանից

դուրս նետել հենց հաջորդ րոպեին: Ոչ ոք չէր կարող հետեւել նրա տրամադրության արագ փոփոխություններին:

Արհեստական վերջույթի հետ մեկտեղ նրան տվեցին հորթի ամենանուրբ կաշվից պատրաստված մի զույգ նոր կարմիր կոշիկ՝ փոքրիկ ոսկե ցանցավոր զանգերով: Կոշիկներից դեռ թարմ կաշվի հոտ էր գալիս, երբ տուփը բացեց: Այնքան ուրախ էր, որ վիրահատությունից հետո առաջին անգամ ժպտաց Մաեստրոյին, որ կանգնած էր իր անկողնու մոտ եւ ուրախանում էր՝ տեսնելով իրեն այդքան լավ տրամադրությամբ: -Մի՛ անհանգստանա, Ֆրիդա, դու կպարես՝ նախքան այդ մասին իմանալդ,- ուրախ ասաց նա: Ֆրիդան գրկեց իր նոր կոշիկները՝ ինչպես երեխան նոր խաղալիքն է գրկում: Մաեստրոն ճիշտ էր գուշակել իր սիրելի գույնն ու ճաշակը: Նա գիտեր, որ կոշիկներն իրեն կհիշեցնեն այն առաջին զույգի մասին, որ ստացել էր երեխա ժամանակ՝ պոլիոմիելիտից բուժվելուց հետո: Դրանք ծառայել էին իր թորշոմած ոտքը թաքցնելու համար: Ինքը դրանք հագնում էր նույնիսկ ամենաշոգ եղանակին, մինչեւ որ արդեն մեծացավ եւ ստացավ նոր զույգ. նա դեռ պահում էր դրանք՝ որպես այդ օրերի հուշ: Նույնիսկ այդ առաջին զույգով տիրապետել էր քողարկման արվեստին: Այս նոր կարմիր կոշիկները կծառայեն իր արհեստական վերջույթը թաքցնելու համար: -Ես նորից կկարողանամ քայլել, նույնիսկ ավելի լավ, քան իմ հին, հիվանդ ոտքով,- ասաց՝ հիացմունքով համբուրելով Մաեստրոյին:

Երբ հագնում էր իր կախարդական կոշիկները, ինչպես ինքն էր ասում, նորից իրեն ողջ-առողջ էր զգում, թեկուզ մեկ րոպեով: Կարող էր խաբել անծանոթ անցորդին: Եվ սովոր էր իր արտաքինով մարդկանց հրապուրել, խաբել, հիմարացնել: Փայտե ոտքով քայլելն այլ պատմություն էր: Դա մի նոր տեսակի ուժ էր պահանջում: Ստիպված էր նորից քայլել սովորել: Սկզբում նստում էր մահճակալի եզրին եւ քանդում անդամահատված ոտքի փաթաթանները: Քիթին կաշվե գոտի էր կապում վերջույթի վրա: Պետք է այնպես ամրացներ այն, որ անդամահատված ոտքը ճիշտ ու խնամքով տեղավորվեր թասիկի մեջ, որպեսզի քայլելիս չբորբոքվեր. փայտե ոտքը պետք է հենարան լիներ իր համար, եւ միեւնույն ժամանակ ինքն զգալու էր, որ այն հին կոշիկի պես հարմարավետ է: Հետո քույրը թեւերի տակից բռնած բարձրացնում էր իրեն եւ ուղղահայաց կանգնեցնում ոտքերի վրա: Ֆրիդան նիհար էր, քաշը հիսուն կիլոգրամից պակաս էր: -Մի պարկ ալյուրից էլ թեթեւ ես,- ասում էր Մաեստրոն, երբ նրան

բարձրացնում էր՝ անկողնում պառկեցնելու համար: Մաեստրոյին զվարճացնում էր իրենց չափերի տարբերությունը. զույգն իսկապես նման էր փղի եւ աղավնու, ինչպես ընկերներն էին նրանց անվանում: Ֆրիդան այնքան արտառոց կերպով փոքր ու մանր եւ թեթեւ էր թվում այդ վիթխարի տղամարդու ներկայությամբ: Սկզբում պարզապես կանգնում էր՝ հենվելով սեփական ոտքի վրա: Պետք է գտներ հավասարակշռությունը եւ չէր համարձակվում ծանրությունը տեղափոխել մյուս՝ նոր ոտքի վրա: Անդամահատումից հետո ուժեղ էր զգացումը, որ դեռ սեփական ոտք ունի, թեեւ այն փոխարինվել էր արհեստական վերջույթով: Բայց միշտ համառ էր ու հաստատակամ: Քիթիին կամ Մաեստրոյին, մահճակալը, սեղանը կամ աթոռը բռնած՝ սկսեց իր առաջին քայլերն անել:

Սկզբում քայլում էր կաշկանդված, կարծես մարմինը փայտից լիներ: Համառում էր միայն այն պատճառով, որ ցանկանում էր հագնել իր կարմիր կոշիկները: Նրան նյարդայնացնում էր իր շարժումների դանդաղ անհարմարությունը: Բժիշկները վստահեցնում էին, որ ժամանակի ընթացքում շարժումներն ավելի սահուն կդառնան, եւ կքայլի ավելի բնական - կարծես ի սկզբանե կարողացել էր առաջին հերթին դա անել:

Ճնշված տրամադրությամբ էր, բայց շարունակում էր վարժվել քայլելուն: Մաեստրոն ոգեւորված էր նրա ունեցած առաջընթացով: Մի անգամ, երբ անսպասելիորեն ներս մտավ եւ տեսավ Ֆրիդային խոհանոցում ինչ-որ բան անելիս, ծնկի իջավ եւ համբուրեց նրա փայտե ոտքը: -Ամեն ինչ լավ կլինի, սեր իմ, դու կքայլես, նույնիսկ նորից կպարես, ես քեզ գիտեմ: Ֆրիդան շոյեց Մաեստրոյի նոսրացած, գորշ մազերով գլուխը: Հուզված էր նրա խոսքերից, բայց ուժ չուներ ասելու, որ արդեն ուշ է, որ իրեն եռանդ ու կորով չի մնացել պարելու համար:

Բայց պարեց: Հետագայում մտածում էր, թե պետք է որ երազում տեսած լիներ, բայց ընդամենը երեք ամիս պարապելուց հետո այնքան էր սովորել իր փայտե ոտքին, որ իսկապես կարող էր պարել: Նախկինից ավելի վստահ էր պտտվում իր ոտքերի վրա: Նույնիսկ կարողանում էր դժվարին *jarabe tapatío (մեքսիկական գլխարկներով պար - ծ. թ.)* պարը պարել, որի շարժումներն ու քայլերը սովորել էր, երբ դեռ փոքրիկ աղջիկ էր: Տարվում էր պարով եւ լրիվ մոռանում ոտքի մասին՝ պարելով ավելի ու ավելի արագ, մինչեւ որ շունչը կտրված փլվում էր անկողնուն՝ հաճույք ստանալով այդ ամենից: -Ֆրիդան՝ միոտանի կինը, եկե՛ք եւ տեսե՛ք նրա պարը: Կրկեսը քաղաքում է ընդամենը մեկ օր, բաց մի՛ թո-

ղեք,- ասում էր Քիթին՝ ծիծաղելով: Դա վերջին անգամն էր, որ զգում էր շարժման իրական ազատություն, թեեւ արդեն կորցրել էր ոտքը: Իր պարող ոտքերն արձագանքում էին փայտե հատակին. դա իր հաղթանակի ձայնն էր, եւս մեկ հաղթանակ սեփական մարմնի եւ սեփական անձի նկատմամբ: Նորից ոտքի վրա էր, նորից նախկին Ֆրիդան էր:

Երկարաճիտ կոշիկներ, օրթոպեդիկ կոշիկներ, սեղմիրաններ, արհեստական վերջույթներ, անվասայլակներ. իր ամբողջ կյանքում դրանց աջակցության կարիքն էր ունեցել: Չորացած ոտք՝ կյանքի սկզբում, անդամահատված՝ կյանքի վերջում:

Եվ այդ երկու իրադարձությունների միջեւ՝ վթարը, Սաեստրոն, գոյատեւելու եւ իր հաշմանդամ ոտքը թաքցնելու ջանքերը, սպիները, հիվանդությունը, ցավը, տխրությունը, մենակությունը ,- անտանելի մենակությունը:

Փայտե ոտքը մի պահ վերականգնեց նրա ապրելու կամքը: Բայց քայլել սովորելն անիմաստ էր, երբ մեջքի ցավն այնքան ուժեղ էր, որ հազիվ էր վեր կենում անկողնուց: Վիրահատությունից անմիջապես հետո թեթեւություն էր զգացել, բայց գիտեր, որ երբեք չի ապաքինվի, որ օստեոմիելիտը չի անցնի: Քայլելու համար այլեւս չարժեր ջանք թափել: Անվասայլակը կծառայեր այդ նպատակներին: Մնացել էին հաբերը, հանգստացնող դեղամիջոցները, քնաբերները, ցավազրկող ներարկումները: Ճնշել ցավը, հանգստացնել դեւին. դա էր այն ամենն, ինչ ուզում էր: Հաբերը լցնում էր ձեռքի ափի մեջ եւ կուլ տալիս: Այլեւս չէր կարողանում նկարել: Գիտակցում էր, որ անձնատուր է լինում: Սուզվում էր, անհետանում: Կարծես անդամահատման մեկ վիրահատությունը չափազանց շատ լիներ:

Մարմինը հանձնվում էր, կյանքի ներքին էությունը սպառվել էր: Մնացել էր միայն խեցին, որ բզեզի փխրուն, կիսաթափանցիկ պատյանի էր նման: Իրեն զգում էր անտառում մենակ մեռնող վիրավոր կենդանու պես:

Նույն ալեկոծ երկինքը եւ ամայի, չոր հողը՝ ինչպես «Մահվան դիմակով աղջիկը» նկարում: Այս անգամ միայնակ կերպարը ոչ թե երեխա է, այլ մարդկային դեմքով եղջերու: Դա կնոջ դեմք է, Ֆրիդայի դեմքը, բայց գլխին արուի եղջյուրներ ունի: Անթիվ նետեր խոցել են եղջերուի մարմի-

նը: Արյուն է հոսում այդ վեհապանծ կենդանու մարմնի վերքերից: Առաջին հայացքից եղջերուն այնպիսի տեսք ունի, ասես ուր որ է ուժասպառ ընկնելու է, ինչպես կաներ ծանր վիրավորված ցանկացած կենդանի: Բայց ոչ Ֆրիդան: Կենդանին նկարված է ցատկելով, դժվար է ասել՝ թափանցող վերքերը, թեկուզ առատ արյունահոսող, հասե՞լ են մինչեւ սիրտը: Ֆրիդայի դեմքը հանգիստ է. դուք կարող եք նետերով խոցել ինձ, բայց դրանք ինձ չեն սպանի: Ապրելու իմ ցանկությունն ավելի ուժեղ է, քան ցանկացած վերք: Վերքերը ցավում են, բայց ես սովոր եմ ցավին: Ես ողջ եմ մնալու: Ֆրիդա կենդանին ողջ կմնա: Նա գետնին չի ընկնի: Նա անտառ չի քաշվի: Որսորդներն ու շները նրան չեն բռնի: Նա կխուսափի մահից, եւս մեկ անգամ:

Վիրավոր եղջերուի կերպարը շարունակում էր պարել նրա աչքի առջեւ: Գիտեր, որ նետերը շատ խորն են խոցել, եւ որ եղջերուն արնահոսելով մեռնելու է: Եղջերուն ընկնելու էր, արդեն ընկել էր: Իր նոր կարմիր կոշիկները եւ արհեստական վերջույթները չէին օգնի փախչել որսորդներից: Նա կարող էր միայն սպասել մահվանը: Կամ գուցե փորձեր նորի՞ց ոտքի կանգնել, գոնե մեկ անգամ էլ:

Մահվանից տասն օր առաջ նա չորս ժամ անցկացրեց անձրեւի տակ՝ Մաեստրոյի հետ մասնակցելով Գվատեմալայի կառավարությանն աջակցելու ցույցին: Բժիշկը նրան արգելել էր դուրս գալ: Սպասելի էր, որ բժշկին չէր ենթարկվելու: Չէր փորձում քայլել. արդեն չափազանց թույլ էր դրա համար: Գնաց անվասայլակով: Մաեստրոն հրում էր սայլակը եւ շարունակ հարցնում, թե չի՞ մրսում արդյոք, ստուգելով, որ տաք փաթաթված լինի իր վերմակով: Ինքը ոչ տաքություն էր զգում, ոչ սառնություն: Այդ չորս ժամը Մաեստրոյի հետ էր, փողոցում մարդկանց հետ:

Հանրության առջեւ հայտնվելու իր վերջին լուսանկարում նրա դեմքը նիհար է, իսկ աչքերը՝ կուլ գնացած: Գլխաշորով է եւ ակնհայտորեն փորձում է ժպտալ: Վաթսուն տարեկան կնոջ տեսք ունի, ոչ թե կնոջ, որ նոր-նոր է քառասունյոթ տարեկան դառնալու: Լարվելով ճգնում է բարձրացնել աջ ձեռքը եւ սեղմել բռունցքը: Նրա խեղճ փոքրիկ բռունցքը եւ բարակ ձեռքն արդեն ոչ ոքի համար սպառնալիք չեն: Մաեստրոյի ձեռքը նրա ուսին է, կարծես նրան պաշտպանելու համար, բայց ապարդյուն: Ոչ ոք չէր կարող Ֆրիդային պաշտպանել ինքն իրենից:

Երթին հազարավոր մարդիկ էին մասնակցում: Ինքն ունկնդրում էր

նրանց քայլերի ձայնը, մարդկային զանգվածների ձայնը: Լսում էր, թե ինչպես են նրանք երգում «Ինտերնացիոնալը». երգն սկսվեց ինչ-որ տեղ առջեւում, ապա հեռվից ալիքներով հասավ նրանց: Անցորդներից մեկը մի կարմիր մեխակ գցեց նրա գիրկը, եւ ինքը հանկարծ մտածեց, որ մասնակցում է սեփական թաղմանը:

Ինչո՞ւ դուրս եկավ եւ մասնակցեց ցույցին հորդառատ անձրեւի տակ՝ հակառակ բժշկի ցուցումների, թոքաբորբի վտանգին ենթարկվելով: Արդյո՞ք գիտակցում էր վտանգը: Գաղափարախոսությունը նրան այլեւս չէր հետաքրքրում: Ո՛չ էլ, անդամահատումից հետո, սեփական առողջությունը: Նա պարզապես ուզում էր լինել Մաեստրոյի կողքին, ուզում էր լինել նրա կյանքի մի մասը՝ մինչեւ վերջ:

Նա գիտեր, որ վերջը մոտ է, երբ - մի՞թե դա իսկապես ընդամենը տասն օր առաջ էր- դուրս եկավ ցույցի առանց շպարի, առանց վարսերը հարդարելու կամ իր սովորական գունագեղ զգեստի: Սովորաբար իրեն թույլ չէր տա այդպես երեւալ, քանի որ մերկ կզգար իրեն:

Արտաքին տեսքը նրա գոյության հռչակագիրն էր: Խոսքը ոչ այնքան գեղագիտության, որքան մարտավարության, իր անկատարությունների վրա միտումնավոր ուշադրություն հրավիրելու մասին էր: Եվ նույնիսկ առավել կարեւորի՝ նկատված լինելն զգալու ցանկության: Նա ճչում էր. -Նայե՛ք ինձ, ես ո՛ղջ եմ:

Նրա ինքնազարդարումը ծառայում էր նույն նպատակին, ինչ «Շրջանակը» *ինքնադիմանկարի շրջանակը, որը նկարի անբաժանելի մասն է: Իր դեմքը շրջանակող թռչուններն ու ծաղիկները նկարն օժտում են կենսուրախ, պայծառ առանձնահատկությամբ: Բոսորը, վարդագույնը, նարնջագույնը եւ կապույտն արտացոլվում են նրա դեմքին, ինչպես արեւը ջրի երեսին: Շրջանակն իրականում գերիշխում է նկարի վրա, թեեւ Ֆրիդան զգուշորեն փորձում է պահել հավասարակշռությունը, որպեսզի աչքը չգրավի միայն շրջանակը եւ դրա տարաշխարհիկ ակնարկումը: Շրջանակն աչքն ուղղորդում է դեպի դեմքը: Սա նրա հազվագյուտ ինքնադիմանկարներից է, որտեղ ժպիտի նշույլ կա: Մազերի մեջ դեղին արեւածաղկով՝ կապույտ ֆոնի վրա պատկերված՝* «Շրջանակը», *ինչպես իր բոլոր ինքնադիմանկարները, նրա ամենաներքին նվիրական զգացմունքների արտահայտությունն է:*

Նրա վերջին՝ խնամքով արված՝ «Ինքնադիմանկար դոկտոր Ֆարիլի հետ» *նկարը նույնպես նկարվել է առանց սնափառության: Ֆրիդայի*

մազերը կոկիկ սանրված են, բայց զուրկ որեւէ զարդանախշից, նա կրում է հասարակ սեւ կիսաշրջազգեստ եւ սպիտակ վերնահագուստ: Դեմքը կարծես ծգված է՝ լուրջ արտահայտությամբ: Կարծես նրա համար բավական չէր նկարել իր վիրավոր մարմինը, այժմ նկարեց վերջին փուլը, իր անօգնական մարմինը՝ թուլացած ընկած անվասայլակի վրա: Նա դարձյալ մերկացնում է իրեն, բայց նորովի. մարդ զարմանում է, թե քանի՞ միջոց կա մարմնի անկումը ցույց տալու համար: Բժշկի դիմանկարը մանրակրկիտ է, գրեթե լուսանկարչական: Ֆրիդայի ձեռքի ներկապնակի վրա գույների փոխարեն հսկայական մարդկային սիրտ է: Նրա վրձնից արյուն է կաթում:

Բայց հարցը միայն այն չէր, որ նա շատ թույլ էր՝ իրեն կարգի բերելու համար: Կարող էր խնդրել սպասուհուն կամ Քիթիին կամ ընկերուհիներից մեկին, որ սանրեն իր մազերը եւ հյուսեն ժապավեններով ու ծաղիկներով: Պարզապես դրա կարիքն այլեւս չէր զգում: Սնափառությունը կապված է մարմնի, կյանքի հետ: Իսկ այդ օրն այն արդեն հեռացել էր, լքել էր նրան:

Հայելին դեռ ամրացված էր մահճակալի գլխավերեւում: Ամիսներ շարունակ նա հետեւում էր, թե ինչպես է կերպարանափոխվում՝ վերածվելով սեփական ծաղրանկարի: Նրա համար ավելի ու ավելի դժվար էր ճանաչել իր անկողնում, իր տեղում պառկած, իր բերանով խոսող կնոջը: Երբ դիմահարդարվում էր, դեմքը զավեշտալի տեսք էր ստանում: Աչքերի սեւ մատիտ էր օգտագործում, բայց ձեռքն այլեւս ամուր չէր, իսկ գծերը ջղածգված էին: Աչքերի տեղում երկու մուգ բիծ էր տեսնում: Եվ արնակարմիր մի անցք, որը պետք է որ իր բերանը լիներ: Դեմքն ասես ծաղրում էր իրեն՝ ասելով. -Դու այլեւս չես ապրում այստեղ: Հեռացի՛ր, կորի՛ր մեկընդմիշտ:

Վերջապես դարակից մորֆինի երկու փոքրիկ շիշ հանեց: Երկու՝ ամեն դեպքում: Պահեց դրանք ձեռքի մեջ, որպեսզի տաքացնի:

Երբ հիշում էր, թե ինչպես էր արդեն մեկ անգամ գրեթե մահացել, երբ մտաբերում էր իր ունեցած բոլոր վիրահատությունները եւ թե քանի անգամ էր նկարել դրանք՝ իր սեփական եւ այլոց բոլոր կմախքներն ու գանգերը, իր մահացած պտուղները եւ այլոց մահացած երեխաներին,- մտածում էր, թե ինչն է ի վերջո իրեն այստեղ պահում: Ի՞նչ էր մնում իրեն դեռ անելու: Ապրել էր մինչեւ իր առաջին մեքսիկական ցուցահանդեսի

բացումը, նշել էր իր ծննդյան տարեդարձը, տեսել էր իր ընկերներին, իր սրտում հրաժեշտ էր տվել բոլորին, ներառյալ Մաեստրոյին: Ամենամոտ մարդիկ գիտեին, որ վերջին երեք տարիներին նրա առողջական վիճակը կտրուկ վատանում էր: Նա ապրել էր, քանի որ հրաժարվել էր ընդունել իրականությունը: Այժմ ընդունում էր դա: Հրաժարվում էր պայքարից: Երբեմն օրերով չէր խոսում, պարզապես պատուհանից դուրս նայում էր դեպի բակ: Ծառերին, թռչուններին, անձրեւին: Երկնքին: Արթուն էր, բայց բացակա: Ցավը հաղթահարելու գինը տոկունությունն էր, ոչ թե կյանքը: Քանի որ նրա կյանքը ղեկավարում էր դեմերոլը:

Եվ այժմ նա միայն ուզում էր, որ իրեն անպատրաստ վիճակում չտեսնեն, երբ վերջապես մահը գա: Ինչո՞ւ սպասել: Ի՞նչ իրավունք ուներ աղաչելու Քիթիին, որ այդ մահացու ներարկումն անի իրեն, երբ ինքը դեռ բավականաչափ գիտակից էր՝ սեփական որոշում կայացնելու համար եւ բավական ուժեղ՝ այն իրականացնելու համար: Երբ գիտակցությունը տեղում էր, վախենում էր, որ կփակի աչքերը եւ կվերանա՝ անտեղյակ, որ անհետանում է ընդմիշտ: Չգիտեր, թե ինչու, բայց անսպասելի մահանալու իր վախն ավելի մեծ էր, քան մահվան վախն ինքնին:

Կուզեր, որ Քիթին իր կողքին լիներ, բռներ իր ձեռքը, ինչպես նախկինում շատ անգամներ էր արել, երբ վիրահատարանում իր դեմքին եթերով ներծծված սպիտակ թանզիֆ էին դնում:

Հանգիստ էր: Գիտեր, որ վախճանը ոչնչով չի տարբերվի վիրահատությունից առաջ քնեցնելուց: Դա պարզապես գիտակցության հանկարծակի կորուստ կլիներ, դրամատիկ ո՛չ մի բան, ո՛չ մի արցունք կամ մահվան խռխռոց: Զգում էր, որ միակ բանը, որը դեռ կապում է իրեն այս աշխարհին, մահվանը չհանձնվելու իր հանդուգն ցանկությունն էր, որպեսզի մահը իրենից եւ միմիայն իրենից կախված լինի:

Մտքերը վերադարձան Դորոթի Հեյլի ինքնասպանությանը: Նյու Յորքում մի կին Ֆրիդային պատվիրել էր նկարել իր ընկերուհու՝ հանգուցյալ երիտասարդ դերասանուհի Դորոթի Հեյլի դիմանկարը: Ինքն այդ սոսկալի նկարը տվեց սարսափած կնոջը, որը դա ցանկանում էր նվեր տալ Դորոթիի մորը: Սիրունիկ աղջկա դիմանկարի փոխարեն Ֆրիդան նկարել էր նրա ինքնասպանությունը: Ինչպես ֆիլմերում՝ նկարել էր նրան երկնաքերից ընկնելիս, սկզբում մի փոքրիկ կերպարանք վերեւում, որն ընկնելու ընթացքում ավելի ու ավելի էր մեծանում, մինչեւ ի վերջո մեռած պառկում էր մայթին: Տիկնիկի պես փայտացած, աչքե-

որը բաց, սեւ ու նրբագեղ, առանց ծալքի զգեստով: Նրա սիրունիկ գլխի տակից արյան լճակ էր տարածվում, իսկ դեմքն արյան կաթիլներով էր ծածկված: Սարսափահար եղած կինն ավելի ուշ խոստովանեց, որ նկարն առաջին անգամ տեսնելիս ցանկացել էր ոչնչացնել այն:

Ես այնքան անբարյացակամ, այնքան դաժան էի խեղճ Դորոթիի նկատմամբ: Նկարն այնքան սառն էր: Որովհետեւ արհամարհում էի ինքնասպաններին: Կատաղած էի նրա վրա: Քանի որ երիտասարդ էր: Քանի որ գեղեցիկ էր: Քանի որ առողջ էր եւ քանի որ այդ ամենը դուրս էր նետել պատուհանից: Ինձ համար սոսկալի էր մտածել, թե ինչպես է նա արհամարհել կյանքը, հրաժարվել դրանից: Եթե միայն մեկ անգամ զգար այն ցավը, որի միջով ես ամեն օր եմ անցնում,- մտածում էի նրա դիմանկարը նկարելիս,- եթե նա ստիպված լիներ անշարժ պառկել գիպսե կաղապարի մեջ ընդամենը մեկ շաբաթ, ապա չէր ցատկի: Նա ամեն պահի ուրախանալու էր, որ առանց ցավի է ու գիպսից ազատ: Ես միշտ մտածում էի, որ ինքնասպանությունը հեշտ ելք է եւ, հետեւաբար, վախկոտություն: Եվ տանել չէի կարող վախկոտներին: Միշտ կարող ես գտնել առնվազն մեկ պատճառ, որ ցանկանաս վերջ տալ կյանքիդ: Եվ հեշտ չէ դիմակայել այդ դատարկությանը: Բայց առավել դժվար է ապրել ցավի հետ, որ մշտապես բնակվում է քո ներսում: Պետք է հնարավորինս առավելագույնն անեք այն խաղաթղթերով, որոնք ձեզ բաժանել են, քանի որ կյանքի իմաստն ապրելն է: Դա գոյատեւելն՝ ի հեճուկս ամեն բանի: Զգալը, նայելը, մասնակցելը: Երջանիկ լինելը: Մեզ երկրորդ հնարավորություն կամ մեկ այլ կյանք չի տրվում:

Ահա ինչու պատրաստ չէի ներել Դորոթիին իր ինքնասպանությունը: Եվ ահա թե ինչու՝ նկարը սառն է, չի արտահայտում նրա մենակությունը, նրա տառապանքը կամ այն պահը, երբ նա հայտնվել է անդունդի եզրին, միայնակ: Նրա խաղաղ դեմքը չի արտահայտում այն սարսափը, որը պետք է զգացած լիներ, ճիչը, որ հնչեց այդ վաղ առավոտյան, երբ նա առաջ նետվեց՝ սուզվելով մշուշի մեջ: Կամ գուցե նա, դատարկության մեջ նետվելուց առաջ, այդ վայրկյանին հա՞շտ էր իր որոշման հետ: Որովհետեւ ցանկացած տեսակի որոշակիություն՝ խաղաղության զգացում է բերում:

Հետո պարզեցի,- թեեւ նկարի համար չափազանց ուշ էր,- որ կան սահմաններ: Իրավունք ունես նման որոշում կայացնելու, երբ կորցնում

ես մարմնիդ եւ կյանքիդ նկատմամբ ամբողջ վերահսկողությունը: Երբ ոչ այլ ինչ ես, քան ավերակ, խեցի, մահվան կողմից արդեն իսկ գրավված մի պատյան: Երբ կյանքն այնքան անտանելի է դառնում, որ այլեւս կյանք չէ, կենսաբանական տեւական տոկունություն է, ինչպես անշունչ մի առարկա լինելը: Բացառությամբ մի բանի, որ մարդիկ անշունչ առարկաներ չեն: Հենց այդ ժամանակ մահը գալիս է որպես թեթեւացում:

Նա պետք է գնար: Չափազանց նվաստացուցիչ էր այսպես՝ մաս առ մաս մեռնելը: Դա շատ երկար էր տեւում. վախենում էր, որ մարդիկ կդադարեն հոգալ: Չես կարող հավերժ խղճալ մեկին, դա հոգնեցուցիչ է, նույնիսկ ուժասպառ անող: Նա կարող էր դա տեսնել Մաեստրոյի եւ Քիթիի, քրոջ երեխաների եւ ընկերուհիների, բժշկի, նույնիսկ սպասուհիների պահվածքում: Նկատեց, որ նրանց դեմքի արտահայտությունը փոխվում է, երբ մտնում են իր սենյակ, ասես կանգնած լինեին դռան մոտ՝ դեմքներին ամրագրելով ոչ այնքան բնական ժպիտներ, որ հագիվ էին թաքցնում մեկ այլ բանի հետքերը: Անհամբերությա՞ն: Անակնկալի՞: Ինչպես գլխարկի տակից դուրս պրծած անլվա մազերի փնջեր: Ճիշտ է, երբեմն երջանկություն էին ցուցաբերում, ուրախ էին, որ ինքը դեռ ողջ է,- որ դեռ գործածում էին այդ բառը: Բայց երբ մեռնելը երկար է տեւում, մարդկանց համար դա բավական է այն պահին, երբ իմանում են, որ մահն անխուսափելի է: Դրանից հետո մնում է միայն սպասել: Համոզված լինելն արդարացում չէ անհամբերության համար,- անհամբերություն ցուցաբերելը կոպիտ կլիներ,- ոչ, ինքը չէր կարող նրանց մեղադրել վատ թաքնված անկիրք պահվածքի համար:

Նա հեռանում էր, որովհետեւ վերադարձել էր անօգնականության ու ամոթի այդ հին զգացումը, եւ ինքն այլեւս ուժ չուներ պայքարելու դրա դեմ: Նրա ոգին թմրել էր հանգստացուցիչ դեղամիջոցներից, տեսողությունը մշուշված էր, շարժումները ծանր էին ու դանդաղ: Այն ամենն, ինչ կարող էր անել, օգնություն կանչելն էր, նզովելը, խղճահարություն արթնացնելը: Ամենավատն այն էր, որ անօգնական երեխայի վիճակի էր հասել, միայն թե այս անգամ հույս չկար: Նրա մարմինն ամբողջովին սպառված էր եւ ներսից չորացած: Այո, նախկինում հիվանդ էր եղել, բայց նրա մեջ ավելի շատ բան կար, քան պարզապես հիվանդությունը: Հիմա մահը լցվել էր նրա մաշկի մեջ, ինքն այն կրում էր իրեն պարուրած վերարկուի պես, թեւքերն էր հարմարեցնում, օձիքը շտկում, թույլ տալով, որ այն

պատշաճ ձեւով կախված լինի, սպասելով: Ներսում տեղ չէր մնացել մարդու համար: Որովհետեւ մահը չէր հետաքրքրվում իր զբաղեցրած անձի մարմնով: Եվ այդ մարդն, այսպես թե այնպես, արագ անհետանում էր: Ինչ էլ որ կոչվեր այդ հիվանդությունը, դա մահվան հիվանդությունն էր:

Հետեւաբար, ինքնասպանությունը տրամաբանական պատասխանն էր: Գիտեր, որ իր որոշումը քաջության որոշում էր, ոչ թե թուլության կամ վախի: -Դա կլինի իմ ազատ կամքով արարք, քանի դեռ ունեմ այդ կամքը: Այդ արարքը կլինի անհնազանդության մարտահրավեր:

Երբ մտածում էր պատճառների մասին, գիտեր, որ իրեն քնքշություն է պետք, եւ որ Մաեստրոն այլեւս ժամանակ չունի իր համար, ոչ այնքան, որքան իրեն պետք է: Ինչպե՞ս կարող էր ասել նրան, որ իրեն պետք է նրա ամբողջ ժամանակը: Կարող էր ստիպել նրան նստել իր անկողնու մոտ, միայն եթե նա մտածեր, որ ինքն իսկապես վատ է: Այդ ժամանակ նա մեկ-երկու ժամ ավել էր նստում իր կողքին: Գիտեր, որ նրա խղճահարությունն արթնացնելով, ինքն անում է այն, ինչ արհամարհել էր իր ողջ կյանքում: Նաեւ գիտեր, որ խղճահարությունն ի վերջո չորանում է՝ թողնելով միայն հոգնածության զգացում: Մաեստրոն գտել էր նրա հուզալից ճնշմանը, շանտաժին դիմակայելու իր ձեւը: Ինքը Մաեստրոյին հասցրել էր այն աստիճանի, որ նա փախուստի վայր էր որոնում սիրուհու մոտ, քաղաքականության մեջ, մարդկանց հետ առանձնանալով՝ որքան հնարավոր է հեռու հիվանդի իր մահճակալից:

Մեկ տարվա ընթացքում ինքնասպանության նրա երկու անհաջող փորձերից հետո Մաեստրոն անընդհատ հավաստիացնում էր, թե որքան է նրա կարիքը զգում, ինչպես չի կարող ապրել առանց նրա: Հիմա հասկանում էր, որ նա ստում էր, որ դա գեղեցիկ, բարի նպատակներով ասված սուտ էր, բայց միեւնույն է՝ սուտ էր: Իր համար դա միայն սեփական սնափառության եւ ինքնախաբեության լրացուցիչ ապացույց էր: Որովհետեւ նա արդեն բավական ժամանակ էր՝ ապրում էր առանց իրեն:

Նա դեռ շարժվում էր իր անկողնում, թեեւ շատ քիչ: Խոսում էր մեծ դժվարությամբ: Բայց նույն մարդը չէր, եւ Մաեստրոն դա գիտեր: Միայն խղճահարությունն ու պարտքի զգացումն էին Մաեստրոյին հիմա բերում նրա մոտ: Մաեստրոյին նա այլեւս պետք չէր. եւս մեկ ծանրակշիռ պատճառ՝ հեռանալու, դա եւ վերահսկողության կորուստը, քայքայումը:

Ներիր ինձ, սիրելիս, ես կոպիտ էի վերաբերվում քեզ: Անտեղի կո-

պիտ, դառն ու դաժան: Ես չեմ ուզում այդպես հեռանալ քեզնից, բայց այլեւս ոչ մի բանի համար ժամանակ չունեմ, բացի նրանից, որ քեզ խնդրեմ ինձ ներել: Ես սխալ էի: Ես քեզնից ավելին էի սպասում, քան դու կարող էիր տալ: Ի՞նչ իրավունք ունեի: Որովհետեւ ինձնից է՞լ էի ավելին սպասում: Որովհետեւ պետք է ավելի՞ն խնդրեի կյանքից, որպեսզի կարողանայի գոնե ինչ-որ բան ստանալ նրանից: Պարզ, հավանական բացատրություններ: Եվ այդուհանդերձ, ինձնից ամբողջ մի կյանք պահանջվեց՝ հասկանալու համար, որ ոչ բոլորն են նույնը, եւ որ մարդիկ անում են միայն այն, ինչ կարող են, տալիս են միայն այն, ինչ ունեն, եւ որ դա թանկ արժե: Ես կույր էի, հուսահատ պայքարում էի գոյատեւելու համար: Եվ վախենում եմ, որ իմ կարճատեսության պատճառով ուրիշներին չէի տեսնում այնպիսին, ինչպիսին նրանք կան, այլ այնպիսին, ինչպիսին կարծում էի, որ պետք է լինեն: Ես մեզ երկուսիս անտեղի տառապանքներ պատճառեցի: Այո, հիմա տեսնում եմ, որ կյանքից ավելին էի սպասում, քան պարզապես տառապանքը: Քո սերը, սիրելիս, պետք է լիներ իմ բոլոր հարց ու խնդիրների պատասխանը: Ես սիրո մեջ իմ փրկությունն էի տեսնում: Սերն իմ կրոնն էր: Ենթադրում եմ, որ յուրաքանչյուրն իր սեփական Աստծուն պատկերացնելու կարիք ունի: Բայց այդ ամենը հանգեցրեց միայն ավելի շատ տառապանքի ու հիասթափության: Որովհետեւ, իհարկե, փրկություն չկա:

Իսկ վերջին հաշվով ի՞նչ է սերը: Ինձ հիմա թվում է, որ դա պարզապես բառ է՝ զգացմունքների ամբողջ մի համախմբի բնորոշման համար՝ քնքշանքից մինչեւ համերաշխություն եւ կիրք: Որովհետեւ մի՛ մոռացեք, որ, ի տարբերություն նկարչության կամ երաժշտության, լեզուն ճշգրիտ գործիք չէ: Սերն ընդհանուր հայտարարն է, այն զամբյուղը, որը մենք լցնում ենք ամենատարբեր իրերով: Մեր շտեմարանը:

Ծատ ուշ է՝ հիմա քեզ ասելու, որ չափազանց մեծ պատասխանատվություն եմ դրել քո ուսերին՝ ակնկալելով, որ կերջանկացնես ինձ եւ կփրկես ինձ այդ ընթացքում: Դու իմ մոլուցքն էիր, իմ մտասեւեռումը: Ես քո անունը նույնացնում էի երջանկության հետ: Իհարկե, դու չէիր կարող հրաշքներ գործել, քանի որ դա քո ուժերից վեր էր: Իմ մեղքն է, Մաեստրո, որ քեզ աստված դարձրի, աստծո դեր տվեցի եւ հետո հիասթափվեցի, երբ դու այլ կերպ վարվեցիր: Ի՛նչ ողորմելի փոքրիկ հիմար է քո Ֆրիդան, այդքան անտանելի պահանջկոտ, այդքան անտանելի դժբախտ:

Եվ ամենավատն այն է, որ այնքա՛ն վստահ էի, թե *իրավունք ունեմ* քո

հանդեպ, սիրո, կյանքի հանդեպ: Չէ, իրավունքներ չկան, երաշխիքներ չկան: Դու գոյություն ունես, դու պայքարում ես այս կյանքում, քիչ թե շատ մենակ ես եւ վերջ:

Չես կարող ավելին տալ քեզնից, քան ունես,- մտածեց՝ հիշելով երիտասարդ մի աղջկա հետ կատարված՝ գրեթե վաղուց մոռացված մի դեպք. աղջիկն ինքնասպան էր եղել հենց իր աչքի առջեւ: Հիշեց մարող լույսը՝ աղջկա խելահեղ աչքերում: Նա տարված էր Ֆրիդայով եւ երազում էր սիրով զբաղվել նրա հետ: Ֆրիդան աղջկա հանդեպ հակակրանքից բացի ուրիշ ոչինչ չէր զգում: Թեեւ արգելել էր նրա մուտքը տուն, սպասուհին այդ օրը պետք է որ դրսում լիներ, քանի որ աղջիկը հանկարծակի հայտնվեց Ֆրիդայի արվեստանոցի դռան մոտ:

Աղջիկն սկսեց սպառնալ Ֆրիդային՝ ասելով, որ եթե իրեն չխղճա, ինքնասպան կլինի: Ֆրիդան հռհռաց: Դա բարձրաձայն, դաժան ծիծաղ էր: Խենթ աղջիկն անընդհատ ասում էր, որ ինքն իրեն կսպանի: Ֆրիդան կանգնած նրան էր նայում: Աղջկա դեմքը ճերմակ էր: Ներքեւի շուրթը դողում էր: Ֆրիդան տեսավ, որ նա ձեռքում մի փոքրիկ շիշ է բռնել, բայց չշարժվեց եւ չփորձեց ետ պահել աղջկան, որ չխմի շշի մեջ եղածը: Նա լուրջ չէր ընդունում աղջկա սպառնալիքը:

Հանկարծ աղջիկը միանգամից կուլ տվեց շշի թափանցիկ հեղուկը: Ֆրիդան տեսավ, թե նա ինչպես գետնին տապալվեց, երբ շիշը գլորվեց հատակին, իսկ աղջկա կիսաշրջազգեստը վեր բարձրացավ՝ մերկացնելով ծյունաճերմակ ազդրերը: Ֆրիդան կանգնած նրան էր նայում, բայց չշարժվեց: Օգնություն չկանչեց: Ոչինչ չզգաց, երբ մեռնող աղջիկն ուղիղ իրեն նայեց:

Կատարվածի համար իրեն երբեք մեղավոր չէր զգացել: Ընդհակառակը, հակակրանք էր զգացել աղջկա հուզական նենգասպառնալիքից եւ կյանքի մերժումից: Բայց հիմա առաջին անգամ հակակրանք զգաց ինքն իր հանդեպ: Ինչո՞վ էր տարբերվում այդ աղջկանից: Մի՞թե ինքն էլ տարված չէր Մաեստրոյով, մի՞թե օր օրի չէր փորձում նրա խղճահարությունն արթնացնել՝ ստիպելով նրան սեփական կամքին հակառակ ժամանակ անցկացնել իր հետ: Արդյո՞ք ինքն էլ հուզական ճնշման, շանտաժի չէր ենթարկել նրան: Եվ վերջապես, մի՞թե ինքն էլ երկու անգամ չէր փորձել ինքնասպան լինել նույն ձեւով եւ նույն պատճառով, ինչպես այդ խելացնոր աղջիկը: Առաջին անգամ Մաեստրոն դա վերագրել էր

խանդի նոպային, երկրորդ անգամ՝ հարբած վիճակին: Երկու դեպքում էլ նա իրավացի էր, բայց երբեք չէր մտածել, թե ինչն է եղել այդ փորձերի դրդապատճառը:

Անցած գիշեր, ընդամենը մի քանի ժամ առաջ, նա, փաստորեն, լսել էր, թե ինչպես է բժիշկը Մաեստրոյին զգուշացնում, որ իր վիճակն արագորեն վատթարանում է: -Այո, այո,- ցրված պատասխանել էր Մաեստրոն: -Բայց նա իսկապես շատ, շատ հիվանդ է,- կրկնեց բժիշկը: -Այո՛,- ասաց Մաեստրոն՝ անցնելով մեկ այլ բանի քննարկման: Մաեստրոն այդ իրազեկումն ստացել էր մի շարք այլ պատահական տեղեկությունների հետ միաժամանակ, որոնցով պետք է զբաղվեր - հաշիվը, որը պետք է վճարեր, փաստաբանի նամակը, որին պետք է պատասխաներ, արվեստի պատկերասրահը, ուր պետք է զանգահարեր: Այո, այո, Ֆրիդան շատ հիվանդ էր, բայց այդտեղ ոչ մի նոր կամ անսպասելի բան չկար:

Նույնիսկ տենդի մշուշի միջից Ֆրիդան լսելով զգաց անհրաժեշտ հրատապությունը բժշկի լուրջ ու հանդիսավոր ձայնում: Եվ լսեց Մաեստրոյի հոգնած, դյուրագրգիռ պատասխանը: Ինչ-որ բան վերջնականապես կտրվեց նրա ներսում: Երեւակայական ճաք տված սյունը փլվեց, նրա ողնաշարը բաժանվեց երկու մասի, եւ բարակ թելը, որ իրեն պահում էր այդտեղ, կտրվեց:

Ժամանակը եկել է,- որոշեց,- ժամանակը եկել է:

Վերջին անգամ երբ փորձել էր ինքնասպան լինել, դա եղել էր չմտածված, հուսահատ ու անվարժ մի փորձ՝ այն պահին, երբ սաստիկ հուզված էր: Դարակից հանել էր դեղահաբերի իր թաքուն պաշարը, թափահարել դրանք ձեռքի ափի մեջ եւ կուլ տվել: Վերջին բանը, որ հիշում էր, այն էր, որ կոպերն ու վերջույթները կապարի պես ծանր էին: Ինքը չէր նախապատրաստվել, դա պարզապես հուսահատական քայլ էր:

Գոնե կարողացել էր տեսնել, թե որքան հեշտ է հեռանալ այս աշխարհից,- մտածեց նա: Այս անգամ, սակայն, ողջամիտ, հասուն որոշում էր կայացնում, քանի դեռ լիովին վերահսկում էր ինքն իրեն: Ուզում էր մինչեւ վերջ վերահսկելի պահել իրավիճակը: Չափազանց լավ էր ծանոթ մահին, որպեսզի համաձայներ նրա պայմաններին: Ինքն էր որոշելու իր մահվան պայմանները, ինչպես կյանքում էր անում: Գիտեր, որ շատերը կմտածեն, թե ինչպե՞ս մեկը, որն այդքան շատ էր սիրում կյան-

քը, երբեւէ ձեռք կբարձրացներ իր վրա, բայց նրանք չէին հասկանում, որ հենց դա՛ է խնդիրը. եթե ինքդ ես քեզ զրկում կյանքից, դա անում ես, որպեսզի հաղթես մահին՝ ինքդ ընտրելով պահը:

Ավելի ուշ, երբ բժիշկն ու այցելուները հեռացել էին, եւ ինքն ու Մաեստրոն մենակ էին, նա հանեց մի գեղեցիկ հնաոճ ոսկյա մատանի: -Ինչո՞ւ ես հիմա սա տալիս ինձ,- զարմացած հարցրեց Մաեստրոն:

- Որովհետեւ զգում եմ, որ շուտով կհեռանամ քեզնից,- պատասխանեց:

Բայց նա չէր լսում, նրան լսելի չէին իր բառերը: Ինչպես նախկինում շատ անգամներ, այնպիսի զգացում ուներ, որ բառերը թքի պես հոսում էին իր բերանից, մինչդեռ Մաեստրոյի համար դրանք պարզապես անհոդաբաշխ հնչյունների աղմուկ էին, անիմաստ ու անկապ զառանցանքների հոսք: Միգուցե Մաեստրոն չէր լսում նրան, որովհետեւ տեսնում էր, որ նա բացում է բերանը ձկան պես, առանց ձայն արձակելու: Կամ միգուցե իր խոսքերի իմաստը խուսափում էր Մաեստրոյից, դրանց ձայնը դատարկ արձագանքի պես ետ էր ցատկում նրանից: -Դու ինձ չե՛ս լսում, դու ինձ չե՛ս լսում,- ճչում էր ինքը՝ ի զարմանս ցնցված Մաեստրոյի բռունցքներով հարվածելով նրա կրծքին: Բայց էլ ուժ չուներ հետագա բացատրությունների համար:

Վստահ էր, որ Մաեստրոն ամեն ինչ կկարգավորի, որպեսզի իր ինքնասպանությունը աղմուկ չառաջացնի: Նա նախկինում դա արել էր այն աղջկա համար: Ոչ ոք երբեւէ ոչինչ չլսեց, թե ինչ էր տեղի ունեցել: Նա դա կաներ ինչպես իր՝ Ֆրիդայի, այնպես էլ սեփական անձի համար: Մաեստրոն թույլ չէր տա, որ ինքնասպանությունը խաթարի իր կնոջ, որպես արտառոց կնոջ, լուսաշող, ուժեղ եւ կենսուրախ Ֆրիդայի կերպարը, որն ապրեց եւ նկարեց՝ չնայած իր բոլոր փորձություններին: Ոչ ոք հոգ չէր տանում թույլ ու դյուրաբեկ, հուսահատ Ֆրիդայի մասին, որն այլեւս չեն կարողանում նկարել, Ֆրիդայի, որի մարմինը քայքայվում էր վարակից, իսկ ոգին քայքայվում էր թմրանյութերից:

Բժիշկներն, իհարկե, կգտնեին մահվան ինչ-որ հավանական պատճառ, եւ դա կլիներ պաշտոնական տարբերակը: Ֆրիդայի եւ նրա անպարտելի ոգու կերպարը կպահպանվեին սերունդների համար:

Միայն օրագիրը, այդ վերջին մի քանի ամիսների նկարներն ու գծանկարներն էին վկայում նրա քայքայման եւ այդ ամենը գիտակցելու մասին:

Բայց Ֆրիդան գիտեր, որ իր առասպելն արդեն իսկ ավելի ուժեղ է,

քան ճշմարտությունը, եւ որ ոչ ոք, այնուամենայնիվ, չի հավատա իր ինքնասպանությանը:

Որտե՞ղ ես հիմա, Քիթի:

Շուտով կմտնես սենյակ եւ իմ մարմինը կգտնես անկողնում՝ արդեն սառչելիս: Առաջին բանը, որ կանես, գիտեմ, չհավատալով կհպվես դեմքիս, որովհետեւ, որքան էլ տարօրինակ է, մահը միշտ անսպասելի է գալիս, նույնիսկ երբ խոսքն ընդամենը օրերի կամ ժամերի մասին է: Այնպես որ, հուսով եմ, արագ կհավաքես քեզ եւ կփակես բերանս: Պարզապես պետք է սեղմելով փակես ծնոտս, նախքան դիակի փայտացումն սկսվելը: Չգիտեմ՝ արդյո՞ք դա այն պատճառով է, որ այդտեղից է դուրս թռչում հանգուցյալի հոգին, բայց, անշուշտ, կհամաձայնեի, որ լայն բացված բերանի տեսքը բավականին զզվելի է:

Հետո դու կհամբուրես ինձ, եւ քո արցունքները կթափվեն դեմքիս ու մազերիս վրա, որոնք կշարունակեն աճել: Հիշում եմ, թե ինչպես էինք այդ մասին կարդում անկողնում, երբ երեխա էինք, ինչպես չէինք կարողանում հավատալ, որ մարդու մազերն ու եղունգները նրա մահից հետո օրեր շարունակ աճում են: -Ի՞նչ է մահը,- հարցնում էիր ինձ,- ե՞րբ է ինչոր մեկն իսկապես մահացած: Հիմա կարող եմ քեզ ասել՝ կենսաբանական գործառույթները նշանակություն չունեն: Կարեւորն իմաստն է: Մահն այն է, երբ *քո սեփական* կյանքից այլեւս ոչինչ չի մնացել, եւ քեզ համար միեւնույն է՝ դեռ շնչո՞ւմ ես, կամ մազերդ ու եղունգներդ աճո՞ւմ են դեռ: Դու ինքդ այլեւս գոյություն չունես: Այնպես որ, սրբիր արցունքներդ, Քիթի: Ես խաղաղ եմ հեռանում, քանի որ սա այլեւս ես չեմ. պարզապես նայիր իմ վերջին նկարներին եւ կհասկանաս: Ինչ էլ որ լինի, ինձ համար հոգալը դարձել է չափազանց ծանր ու անիմաստ: Ես պարզապես մի փոքր արագացնում եմ իմ մեկնումը, այսքան բան, բավական է, որ ո՛չ թե մահը, այլ ես եմ որոշում, թե երբ է եկել իմ ժամանակը:

Չգիտեմ, արդյոք այսքան երկար կդիմանայի՞ առանց քեզ, եթե չհետեւեիր ինձ եւ չհամոզվեիր, որ ուտում եմ այդ գարշելի ապուրն ու շիլան, որ ժամանակին եմ խմում հաբերս եւ պառկում քնելու: Դու լվանում եւ հագցնում էիր ինձ, սրսկում, փաթաթում իմ խեղճ անդամահատված վերջույթը: Քնում էիր տանն ու ինձ ընկերություն անում, երբ Մաեստրոն կորցնում էր դա անելու իր եռանդն ու ցանկությունը: Չեմ կարող ասել, թե որքան վիրավորված էի, երբ տեսա քեզ Մաեստրոյի հետ անկողնում: Երբ նկարում էի դաժանորեն սպանված այդ կնոջը, որն ամբողջովին

արնահոսում էր, քեզ երբեք չասացի, որ իմ մտքում սպանողը Մաեստրոն չէ, այլ դու ես:

Այո, դրանից հետո դիակի պես էի՝ կյանքից դատարկված: Սերը կոտրում է քեզ. նախ ամբողջական ես, հետո կտոր-կտոր ես լինում ջարդված ընկույզի պես: Տեսնում ես վերքերդ, մերկ, արյունահոսող ներսդ: Ես հավատում էի նրա սիրուն, քանի որ դա իմ բոլոր հարցերի պատասխանն էր, իմ տառապանքների լուծումը: Իմ մտքում նրա սերն ի զորու էր բուժելու իմ հիվանդությունը, փրկելու ինձ մենակությունից: Հավատում էի, որ սերը կարող է հարություն տալ մեռածներին: Ինձ համար դժվար էր տանել քո եւ նրա դավաճանությունը: Հատկապես քոնը: Բայց դա խորտակեց իմ բոլոր պատրանքները, համենայն դեպս: Հասկացա, որ հույսս դրել էի այդ սիրո վրա, ինչպես հենակի, ինչպես իմ սեղմիրանի վրա, որպեսզի օգնեի ինձ գոյատեւել:

Այդուհանդերձ, չէի կարող հրաժարվել քեզնից կամ Մաեստրոյից: Մենակության մեջ թոշնելու իմ վախն ավելի մեծ էր, քան զայրույթս կամ արհամարհանքս, որ զգում էի ձեր երկուսի հանդեպ: Հետագայում քո քնքուշ նվիրվածությունն օգնեց բուժել ինձ հասցրած վերքդ: Դու, իհարկե, շատ ավելին գիտեիր «սիրո» մասին, քան ես, այն մասին, թե այն որքան դաժան կարող է լինել: Ամուսինդ ծեծում էր քեզ, դու մնացել էիր մենակ երկու երեխաների հետ, քիչ պատրանքներ կարող էիր ունենալ սիրո, տղամարդկանց, ամուսնության մասին: Բայց ես կույր էի ու անհագ: Ես սարսափում էի, Քիթի, ինքս ինձ եւ իմ հիվանդության հետ մենակ մնալուց: Ներիր ինձ իմ եսասիրությունը, եթե կարող ես:

Հետագայում երախտապարտ էի. քո շնորհիվ էր, որ լրջորեն զբաղվեցի նկարչությամբ: Երբ ցավը դարձավ անտանելի, երբ սպառնում էր կլանել ինձ, ստիպված էի ազատվել դրանից:

Որքան ավելի էր վիճակս վատանում, այնքան ավելի էր Մաեստրոն հեռանում ինձնից: Քեզնից բացի ոչ ոք չէր կարող այդքան դիմանալ: Հիվանդությունը մարդկանց չի մոտեցնում իրար, հեռացնում է նրանց. սկզբում գալիս է խղճահարությունը, հետո՝ ֆիզիկական բաժանումը: Իսկ ո՞վ չէր փախչի, հենց միայն իմ մարմնի գարշահոտությունից: Կար ժամանակ, երբ նա պառկում էր կողքիս եւ կարդում կամ խոսում էր ինձ հետ, մինչեւ քնեի: Վերջում արդեն ստիպված էի աղաչել նրան, որ գոնե մի քիչ նստի կողքիս: Նույնիսկ դա էր շատ նրա համար: Նա միշտ շտապում էր, միշտ պետք է հեռանար: Ես դադարեցի հարցնել, թե ուր է գնում:

Երբ բանտարկված էի գիպսե այդ սեղմիրանի մեջ, եւ մեջքս վերածվել էր թարախի մի կույտի, դու էիր կապում մեջքիս նողկալի վերքերը: Դու էիր մաքրում հետույքս, երբ չէի կարողնում արտաքնոց գնալ: Ջղջացողի պես, իսկ գուցե դու հենց զղջում էիր: Գուցե դա այն պատիժն էր, որին ինքդ քեզ արժանացրել էիր, գուցե այդ ապաշխարությունը քո քավության միջոցն էր: Կարող էիր թողնել, որ ուրիշները դա անեն՝ բուժքույրերը կամ սպասուհին: Բայց այդպես չարեցիր: Ինչպե՞ս էիր լալիս, երբ լվացիր ոտքս անդամահատելուց առաջ: Այնքա՛ն նուրբ էիր, այնքա՛ն զգույշ, կարծես լվանում էիր սեփական երեխայիդ, ոչ թե իմ չորացած, փտախտավոր ոտքը: Եվ անկեղծ ասած, երբեմն ես քո երեխան էի, պահանջկոտ եւ փչացած, ամենեւին ո՛չ նման քո երկու հրեշտակներին:

Եթե գումարեմ այդ ամենը, ահա թե ինչ եմ ստանում. երեսուներկու վիրահատություն իմ կյանքի քառասունյոթ տարիների ընթացքում: Երբ մտածում ես, որ առաջին վիրահատությունս կատարվել է տասնութ տարեկանում, ապա ստացվում է տարեկան մեկից ավելի վիրահատություն: Իմ միակ մխիթարությունը, եթե դա մխիթարություն է, այն է, որ ես իմ կյանքից ստացա այնքան շատ բան, որքան կարող էի:

Իմ սիրելի փոքրիկ քույրիկ, իմ այս մարմինը միշտ եղել է իմ բանտը: Հիմա դառնում է իմ գերեզմանը:

Մենակությունը միշտ ավելի վատ էր, քան ցավը,- մտածեց. ցավը նրան դատապարտել էր մենության՝ ամբողջ մի կյանքի ընթացքում:

Հիմա Քիթին չկար: Եթեր չկար: Ներարկիչն իր մահվան գործիքն էր: Առանց վարանելու՝ ձեռքը մեկնեց եւ վերցրեց այն: Հպվելիս սառն էր: Հանգիստ՝ այն լցրեց ձեռքում տաքացրած փոքրիկ շշերի հեղուկով: Մտածեց, թե ինչպես է իր մանկության մութ ամպը վերջապես հասել եւ բռնել իրեն: Դրա թանձր ստվերը նորից հայտնվեց իր վերեւում, բայց ինքը փախչելու տեղ չուներ: Չէր էլ ուզում փախչել: Առանց ակնկալիքների էր, առանց հույսի: Բայց գոնե ուժ ուներ ինքն իրեն հավատարիմ մնալու:

Արդյո՞ք դա խղճահարության այն ծանոթ գարշահոտն էր, որ զգում էր Քիթիի բերած վարդերի մեջ: -Լավ է, որ ապրողները խղճում են մեռնողներին,- մտածեց,- քանի որ նրանք ըստ էության միայն իրենց են խղճում:

Մի պահ թեթեւություն զգաց, ասես թռչում էր եւ ամեն ինչ տեսնում էր վերեւից: Վերջապես իրեն զգաց այնպես, ինչպես միշտ էր ցանկացել զգալ,- թիթեռի պես: Պատկերացրեց տունն իր գնալուց հետո, սենյակը, դատարկ մահճակալը: Գիտեր, որ Մաեստրոն, Քիթին, ընկերուհիները

տխուր կլինեն, մի որոշ ժամանակ: Եվ հետո էլ, երբեմն: Ինքը կդառնար հեռավոր հիշողություն: Ինքն արդեն հիշողություն էր եւ ուրախ էր դրա համար: Այլեւս այն Ֆրիդան չէր, որին նրանք ճանաչում էին, քանի որ այն, ինչ հիմա նա էր, ինքը չէր:

Միայն իր նկարներն էին ինքը:

Նրա վերջին միտքն այն էր, որ իր այս՝ սեփական կյանքից իրեն զրկելը, իր այս վերջին արարքը՝ սեփական կամքով, ասեղի այս փոքրիկ ծակոցը, ըստ էության իր վերջին իսկական պարտությունն էր: Ո՛չ թե որոշումն ու արարքն ինքնին, այլ ի՛ր հեռանալու ձեւը: Այն փաստը, որ գոյատեւելու իր բոլոր ջանքերից հետո ստիպված եղավ վերջ տալ սեփական կյանքին իր ամենավերջին ուժով:

Հանկարծ հիշեց, որ մահվան հետ իր վերջին հանդիպումից առաջ, գրեթե երեսուն տարի առաջ, լիզել էր շուրթերը, որ նարնջի համ ուներ: Ինքը ողջ էր, այնքա՜ն անմոռանալիորեն ողջ:

Նույնիսկ չզգաց ասեղի ծակոցը: Սպիտակ լույսի բռնկում էր:

Սպիտակը, ո՛չ թե սեւն էր նրա մահվան գույնը:

Նրան թվաց, որ տեսնում է, թե ինչպես բացվեց դուռը, եւ իր մանկության անանուն փոքրիկ ընկերուհին մտավ սենյակ: Ինչպես մի ժամանակ, շատ վաղուց, փոքրիկ աղջիկը բռնեց իր ձեռքը: Եվ Ֆրիդան հնազանդվեց նրա հպումին:

Հեղինակի մասին

Սլավենկա Դրակուլիչը (ծնվ. 1949 թ.) խորվաթ հայտնի հեղինակ է, որի հոդվածները, էսսեներն ու գրքերը թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

Դրակուլիչն իր գեղարվեստական գրականության մեջ շոշափել է տարբեր թեմաներ: Դրանք առնչվում են հիվանդության դեմ պայքարին եւ մահվան վախին («Վախի լիապատկերներ»), սեռական ցանկության կործանարար ուժին («Մարմարե մաշկ»), արտառոց սիրո բնույթին («Տղամարդու համը»), պատերազմի դաժանությանն ու բռնաբարության զոհերին («Ս. Վեպ Բալկանների մասին»), Ֆրիդա Կալոյի գեղարվեստականացված կյանքին («Ֆրիդա կամ՝ ցավի մասին»), Դորա Մաարին («Դորան եւ Սինոտավրոսը») եւ Միլեւա Էյնշտեյնին («Միլեւա Էյնշտեյն. վշտի տեսություն»): Իր «Մեղադրյալը» վեպում Դրակուլիչը գրում է մանկապղծության՝ ոչ հաճախ արծարծվող թեմայի մասին: Պատմվածքների վերջին՝ «Անտեսանելի կին» գրքում նա գրում է, թե ինչ են զգում ծերանալիս եւ ինչ է նշանակում ծերանալ:

Դրակուլիչը հրատարակել է նաեւ ոչ գեղարվեստական հինգ գիրք: Ոչ գեղարվեստական գրականության մեջ նրա հիմնական հետաքրքրությունները ներառում են հետկոմունիստական երկրներում քաղաքական եւ գաղափարական իրավիճակը, պատերազմական հանցագործությունները, ազգայնականությունը, ֆեմինիստական խնդիրները, հիվանդությունները եւ կանացի մարմինը: «Ինչպես վերապրեցինք կոմունիզմը», «Բալկանյան ճեպընթաց», «Սրճարան Եվրոպա» գործերում նա ներկայացնում է կոմունիստական եւ հետկոմունիստական երկրների առօրյան:

Դրակուլիչը գրել է նաեւ կոմունիզմի պատմությունը կենդանիների տեսանկյունից («Էքսկուրսիա կոմունիզմի թանգարանում»): Նախկին Հարավսլավիայում պատերազմների ժամանակ հանցագործություններ կատարած մարդկանց մասին գրված՝ «Նրանք ճանճին երբեք չէին վնասի. պատերազմի հանցագործները դատվում են Հաագայում» գործում նա քննում է չարիքը հասարակ մարդկանց մեջ եւ այն ընտրությունները, որոնցով պատերազմ են մղում:

Դրակուլիչի վերջին՝ «Սրճարան Եվրոպա» վերանայված գիրքը լույս է տեսել 2021 թվականին (ԱՄՆ-ի Penguin Random House հրատարակչու-

թյուն): Այն ոչ գեղարվեստական գիրք է՝ 1989 թվականի «թավշյա հեղափոխությունից» հետո Եվրոպայում տեղի ունեցած փոփոխությունների մասին:

Դրակուլիչը նախկին Հարավսլավիայի առաջին ֆեմինիստուհիներից է: 1978 թվականին Բելգրադում նա մասնակցել է «Drug-ca žena» կանանց առաջին միջազգային համաժողովին: 1984 թվականին լույս տեսած «Ֆեմինիզմի մահկանացու մեղքերը» լրագրային էսսեների նրա ժողովածուն նմանատիպ առաջին գիրքն է նախկին կոմունիստական աշխարհում:

Նրա գրվածքները հրապարակվել են «The New Republic», «The New York Times Magazine» եւ «The New York Review Of Books» հանդեսներում: Նա լրագրող եւ խմբագիր է «The Nation» հանդեսում (ԱՄՆ), պարբերաբար թղթակցում է նաեւ «Süddeutsche Zeitung» (Գերմանիա), «Internazionale» (Իտալիա), «Dagens Nyheter» (Շվեդիա), The Guardian (Մեծ Բրիտանիա), «Eurozine» եւ այլ հանդեսների ու պարբերականների:

«Ֆրիդա կամ՝ ցավի մասին» գիրքը (բնագրում՝ «FRIDA ILI O BOLI») ներկայացնում է մեքսիկացի գեղանկարիչ Ֆրիդա Կալոյի (Մագդալենա Կարմեն Ֆրիդա Կալո Կալդերոն) գեղարվեստականացված կյանքը: Գրքի անգլերեն թարգմանությունը վերնագրված է «Ֆրիդայի անկողինը (մահճակալը)» («FRIDA'S BED»): Գիրքն անգլերեն է թարգմանել Քրիստինա Պ. Զորիչը:

Սլավենկա ԴՐԱԿՈՒԼԻՉ

ՖՐԻԴԱ ԿԱՄ՝ ՑԱՎԻ ՄԱՍԻՆ

Անգլերենից թարգմանությունը՝
Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա.Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 9 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015

Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Զենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուդդայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի» - 2017
Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչաղեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Ուեյսին Սյուլն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկությունները: Չինաստանի համաշխարհային ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 6) - 2018
Աղի ձայնը (20-րդ դարի հետուքսունական թվականների սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 7) - 2019
Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020
Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի մասին. իրական պատմություն) - 2020
Կոնֆուցիոս. «Զրույցներ» - 2020

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 8) - 2021
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 9) - 2021
Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» - 2021
Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսդոտիր. «Սեր, նյարդերի քայքայում.
ոչ մի պար ձուկ-քարի վրա» - 2021
Ալեքսեյ Վառլամով. «Մտագայլը» - 2021
Միխալ Այվազ. «Այլ քաղաք» - 2021
Իմանուել Միֆսուդ. «Յուտա Հայմ» - 2021
Խոսեբա Սարիոնանդիա. «Բանտեր եւ աքսորներ» - 2022
Չինական ավանդական բժշկության հիմնական
հասկացությունների հանրագիտարան (հատոր 1) - 2022
Նիկոլա Դուրետիչ. «Մահվան և անհետացման
ժամանակագրությունը» - 2022

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

www.vogi-nairi.am
Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +374 97252323, +374 94259161